

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐՔԵՐԻ ՀԱՅ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՐՆԵՑԻ
(ԺԱ Պ.)

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՍԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ**

Աշխատասիրությամբ
Հակոբ Քյոսեյանի



Ս. ԷԶՄԻՏՅՈՒՆ – 2007

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկեճասուրճամբ՝

**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐՈ, ԲԱՅՅԻ
ՍԱՐՈՒՔՅԱՆՆԵՐԻ**

Library of Armenian Commentaries on the Books of the Holy Bible

Commentaries on the Books of the New Testament

2

ANANIA SANAHNETSI

(XI cent.)

COMMENTARY
ON THE GOSPEL OF MATTHEW

By
HAKOB KYOSEYAN

Holy Etchmiadzin - 2007

By order

of His Holiness KAREKIN II

Supreme Patriarch and
Catholicos of All Armenians

Printed by donations of
Mr. and Mrs. SARO, RAFFI
MAROUQYANS

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ա - 572

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱԴՆԵՑԻ

Ա - 572 ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԻ: Աշխատասիրութ-
յամբ՝ ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆԻ: -Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, 2007.- 208 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-55-4

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

**Մատենաշարի գլխավոր խմբագիր՝
ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Chief editor of the serial publication
ARCHBISHOP YEZNIK PETROSSIAN

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ միջնադարյան գրականության Սանահնի դպրոցի նշանավոր ներկայացուցիչն է ԺԱ դարի մատենագիր Անանիա վարդապետ Սանահնեցին (Հաղբատացի)¹: Նա հեղինակ է դավանաբանական («Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»), մեկնաբանական («Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի առաքելոյն», «Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու» հատուած), ճառագրական («Յաղագս Յովհաննու Սկրտչի», «Ի խաչելութիւն Պետրոսի») եւ ներբողական («Ներբողեան՝ ասացեալ ի սուրբ Կաթողիկէ Եկեղեցի...») երկերի: Ժամանակի պահանջով շարադրված այդ երկերում կարևոր դեր էր վերապահված, մասնավորաբար, մեկնաբանական աշխատություններին, որոնք լայնորեն օգտագործվել են Հաղբատ-Սանահնի, ավելի ուշ՝ Կիլիկիայի և Էջմիածնի ուսումնագիտական օջախներում:

Հասարակական, գիտական, իմացական նշանակությունից գատ մեկնաբանական այդ աշխատություններն աչքի են ընկել նաև գաղափարաբարդաբանական ուղղվածությամբ: Դրանք իրենց գործուն մասնակցությունն են բերել դարի հոգևոր կյանքին: Մեկնություններում լավագույնս մեկտեղված են ուսուցողական, մանկավարժական և տեսական-դավանաբանական գաղափարներ, որոնց նպատակը եղել է սաների հայրենասիրական դաստիարակումն ու գիտական պատրաստությունների ամրապնդումը: Սանահնեցու մեկնաբանական աշխատությունները շարադրված են կենսականորեն անհրաժեշտ այդ գաղափարների ու նպատակների հստակ գիտակցմամբ: Այս գիտակցմամբ է շարադրված հեղինակի կարևորագույն երկերից մեկը՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Անանիա վարդապետը սույն աշխատությունը գրել է իր ուսուցչի՝ Դիոսկորոս Սանահնեցու խնդրանքով: Այդ մասին երկի ընդարձակ խորագրում հետևյալն է ծանուցում Մաշտոցի անուան Մատենադարանի № 2686 ձեռագրի գրիչը. «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի Անանիայի հայոց վարդապետի՝ ի խնդրոյ հայր Դիոսկորոսի, գոր

¹ Զեղինակի և նրա մատենագրական ժառանգության մասին տե՛ս *Հակոբ Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ. Ա. Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000:*

յետոյ իմ աղաչեալ զլուսաւորիչ վարդապետն Սարկաւագ ըստ մականութեան (sic) եւ երկրորդ լուսաւորիչ հայ ազգին եւ յաղագս սիրոյն, զոր էր առ իմ անախտանութիւն, բազում ջանիւ եւ աշխատութիւն կրեաց յաղագս այսր տառիս», որից տեղեկանում ենք, թէ խնդրո առարկա մեկնությունը հետագայում խմբագրվել և որոշակի բարեփոխման է ենթարկել Հովհաննէս Սարկավագը՝ հավանաբար իր իսկ աշակերտներից մեկի խնդրանքով:

Մեկնությանը նախորդում է Գիոսկորոսին հղած Անանիայի թողթը, որն այստեղ ոչ այլ բան է, քան մի ընծայական՝ նվիրված բազմերախտ ուսուցչապետին. «Ընկալայ զիրաման տեսուն իմոյ հայր Գիոսկորոսի եւ հոգելիր վարդապետի՝ Սանահնի սուրբ առաջնորդի, զորոյ յոյժ ըղձաւ եւ սիրական աղաչանաւք հայցեալ պահանջեցեր ի մէջ վասն բացայայտութեան տերունեան բանից կենսաբեր Աւետարանին...» (Ա 2ա-3բ, Բ 1ա-4բ)¹: Անանիա Սանահնեցու Ընծայականից երկու փոքր հատված հրատարակել են Երվանդ Տեր-Մինասյանը² և Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը³: Ընծայականն ամբողջապես ինչպես նաև Ավետարանի մինչև Ե 27 համարի մեկնությունը հրատարակված է տողերիս հեղինակի կողմից⁴: Ընծայական-թողթը մեկնության համար նաև ինքնօրինակ նախադրություն է:

Ելնելով Անանիա Սանահնեցու այս թղթի մի արտահայտությունից. «Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նոյն եմ աստ հոգով, այլ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութիւն կատարի...» (Ա 2բ, Բ 1բ) (որ ոչ միայն նորկտակարանային հայտնի դարձվածքի (Մատթ. ԻՁ 41, Մարկ. ԺԳ 38 հմմտ. Բ Կորնթ. ԺԲ 9:)) իմաստով է այստեղ գործածվել, այլև պարզորոշ մի ակնարկ է իր առաջացած տարիքի մասին)՝ կարելի է ենթադրել, թե սույն տողերի հեղինակը տարիքն առած մի մարդ է եղել: Այս մասին են վկայում նաև Գիոսկորոսին հղած թողթ-ընծայականի հետևյալ տողերը. «...հարկիցի ձեռնարկել ի գործ վեհագոյն, քան զկար մեր...», «...Ձերովք աղաւթիք տացէ եւ ինձ կարողութիւն՝ սկսանել եւ կատարել զհայցուածս Ձեր՝ առ ի յաւգուտ բազմաց...»: Չբացառելով, որ այսօրինակ «վեհերոտութիւնը» սովորական մի տուրք կարող էր լինել միջնադարի գրական ավանդույթին՝ պետք է այսուամենայնիվ կարծել, թէ միայն տարեց մարդը կարող էր այսպիսի երկվութեամբ սկսել ի-

¹ Շարդրանքում բերված այս և հետագա թերթահամարները Մաշտոցի անվան Մատենադարանի № 2686 (Ա), 2859 (Բ) ձեռագրերինն են:

² «Յաղբատ եւ Սանահին», «Արարատ», 1901, էջ 275:

³ «Յիշատակարանք ձեռագրաց», Անթիլիաս, 1951, էջ 291:

⁴ Անանիա Սանահնեցի, էջ 181-185: «Գանձասար», Աստուածաբանական հանդես, Դ, 1993, էջ 216-261, Ե, 1994, էջ 250-285, Զ, 1996, էջ 228-277:

րեն հանձնարարված գործը՝ այն ավարտի հասցնել չկարենալու մտավախությամբ: Պարզ է նաև, որ նման աշխատանք կարելի էր վստահել գիտամանկավարժական տարիների վաստակ ունեցող մի անձնավորության: Այն նախատեսված էր ծառայելու «յազուտ բազմաց», այսինքն՝ օգտագործվելու իբրև դասագիրք ուսումնագիտական մի այնպիսի հաստատությունում, որպիսին էր Սանահնի բարձրագույն տիպի դպրոցը: Եվ, վերջապես, թվում է՝ միայն տարիների փորձ ու հեղինակություն ունեցող մի գիտնական վարդապետի պետք է դիմեին «յոյժ ըղձի եւ սիրական աղաչանաւք», «անձնայորդոր փութով... ոչ՝ մի անգամ եւ երկիցս, այլ՝ բազում թախանձանաւք»: Իսկ երբ մտաբերում ենք, որ «աղաչական» խնդրվածքների հեղինակն Անանիա Սանահնեցուց անհամեմատ համբավավոր մի հոգևորական և գիտնական վարդապետ էր, պատկերն էլ ավելի է պարզվում: Այստեղից՝ եզրակացություն. քանի որ Սանահնի վիմական արձանագրություններից մեկում Գիտակորոսի՝ իբրև այդ աթոռի հոգևոր առաջնորդի անունը վերջին անգամ հիշատակվում է 1063թ.^{*}, ապա հավանական է, որ Անանիա Սանահնեցին Մատթեոսի մեկնությունը շարադրել է մոտավորապես 1060-1063թթ.:

Ընծայականից հայտնի է դառնում, որ ինչպես նախորդ, այնպես էլ այս Մեկնությունը շարադրելիս հեղինակն օգտվել է ս. Հովհան Ոսկեբերանի և ս. Եփրեմ Ասորու համաբնույթ աշխատություններից: Բայց քանի որ Սուրբ Գրքի մեծահամբավ մեկնիչների երկերի «յորդառատ (յորդահոս) բանիցն յաճախութենէ եւ ի բազմադուռն տեսութեանց բազմաց միտք թարթափին՝ ոչ բերելով զբոլորից իմաստութեան տեսութիւն»՝ ընթերցողներին մատչելի դարձնելու համար, հեղինակը պատշաճ է գտել պարզեցնել և համառոտել աստվածաբանական այդ տեսություններն՝ ըստ հայեցողության:

Ելնելով մեծապես խաթարված այս ընծայականի փոքրիշատե ընթեռնելի հատվածներից՝ կարելի է մեկ անգամ ևս հավաստել, որ մեր հեղինակը քաջատեղյակ է ոչ միայն անտիկ մշակույթին, այլև՝ առասպելաբանությանը:

Խոսելով մարմնի բուժումից գերադասելի հոգու ապաքինման կամ հոգեկրթանքի կարևորության և անհրաժեշտության մասին՝ Սանահնեցին գրում է. «Վարժարանս այս (կամքի կոփումը համբերութեամբ-Հ. Զ.) նույն է մարտարան հրաշակերտս հոգեաց՝ կարգեալ ի պետ բժշկաց՝ ոչ ըստ Ասկղեպիասայ եւ Գաղիանոսի... իմն եւ համրուսումն

^{*} Տե՛ս Կ. Գաֆաղաբեան, «Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները», Երևան, 1957, էջ 187:

յարմատոց տկարագունիցն աւժանդակեալ, ըստ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն ցուցաւ ցամաքում արհեստիցն, այլ զի սա ոչ տարաշխարական մասն գոլով նուաստ եւ ոչ ի դեգերումն դեմետրական հնարիլ հնացելոց վիրաց խորիել խոխոտումն եւ սրտովք զքուժականն մերձեցուցանել յուխտագանցութիւն...»:

Թուղթն ուշագրաւ է նաև իր բառամթերքով: Այստեղ առկա **ետագատակ, խորխոտութիւն, հողագանք, յագնահոծեալ, տառաղորշմ, պարտաշնորհ** բառերը բացակայում են Նոր հայկագյան բառարանում:

Թուղթ-ընծայականին անմիջաբար հետևում է մեկնության Նախադրությունը. «[...] իմաստասիրաց Փիղովն վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսության ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ այլոց հնագունից հոգեւոր վարդապետաց առեալ... եւ արդ, այսչափ բաւական լիցի իմաստասիրաց՝ առ ի ծանուցումն խորհրդոց չորից Աւետարանչացն. եկեսցուք այսուհետեւ ի բանս Աւետարանին, զոր Մատթէոս գրեաց եբրայեցոցն յասելն իւրում այդպէս» (Ա 4ա-10ա, Բ 5ա-10ա): Նախադրության մեջ աղբյուրագիտական հետաքրքրություն են ներկայացնում Եփրեմ Ասորու և Եղիշեի երկերից բերված հատվածները: Առանձնակի շահեկանութեամբ աչքի է ընկնում հատկապես Եղիշեի անվամբ բերված հետևյալ հատվածը. «Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են. ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ միշտ Աստուած եւ միշտ արարող է յորժամ կամեցաւ...եւ դարձեալ ասէ՝ «զիմաստութիւն խասիմք, զոր յառաջ քան գլաւտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր» [Ա Կորնթ. Բ 7] (Ա 5բ-6ա, Բ 6ա-բ):

Քննությունը պարզում է, որ հատվածը քաղված է Եղիշեի Արարածոց մեկնության մաս կազմող «Վասն հոգւոց մարդկան» երկից: Սակայն այն բառացիորեն չի համապատասխանում այժմ հայտնի բնագրին.

Եղիշե

Դարձեալ յոչնչէ ոչ կարենք ասել զայս մեծ մարմինս արարածոյս, եւ ոչ ինքնաբոյս գոյացութիւն, նա եւ ոչ ի վարանս տարակուսի անկանիմք, թէ ուստի եղեւ բնական կամքն Աստուծոյ իմանալ եւ առնել ինչ, այլ միշտ Աստուած, միշտ արարող զարութիւն ընդ իւր: Եւ յորժամ կամեցաւ՝ նոյնպէս կամեցաւ,

Մանահնեցի

Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են, ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ՝ միշտ Աստուած եւ միշտ Արարող, յորժամ կամեցաւ, զոր միշտ ունէր յիմանալոցն եւ ամ ի գիտութիւն զիմանալեացն, իցէ Հայր եւ եղելոցս Արարիչ, բնական իմացութիւն՝ նիւթ, իսկ արարչա-

գոր ունէր յիմանալու՞ն՝ էած ի գոյացութիւն, զի իմանալեաց իցէ արարիչ բնական իմացութիւն: Իսկ արարչական գարութիւնքն՝ զիա՞րդ նիւթն անմարմին, իսկ արարչութիւնն զանմարմնոցն եւ զմարմնացեալն՝ ի բազմադիմի մատունս, յիրաքանչիւր ի զարդս...

Լ. Խաչիկյան, Եղիշեի Արարածոց մեկնությունը, Եր., 1992, էջ 264-265:

կան գարութիւնն՝ զարդ, նիւթ՝ անմարմին, որ է գիտութիւն նորա, իսկ արարչութիւն զանմարմին գիտութիւնն մարմնացոյց եւ ած ի տեսութիւն զգալի, զի յայտ լիցի իմաստութիւնն, որ ծածկեալ էր ի գիտութեանն Աստուծոյ, որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Աներեւոյթք ի գիտութեանն Աստուծոյ եղելովք ճանաչի մեզ»: Եւ դարձեալ ասէ. «Չիմաստութիւնն խաւսիմք «գոր յառաջ քան զյաւիտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր».

Ա 5բ-6ա, Բ 6աբ:

Հանդիպադիր հատվածներից ինքնին պարզ է դառնում, որ Սանահնեցու ձեռքի տակ գտնվել է Եղիշեի այս երկի, ինչպես երևում է, ընդարձակ տարբերակը:

Նախադրությանը հետևում է բուն մեկնությունը. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, Որդոյ Դաւթի... Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ... այնպիսի իմն մեղադիր լինէր եւ յայնպիսի կարծեաց, զոր ունէր, մերժէ եւ ուսուցանէ, թէ ոչ կարատ է յումեքէ առնուլ, այլ այլ Ինքն է աղբիւր բարեաց» (Ա 10ա-109բ, Բ 10բ-120բ): Մեկնության անակնկալ ավարտը խոստում է այն մասին, որ խմբագիր այս երկն ունեցել է իր շարունակությունը: Սակայն, դժբախտաբար, մեզ է հասել Ավետարանի առաջին ութ գլուխների մեկնությունը միայն:

Գիտակորոսին հղված ընծայականում ծանուցվում է, որ այս մեկնությունը շարադրվել է «վասն դիրահասութեան ընթերցողաց»: Արտայայտությունը վկայում է այն մասին, որ Անանիա Սանահնեցու սույն մեկնությունն ուսուցողական բնույթի աշխատություն է: Եթէ Ստեփանոս Սյունեցու համաբնույթ երկասիրությունը Քառավետարանի ընդհանուր մեկնություն է, ապա Անանիա Սանահնեցու այս գործը միայն մեկ Ավետարանի մեզ հասած առաջին հանգամանակից խմբագիր մեկնությունն է հայ մատենագրության մեջ:

Ստեփանոս Սյունեցու նշված մեկնության նման Անանիա Սանահնեցու այս երկն օգտագործվել է նաև իբրև դասագիրք: Ուրիշ խոսքով՝ երկը նախապես ծրագրավորվել, իսկ հետո խմբագրվել և շարադրվել է

ոչ միայն ընդհանուրի համար, այլև՝ «վասն դիրահասութեան ընթերցողաց», այսինքն՝ ուսումնագիտական հաստատության պահանջներին համապատասխան մակարդակով, հանգամանք, որ պայմանավորում է Ոսկերբերանի, Եփրեմի մեկնություններից քաղված հատվածների բնույթը և ընտրության այն եղանակը, որով առաջնորդվել է Անանիա Մանահնեցին: Այս է պատճառը, որ, ի հակակշիռ աստվածաբանական դժուարընկալելի տեսությունների, մեկնության մեջ զետեղված հատվածների զգալի մասը հատկանշվում է մի կողմից՝ վարդապետական և մանկավարժական, մյուս կողմից էլ՝ ճանաչողական ուղղվածությամբ: Ոսկերբերանի և Եփրեմի համաբնույթ երկերի հատվածների փոխազուցում-խմբագրումը¹ ինչպես նաև խմբագրման ծավալը և սկզբունքը բացորոշ դարձնելու նպատակով բերենք խմբագրվող հատվածների սկիզբն ու վերջը՝ համապատասխան տեղիների նշումով²:

Ա. (Անանուն), Ա 10ա-25բ, Բ 10բ-30ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի՝ Որդոյ Դ-աթի» (Ա 1)³: Այսու փոքր բանի փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ գալստեան Իւրում... եւ ետես, եթէ սա եւս նմանեալ է այնմիկ եւ նա՝ այսմիկ,- ասէ,- Նագովրեցի կոչեսցի:

Բ. Ոսկերբերան, Մեկնութիւն Մատթէ⁴ «Յաւուրսն այնոսիկ», ոչ մինչդեռ մանուկն էր եւ ի Նագարեթ սնանէր, այլ յետ երեսուն ամի... Եւ այսպէս եւ արքայութեան եւ ապաշխարութեան էին օրինակ այնպիսի կերպարանք:

Գ. Անանուն, Ա 28ա, Բ 33ա. Եւ յայնժամ մինչդեռ ոչ մեղք լուծեալ էին եւ ոչ անէծք բարձեալ եւ ոչ Հոգին իջեալ, զոր եւ Քրիստոս հրաշանալով ասէր. «Ձինչ ելէք տեսանել յանապատի». նա զի եւ ունէր մեծն ի ծնունդս կանանց զբնաւ խոնարհութիւն եւս եւ զգետտուն տեսակաւ յարինակ խոնարհութեան մեծին Կուսորդոյն եւ վասն մեր թափելոյ Հովին առ ոչխարս համարեալ: Սակս որոյ մնայր կարապետն կտրելոյ ոչ-

¹ Հայ և ոչ միայն հայ մեկնաբանական գրականության մեջ լայնորեն կենցաղավարած այս սկզբունքը հայտնի է «շղթայաձև» (cateno) անվամբ. Փ. Անթապյան, «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ», «Բանբեր Մատենադարանի», 1986, № 15, էջ 86:

² Ձեռագրի լուսանցքներում բացակայում են խմբագրված հատվածների հեղինականիշ անունները:

³ Առանց Ավետարանագրի անվան բերված զլիսահամարներն ու տնահամարները Մատթեոսի Ավետարանին են:

⁴ Տե՛ս «Յովհաննու Ոսկերբերանի յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին», Վենետիկ, 1826, էջ 139-146, Ա 25բ-28ա, Բ 30ա-33ա. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ...» (Գ 1):

խարին, որով սգատես սգեստին սպասէր սգեցուցանողին զաշխարհս զերծուլ ի նմանէ զքորձն արինական, որ զաւետիսն անդր ի դժոխս ընկալաւ զլոյս ի հարուցելոյն զգեցեալ եւ իբր զաւթոց արկեր (այսքան) (հմմտ. Ոսկեբերան, էջ 147):

Գ. **Եփրեմ**¹. էջ 34-38, Ա 28ա-30ա, Բ 33ա-35բ. Մարգարէութիւն առ Յովհաննէս եւ խորհուրդ մարգարէութեան առ Տէրն Յովհաննու, որ քահանայութիւն առ որդին Չաքարիայ... Յովհաննէս եցոյց յականէ Յորդանան գետոյ զՓրկիչն մեր: «Ահաւասիկ Սա է Գառն Աստուծոյ, Սա է, որ զայ բառնայ զմեղս աշխարհի» [Յովհ. Ա 29]:

Ե. **Ոսկեբերան**, էջ 154-163, Ա 30ա-35ա, Բ 35բ-42ա. «Իբրեւ ետես զբազումս ի փարիսեցոյն...» (Գ 7): Զիա՞րդ ասիցէ Քրիստոս, եթէ Յովհաննէս ոչ հաւատացին... Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն, եթէ «որոյ հեծանոցն ի ձեռին է» (Գ 12):

Զ. **Անանուն**, Ա 35ա-բ, Բ 42ա-բ. Եւ զի ցորեանն եւ ցաւդուն միապէս սփռին ի միում կալի եւ կամնասայլն հասարակաբար կոխեալ կալլսու զնոսա, այլ հատն ոչ ինչ վնասի ի կամնասայլիցն, այլ առաւել աւկտի... Եւ խոնարհք, որ ոչ ունին զկերպարանք աշխարհի, հանդերձ ողորմութեամբ եւ նուաստութեամբ ընդունին զԱստուած բնակեալ յինքեանս:

Է. **Եփրեմ**, էջ 38-39, Ա 36ա-բ, Բ 42բ-43բ. «Եւ Ինքն Յիսուս էր,- ասէ,- ամաց իբրեւ երեսուն ի ժամանակին, իբրեւ եկն Նա կնիք առնուլ ի Յովհաննէ» [Դուկ. Գ 23]: Եւ այս վասն ամօթոյ մարկիոնացոցն... Եւ քանզի ի մկրտելն մորա է Հոգին, վասն այտորիկ մկրտութեամբ մորա տուեալ լինէր Հոգին:

Ը. **Ոսկեբերան**, էջ 171-177, Ա 36բ-38բ, Բ 43բ-45բ. Վասն այնորիկ եւ Յովհաննէս յառաջագոյն ասէր, զոր պարտն էր ասել, եթէ՝ «Չեմ արժանի լուծանել զխրաց մի կօշկաց Նորա» [Մարկ. Ա 7]... Քանզի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտակապետս առնէ, այլ Որդիս սիրելիս Աստուծոյ պատրաստ է ալնպէս ձգէ զմեզ յայն հանգիստ:

Թ. **Եփրեմ**, էջ 40-46, Ա 38բ-42ա, Բ 45բ-49բ. «Նոյն ժամայն,- ասէ,- Հոգին Սուրբ վարեաց հան զՆա յանապատ, զի փորձեսցի Նա ի սատանայէ» (Գ 1): Եւ վասն էր մինչ յերեսուն ամ անդր ոչ փորձեաց... զի

¹ Տե՛ս «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Բ, Վենետիկ, 1836:

տացէ մեզ արինակ, թէ զկնի մկրտութեան մտանեմք ի փորձանս, եւ յետ փորձանացն՝ ապա եւ յարքայութիւն երկնից:

Ժ. **Ոսկեքերան**, էջ 182-186, Ա 42ա-44բ, Բ 49ա-51բ.

«Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն փորձել ի սատանայէ» (Գ 1): Ե՞րբ: Յետ Հոգւոյն իջանելոյ... Բերեալ հին վկայութիւն ի Գրոց՝ խրատե՛, զի թպէտ եւ սովամահ լինիցիմք կամ այլ եւս պէս-պէս չարչարանաւք տանջիցիմք, սակայն ի Տեառնէ մի՛ հեռասցուք:

ԺԱ. **Անանուն**, Ա 44բ, Բ 51բ. Եւ զի առաջին մարդն մոռացաւ զպատուիրանն՝ գլուսալն յԱստուծոյ եւ վասն այնորիկ ըմբռնեցաւ ի չարէն... որպէս Գաիթ այն՝ զԳողիադ:

ԺԱ 1. **Ոսկեքերան**, էջ 186-190, Ա 44բ-46բ, Բ 51բ-52բ. Եւ զի չէր տեղեակ նա, թէ Որդի իցէ Աստուծոյ... ի գոգն Աբրահամու:

ԺԱ 2. **Անանուն**, Ա 46բ, Բ 52բ. Եւ զի նախ կերակրոցն արար սկիզբն պատերազմի... իբր զնահատակ քաջ մտցէ յառագաստն լուսոյ՝ որպէս Տէր ի հարսանիսն Կանայ գալիլեացոց իբր յաղթող պատկեալ:

ԺԲ. **Ոսկեքերան**, էջ 198-201, Ա 47ա-48բ, Բ 53բ-55ա. «Իբրեւ լուս Յիսուս, եթէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս ետ ի կողմանս գալիլեացոց» (Գ 12): Եւ ընդէ՞ր, ասեն, ետ խոյս: Չի եւ այնու եւս ուսուցանիցէ զմեզ... թող նախ երթիցուք ի տուն եւ ընդ ընտանիս խօսեսցուք, այլ զամենայն ինչ թողեալ՝ երթային մտադիր զկնի՝ որպէս Եղիշայն զյետ Եղիայի:

ԺԳ. **Եփրեմ**, էջ 46-48, Ա 48բ-49ա, Բ 55ա-բ. Եւ զի լուսն աշակերտքն Յովհաննու, մինչդեռ խաւսէր նա ընդ Տեառն մերոյ, եւ թողին զվարդապետն իւրեանց եւ զնացին զկնի Տեառն մերոյ... Տեղի ետ իմաստութիւն աշխարհիս այնմ իմաստութեան, զի Նա Ինքն է իմաստութիւն իմաստութեանց:

ԺԴ. **Անանուն**, Ա 49ա-51ա, Բ 55բ-57ա. «Եւ, տեսեալ Յիսուսի, ժողովորդ բազում ել ի լեռն» (Ե 1): Նախ սկիզբն արար մարմնոյ բժշկութիւն, զի ի ձեռն երեւելի բժշկութիւն գտորա աչաք տեսանէին, բացին աչք ոգոց կուրացելոցն, հաստայցեն եւ ոգոցն բժշկութիւն... Եթէ ոչ մեծամեծս ինչ հաստատութիւն էին զնմանէ, վասն որոյ տանի զնոսս յանապատ տեղիս եւ յորդորականացն սկսանի այսպէս:

ԺԵ. **Ոսկեքերան**, էջ 210-217, Ա 51ա-53բ, Բ 57ա-59ա. «Երանի իցե աղքատաց հոգով, զի նոցա է արքայութիւն երկնից» (Ե 3):

Եւ զինչ իցե ասել աղքատս հոգով, այլ՝ զխոնարհս եւ զբեկեալս սրտիք... Բանգի արդարութիւն միշտ զամենայն իսկ զառաքինութիւնս ոգոցն սովոր են կոչել Գիրք: Եւ աստ եւս հոգետոր հատուցումն դնէ. «Չի նոցա է,- ասէ,- արքայութիւն երկնից»:

ԺԶ. **Անանուն**, Ա 53բ, Բ 59ա-բ. Ի ժամանակի իբրեւ տայր Տէր մեր երանութիւնս ընդ աշակերտսն հայեր. «Բարձ,- ասէ,- Յիսուս զաչս առ նոսս եւ սկսաւ ասել... Վասն որոյ ոչ պարզաբար երանեաց աղքատս, այլ յաւել՝ «զհոգւոյն», որոց ոգիքն աղքատ ի չարեաց են եւ փարթամք արդարութեամբ: Եւ զի միմիայն միով առաքինութեամբ բարձրասցին, յաւել եւ զմիւսն եւս:

ԺԷ. **Եփրեմ**, էջ 57-58, Ա 53բ-54ա, Բ 59ա-բ. «Երանի հեզոց» (Ե 5): Հեզ էր Մովսէս, քան զամենայն որդիս ազգին իւրոյ... Ուսարո՛ւք յԻնէն, զի հեզ են եւ խոնարհ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց» (ԺԱ 29):

ԺԸ. **Անանուն**, Ա 54ա-55բ, Բ 59ա-61ա. Չի բարկութիւն ախտ է բնական եւ ընդոյծին, որ իբր վառի, հրդեհեալ ապականէ զամենայն բնութիւն ամբոխեալ զարեւն մրրկի, որ խռովէ զձով... վարձ՝ աշխատութեամբ հանդերձ, եւ հատուցումն՝ գործաւք հանդերձ, եւ ցասումն՝ պակասութեամբ հանդերձ, եւ պատիժն՝ յանցանաւք հանդերձ:

ԺԹ. **Ոսկեքերան**, էջ 217-227, Ա 55բ-60ա, Բ 61ա-65բ. «Երանի իցե ձեզ, յորժամ նախաստիցեն զձեզ եւ ասիցեն քան չար զձէնջ սուտ» (Ե 11): Կամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ ժանտագործս կամ թէ այլ ինչ կոչիցեն... շատ է ձեզ մխիթարութիւն այն իսկ, զի վասն Իմ բամբասիցիք, եւ աստ զՀայր դնէ, զի ամենայն ուրեք զգուգական հաւասարութիւն զիր ընդ Հօր յայտ առնիցէ:

Ի. **Եփրեմ**, էջ 59, Ա 60ա, Բ 65բ. Առ դպիրսն եւ փարիսեցիսն ասաց, որ կայինն եւ խնդրէին պատճառս, ասէ. «Ես ոչ եկի լուծանել զԱւրեւնս կամ զՄարգարէս, այլ՝ կատարել» (Ե 17) (այսքան):

ԻԱ. **Անանուն**, Ա 60ա-61ա, 65բ-66բ. Եւ զստուերսն հանել ի ճշմարտութիւն, ամենայն, որ ինչ միանգամ օրինակքն էին, կատարեցան ժամանակք ազգէ յազգ եւ բովանդակեցան առաջին յԱդամայ... տանի յարէ յառաջինսն, թէ լրումն է այս ամենայն առաջնոցն, եւ նա՛ ի սմա ծած-

կեալ, եւ սա՝ ի նմա նկարագրեալ, զի ի նոյն եւ ի մի կատարումն ածեն զմարդն:

ԻԲ. **Ոսկերեքան**, էջ 237-249, Ա 61ա-65ա, Բ 66բ-71ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն, եթէ մի՛ սպանանիցես, բայց Ես ասեմ ձեզ, թէ եւ մի՛ բարկանայք իսկ» (Ե 21). եւ այսու աստուածեղէն իմն եւ երկնատր առաքինութեան հորդէ ճանապարհ ... եւ արդ, որ զարմատն հատանէ, յայտ է, թէ առաւել զոստսն կոճոպիցէ, մանաւանդ՝ զի եւ բուսոյն իսկ սկիզբն չտայցէ լինել:

ԻԳ. **Ոսկերեքան**, էջ 253-262, Ա 65ա-68բ, Բ 71ա-75ա. Ոչ ամենեւին ի միջոյ բառնայ զիրսն, զի չէ հնար մարդոյ բնաւին ի կարեաց ազատանալ, բայց կարճել մարթի, այլ ամենեւին առանց կարեաց լինել անհնար է... յորժամ յատենից եւ ի բանտից եւ յամենայն տառապանաց զանձն ազատիցէ:

ԻԴ. **Ոսկերեքան**, էջ 266-273, Ա 68բ-70բ, Բ 75ա-77ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն...» (Ե 21): Յորժամ կատարեաց զառաջին պատուիրանն եւ ի գլուխ առաքինութեան եւ զգաստութեան տարաւ հասոյց... անտի երեւի առաւել մարդասիրութիւն, զի ամենայն կողմանց զքոյ ազուտ խնդրէ:

ԻԵ. **Եփրեմ**, էջ 59-65, Ա 70բ-773ա, Բ 77ա-80բ. «Ես ոչ եկի լուծանել զԱրէնս կամ զՄարգարես, այլ՝ կատարել» (Ե 17). եւ կատարումն թերութեան լինի պիտոյ... Ոչ անիրաւեցաւ, վասն այնորիկ ոչ պարտի եւ ոչ խնդրեաց զվրէժ իւր, վասն այսորիկ առնու զհատուցումն եւ յաւել ետ, վասն այսորիկ պասակի:

ԻԶ. **Ոսկերեքան**, էջ 273-277, Ա 73ա-75ա, Բ 80բ-83ա. «Ասացաւ,- ասէ,- թէ որ արձակէ զկին իւր...» (Ե 3): Ոչ նախ եւս յառաջագոյն մատչի, մինչ չեւ զառաջինսն բարոք սրբիցէ... զի այն յայտնի իսկ է, եւ չէ որ կարաւտ ուսանել, թէ ոչ ի չարէն իցէ, եւ ոչ եթէ աւելի ինչ է, այլ հակառակ աւելոյն, այլ աւելի երդումնն է:

ԻԷ. **Ոսկերեքան**, էջ 279, Ա 75ա, Բ 83ա. Սի եւ երդմանն արէնք ի հնումն վասն այնորիկ դնէին... զի հաստատուն կերակուր զալ նոցա, եւ այն իսկ փութոյ արիւնացն լինէր գործ:

ԻԸ. **Անանուն**, Ա 75ա, Բ 83ա. Ջի որ գառաջին երանութիւնս լուիցէ եւ այնպիսի ինչ յարդարիցէ զանձն, որպէս եւ Քրիստոս պատուիրեաց եւ ոչ մի ինչ հարկ յամենքէ ստիպիցէ երդնուլ, յորժամ համեստ եւ պարկեշտագոյն յամենայն իրս գտանիցի (այսքան):

ԻԹ. **Ոսկերերան**, էջ 284-297, Ա 75ա-79ա, Բ 83ա-87բ.
«Լուարոք, զի ասացաւ՝ ակն ընդ ական...» (Ե 40): Տեսանես, զի ոչ վասն ական ասացաւ գառաջինսն... զի եւ տեղեան իսկ զարթուցանիցէ զմիտս նոցա, քանզի դեռ եւս տկարագոյնք եւ ծանրամիտք էին:

Լ. **Ոսկերերան**, էջ 300-316, Ա 79ա-85բ, Բ 87բ-95ա.
«Ձգո՛յ՛ լերոք ողորմութեան ձերում...» (Ձ 1): Ջբռնաւորագոյնն իսկ քան զամենայն ախտսն մերժէ հանէ այսուհետեւ... յերախտեացն, զոր հանապազ առնէ եւ ի պատուիրանացն զոր տայ, յայտ է:

ԼԱ. **Ոսկերերան**, էջ 321-329, Ա 85բ-88բ, Բ 95ա-99ա.
«Յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն...» (Ձ 16): Բարոք է աստ հեծել եւ հոգոց հանել դառնապէս... Եւ յայտնագոյն զսոցին վնասն ի փշոցն առակէ եցոյց: Բայց սակայն եւ աստ ընդ աղաւտ ակնարկեաց:

ԼԲ. **Եփրեմ**, էջ 65, Ա 88բ, Բ 99ա. «Եթէ լոյսն, որ ի քեզ է, այն խաւար է» (Ձ 23): Այսինքն՝ եթէ որովք մեղանչես դու, զի լուսատու է նա... այս է զոր ասէ. «Ուր՝ գանձք ձեր, անդ իցեն եւ սիրտք ձեր» (Ձ 21):

ԼԳ. **Ոսկերերան**, էջ 334-340, Ա 88բ-91բ, Բ 99ա-101բ. «Ոչ որ կարէ երկուց տերանց ծառայել...» (Ձ 24): Տեսանե՞ս զիարդ առ սակաւ-սակաւ ամենայն յիմեքէ մերժէ... եւ ոչ այլ ինչ նոյնպիսիք երեւեսցին երբէք, այլ ամենայն ի դերեւ ելեալ գնայցէ:

ԼԴ. **Ոսկերերան**, էջ 343-351, Ա 91բ-95ա, Բ 102բ-106ա.
«Նայեցարո՛ւք ընդ շուշանն վայրենի...» (Ձ 28): Յորժամ ասաց վասն կարեւոր կերակրոցն եւ եցոյց, եթէ ոչ վասն այնր ինչ պարտ էր հոգալ... որչափ ի մարմնաւորացս ցուցանենք փոյթ, նոյնչափ ի հոգեւորսն՝ ծուլութիւն:

ԼԵ. **Ոսկերերան**, էջ 357-372, Ա 95ա-102ա, Բ 106ա-113ա.

«Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք» (Ձ 1): Եւ արդ, չիցէ պարտք սաստել յանցաւորաց... առաւել դառն տանջանք այն են, յորժամ յարքայութենէն որ վրիպիցի:

ԼԶ. Ոսկերերան, էջ 379-387, Ա 102ա-105ա, Բ 113ա-116ա.

«Ոչ ամենայն, որ ասէ ցԻս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն...» (Է 21): Եւ ընդէր արդեւք ոչ ասաց, թէ որ առնիցէ զկամս Իմ... որ խթանի ընդդէմ արացիցէ, ինքն խոցի, նոյնպէս եւ որ զառաքինին նենգիցէ, ինքն պատժի:

ԼԷ. Ոսկերերան, էջ 390-395, Ա 105ա-107բ, Բ 116ա-118բ.

«Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զբանս զայստսիկ...» (Է 28): Թէպէտ եւ տաղտկեալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն... քանզի ընդ ամենայն ծագս տիեզերաց տարածեցաւ բանն աստուածապաշտութեան:

ԼԸ. Եփրեմ, էջ 66-67, Ա 107բ-018բ, Բ 118բ-119բ. «Որ ունիցի,- ասէ,- տացի նմա...» (ԻԵ 29): Իբրև զայն զի ասէ. «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ» (ԺԱ 15, ԺԳ 9, 43, Մարկ. Գ 9, Գուկ. Ը 8, ԺԳ 35)... մինն ոչ աճեցոյց եւ միւսն ոչ պահեաց:

ԼԹ. Ոսկերերան, էջ 405-408, Ա 108բ-109բ, Բ 119բ-120բ.

«Իբրև եմուտ Նա ի Կափառնաում...» (Ը 5, Գուկ. Է 1): Բորոտն, յորժամ էջ ի լեռնէ անտի Յիսուս... մերժէ եւ ուսուցանէ, եթէ ոչ այլ ումեքէ կարատ առնուլ, այլ Ինքն է աղբիր բարութեանց:

Համեմատությունից պարզվում է, որ **Անանուն** անվամբ բերված Ա, Գ, Ձ, ԺԱ, ԺԱ 2, ԺԳ, ԺԶ, ԺԸ, ԻԱ, ԻԸ հատվածներն, ամենայն հավանությունեամբ, Անանիա Սանահնեցու գրչին են պատկանում: Բանն այն է, որ խնդրական հատվածները բացակայում են ոչ միայն Ոսկերերանի ու Եփրեմի խմբագրվող երկերում, այլև՝ հայ և օտար մեզ հայտնի համարնույթ մեկնություններում: Այդ հատվածների գատորոշումն ու արձանագրումն իր նպաստն է բերում Անանիա Սանահնեցու ոչ միայն հեղինակային խոսքի, այլև՝ նրա մատենագրական ժառանգության մեջ այս երկասիրության ըստ ամենայնի գնահատմանը:

Խմբագրվող հատվածների ճնշող մեծամասնությունը քաղված է Հովհան Ոսկերերանի Մատթեոսի մեկնությունից: Սա նշանակում է, որ Անանիա Սանահնեցին Մեկնությունը շարադրելիս առաջնորդվել է գլխավորապես Ոսկերերանի այդ երկասիրությամբ, հանգամանք, որ դրսևորվում է ոչ միայն բառացի քաղումներով (Ե, Ը, Ժ, ԺԲ, ԺԵ, ԺԹ,

ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԶ, ԻԷ, ԻԹ-ԼԱ, ԼԳ-ԼԷ, ԼԹ), այլև՝ մասամբ բառային, մասամբ իմաստային առաջաբերություններով: Ավելի հստակ ցույց տալու համար Սանահնեցու՝ աղբյուրներից օգտվելու կամ դրանք խմբագրելու սկզբունքը՝ ներկայացնենք Ոսկերեբանի եւ Սանահնեցու նույնանուն մեկնությունների համապատասխան հատվածները.

ՈՍԿԵՐԵԲԱՆ, էջ 145-146

«Եւ Յովհաննէս,- ասէ,- ունէր հանդերձ ի ստեւոյ ուղտու...» (Գ 4): Տեսանէ՞ս, զի է ինչ, զոր Մարգարէին յառաջագոյն ասացին եւ է, ինչ զոր Աւետարանչացն թողին: Վասն որոյ եւ Մատթէոս, եւ մարգարէութիւնս դնէ եւ զիրսն յաւելու: Քանզի եւ զպատմութիւն հանդերձից արդարոյն չհամարէր զորձ դատարկութեան ասել:

Չի զարմանալի իսկ եւ սքանչելի էր ի մարդկեղէն մարմնի այնպիսի ժուժկարութիւն տեսանել, որ մանաւանդ եւ զիրեայսն իսկ ձգեալ ածէր՝ յինքեան ցուցանել զմեծն Եղիա, եւ յերանելոյն յիշատակ առաքէր զմիտս նոցա՝ իրաքն, որ յայնժամ ի նմա երեւէին, մանաւանդ զի եւս մեծամեծ զարմանալիս: Չի նա ի քաղաքէ եւ ի տունս մտանէր եւ ուտէր եւ սա ամենեւին անդստին ի խանձարրոցն յանապատ տեղիս բնակէր:

Քանզի պարտ եւ պատշաճ իսկ էր կարապետին այնորիկ, որ զիինն ամենայն լուծանելոց էր զաշխատութիւնս, զանէծսն, զտրտմութիւնսն, զքրտունս, օրինակ ինչ զայսպիսի պարգեւեաց յանձին ցուցանել եւ վերագոյն գտանել, քան զայնր ամենայնի դատապարտութիւն: Քանզի ոչ երկիր գործէր եւ ոչ ակաւսս կոտորէր եւ ոչ քրտամբք երեսաց ուտէր հաց: Այն-

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Ա 28ա-բ, Բ 32բ-33ա

Չի Մարգարէքն է, ինչ զոր ասացին, եւ էր, ինչ զոր Աւետարանչացն թողին. զգեստին արինակն, զոր Մատթէոս գրեաց առ յիշատակ ածել զիրեայսն մեծին Եղիայի եւ եւս մեծագոյն քան զնա, զի նա ի քաղաքս բնակէր եւ կերակուր ճաշակէր, եւ սա ի խանձարրոցն յանապատի բնակէր՝ ոչ ինչ ճաշակելով, զի պարտ էր

կարապետին, յոր զիինն ամենայն լուծանելոց էր զաշխատութիւն, զանէծս, զքրտունսն արինակ ինչ այսպիսի յանձին ցուցանել, զի ոչ զերկիր գործէր եւ ոչ քրտամբք երեսաց ուտէր, այլ դուզնաքեայ սեղանով եւ հանդերձի վարէր: Չի ոչ տան եւ ոչ սեղանոյ կարաւտէր, այլ հրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր, որպէս Ադամ մինչ չեւ էր յանցեալ, զի ապաշխարութեան եւ արքայութեան էին արինակ այնպիսի կեանքս...

պէս վարկապարագի եւ դիրքին իմն կազմէր իւր սեղան եւ առաւել քան զսեղանն՝ դիրագոյն հանդերձն եւ եւս առաւելագոյն առանց պաճուճանաց զքնակութիւնն: Քանզի ոչ յարկի եւ ոչ մահճաց եւ ոչ սեղանոյ եւ ոչ այլ իմիք այնպիսեաց կարատանայր, այլ զհրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր: Վասն այնորիկ եւ ստեւոյ ուղտու ունէր զհանդերձն, զի եւ այնպիսի կերպարանաւք խրատեսցէ զմեզ՝ թողուլ զիրս մարդկաւրէնս եւ մի ինչ ամենեւին հաղորդութիւն ունել ընդ երկրի, այլ անդրէն յառաջին ազնուականութիւնն ընթանալ, յորում էր Ադամ, մինչ չեւ էր լեալ կարատ հանդերձից եւ վերարկուաց:

ՈՍԿԵԲԵՐԱՆ, էջ 199-200

«Յայնմ հետէ,- ասէ,- սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»: Յայնմ հետէ՝ յորմէ՞. յորմէ՞ զՅովհանն արկին ի բանտ: Եւ ընդէր ի սկզբանէ ոչ իսկ քարոզէր կամ զի՞ բնաւ կարատանայր Յովհաննու, ուր գործոցն վկայութիւն քարոզէր զմասնէ: Այլ զի այսու եւս զպատիւն նորա ուսանիցիս, զի, զոր արինակ՝ հայր, նոյնպէս եւ նա ունէր Մարգարէս, զոր եւ Չաքարիա եւ հրեշտակն գուշակէին: «Եւ դու,- ասէ,- մանուկ Մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր»: Եւ զի մի պատճառս ինչ տայցէ անամաւթ ազգին հրէից, զոր եւ Ինքն իսկ ասէր, եթէ՝ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Ա 47բ-8, Բ 52ա-բ

«Յայնմ հետէ սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»: Յայնմ հետէ, յորմէ արկին զՅովհաննէս ի բանդ: Եւ ընդէ՞ր ոչ ի սկզբանն Ինքն քարոզէր, այլ կարատէր Յովհաննու վկայութեանն, զի վկայութիւն նշանացն բացայայտ քարոզէր զՆմանէ: Այլ զի այսու եւս պատիւ Նորա յայտ լիցի, զի որպէս Հայր, սոյնպէս եւ Սա, ուսուցանէր զՄարգարէսն, զոր եւ Չաքարիայ եւ հրեշտակն գուշակէին, թէ՝ «Դու մանուկ Մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր», զի մի՛ պատճառս ինչ տացէ անամաւթ ազգին հրէից, զոր եւ Ինքն իսկ ասէր, եթէ՝ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ

դեմ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասեն՝ ահա՛ այր կերող եւ արբեցող եւ բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց, եւ արդարեցաւ իմաստութիւն յորդոց իւրոց»: Եւ այլազգ եւս՝ զի հարկ էր այլում ճառել նախ զՆմանէ, եւ ապա Իւր՝ վասն Իւր: Եթէ յետ այնչափ վկայութեանց եւ ցուցանելոյ զՆա ի մատնէ Յովհաննոյ ասէին, եթէ՝ «Դու վասն անձին Քո վկայես, եւ վկայութիւն Քո չէ ճշմարիտ», զի եթէ չէր ի մէջ անցեալ Յովհաննոյ եւ զայն ամենայն վկայեալ վասն Նորա, որչափ եւս ամպարշտագոյնս խաւսէին: Վասն այնորիկ իսկ ոչ քարոզեաց յառաջ քան զնա եւ ոչ նշանս ինչ արար, մինչեւ մատնեցաւ նա ի բանտն, զի մի՛ եւ այնու եւս բաժանիցի ժողովորդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ ինչ արար նշանս, զի առ Յիսուս պահիցին ամենայն արուեստք նշանացն: Թէ այնպիսի յայտնի իրք մատակարարեցան եւ յառաջ քան զմատնելն Յովհաննոյ ի բանտն եւ յետ մատնելոյն, սակայն այնպէս նախանձ ընդդէմ իմն թուէին նմա աշակերտքն Յովհաննոյ ի միտս բազմաց, քանզի զՅովհաննոյ կարծէին, թէ Քրիստոս իցէ:

Ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասէին՝ ահա՛ կերող եւ արբեցող»: Եւ այն եւս զհարկէր այլում նախ ճառել զՆմանէն, եւ ապա Իւր՝ վասն Իւր, զի եթէ յետ այնչափ վկայութիւն Յովհաննոյ եւ մատամբն ցուցանելոյ ասէին, թէ՝ «Դու վկայես անձին Քո, զվկայութիւն Քո ոչ է ճշմարիտ», եթէ չէր այնչափ վկայեալ Յովհաննոյ, որչափ եւս ամբարշտագոյնս խաւսէին: Վասն այնորիկ ոչ քարոզեաց զյառաջ քան զնա եւ ոչ՝ նշանաբար, մինչեւ մատնեցաւ նա ի բանտ, զի մի՛ այնու բաժանեցի ժողովորդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ արար նշանս, զի առ Յիսուս պահեցին արուեստք նշանացն, քանզի զՅովհաննէս կարծէին, թէ Քրիստոս իցէ:

Բնագրի եւ խմբագրվող համապատասխան հատվածների բաղդատումից պարզվում է, որ Անանիա Սանահնեցին (առանձին պարբերությունների բացթողումով) համառոտելով եւ համառոտված հատվածները մեկմեկու կցելով է խմբագրում մեկնությունը: Ոսկեբերանի երկը խմբագրելիս Սանահնեցին ձգտում է որոշ բառեր եւ արտահայտություններ փոխարինել ուրիշներով՝ խուսափելով մեկնության նույնական հատվածների բառացի քաղումից: Այսպես օրինակ՝

ՈՍԿԵԲԵՐԱՆ	ՍԱՆԱՀՆԵՑԻ
Վասն որոյ ամէ գնովիմք գահա- զինան... (էջ 163):	Վասն որոյ հարկանէ սպառնա- լեալքն (Ա 35ա, Բ 42ա):
...զգուգական հաւասարութիւն զիւր ընդ չար յայտ առնիցէ (էջ 227):	...զի այսու զԻւր զուգականութիւն ընդ չար ցուցցէ (Ա 60ա, Բ 65բ):
...բուսոյն իսկ սկիզբն չտայցէ լինել (էջ 249):	...բուսոյն սկիզբն ոչ տայ առնուլ (Ա 65ա, Բ 71ա):
Մի եւ երդմանն արեւնք ի հնումն վասն այնորիկ դնէին... (էջ 279):	Իսկ արեւնքն ի հնումն հրամայէին երդնուլ (Ա 75ա, Բ 83ա):
...տարածեցաւ բանն աստուած- պաշտութեան (էջ 395):	...տարածեցաւ բանն աստուած- պաշտութեան, եւ որք ընկալան զնա կամատրութեամբ, յաւելի զնո- սա եւ զշնորհս Իւր (Ա 107ա, Բ 118բ):

Բացառելով մասնակի տարբերություններն ու ընդհանրությունները՝ կարելի է արձանագրել, որ Սանահնեցին կատարում է մեկնության այսպես կոչված իմաստային խմբագրումը՝ զանց առնելով ոչ էական դատողություններ պարունակող երկրորդական նախադասություններ և առանձին պարբերություններ:

Ինչպես տեսանք, Սանահնեցու՝ Մատթեոսի սույն մեկնությունը կազմվել է ոչ միայն համաբնույթ աշխատությունների խմբագրաբար բանաբաղված առանձին, այլև՝ լիովին ինքնուրույն հատվածներից: Վերջիններս ցոյց են տալիս, որ Անանիա վարդապետը սոսկ խմբագրող չէ, այլ նաև՝ ուրույն մտածող: Պարզ է՝ հենց այդ ինքնուրույն մասերում են դրսևորվում հեղինակի տեսական կարողությունն ու զիտական պատրաստությունը:

Շեշտելով Աստծու մշտնջենականության և ամենագործության գաղափարը (հետևելով Որոզինէսի, ս. Իրինէոսի, ս. Գրիգոր Աստվածաբանի, ս. Հովհան Ոսկեբերանի և այլոց երկերում բազմիցս արծարծված՝ մարդու աստվածամանության գաղափարին, որն իր ակունքներով կապ-

վում է Աստվածաշնչին և նորալատոնյան ուսմունքին¹) Սանահնեցին ընդգծում է աստվածանմանության գաղափարի կարևորությունն անհատի հոգևոր բարեփոխման և կատարելագործման ճանապարհին: Մարդու այսօրինակ աստվածացումը, որն իր դրսևորումը գտավ առավելապես ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ հասկերոշվող ժամանակի գրականության մեջ*, արդյունք էր մի կողմից՝ Ժ-ԺԱ դդ. քաղաքական և տնտեսական նպաստավոր պայմանների ծնունդ հոգևոր զարթոնքի, մյուս կողմից՝ ավանդական այդ գաղափարի նորովի ընկալման:

Այդ գաղափարն է ընկած Սանահնեցու հետևյալ տողերի հիմքում. «Արդ, զխորհուրդն, որ Ադամայ յառաջին Ադամ նկարագրէր Աստուած,- գրում է հեղինակը,- յասել Մարգարէին, թէ՛ «Արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր» [Ծննդ. Ա 27], եւ պատկեր Աստուծոյ Աստուած է՛ զբոլոր Ինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատիպին ճշգրտաբատակ նմանութիւն, զի թէպէտ եւ չարնախանձ հակառակութիւն սկզբնաչար ածին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեամբ տեսակ եւ զանապականութեամբ պատկերն զինէր մարթ եղծանել գրոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարագրեցաւ: Չի թէպէտ եւ ներեսց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ աւճէն, եւ ապա ընկալցի ըստ արժանին զհատուցումն դատապարտութեան, եւ թէպէտ ի հող դարձաւ մարդ Ադամ առաջին, սակայն խմոր անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, յապաղանաւք ընդ երկար ժամանակս փոխադրեսցէ զանգուածն յիւր նմանութիւն, զի նորոգումն կենաց շրջեսցի» (Ա 6բ, Բ 6բ-7ա):

Մարդու մեջ անթեղված աստվածային նախասկզբի մասին Անանիա Սանահնեցու պաշտպանած միտքը հայտնանշում է աստվածանմանության գաղափարի նկատմամբ հեղինակի անթաքույց համակրանքը, որն այստեղ աչքի է ընկնում ջատագովական ընդգծված տրամադրությամբ: Այն իր դրական (կատաֆատիկ) միտումով ենթադրում է աստվածճանաչման մասնակի հնարավորություն: Վերջինս, որ Հայ (և ոչ միայն Հայ) Եկեղեցու մարդաբանական համակարգի առանցքն է կազմում, այս պարագային Անանիա Սանահնեցու մարդասիրական աշ-

¹ Տե՛ս Զոռվմ. Ը 29, Ա Կորնթ. ԺԱ 7, ԺԵ 49, Բ Կորնթ. Գ 18, Բ Պետր. Ա 4, նաև՝ *C. C. Аверинцев*, *Поэтика ранневизантийской литературы*, М. 1977, с. 78, 79, *B. Жуков*, "Мистагогия" Максима Исповедника и развитие византийской теории образа, - "Художественный язык средневековья" (сбор. статей), М. 1982, с. 115, М. Старокадомский, . Неоплатонизм и христианство, "Богословские труды", сб. 12. М., 1974, с. 214:

* Այս մասին հանգամանալից տես *Չրաչ Թամրազյան*, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Եր., 2004:

խարհայացքի իմաստասիրական բարոյական հենակետն է: Հեղինակը խորապէս հավատում է մարդու բարձր կոչմանը: Թեպետ բազում են մարդկային մեղքերը, այսուամենայնիվ, իր մեջ կրելով «անապականութեան խմորը», նախասկզբնական մի մղումով նա նմանվում է Աստծուն¹:

* * *

Անանիա Սանահնեցու՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը հրատարակվում է ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2686 ձեռագրի²: Ինչպես ժամանակին իրավացիորեն նկատել է Հ. Ս. Անասյանը, «այս օրինակը, որ ԺԲ-ԺԳ դարերի գրչությամբ է, շատ է եղծված և շատ մասերում անընթեռնելի դարձած: Նույն Մատենադարանի № 2859 ձեռագիրը, որ երկրորդ ծանոթ օրինակն է՝ ԺԹ դարի գրչությամբ, հիշեալ № 2686 եղծված օրինակից է արտագրված և եղծված մասերում նույնիսկ տեղ-տեղ փոքր այլալրումների ենթարկված»³: Այս պատճառով № 2859 ձեռագիրը զանց է առնված:

Հրատարակվող բնագրի եղծված շատ հատվածները վերականգնել ենք ըստ ս. Հովհան Ոսկեբերանի եւ ս. Եփրեմ Ասորու երկերի համապատասխան հատվածներում առկա ընթերցումների:

Պահպանված է ձեռագրի ուղղագրությունը:

ՀԱԿՈՒՔ ԲՅՈՍԵՅԱՆ

¹ Արևելաքրիստոնեական աստվածապաշտության այս կարևորագույն պահի մասին հանգամանակից տե՛ս *И. В. Попов, Идея обожения в Древне-восточной церкви, М., 1909.*

² Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ա, Երեւան, 1965, էջ 855:

³ Հ. Ս. Անասյան, «Հայկական մատենագիտություն», հտ. Ա, Երեւան, 1959, էջ 777:

**ԱՅԻՆԱՆԻԱՅԻ ՎԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ Ի
ԽՆԴՐՈՅ ՎԱՐԻ ԳԻՈՍԿՈՐՈՍԻ, ԶՈՐ ՅԵՏՈՅ ԻՄ
ԱՂԱՉԵԱԼ ԶԼՈՒՄԱՒՈՐԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻՏՆ
ՍԱՐԿԱՒԱԳ ԸՍՏ ՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԳ
ԼՈՒՄԱՒՈՐԻՉ՝ ՎԱՅ ԱԶԳԻՆ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ՄԻ-
ՐՈՅՆ, ԶՈՐ ԷՐ ԱՌ ԻՄ ԱՆՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ,
ԲՐԱԶՈՒՄ ՋԱՆԻՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿՐԵԱՅ
ՅԱՂԱԳՍ ԱՅՍՐ ՏԱՌԻՍ**

(2ա) [Ը]նկալա գհրաման տեառն իմոյ հաւր Դիոսկորոսի եւ հոգե-
լիր վարդապետի Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի, զոր յոյժ
ըղծիւ եւ սիրական բաղձանաւք հայցեալ պահանջեցեր ի մէջն՝
վասն բացայայտութեան տերունեան բանից կենսաբեր Ա-
ւետարանին՝ համառաւտաբար շարագրել զսրբոց վարդապետացն
վերայճառութիւն, որք տեսութեամբ Հոգւոյն բացափայլեցին ի
մէջ զստալոյս գիտութեան եւ զծածկեալ խորհուրդ Հոգւոյն, որ
ի բազմաց զանխլաբար թաքչիւր: Զի թէպէտ եւ պատմող բանին
Աստուծոյ Յովհանն եւ [...]՝¹ տրին, վարդապետն ասորւոց [Ե]փրեմ
լուսաւորագոյնս բացայայտեցին մեզ զիմաստս Աւետարանին,
այլ ի յորդառատ բանիցն հաճախութենէ եւ ի բազմադուռն
տեսութեանց[ն] բազմաց միտք թարթափին՝ ոչ բերելով զբոլորից
իմաստութեանն տեսութիւն, որ է աւր կասեցեալ ըստ մաքուր
տեսութեան ձեր, հակիրճ² //ուսումնասիրաց, վերահասու լինել
տերուն[ական բան]իցն: Եւ յայտոսիկ ոչ մարդկեղէն մտաց
զտ[...]՝³ շարաշարժեալ ձեր: Այլ յասղմանէ Հոգւոյն Ս[րբոյ], զոր
ունիք անշեղաբար առ Աստուած, ըստ Տեառն Բանին. «Որ սիրէ
զիս, զբանս Իմ պահեսցէ, եւ Հայր Իմ սիրեսցէ [զնա]» (Յովհ. ԺԴ
23): Եւ յայտոսիկ յաւժարեալ ձեր եռանդնայորդոր փութով ըստի-
պեցիք զիս ոչ մի անգամ եւ երկիցս, այլ բազում թախանձանաւք
հարկեցի ձեռնարկել ի գործ վեհագոյն, քան զկա[ր] մեր՝ նա-

¹ Բազմակետով նշվածներն անընթեռնելի են: Այսուհետև զանց ենք առնում «անըն-
թեռնելի» բառը. փոխարենը՝ 2-3 տառ:
² Օգտագործումից մեկ տող նաշված, պատռված:
³ 4-5 տառ:

լարկել յանդուներս խորոց աստուածային իմաստից: Այդ իմ ապաստան եղեալ ի զաւրութիւն Աստուծոյ, որ ոչ միայն Աւետարանչաց, այլ եւ արտաքնոցն բացայայտէ զծա[ծ]կեալ խորհուրդ կամաց իւրոց, յապագայսն՝ վասն աւկտի բազմաց. հաւատամ, թէ եւ Ձերովք աղաւթիւք տացէ ինձ կարողութիւն՝ սկսանել եւ կատարել զհայցուածս Ձեր առ ի յաւգուտ բազմաց: Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նուաստ՝ հոգևով, «այլ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութեան կատարի» (Բ Կորնթ. ԺԲ 9): Եւ արդ, պարտ եմ [այլ¹] արժանապէս խորհել եւ ընդ միտածել զտուչութիւն կենսաբեր Աւետարանին, որ սկիզբն առ խաւսելոյ ի Տեառնէ եւ ի ձեռն ականատես մաքրեցելոցն ի մեզ հաստատեցաւ զաւրութեամբ Հոգւոյն: Եթէ ոչ [...] ¹ [բաջա]ղանաւք ի վախճանի Աստա[ր]տտայ[...] ² յամանակիս պարզեցեցաւ մեզ աւետիս կենաց, այլ անսկզբնաբաւ ընդ [մեզ³] բանին ծածկեալ խորհուրդս են այն յաւիտենա[կան⁴] [...] ³ ըստ խորհրդ[...] ⁴ //աւարտս մեծատես տառիզ դորին գրաւղի [...] ⁵ մին յանապատաւորս եւ քան զամենեսեան բազմամեղս[...] ⁶ սղութիւն գրծկոյս այսոցիկ զմակերեւութիւնս, զոր նիւթ [...] ⁷ զուքածագգեստիցն: Վերբերական զխորհրդոց սրտից [...] ⁸ գոհութիւնս զտերունեան փրկագործութիւնս բնաւից եւ բոլ[որից⁹] ետազատակ որոնաջան, խոհեմաբար եւ խորխուզողութեամբ, որ [...] ⁹ հա[յր]ապետաց բանն ի բարձանց: Ի բլուրս մեր մասին բանականաց ոտ[...] ¹⁰ անեղուելեաք զեզերիւր սուտասահիցս, ստերիւրելոցս ի կեն[...] ¹¹ ետ գաւառեն: Եւ սովագին պարտասելոցս ի ճարակե կենացն զեղմանն: [Եւ] աստ ասեմ զամենաչացն լուսալրութիւնն, որ ի սուրբ սրբարանէ, եւ ի սրոբեաբնակ ա[ւ]թեւանէ, քառասերից, աննայեաց աթոռոցն, եւ ի հար խորհրդակցութենէ առ մերս կարկառակն յազնահոծեալ եւ անհլու, ապերասան եւ բազմաղիմի,

¹ 1-2 բառ:

² մի քանի տառ:

³ 3-4 բառ:

⁴ 4-5 բառ:

⁵ 1-2 բառ:

⁶ 1 բառ:

⁷ 1 բառ:

⁸ 1 բառ:

⁹ մի քանի բառ:

¹⁰ մի քանի տառ:

¹¹ 1-2 բառ:

գիւլախաբ բախմամբ ի բարձրաբերձ բլուրս, ի սորս եւ անտառախիտս, անձանձրանալի ձա[յ]նարկութեամբ: Եւ այն, թերեւս ի մեզ եւ զմեզ զգենլով, հովիւն զոչխարս մոլորեալ, յանվայրն լերինս, ուր ոչ առնէր այցելութիւն Տէր: Այլ մեք՝ մարդք հողագունք եւ ի գուբս գլոր կացեալ, զորս յանեզրական բարեաց բարերարին, տառադրոշմ գրծիւք եւ ի քարտի զանքանակ մեծութիւնն վերբերեսցուք: Առ որ տեսութիւն մեծ տեսանաւորին տատանիւր,՝ ասէ,- մարդ է, բայց ոճանիցէ գնա, որում թէ նոյն իսկ վերնակերպեալ յաւետ յարժանն կոյս կեցեալ միաւորութեամբ: Եւ այնքան յինքեան, իբր ի տախտակսն նկարելով եւ զիւզբերեալ բրբաց մտացն եւ սուրբ սենեակ եւ առագաստատուն յաւրինեալ, զանխուլ զինքն ի բնա[ւ]ի բարեպաշտութենէն կարծելով եւ ի վերա ինքեան գահոյից ընկողմանեալ անմահին մահիճս պատշաճելով: Եւ անդէն, անշուշտ, զչաղապատութիւնն գրկախառնեալ գտանելով զնոյն եւ անքակ քատակեալ առ աստուածաբուռն այր գիշերամարտ գաւտեկութեամբ: Ոչ ասեմ, թէ բերցէ յանըմբերելոցն բան ինչ պատմողական, որոյ անունն ի խնդրոյ քաղցրապատում կամաց կենարարին պարտաշնոր[ւ]հ իւր, ասէ, նա է սքանչացման արժանի: Չայս անաս եւ անպատումն, որ պատմագրեցին մեզ գետքս յառաջագաւալք, քառադէմ յեղեմական բղխեալ դրախտէ, յաչամետ դրախտէ կամ ի ծովահայեաց գիտութենէ, գերիմաստն Հոգւոյն, որ աւետաբեր այսր բանի ուռգմամբ զուարթացուցին զըսանամուտս մեր խողովակ լուսաւորեալ: Լսելով, թէ անմարմինն Աստուած մարմնակից մեզ ելով, գրեն, թէ Գիրք լինելոյ է այս Որդւոյ Աստուծոյ եւ նոյն Որդւոյ մարդոյ Աբրահամու: Չայսքան եւ զայսպիսի լուր լսելով մեր ի վեր քան զպասքաքսեցեայս ի ծարա[ւ]¹ յանհաւատութենէն, ոռգանիմք ի քառաթիւ վիճանաց ցրուելոցս[...]² անցս սրսկելով յիմանալի գիտութիւն՝ գրովս զմեզ զովացուցանելով: Յորս եւ ամենայն իսկ ցուցեալ ի սմանէ մերն կենաց: Պի[...]³ առկայումնն գաս [...]⁴ ենաբերն բարի. զի սորին խրատական առայժմ եմք մեք, որ կերպարան Աստուծոյ [...]⁵//:

(3ա)

¹ ծեռագրում ծարար:

² 1-2 տառ:

³ 1-2 տառ:

⁴ 1-2 տառ:

⁵ 1 տող:

Գերակիր նուէր եղեալ Աստուծոյ ազն եւ ժողովուրդ. սեպուհ ըստ աստուածաբան [...] ¹ ովք ի ստորնոցս, այլ ի վերուստն եկելոյ զամենայն ինչ ուսեալք [...] ² [յարու]թիւնն Աստուծոյ իմացեալք ծանեայք, որք ի նորոգութեան կեանս շրջեալք [...] ³ ք եւ անդ [ամենայն⁶] դաստիարակաւն դաւանիմք. դարան եւ դաստակի [...] ⁴ խորան խաղաղական զանձինս պատրաստելով: Մեզ եւ այժմ հրա [...] ⁵ ուցեալ է ի բազմադիմի ըղձմանց, դիւականաց [դ]իրաւդուածոց, ք[արա]կերտից եւ ի փայտից փտելոյ, անփառունակից նկուն կորագործաց [կամ] ⁶ յամենից արեամբ շնչաւորացն պղծեալս: Եւ զենմամբ չորքոտանեաց պաճարեաց եւ գազանաց սպանմամբք, եւ ի նոյն իսկ գատիմք, յորոշող խորհրդոց գունակ, որ քան յերկին ի վեր եւ որ յերկիր խոնարհ եւ որ քան զջուրս ստորեւ երկրի: Այլ այսմ որպէս զիարդ եւ է, պահեմք զառ ի Յիսուսն նա[խա]նձելի պատկեր պետականին, զի առաւել երեւելագոյն գեղեցկագոյն լեալ կազմեսցի: Յամենայնի անցեալ կամք համբերութեամբ, զի վարժարանս այս, նոյն եւ մարզարան բժշկակերտս հոգեաց՝ կարգեալ ի պետէն բժըշկաց. ոչ ըստ Ասկղեպիադա եւ Գաղիանոսի անարու որականաւք իմն եւ յամրուսումն յարմատոց տկարագունից, աւժանդակեալ ընդ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն, ցուցաւ ցամաքումն արհեստիցն: Այլ զի սա ոչ տարաշխարական մասն գոլով նուաստ, եւ ոչ ի դեգերումն դեմետրական հնարիլ հնացելոցն վիրաց խորհել խոխոտումն խոտովք զբուժականն մերձեցուցանել զդեղն աղետակցութեամբ: Այլ սայ, զի ունի ոչ տեղի, այլ պատուանդանի զբարձունս արփի անբաւս, եւ որ զերկիրս զայս շուրջ փակեալ ունի խոնաւ գրկաւք, եւ զայնով՝ երկրի կառք եւ բարձիչք, եւ յերկրի ունելով գնիստ: Այլ զի այս իսկ ի սոյն ոչ առգրեցի յիմաստս տեսականից: Զի ի հաստեալ եւ ոչ վաստակոց ուժգնութիւն ինչ ծախեցաւ, եւ ոչ առկայելն կացուրդս կոչնականաց կամ համարառուաց պահանջումն կարգելոյն թիւ սահմանելոցն շնորհել, այլ՝ բան աւետական, եւ այս տիեզերական, ոչ եզակի ինչ, որ յատկա-

¹ 1-2 բառ:

² 1-2 բառ:

³ 1-2 բառ:

⁴ 1 բառ:

⁵ 3-4 տառ:

⁶ Վերջին երեք անկյունագծերինը՝ ըստ ձեռագրի համար պահպանակ ծառայող 1բ քերթի բնագրի, որից նույնութեամբ ընդօրինակվել է 3բ-Գ:

տես ճկունությամբ եւ մատին. միոյ եւ անկեան տան տալոյ զբժշկութիւն, այլ բանս բոլորից բերէ զդեղ փրկութեան, եւ այն զի զուշ մտառուադիր Հաւանական Հաւատով, յայս բժշկարան կարկառեցուք, որոց եւ նախքան առ որս յանդամս մերձաւորել, կանխէ, բերէ զբժշկութիւն, զի բան է ի բանին Աստուծոյ, եւ ի բանի բերէ զբնաւ բարիս ի բարձանց ուղերձեալ գեղեցիկ Տէր: Սովաւ գործի շնչաւոր զմարդն գործեաց ըստ իւրում կերպարանին: Քանզի եւ ինքն գործիւ Հաւր ամենայարմարական նո[...]¹ գաւորն սուրբ իմաստութիւն գերաշխարհիկ երկնաւոր բան: Արդ, որ մեզ զի [...] ² անէ ներգործական գտնաւորիւթիւնս իմասցուք, կամի զաչս արձակել զկուրաց եւ զականջս բանալ խլից, եւ զգթոտս ոտամբ, զմոլորեալս յարդարութիւն առաջնորդել, զԱստուած մարդկան անգգամից ցուցանել, դադարեցուցանել [զանգ]գամութիւն, յաղթել մահու, զորդիս անհաւանս հաշտեցուցանել ընդ Հաւր [...] ³ գործիս այմս գրէր եւ բժիշկ, ողորմի, խրատէ, յորդորէ, մի [...] ⁴ նէ եղ[...] ⁵ ցան, պահէ [...] ⁶ մեզ ուսմանն առաւելութենէ, զարքայութիւն երկնից շնորհէ [...] ⁷ զոր ապրիմքս: Քանզի գստութիւն ի վերա մարդկան [...] ⁸ ճշմարտութիւն զաւրէն մեղուի, զնա ին [...] ⁹: ...ծովահայեացն [...] ¹⁰ ումբս ի միասին հաւաք[...] ¹¹ ասասցուք սուղ ինչ պատճառական բազմաց դրուատելեաց եւ ատենական[ա]ց եւ որք յաթենացւոցն վարժարանէ փաստական [...] ¹² իւրտաւք⁶ լինէին [...] ¹³ [լ]եալք արժան անբանից գովասանոց [...] ¹⁴ //:

¹ 1-2 տառ:
² 1-2 տառ:
³ 1 բառ:
⁴ 2-3 տառ:
⁵ 1-2 տառ:
⁶ 1 բառ:
⁷ 2-3 բառ:
⁸ 1-2 բառ:
⁹ 5 տող:
¹⁰ 1 բառ:
¹¹ 1-2 տառ:
¹² Վերջին պարբերութիւնը («ծովահայեաց... անբանից գովասանոց») լուսանցքում, «Ծովահայեացն... սուղ ինչ» հատվածը բերված 1բ-ի լուսանցքից:
¹³ 1 բառ:
¹⁴ 3-4 տառ:

**ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՐ ԱԲԵՏԱՐԱՆԻ
ՄԵԿՆՈՒԹԵԱՆ**

[...] Մեծն յիմաստասիրաց Փիլոսոփան վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսութեան ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ յայլոց հնագուկից հոգելիր վարդապետաց առեալ. Ոչ սկսանել, ասեն, Աստուծոյ զաշխարհ յառաջ առ աշխարհիս արարչութեան, այլ միշտ առնել զամենագեղեցիկ զաշխարհս զայն: Քանզի ոչ արժանիս ասացին [լին]ել երբեք անգործ զԱստուածութիւնն, քանզի դատարկութեան եւ անգործութեան է այնպիսին: Այլ անսկիզբն ասացին զԱստուած զամենայն ինչ առնել արարիչն միշտ զսա իմանալով զարդարեր: Քանզի Աստուած ոչ յառաջ իմանալ սկսաւ ինչ, այլ առնել, եւ ոչ երբեք յորժամ Աստուած ոչ առներ տեսակաց սկզբնութեամբ նմին եղ[ել]ոց: Զի կամք Աստուծոյ ոչ յետոյ դեպ լինին խորհել, զի միշտ ընդ նմա են կամքն, զի բնական շարժմունքն ոչ երբեք պակասեն. եղիցի ապա իմանալովն միշտ առնել: Իսկ զգալեացս սկիզբն լինելոյ տուեալ զի զգալի աշխարհիս լինելութիւն առ իմանալի աշխարհն ցոյց լինել ասացին, զի հարկ է աշխարհիս այսմիկ կերպարան ուրուք գոլ, զի արարչին (4ա) զայս ցոյց ասացեալ// զսգալիս իմանալեացն, որով յայտ է, եթէ ամենայն ինչ անսկզբնաբար նկատեալ են ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Որպէս Դաւիթ ասէ, թէ՛ «Զանկերպարանս իմ տեսին աչք Քո»։ Եւ գիրս կենաց դպրութեան գրեալ են. «Եւ ի տուէ ստեղծչիդ յայտնի են մինչ ոք էր ի նոսա» (Սաղմ. ՃԼԸ 16-17): Ապա ուրեմն, ամենայն ինչ անսկզբնաբար յայտնի են տպաւք եւ կարգուածովք իւրեանց ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Եւս առաւելապէս՝ խորհուրդ տնօրէնութեան բանին: Որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Ընտրեաց զմեզ նովաւ յառաջ, քան զլինել աշխարհի» [Եփես. Ա 4]: Վասն որոյ անդրանիկ ասէ գոլ զՆա ամենայն աշխարհի եւ զմեզ ընդ Նմա անդրանիկս անուանէ՝ դասեալ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս: Զի թէպէտ եւ ներգործութեամբ ի վախճան ժամանակիս եհասս մեզ վիճակ ընտրութեան, այլ զաւրութեամբ եւ իմաստութեամբն Աստուծոյ՝ յառաջ քան զամենայն հաստեալք ի կամս Աստուծոյ: Եւ զայս

(4բ) մեզ գեղեցկապես բացայայտէ տէր Եփրեմ ի հաւատոց գիրան զայն բանն, թէ՛ «Պատրաստեալ է ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»: Զսմին Եկեղեցւոյ ասաց, // [զի] յանդերձեալ էր յառաջ քան զաշխարհս, զսոյն ասէ արքայութիւնն եւ Երուսաղէմ Վերին ազատ մայր մեր Եկեղեցի սուրբ, եւ ի նմա կատարի կանխութիւն, զոր գուշակեաց Սողոմոնովն, եւ յայտնեաց առաքեալ, եւ կնքեաց Տէր մեր՝ իբր զգիտակ:

Վասն որոյ ամենայն ինչ, որ եղեւ եւ որ լինելոց է, այն ինչ է, որ էր առ Նմա ի կանուխ գիտութեան Իւրում յաւիտենից: Վասն որոյ չիք ժամանակ, եթէ ոչ ամենայն ինչ էր Նմա ի գիտութիւն, բայց ոչ եթէ անձամբ եւ տպաւք եւ կարծովք, այլ գիտութեամբ: Եւ ոչ եթէ երբեմն բխեաց խոհումն վասն լինելոյ աշխարհի, զի խոհուն նոցա յաւիտենից առանց սկզբան էր: Իսկ կարգուած նոցա երբեմն յերեւել անձանց իւրեանց էր: Ապա ուրեմն, արարածք ի բնէ եւ յաւիտենից էին ի գիտութեան Նորա, մինչ չեւ էին: Եւ այսաւր, զի են իբրու չեն Նմա, մինչ է Նա առ այն գիտութեան, որ հաստէ զամենայն յոչնչէ եւ լուծանէ յոչինչ: Ապա ուրեմն, մինչ չեն արարածք եւ գիտութեան արարչին ի բնէ եւ յաւիտենից, եւ երեւէին Նմա անձինք եւ կարգուածք եւ թիւք նոցա մինչ չէին: Եւ թէ ասիցեն, թէ ոչ ի բնէ եւ յաւիտենից էին արարածք ի գիտութեան Նորա, մինչ ոչն էր, ցույց//են, թէ ոչ է Նա Աստուած կատարեալ, այլ յայլմէ էառ զգիտութիւնն եւ կատարեցաւ: Եւ թէ կատարեալ Աստուած է, ա[յ]ա ի բնէ եւ յաւիտենից ամենայն արարածք էին ի գիտութեան Նորա, մինչ չէին, եւ գիտէր զնոսա, որպէս մինչ ենն, եւ մինչ չէին, ինքեանք ինքեանց էին Նմա: Եւ իբրեւ եղեն ինքեանք ինքեանց եւ ոչ եթէ Նմա, զի միշտ էին ի գիտութեանն Նորա: Եւ չիք ժամանակ, թէ գիտութիւն Նորա շարժեսցի հաստել ինչ, որ չէր ի գիտութեան Նորա, այլ առ Նա զամենայն ինչ, որ ստացեալ ունէր ի գիտութեան Իւրում յաւիտենից, գտանի, զի այլուստ ծագեաց ի Նա գիտութիւն, իբր պարգեւ ուրուք»: Եւ սուրբն Եղիշա ասէ. «Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են, ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ՝ միշտ Աստուած եւ միշտ Արարող, յորժամ կամեցաւ, զոր միշտ ունեւր յիմանալոջն եւ ած ի գիտութիւն զիմանալեացն, իցէ Հայր եւ եղելոցս՝ Արարիչ, բնական իմացութիւն՝ նիւթ, իսկ արարչական զաւրուութիւնն՝

- (5բ) գարդ. նիւթ՝ անմարմին, որ է գիտութիւն Նորա, իսկ արարչութիւնն զանմարմին գիտութիւնն մարմնացոյց եւ ած ի տեսութիւն զգալի//, զի ի յայտ լիցի իմաստութիւնն, որ ծածկեալ էր ի գիտութեանն Աստուծոյ, որպէս ասէ Առաքեալ, թէ՛ «Աներեւոյթք ի գիտութեանն Աստուծոյ եղելովք ճանաչի մեզ» (Հռոմ. Ա 20): Եւ դարձեալ ասէ. «Զիմաստութիւն խաւսիմք, զոր յառաջ քան զյաւիտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր» (Ա Կորնթ. Բ 7): Այլ զայս զի գրեցի զիմաստս հոգելիր վարդապետացն, զի ծանիցես, ո՛վ սիրելի եղբայր, եթէ պատիւ փառաց, զոր ընկալաք ի վախճան կատարածի աստ, անսկզբնաբար նախախնամող ողորմութիւնն Աստուծոյ սահմանեալ էր ի փառս մեր եւ կնքեալ պահեր ի գանձու իմաստութեան Իւրոյ, զոր Առաքեալ «խորհուրդ ամրածածուկ» անուանէ զսա առ Հաւր, որ այլոց ազգաց ոչ ցուցաւ, որպէս այժմ իսկ յայտնեցաւ սրբոյ Իւրոց, որոց կամեցաւ Աստուած յայտնել: Արդ, զխորհուրդն, որ Ադամա յառաջին Ադամ նկարագրեր Աստուած: Յասել մարգարէին, թէ՛ «Արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր» (Ծննդ. Ա 27), եւ պատկեր Աստուծոյ Աստուած է՝ զբոլորն յինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատպին ճշգրտաքատակ նմանութիւնն, զի թէպէտ եւ չարնախանձ հակառակութիւն սկզբնաչար աւճին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեան տեսակ եւ զանապականութեան //պատկերն, զի չէր մարթ եղծանել գրոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարեցաւ, զի թէպէտ եւ ներեաց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ յաւճէն, եւ ասպա ընկալցի ըստ արժանին զհատուցումն դատապարտութեան: Եւ թէպէտ եւ ի հող դարձաւ մարդն առաջին, սակայն իմոր անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, զի յապաղանաւք ընդ երկար ժամանակս փոխադրեսցէ զզանգուածն յիւր նմանութիւն, զի նորոգումն կենաց շրջեսցի, զոր առաքեալ մեզ բացայայտէ՝ ասելով. «Եղեւ առաջին մարդն ի շու[ն]չ կենդանի, իսկ երկրորդ Ադամ՝ ի հոգի կենդանարար: Առաջին մարդն՝ հող յերկրէ, երկրորդ մարդն՝ տէր երկնից: Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին» (Ա Կորնթ. ԺԵ 45-49): Արդ, ճաշակումն, ըստ խրատու աւճին, եղեւ նմա դեղ յիմարութեան, եւ փոխեալ շրջեցաւ ի կարգ անասնոյ՝ ըստ այնմ, եթէ մարդ ի պատուի էր,
- (6ա)

- (6բ) Հաւ[ա]սարեաց անասնոց անբանութեամբն (Հմմտ. Սաղմ. ԽԸ 13, 21): Եւ այս դեղ տայն այն հնազանդեալ ծառայեցոյց զմա[րդ^օ] //իբրեւ զանբան անասուն՝ ըստ ներելոյն Աստուծոյ: Սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց Բարերարն, այլ ի դարս դարս հրաշագործէր զփրկութիւն մարդոյն՝ խրատելով զչարսն եւ բարեգործելով զարդարսն, զի կրթեսցէ այսուիկ՝ ատել զչարն եւ ստանալ զբարին: Եւ ծածկապէս զաւետիս կենաց ծանուցանէր սիրելեաց Իւրոց, եւ զխորհուրդ տնաւրէնութեան Տեառն մերոյ նկարէր ի նոսա. որպէս ծանոյց Աբրահամու սիրելոյ Իւրոյ Միածնաւն Իւրով, զոր յառակս ընկալաւ, եւ ծանեաւ զփրկութիւն աշխարհի գալստեամբ Միածնին Աստուծոյ: Եւ դարձեալ՝ ի ձեռն Մովսիսի նկարագրէր զբոլոր խորհուրդ տնաւրէնութեան Բանին, զի «ստուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնքն եւ ոչ՝ ճշմարտութիւն իրաց» (Եբր. Ժ 1), զոր եւ Տէր յԱւետարանին առակէ, թէ՛ «Նա ոչ գիտէ, որ սերմանէ, եթէ նախ խոտ բուսանի, եւ ապա՝ հասկ, եւ ապա՝ ցորեան ատոք ի նմա» (Մարկ. Գ 28): Եւ այսու ուսուցանէ, զի նախ խոտոյ նմանեցան մարդիկ մինչեւ ի տուչութիւն աւրինացն: Եւ ի ձեռն աւրինաց ձեւացաւ ստուերակերպութիւն զոհիցն եւ լուալեացն՝ զաւրեն հասկի, զոր եւ առաքեալ «կղկղանս» (Հմմտ. Փիլիպ. Գ 8), անուանէ զարդարութիւն աւրինացն: Եւ ընկալաք ի ձեռն Մարգար//էիցն քարոզութեան, յոր ձեւ ընտրի զհատն կենաց, որով կերակրեցան ամենայն արարածք անսպառ հացիւն կենաց եւ փոխադրեցան յանմահութիւն կենաց: Զի իբրեւ էհաս լրումն Աւրինաց եւ Մարգարէից եւ կատարեցան առակք աւրինակաց, եկն էհաս Կատարիչն Աւրինաց եւ Մարգարէից, զի լցցէ զամենայն, որ նկարագրեցան վասն գալստեան Նորա, եւ յինքն գլխաւորեսցէ զբոլոր ստուերս հանդերձելոց բարեացն: Զի իբրեւ էհաս լրումն ժամանակաց, առաքեցաւ Բանն ի Հաւրէ, որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ Աւրինաւք, զի ազատեսցէ ի ծառայութենէ Աւրինացն՝ յազատութիւն յորդեգրութեան Հաւրն երկնաւորի: Եւ եկեալ Աստուածորդոյն, ըստ գուշակելոյ Մարգարէիցն, ժողովեաց զԱռաքեալս՝ զորսորդս մարդկան, որոց անուանք գրեալ էին ի դպրութիւն կենաց ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Եւ կրթեալ զնոսա բանիւ վարդապետութեան Իւրոյ՝ տալով իշխանութիւն՝ հալածել զդեւս եւ ազատել զմարդիկ ի բռնութենէ չարին, որ տիրեաց մարդկութեանս: Եւ այսպէս լուսաւորեալ զնոսա մինչեւ յաւրն վերանալոյ առ Հայր՝ պա-
- (7ա)

(7բ) տուէր տուեալ նոցա ոչ մեկնիլ յերուսաղեմէ, մինչեւ զգեցցին զաւրովթիւն ի բարձանց: Եւ, ամբարձեալ առ Հայր, առաքեաց զա//ետիս Հաւր՝ զարդարիլ ի հասանել Հոգւոյն ի վերա նոցա, որով, ընկալեալ զշնորհս Հոգոյն, եղեն աւետաքարոզք կենաց աշխարհի եւ ոչ միայն աւետարանիչք Բանին եղեն, այլ եւ հազարապէտք բաշխողք Հոգոյն Սրբոյ՝ լցուցանելով զբոլոր սեռս հաւատացելոց:

Վասն որոյ ոչ կամէին գրով տալ նոցա զշնորհս Հոգոյն, որպէս Մովսէսն այն ի հնումն՝ ի տախտակս քարեղենս գծագրեալ զգիր դատապարտութեան, այլ՝ ի գրեալ տախտակս սրտի մարմնեղենս զգիրտակցութիւն Հոգւոյն: Իսկ հաւատացելոցն իմացեալ, թէ ոչ զաւրէն անմոռաց գիտութեամբ կուրասցեն զլուսաւոր գիտութիւն շնորհաց Հոգոյն: Վասն այնորիկ ինքանայաւժար կամաւք հայցեն յԱռաքելոցն գրով թողուլ նոցա, նոցա բանիւ աւետարանեցին: Եւ նախ Մատթէոս գրէ հերբանցւոցն յերուսաղեմէ, ասի, իսկ Մարկոս Աղեքսանդրացւոյն գրէ յետ հինգետասան ամի: Իսկ Ղուկաս յետ ԻԲ ամի գրեաց զԱւետարանն, եւ Յովհաննէս յետ Հ(70) ամի գրեաց զԱւետարանն՝ զանճառ Ծնունդն բացայայտեալ մեզ: Եւ ի բազում աշակերտացն երկուքն միայն գրեցին զԱւետարանն՝ Մատ//թէոս եւ Յովհաննէս, եւ այլք յաշակերտաց նոցունց՝ [խոր]հրդաբար, չորս առաջս բղխեալ յաղբիւրէն կենաց ի չորեքձագեալ յոլորտս աշխարհի, զի զհրդեհեալ բոց մեղացն, որ վառեցաւ ի կողէն Ադամա ի ծագս տիեզերաց, շիջուցեն: Եւ զազին դրախտն, զոր կորուսաք ի ձեռն ադամածին կողին, կուսածին Ադամաւս վերստին առցուք, որ է Եկեղեցի Նորա, յորում տնկեցաւ ծառն կենաց եւ անմահութեան: Եւ Ինքն Տէր մեր աղբեր կենաց բղխեալ ի սմա առ ի յարբումն պասքաքանց ծարաւեաց, զորս կոչեաց առ Ինքն եւ չորս առաջս՝ ծաւալեալ ի Նմանէ: Առաջին՝ Փիսովն, որ կոչի բերան հրոյ, զոր Մաթեոս աւետարանեաց հրեղէն լեզուաւն, զոր ընկալաւ ի վերուստ եւ լուսաւորեաց զբոլոր ծագս արեւելեանն, որպէս բանականն ի մեզ լուսաւորէ զբոլոր դէմս զգաութեանց մերոց, եւ զիմաստս Հոգւոց, որ կոչին արեւեալք: Եւ երկրորդն՝ Գեհոն, որ կոչին լանջք, որ բխեաց յԱղեքսանդր Եգիպտոսի եւ, մաքրեալ, լուսաւորեաց զբոլոր կողմն հարաւոյ՝ մինչեւ զԳաղիրոն եւ յարձանս Հերակղեանց. որպէս սրտմտականն ի մեզ արիաբար մաքրէ զախտս

- (8բ) նուաստութեան եւ կնատ խորհրդոց՝ գաւրեն խրոխտ //կենդանւոյն արիաբար վարելով: Եւ երրորդն՝ Տիգրիս, որ բխեաց ի Հոռովմ եւ յԻտալիս եւ, մաքրեալ, լուսաւորեաց զբոլոր կողմ արեւմտից, որպէս ցանգականն ի մեզ վերամաքրեալ Հոգւով զտխրալի ախտիցն նսեմութիւն: Իսկ չորրորդ գետն Եւփրատէս, որ բխեաց յԱսիա եւ յամենայն Միջերկրեայս եւ լուսաւորեաց հրով Հոգւոյն զբոլոր ծագս ասիացւոց եւ ամենայն հիւսիսւոյ: Որպէս արդարութիւն ի մեզ կալով ի միջոցի եռամասնեայ ոգւոցս առաքինութեան զբոլորսն ուղղելով յիւրոսն հաստատապէս առկայիլ ներգործաբար: Եւ այսպէս զչորեքծագեան տիեզերս լցին երկնատեղեաց ցաւոյ իջմամբ: Սմին համաքատակ եւ եղեկիեղեան կառք գուշակեն մեզ զխորհուրդ Եկեղեցւոյ եւ զնմանութիւն Աւետարանչացն, զի չորից կենդանեացն իւրաքանչիւրոցն չորս դեմք առանձնացեալք ունէին: Առաջնոյ կողմանցն՝ դեմք մարդոյ, եւ ընդ նմին լծակցեալ՝ դեմք առիւծուն, եւ միւս կողմ՝ դեմք գուարակի եւ ընդ նմին լծակցեալ զարծուին, որ մեզ նկարագրէ Մաթէոս զդեմս մարդոյն, որ է բանականն ի մեզ, զի մարդանալ Տեառն մերոյ քարոզ[եաց] մեզ պատմութեամբ Որդոյն Դաւթի եւ
- (9ա) Աբրահամու //: Վասն որոյ առաջին իբրեւ զդեմս մարդոյ այլոց Աւետարանչացն զնա կարգեցին, զի ականատես եղեալ բոլոր գործոց եւ վարդապետութեանն, գեղեցկապէս շարագրեաց զկարգ բանից եւ նշանաց Տեառն մերոյ: Եւ ընդ սմին շարալծեալ՝ զՄարկոս գաւրէն առիւծուն, որ է սրտմտուականն ի մեզ, որպէս եւ ինքն գրեաց, թէ՛ «Ել նայ Յորդանանէ իբրեւ զառեւծ» (Հմմտ. Երեմ. ԽԹ 19), զի ընդ բանին պարտ է շարալծել զսրտմտականն զաւրութեամբ, եւ աներկիւղ աւետարանեսցէ զբանն կենաց, եւ խրոխտ ճոխութեամբ պակասէ զընդդիմակայսն: Իսկ երրորդ կենդանին՝ գուարակ, որ է Ղուկաս, որ աւետարանեաց մեզ գուարակ ածեալ ի սպանդ՝ ի խրախոսնս Հաւր յաղագս տարամերժեալ Որդւոյն: Եւ սմին շարալծեալ՝ զարծուին, որ է գիտութիւն ընդ ծանուն եւ ընդ վայրաքարչին զթեթեւն եւ զվերաբերողն, զի ցանկականն մեր մի՛ թողացուցեալ ցնդեսցի, այլ՝ սրբեալ մաքրութեամբ հրով Հոգոյն, զի ճշմարտապէս փափագեսցուք Վերնագունին: Զի եւ Յովհաննէս, փարելով զսարսափելի պարանոցաւն, վերամաքրեալ ի բարձանց, որոտալով քարոզեաց մեզ զանսկիզբն Ծնունդն յանսկզբնական // Հաւրէ: Յայս խորհուրդ ետես եւ Յակոբ՝ զսանդուխտսն յերկրի հաստատեալ եւ զվեմն աւծեալ, յայտ-
- (9բ)

նեաց մեզ գմարմին Բանին, որ ավժառ յերկրի՝ ըստ Մատթէոսի, որ ծանոյց մեզ զՔրիստոսի մարդեղութիւնն եւ զնոյն Տէր ի ծայրս սանդղոցն՝ ըստ Յովհաննու, զԱստուածութիւնն Նորա գեր ի վերոյ ամբարձեալ, եւ զելեէջս հրեշտակացն Տէրն մեկնեաց մեզ, թէ՛ «Տեսանիցէք զհրեշտակս, զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերա Որդոյ մարդոյ» (Յովհ. Ա 51):

Եւ արդ, այսչափ բաւական լիցի իմաստասիրաց՝ առ ի ծանուցումն խորհրդոց չորից Աւետարանչացն: Եկեացուք այսուհետեւ ի բանս Աւետարանին, զոր Մատթէոս գրեաց երբեցոցն՝ յասել իւրում այսպէս.

Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի՝ որդոյ Դաւթի (Ա 1)

Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ ի գալստեան Իւրում, որպէս Մովսէս հակիրճ բանիւ փակեաց զբոլոր արարածոց լինելութիւն՝ յասել, թէ՛ «Այս է Գիր արարածոց երկնի եւ երկրի, զամենայն եղեալս երկնաւորաց եւ երկրաւորաց» (Ծննդ. Բ 4), ի սմա ծածկեալ յայտ արար: Սոյնպէս, յասելն լինելոյ բանին, յայտ արար զբոլոր շնորհսն, որ հեղաւ ի մեզ, զի եթէ անլու [...] ¹ իքն եղեն Աստուծոյ մարդ լինել, զի ա՞րդ նովաւ, (10ա) ասեն, // [...] ² այն, ինչ շնորհեսցի մեզ, եւ անդէն յանուանէն յայտ արար զմեծ փրկութիւն մեր ի չարէն: Զի երեք կար[ծ]եմն անուանադրութեան. յիրէն, ի ներգործութենէ, ի ձայնէ, զորս ընկալաւ Տէր մեր. նախ ի ներգործելոյն ի մեզ փրկութիւն կոչեցաւ Յիսուս, երկրորդ՝ յիրէն, զի ավժառ միաւորութեամբ Աստուածութեանն եւ մար[դ]կութեամբն, երրորդ՝ ի ձայնէն, զի կոչեցաւ Բան, զի զմեզ փրկեսցէ եւ ավժցէ Հոգւոյն հեղմամբ եւ Բանիւ վարդապետութեամբն կերակրեսցէ ի ճաշակս անմահութեան: Իսկ ասելն «Որդոյ Դաւթի եւ Աբրահամու»՝ զի յերկոսեան ի սոսա եղեն ավետիք յաս[գ]էն Աբրահամու, թէ՛ Զաւակի քում «աւ[ր]հանեսցին ամենայն ազգ երկրի» (Ծննդ. ԺԲ 4), եւ թէ՛ քեզ եւ Զաւակի քում, որ է Քրիստոս: Իսկ Դաւթի երդմամբ ուխտեաց՝ ի պտղոյ յորովայնէ նորա նե[ս]տուցանել յաթոռ նորա

¹ 1-2 տառ:

² 1-2 բառ:

(10բ) (տե՛ս Սաղմ. ՃԼԱ 11), գոր եւ հրեշտակն աւետարանեաց, թէ՛ տացէ նմա Աստուած զաթոռն Դաւթի՝ Հաւր Իւրոյ (Հմմտ. Գ Թագ. Բ 4), եւ Մարգարէն, թէ՛ «Յաթոռն Դաւթի նստիցի» (Եսայի Թ 7): Եւ նախ զԴաւիթ յիշէ, զի զարթուցէ զլսողն ի լուր բանից իւրոց, զի աւետիքն Աբրահամու ծածուկ էր ի բազմաց, իսկ Դաւիթ այն նորոգ եւ յայտնի էր ի մէջ նոցա: Վասն որոյ ամենեքեան զՆա Յիսուս՝ Որդի Դաւթի կոչէին: Եւ եհարց [առ Տեառն] մերոյ զփարիսեցիսն, թէ՛ ո՞ր Որդի է Քրիստոսն, // եւ նոքա ասեն՝ Դաւթի (տե՛ս Մատթ. ԻԲ 42): Վասն այնորիկ նախ զԴաւիթ յիշէ, որ ախորժելի էր հրէիցն լսել, թէ խոստումն Դաւթի ի գլուխ ելին, զի համարձակ լիցի հաւատալ ի նա: Եւ ապա անցանէ յաղբեւրն աւրհնութեանց յԱբրահամ, զի նա է մայր աւետեաց եւ բղխումն պարգեւաց աշխարհի, զի նախ ի ծնունդս նորա նկարեցաւ ծնունդ Բանին. զի ամուլ էր Սառայ, որպէս Եկեղեցի հեթանոսաց: Եւ աւետեաւք ի ծերութեան ծնաւ զմիածինն, որպէս Եկեղեցի հեթանոսաց յամլութեան ընկալաւ զաւետիս ծնընդեան Միածինն: Եւ ի ծերութեան ծնաւ զանդրանիկն արարածոց: Եւ որպէս ծերութիւն նոցա ի մանգութիւն դարձաւ, եւ ամլութիւն յանթիւ բազմութիւն յառակեալ յաստեղս: Եւ Եկեղեցւոյս կնդրակի՛ բազում են որդիք, քան զարամբւոյն: Եւ այսպէս, միածին Իսահակ զկամս հաւր իւրոյ կատարէր՝ ինքնայաւժար կամաւք զփայտ պատարագին բարձեալ դիմեալ երթայր ի մահ՝ ըստ նմանութեան Տեառն մերոյ: Ուստի եւ յառակս ընկալաւ զնա Աբրահամ:

Արդ, Աբրահամ, - ասէ, - ծնաւ զԻսահակ՝ յաւրինակ Քրիստոսի, եւ Իսահակ ծնաւ զ[Յ]ակոբ (Ա 2):

(11ա) Բարձրագոյն եւս խորհուրդ նկարեալ ի սմա, զի Ռեբեկայի հեթանոսաց թողոյր զո[րդ]իս եւ զծնողս իւր՝ ըստ այնմ՝ «Լո՛ւր, դո՛ւստր, եւ [տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո. մոռա]// զժողովուրդ եւ զտուն հաւր քո» (Սաղմ. ԽԴ 11): Եւ եկեալ յարեցաւ յի[շատա]կ, որպէս Եկեղեցի հեթանոսաց: Եւ նա եւս յետ ամլութեան յղանայր երկաւորիմ, որ գաւչակեր յերկուս ժողովուրդ մ (°), զի ասի, թէ նախ Յակովբ նկարեցաւ յարգանդի, թէ Եսաւ բնութեամբ առ զանդրականութիւնն. առ սոց[ա] ժամանակ եւ Յակոբ բուռն յարեալ զգա[ր]չապարէն Եսաւայ, թէպէտ եւ առ ժամայն

¹ Գուցէ կենդանի:

ոչ յաղթեաց, յետոյ առ զանդրականութիւնն: Եւ զի որս Եսաւայ էր կերակուր հաւր իւրոյ, որպէս արէնքն պահանջէին ի հրէից, որպէս զհեթանոսս ի սուր սուսերի եւ ոչ խնամենալ նոցա: Եւ ի վախճանել հաւրն, առ Յակովբ զանդրականութիւնն եւ զաւրհոնութիւն եւ հեռացաւ ի չարութենէ եղբաւր իւրոյ: Այսպէս եւ հեթանոսք ի վախճանել արիւնացն ընկալան զանդրականութիւն եւ զաւրհոնութիւն հրէիցն եւ, հալածեալ ի չարութենէ նոցա, որոշեցան ի նոցանէ, զի Եսաւ ատեցաւ, եւ նորն Յակովբ սիրեցաւ ի Տեառնէ:

Իսկ Յակովբ,- ասէ,- ծնաւ [զՅուդա]ն եւ գեղբարս նորա (Ա 2):

(11բ) Եւ յայտասիկ ցուցանէ մեզ այլ եւս խորհուրդ, զի ոչ յիշեաց Նոյ զանդրանիկսն զընթուրէն եւ զՇմաւովն, եւ // զՂեւիին [պատժ¹]եցան յ[ակա]ռակութենէն վասն չարութեան իւր[եանց²]. [Ռուբէն]³ վասն պղծութեան հարծին, եւ Շմաւովն եւ Ղեւի⁴ վասն անարէնութեանցն, որպէս եւ ազգ հրէիցն⁵ վասն պոռնկութեան կռապաշտութեանն: Եւ դպիրքն եւ փարիսեցիքն վասն նախանձու եւ սպանութեան Տեառն մերոյ քահանայից հոլոնեալ¹ գնեցին զարիւն նորա արձակելով: Իսկ երջանիկն Յուդա առնոյր զանդրականութիւնն եւ զաւրհոնութիւնն՝ ըստ նմանութեան Տեառն մերոյ՝ վասն ուղիւղ դատաստանին ի վերա Թամարայ, զի զինքն պարտաւորեաց եւ զնա արդարացոյց: Որպէս եւ Տէր մեր զինքն դնէր պարտապան յանցանաց Եկեղեցւոյ իւրոյ եւ զնա արդարացոյց, այլ եւ խրատու իւր գերծոյց զՅովսէփ ի ձեռաց եղբարց իւրոյ: Վասն որոյ ասէր Յակովբ՝ յաւրհոնութեանըն յարենէ ելեր, որդեակ, զի ոչ պարտաւորեցար ի մահու Թամարայ եւ Յովսէփայ: Վասն որոյ ընկալաւ զաթոռ թագաւորութեանն աննուագելի՝ մինչ ի ծագումն յուսոյ հեթանոսաց: Դարձեալ՝ վերագոյն, քան զբնութիւն յեղանակի ծննդեան կանանց,

Ծնանի Յուդա զՓարէս եւ Զարայ ի Թամարայ (Ա 3),

(12ա) զի հայեցեալ Աստուած ի ցանկութիւն Թամարայ, այն, որ ծարաւի էր աւ//րհոնութեան զաւակի ի սուլոյ (°) յազգէն. եւ զրկեցին զնա չարաչար որդիքն Յուդաի, ինքեանք չարամահ սատակեցան եւ ոչ [ցանկա]ցան աւրհոնութեան սերմ որդեծնութեան, եւ

¹ Թերևս՝ հոշոտեալ:

ի պատիրը [...]՝ էութեան կերպարանաց գողացաւ զգանձն, որ ծա[ն]եալ կայր ի Յուդայ: Եւ, փոխանակ միոյ, կրկին ընկալաւ պարգեւս Աստուծոյ՝ ըստ իւրում ցանկութեանն, եւ նկարագրեցաւ ի նմա խորհուրդ Եկեղեցւոյ. զի ձեռն Զարայի, որ յայտնեցաւ, ցուցանէր զգործս հաւատոց, որ յայտնեցաւ ի Նոյ եւ Աբրահամ, յԻսահակ եւ Յակովբ: Եւ դարձեալ ծածկեցաւ, եւ եմուտ բռնութիւն Աւրինացն առ ժամանակ մի, եւ խրամատեցաւ ցանկ հաւատոյն, որով արդարացան առաջինքս, եւ եմուտ հարկ բռնութեան Աւրինացն: Եւ դարձեալ խափանեցաւ իշխանութիւն նորա, զի մեք զորդեգրութիւն ի հաւատոցն առցուք: Եւ արդ, տե՛ս դու, թէ որչափ նկատէր Աստուած, քանզի այս մեր ցանկացեալ, զոր կատարեաց գալստեամբ Իւրով: Եւ այսպէս, ի կարգ անկեալ՝

Փարէս ծնաւ զԵզրովմ, Եզրովմ ծնաւ [զԱրամ, Արամ ծնաւ] զԱմինադար, Ամինադար ծնաւ զՆասսովմ (Ա 3-4):

Զսորա քոյրն էառ Ահարովն կին: Եւ խառնեցաւ քահանայութիւնն եւ թագաւորութիւնն ի մի ազգ, զի ի ծնանելն [զՆասսովմ]մին առցէ զքահանայական եւ զթագաւորականն [իշխա]նութիւնն:

Նասսովմ ծնաւ զՍաղմովմ, Սաղմովմ ծնաւ Բոյոս ի Հուսթերա (Ա 5):

Աստ դարձեալ յիշէ [զՌ]ահաբ պոռ[ն]իկ, որ եղեւ աւրինակ Եկեղեցոյ, զի իբրեւ լուաւ նա զանունն Յեսովա կուսանի, ուրացաւ զազգ իւր եւ սրբեցաւ ի պոռչկութենէ եւ անարգեաց զկուսս իւր եւ ընկալաւ զլրտեսսն Յեսովայ եւ խոստովան եղեւ յԱստուած նորա եւ ասէ. Նայ է Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր խոնարհ, զի խաւարեցոյց զլուսաւորս երկնից եւ իջոյ ցմանանա[յ] ի բարձանց եւ պատառեաց զանդունդս եւ անցոյց զժողովուրդն եւ արբոյց ի վիմէն, պոռնիկ հեթանոսն խոստովանիւր զաւրէն Եկեղեցւոյ: Եւ ժողովուրդսն, որ տեսին զսքանչելիսն, որթուն երկրպագեալ՝ ասէին. «Այս են աստուածք քու, Իսրաէ՛ղ» (Ելք ԼԲ 4): Նա, ընկալեալ զլր[տ]եսն, իջոյց վանդակաւ ընդ պատուհանսն, որպէս Եկեղեցին ի Դամասկոս զՊաւղոս իջուցանէր. նշանաւ կամի, ով որ ի փայտին, ապրեցաւ ամենայն տարի իւ-

¹ 1 բառ:

րով: Եւ Եկեղեցի նշանաւ Խաչին եւ Արեամբ Միածնին ապրեսցի ի լուծման աշխարհի: Վասն որոյ ի Գիրն կենաց Աւետարանին գրեցաւ եւ Դաւթա յիշատակեցաւ: Եւ հրէայքն ջնջեցան ի դպրութենէ կենաց, որպէս զԱքար ագահ (հմմտ. Յես. Զ 18, է 1-26, Ա Մնաց. Բ 7):

Բոյոս ծնաւ զՈվբեդ ի Հոութայ (Ա 5)]:

(13ա) Աստանաւր [էին բար] ճրագոյն խորհուրդ Եկեղեցւոյ, զի Հոութ¹ // յագգէն Ղովթայ, թողոյր զագգս եւ հայրենիս իւր եւ պանդխտութեամբ մուրացիկ շրջէր² զկնի սկեսրոջ³ իւրոյ, զի մի՛ գրկեսցի նա յաւրհնեալ ագգէն Յուդա: Եւ, հայեցեալ Աստուած ի ցանկութիւն նորա, արկանէր գութ ի կամս Բոյոսի՝ առնուլ իւր կնութիւն եւ ծնանէր ի նմանէ զՅեսսէ զհայրն⁴ Դաւթի: Եւ Յեսսէ ծնանէր զԴաւիթ արքայ: Դաւիթ ծնանէր զՍողոմոն ի Բերսաբէէ, զի Ուրիաս՝ այր նորա, ի հեթանոսաց եկամուտ էր ի հրէութիւն: Եւ Բերսաբէ գիտէր զաւրհնութեան ծնունդս, որ ի Յուդաէ ի Դաւիթ հաստատեցան աւրհնութիւնք Յակովբայ: Եւ ցանկայր գողանալ ի նմանէ, որպէս Թամար՝ ի Յուդայէ, վասն որոյ եւ եհաս իսկ, որում ցանկայրն: Իսկ Դաւիթ ոչ այսպիսի մտաւք մերձեցաւ ի նա, այլ յագթահարեցաւ ի գեղոյ նորա: Վասն որոյ իբր զշնացող պատժեցաւ, իսկ Բերսաբէէ ոչ պատժեցաւ, այլ ընկալաւ յԱստուծոյ իւրում, ցանկացաւ զՍողոմոն՝ լի իմաստութեամբ եւ շնորհաւք Աստուծոյ եւ ի մարդկանէ:

(13բ) Զաւրաբաբեդ ծնաւ ի գերութեանն բաբելոացւոց՝ յաւրինակ Քրիստոսի, որ եղեւ Փրկիչ ժողովրդեանն, որպէս Մովսէսն՝ յԵգիպտոս, զի Մովսէս փրկե//աց զնոսա ի բռնութենէ փարաւովնի եւ [յառաջնորդ^o]եաց ժողովուրդն յամպն եւ ի ծովն, փրկե[աց ի չա]րեացն Եգիպտոսի: Սոյնպէս եւ Զաւրաբաբեդ առաջնորդեաց ժողովրդեանն ի գերութենէն բաբելոացւոց եւ շինեաց զտաճարն կրկին՝ եւս առաւել փառաւք, քան զհինն՝ յաւրինակ Քրիստոսի, որ ծնաւ ի գերութեան մերում եւ արար դարձ մեզ առ Վերինն Երուսաղէմ եւ շինեաց զտաճար մարմնոյ՝ Յարութեամբն Իւրով: Եւ տաճար առաջին, որ վեց ամ շինեցաւ՝ յաւրինակ Ադա-

¹ Չեռագրում՝ Դեութավար:

² Չեռագրում՝ շրաւր:

³ Չեռագրում՝ սկերջին:

⁴ Չեռագրում՝ զջիայրն:

մայ, որ ստեղծաւ ի վեցերորդ աւուրն: Եւ որպէս այրեցաւ տաճարն ի Նաբողարզանայ, որպէս եւ բնութիւն մարդոյ ի ցանկութենէ պոռնկութենէ մեղացն ապականեցաւ: Իսկ զԽ եւ զԶ ամ վերջին շինուածն՝ յաւրինակ մարդոյս, որ յարգանդի ի Խ եւ ի Զ աւուրս շինի բոլոր մարմնովն եւ առնու գկենդանութիւն: Իսկ Քրիստոսի եկեալ քակեաց զձեռագործ տաճարն եւ շինեաց Յարութեամբն Իւրով, որ երեքաւրեայ, եւ արար նաւակատիս խնդութեան անվախճան յաւիտենից:

Ջարաբաբեղ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱզովր, Ազովր ծնաւ զՍադովկ, Սադովկ ծնաւ զԱքին, Աքին ծնաւ զԵղիուդ, Եղիուդ ծնաւ զ[Յ]ակովբ, Յակովբ ծնաւ զՅովսէփ՝ զայրն Մարիամու, որ խաւսեցեալ էր Մարիամ Կոյս» (Ա 13-16):

Եւ թէ ընդէ՞ր Մատթէոս ի վերուստ սկսանի զազգահամարն, եւ Ղուկաս ի ստորուստ ի վեր հանէ յԱդամ, այլ զի Մատթէոսէ խնդրեցին, որ ի հրէիցն աշակերտեալն էին: Եւ զէպ եղեւ նմա երթալ յայլ գաւառ, հարկ եղեւ տալ նոցա գրով զԱւետարանն: Եւ գրեաց ըստ [...]՝¹ացն խորրցից, թէ Դաւթայ եւ յԱբրահամէ [...]՝² ըստ աւետեացն: Իսկ Ղուկաս ամենայն աշխարհագրաց, // որոց փոյթ այն էր, եթէ Աստուած եւ յԱստուծոյ է Բան՝ առաքեալ ի փրկութիւն մարդկան: Վասն այնորիկ նախ բազում բանս խաւսի վասն ծնընդեան Նորա եւ այլ գործոց, որ եղեն ի ծնընդեան Նորա, ապայ՝ ազգահամարն: Եւ թէ ընդէ՞ր ոչ Մատթէոսի, այլ ընդ այլ ազգս կարգէ, եւ զայս եւս բացայայտեսցուք: Գիտա, զի հրէական ազգն յոյս յարութեան ոչ ունէին աւետարանել յաւրինացն: Վասն այնորիկ աստեն էր նոցա ամենայն յոյս աւետեացն եւ աւրհնութեան յորդեծնութիւն էր, եւ ի հայրենիս ժառանգութիւն նոցա աստեն յերկրի: Վասն այնորիկ հրաման ետ Մովսէս եղբաւրն՝ առնուլ զանժառանգ կին եղբաւր իւրոյ եւ յարուցանել ժառանգ եղբաւր իւրոյ, եւ յերկուս բաժանեալ էին ծնունդք նոցա. էր, որ ըստ բնութեանն, եւ էր, որ ըստ աւրինացն շնորհաւք յեղբաւրէն ստացեալ: Արդ, Մատթէոս գրեաց, որ ըստ բնութեան էր ծնունդն, իսկ Ղուկաս՝ որ ըստ աւրինացն: Արդ, առաջ ի կին Մատթան, որ ի Սողոմովն էր ազգաթիւ, որոյ անուն էր Ասթայ.

¹ 3-4 տառ:

² 1 բառ:

եւ ծնաւ զ[Յ]ակովբ ըստ բնութեան, եւ իբրեւ մեռաւ Մատթան, առ զկին նորա Մեղքի, այն, որ ի Նաթանա ազգէ կարգեալ գայր: Եւ ծնաւ զՀեղի ի նմին մաւրէ: Արդ, Յակովբ՝ որդի Մատթանայ, որ ի Սողոմոնէ, իսկ Հեղի ի Մեղքա ծնեալ ի նմին մաւրէ, այն, որին արժան այն էր յազգէն, եւ առ Հեղի առ այն, որ ի Նաթանա էր: Եւ մեռաւ անորդի, եւ, ըստ հրամանի Աւրինացն, առ զկին նորա Յակովբ, այն, որ ի Սողոմոնէ էր յարուցանել զաւակ եղբաւր իւրոյ, եւ ծնաւ զՅովսէփ՝ գայր Մարիամու: Եւ Յովսէփ՝ բնութեամբ որդի Յակովբայ, այն, որ ի Սողոմոնէ էր եւ ըստ Աւրինացն՝ որդի Հեղեայ՝ եղբաւր նորա, այն, որ յազգէն Նաթանայ էր: Իսկ Ղուկաս իբրեւ սկսէր մ[կր]տութենէն ունել զազգահամարն՝ տեսեալ հոգւով, եթէ ծնունդ Աւագանին ոչ բնութեամբ, այլ շնորհաւքն են, որ// [...] ¹ այս այսք, որ ի Քրիստոսէ ծնան, որպէս Ինքն ոչ յարէնէ եւ ոչ ի կամաց [...] ² թին, այլ ի Կուսէն ծնաւ Հոգւով եւ յերկրորդ ծնընդեանս: Այսպէս, որդիք Ադամայ երկրորդ ծնընդեանս ոչ յարենէ եւ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնանի կոյս Աւագանէ ի Հոգւոյ եւ ի ջրոյ, զի եղեւ Ինքն ճշմարիտ Որդի Դաւթի եւ Աբրահամու, արար մեզ ճշմարիտ որդիս Աստուծոյ: Վասն որոյ, ընկալեալ ի Յորդանան վկայութիւն ի Հաւրէ եւ ի Հոգւոյն, ի դէմս ասէր, թէ՛ «Դա է Որդի Իմ սիրելի» (Մատթ. Գ 17, Ժէ 5, Մարկ. Թ 6): Եւ գայս ձայն որդեգրութեան ի մեզ տպաւորեալ Ինքն լինի ոչ բնութեամբ, այլ շնորհաւք որդի Յովսէփու: Եւ գայս նկարագրեալ յԱւրէնս, եթէ գոյ հնար, որք ոչ բնութեամբ են ծնեալ լինել շնորհաւք որդիք: Եւ Ղուկաս, հայեցեալ Հոգւով, եթէ եղեն մարդիկ ոչ բնութեամբ, այլ շնորհաւք՝ որդիք Աստուծոյ, գրեաց զՔրիստոս՝ Որդի Յովսէփու, շնորհաւք եւ ոչ՝ բնութեամբ եւ զՅովսէփ՝ որդի Հեղեայ՝ ոչ բնութեամբ, այլ շնորհաւք՝ ըստ Աւրինացն: Եւ ի կարգ անկեալ հանէ եւ Նաթան եւ ի Դաւիթ եւ կատարէ յԱդամ եւ յԱստուած: Եւ գայս խորհուրդ յառաջագոյն նկարեաց Աստուած ի հնուն ի ձեռն տապանակին, որ աւրինակ էր Մարմնոյն Քրիստոսի՝ դարձուցանել յետո զՈրդանան, զի աւրինակ էր նա մարդկութեանս՝ հոսեալ ի բարձանց Լիբանանու, իջանէր ի Մեռեալ ծով Սողոմոնայ, զի Սողոմ կուրուցիւն թարգմանի, եւ ծովն, զի եւ Մեռեալ է, յայտ ցու-

¹ 1 բառ:

² 1 բառ:

(15ա) ցանկ մեզ զկիրս դժոխոյս: Այսպէս եւ մարդկութիւնս զաւրէն Յորդանանու հոսեալ ի բարձանց բացամերժեալ յԱստուծոյ սաստիկ ոլորմամբ եւ յանդուզն ալեաւք մեղացն՝ իջանէր ի դժոխս: Արդ, որպէս չէր հնար ումեք դարձուցանել զյորձանս Յորդանանու, մենչեւ եկն տապանակն, որ ունէր յինքեան զԲանն Աստուծոյ՝ գծագրութեամբ տախտակացն, եւ եկայ ի մէջ նորին եւ դիւրաւ դարձոյց ի տեղին, յորում կայր: Եւ չէր հնար ումեք դարձուցանել մարդկութիւնս անդր//էն առ Աստուած, յորմէ յարամերժեալ որոշեցաւ, մինչեւ եկն էհաս տապանակ մարմինն, այն, որ ունէր յինքեան ծածկեալ զԲանն Աստուծոյ, եւ անդրէն դարձոյց զմարդն առ Աստուած: Վասն այնորիկ զազգահամարն, որ Մատթէոս ի վերուստ իջուցանէ, զգալուստ Նորա յաշխարհի գուշակեալ: Դարձուցանէ անդրէն Ղուկաս զմարդկութիւնս ի վեր հանելով, ասէ՝ «որ Ադամայն, որ Աստուծոյն» (Ղուկ. Գ 38): Արդ, գրէ Մատթէոս, որպէս ասացաք ի խնդրոյ հեբրայեցւոյն նոցին գրով: Իսկ Մարկոս ի Հռովմ գրեաց ի հռոմ լեզու ի Պետրոսէ: Իսկ Ղուկաս զպատճառս իւրոյ գրութեան յայտ առնէ, թէ՝ «Բազումք կամեցան թեթեւութեամբ գրել» (Հմմտ. Ղուկ. Ա 1), եւ երկուցեալ, զի մի՛ թերի պատմութեամբ կրճատեսցեն զբարձրագոյն ճառս Աւետարանին, կամ եղեւ ինչ, որ ստեպ զհետ եղեալ էի Պաւղոսի ի նմանէ կատարելապէս գրել: Իսկ Յովհաննէս տեւեալ մինչեւ ի ժամանակս Տրայիանոսի կայսեր եւ յետ երանելոյն Պատմոս կղզոյ գրեաց զԱւետարանն՝ հայեցեալ յառաջին Աւետարանիչսն, զի մարմնաւորութենէ Նորա պատմեցին եւ զմի ամ, որ ի գործսն միայն, որ յետ Յովհաննու ի բանդ մտանելոյն գործեաց, զի Մատթէոս ասէ. «Իբրեւ լուաւ Յիսուս, թէ մատնեցաւ Յովհաննէս ի բանդ, զնացեալ եկն ի Գաղեղիայ» (Մատթ. Դ 12): Եւ Մարկոս նոյնպէս ասէ, թէ՝ «Յետ մատնելոյն Յովհաննու եկ Նա ի Գաղիղեայ» (Մարկ. Ա 14): Եւ Ղուկաս ասէ. «Յետ ամենայն չարեացն, որ գործեաց Հերովդէս, կալաւ զՅովհաննէս եւ եղ ի բանդի» (Ղուկ. Գ 20): Իսկ Յովհաննէս գրեաց, որ յառաջ քան զայս էին. զի ասելն, թէ՝ «Արար զՂուրն ի գինի» (Յովհ. Դ 46), զայս՝ առաջին նշանս արարեալ (տե՛ս Յովհ. Բ 11): Եւ այս յառաջ քան զմատնելն Յովհաննու էր: Եւ դարձեալ ասէ. «Եկն Յովհաննէս Սաղիմ՝ առնել մրտութիւն» (Հմմտ. Յովհ. Գ 13): Եւ այլ բազում բանս ասէ, որ յառաջ քան զմատն[ելն] Յովհաննու էին:

- (15բ) Արդ, սկսաւ նա գրել զԱւետարանն, // որպէս Մովսէսն ի սկզբանն արարածոց լինելութեան: Այլ, ընթացեալ թեւաւք Հոգւոյն՝ ըստ Յովբայ, որ ասէ, թէ՝ «Մի՞թէ երթեալ իցէս յակն ծովու եւ մտեալ ի խորս աստուածային իմաստից», սկսաւ գրել նա, թէ՝ «Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ նոյն իսկ Աստուած էր Բանն» (Յովհ. Ա 1):

Մովսէս զյետոյսն Աստուծոյ ետես եւ ոչ հանելուժէր տեսլեանն, իսկ սայ համարձակութեամբ զլանջաւքն անկեալ համբուրէր զՆա: Անդ, յետ իջանելոյն Աստուծոյ ի լեառն, ընդունէր զտախտակսն, իսկ աստ, յետ ամբառնալոյ մերոյ բնութեան յերկինս, իջանէր Հոգին ի լեզուս հրեղենս: Ոչ գրէր ի տախտակս քարեղէնս, այլ՝ ի տախտակս սրտի՝ ոչ՝ գիր դատապարտութեան, այլ՝ գիր որդեգրութեան: Վասն որոյ Աւետարան անուանէ զսայ, զի ունի աւետիս՝ զպատժոց ազատութիւն, զմեղաց թողութիւն, զարդարութիւն, զսրբութիւն, զորդեգրութիւն, զժառանգութիւն, ընդ Որդւոյն Աստուծոյ ազգակցութիւն: Եկեալ տայ աւետիս, եթէ Աստուած յերկրի եւ մարդիկ յերկինս՝ խառնուրդ հրեշտակաց եւ մարդկան: Երկայն պատերազմ քակեալ թշնամին եղծեալ եւ զհանդերձելոց բարութեանցն առեալ յուսով զաւետիս: Վասն այսր ամենայնի կոչէ Աւետարան:

- Արդ, բաժանէ զազգահամարն յերիս կարգս յԱբրահամէ ի Դաւիթ, զի առ սոսայ եղեւ աւետիք ակրհնութեանցն, եւ ի Դաւթայ ի գերութիւնն, որ վասն մեղաց գրեցան: Եւ անտի իսկ, զի յամենայն կողմանց յայտնի արասցէ զգալուստ Նորա: [...]՝ ուստի սկսաւ յայտնութիւն գալստեան Նորա, եւ յորմէ ազգէ եւ ուր կատարեցաւ, եւ որչափ Աստուած խնամակալեաց նոցա աւետեաւք եւ Աւրինաւք եւ Մարգարէաւք, խրատիւք բարէգործութեամբք, սպառնալեաւք գերութեամբ քա[...]աւք եւ ոչ կարաց
- (16ա) դարձուցանել զնոսա ի չարեաց յԵգիպտ[ոսի]// այնչափ զքանչելիս եցոյց, մինչ խառնիճաղանճ ժողովուրդն եգիպտացւոց հաւատացին եւ ելին ընդ նոսա: Եւ խառնեցաւ ազգ նոցա եւ յանապատին յետ այն չափ սքանչելեաց որթուն եւ Բահաղիմա ծառայեցին եւ առ դատաւորաւքն միշտ ի կռապաշտութեան չէին: Մինչեւ յարոյց Աստուած զԴաւիթ արդարութեան թագաւոր եւ զտաճարն շինեաց եւ երգս նուագարանաց կարգեաց: Եւ ամենայն

¹ 1 բառ:

² 2-3 տառ:

պայծառ զարդուք զտաճարն յարդարեաց, զի ի ձեռն այսպիսի պատարագաւք եւ հրաշալի երգաւք պարտեսցէ զմիտս նոցա՝ թողուլ զկուռս մեռելոտիս եւ պաշտել զԱստուած կենդանի: Եւ ոչ կարաց մերժել զնոսայ որթոյն պաշտամանէ: Այլ փոխանակ միոյն, որ յանապատին, երկուս որթս կանգնեցին ի Դան եւ ի Բեթեղ եւ ի չորեքդիմի պատկերին Մանասէի տաճարին, մինչեւ բարկացեալ Աստուծոյ ի սպառ կոտորեաց զնոսա եւ այրեաց զտաճարն, սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց, այլ առաւել հրաշագործեաց ի Բաբելոն, քան որ յԵգիպտոս, մինչեւ զարիւնարբու գագանն զՆաբուգոդոնոսոր հաւանեցուցանէր հնոցին հրաշիւք: Եւ դարձեալ ի կերպս գագանի փոխադրէր զթագաւորն, մինչ ի հարկէ խոստովան լինէր՝ հաւանեալ մեծի սքանչելեացն: Եւ բազում հրաշք ի ձեռն Դանիէլի գործեաց եւ այնպէս մեծագաւրութեամբ եւ բարձր բազկաւ հանէր զնոսա ի Բաբելոնի ի ձեռն Կիւրոսի, մինչ բազումք ի բարբարոսացն ելանէին ընդ նոցա՝ լինել նոցա ի ծառայս եւ յաղախնայս: Որպէս ասէ Եսայի, թէ՛ «Եկեսցեն ի Քեզ այլագգիք մշակք եւ այգեգործք» (Հմմտ. Եսայի ԿԱ 5), եւ թէ՛ այր «բուռն հարցեն զդրաւշակէ միոյ հրէի եւ ասասցեն՝ տիրեայ մեզ, եւ ծառայեսցուք քեզ» (Հմմտ. Զաք. Ը 33): Եւ այսպէս, մեծաւ յաղթութեամբ հանեալ սոսա⁽⁶⁾, դարձեալ ի կռապաշտութիւն դառնային առ Անտ//իոքու եւ ոչինչ աւլտեցան այնչափ՝ զփորձ առեալ զաւրութեանն Աստուծոյ. զի եթէ ի կատարեալսն այնչափ յանցանս գտանէր ի Յուդայ, որ նահապետն ազգին էր, եւ ի Դաւիթ եւ ի դատաւորն եւ ի թագաւորսն, ի մի՛տ առ, թէ ի խառնիճադանճն զինչ ինչ մնայր, որ ոչ գործէին: Ապայ ուրեմն միոյ կարաւտէին ամենայն արարածք Միածնին գալստեամբն: Քանզի տկարացան Աւրէնք եւ Մարգարէք ի բազում վաստակ աշխատեալք վասն մարդոյն փրկութեան եւ ոչ զաւրեցին փրկել զնա, այլ առաւել վիրաւորեցին անիծիւք եւ դատապարտութեամբ, որպէս ասէ Առաքեալ, թէ՛ «Ամենեքեան ընդ անիծիւք էին» (Գաղատ. Գ 10): Ապա ուրեմն մեծագունին կարաւտէին դեղից, որպէս ասէ Առաքեալ, թէ՛ «Որ անհնարինն էր Աւրինացն, որով տկարանայր մարմնով, Աստուած զՈրդին Իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ դատապարտեաց զմեզս ի մարմնի Իւրում» (Հռովմ. Ը 3), զի մարմինն այն, որ տկարացաւ ի մեղաց ապականութեամբ, ի ձեռն առ Աստուած միանալոյն զաւրասցի եւ յաղթեսցէ թշնամւոյն զաւրութեամբ Աստուածութեանն. զի զգեցաւ

(16բ)

Տէր մեր զմարմինն, զի ինքն մարմինն ճաշակեսցէ զյաղթութիւնն եւ իմացեալ զիտասցէ զպարգեւսն. զի թէ Աստուած առանց մարմնոյ յաղթէր, զի՞նչ գովեստ լինէր Նմա: Եւ երկուդի յայտ արասցէ, թէ ոչ նախանձելով ինչ նախանձեցաւ ընդ Նմա զառաջինն լինել Նմա Աստուած: Զի, ահաւասիկ, այս մեծ է, որ խոնարհեցաւ Նովաւ, քան զայն, որ մինչդեռ մեծ եւ փառաւոր էր, բնակեալ էր ի Նմա, եւ վասն այսորիկ՝ «Ես ասացի,- ասէ,- բամ աստուածք իցէք» (Յովհ. Ժ 34): Արդ, եկն Բանն եւ զգեցաւ մարմին, զի այնու, որով ըմբռնին, ըմբռնէ, եւ այնու, որ ոչն ըմբռնին, ապստամբեսցէ մարմինն յըմբռնելեաց անտի իւրոց, քա//զի Տեառն մերոյ արժանի էր լինել նոսա հանգիստ ամենայն [...]՝¹աց, զի առ Նա ժողովեսցեն եւ տեղի ժամանակ ելից [...]՝² խորհրդոց, զի ամենայն տեղեաց առ Նա ընթացին եւ ժողովետղ ամենայն առակաց, զի յամենայն մարդոյ թռուցեալ վերասցին եւ ի վերայ Նորա եւ, այն հանգուցեալ, դադարեսցեն, զի այս է իմաստութիւն: Զի յանկանել այնորիկ, որ անկաւն, անկաւ ընդ նմա, այն, որ յարուցանելոցն է գնա: Եւ քանզի երեց էր մարմինըն Ադամայ, քան զչարչարանսն, վասն այնորիկ մերկացաւ նա զչարչարանսն, զոր զգեցաւ, քան զյաւելուած իմն տկարութեան եղեն ի վերա առողջ բնութեանն: Արդ, զառողջ բնութիւնն, որ զառողջութիւնն իւր կորոյս, զգեցաւ Տէր մեր, զի նովաւ գտցէ զառողջութիւն առ[եալն]՝ բնութիւն նորս: Զի թէպէտ սուրքն աւազակաց յԱնանայ խոցոտեցին, սակայն դեղք Բարերարին փութացան կեցուցանել զմեզ: Պատեցան Նովաւ պատանք ճրի, քանզի եւ հարուածք Նորա ճրի են, զի ոչ ինչ մեղաւ Նա սատանայի, որ է հարն զՆա: Նա ետ ինչ ոչ բարերարին, որ բժշկեացն զնա: Շամշովն իշոյն ծնաւտին կոտորեաց զբազումս, այլ աւճն Եւայիլ կոտորեաց զամենայն ազգս Ադամայ: Արդ, առ Տէր մեր զայս զեն, որով յաղթեաց ախոյեանի, եւ պարտաւորեացաւ աշխարհ, եւ էջ ի մարտ պատերազմի եւ մարմնովն, որ ի կնոջէն, յաղթեաց աշխարհի, յաղթեալ պարտեցաւ ախոյեանն: Մինչդեռ Եկեղեցի ի ծածուկ էր, խորհուրդք քարոզէին զՆա, իբրու Ինքն առ կայր, այլ իբրեւ ինքն Եկեղեցի [յ]այտնեցաւ, դարձաւ սկսաւ թարգմա-

¹ 2-3 տառ:

² 4-5 տառ:

նել զխորհուրդսն [...] ¹ թարգմանիչսն Իւր, որ վասն յայտ[ն]ու-
թեան անդ Նորա լռեցին:

(17բ) [Ասասց]ուք ² այսուհետեւ ի բանս Աւետարանին, որ ասէ, թէ՛
[...] ³ այսպէսն, քանզի ասաց, թէ Յակովբ ծնաւ// Յովսէփ՝ զայրն
Մարիամու, որում խաւսեցեալ էր զԿոյսն, որ ծնաւ զՔրիստոս:
Զի մի՛ ասիցեն լսողքն, եթէ ի Յովսէփայ իցէ մանուկն, բառնայ
զայսպիսի կարծիս՝ յայտ առնելով զյեղանակ ծնընդեանըն՝ ասե-
լով, եթէ՛

Մինչ չեւ եկեալ առ միմեանս գտաւ յղացեալ ի Հոգոյն Սրբոյ [Ա
18]:

Նա եւ հեթանոսաց իմաստունք առասպելաբանեն, թէ չաս-
տուածք նոցա խոնարհեցան ի խտողմունս ցանկութեան կանանց
եւ ծնան աստուածորդիս: Կամեցաւ յերկոցունց կողմանց բառնալ
զկարծիս, վասն այնորիկ ասէ՝ «ի Հոգւոյն Սրբոյ»: Բայց թէ ըն-
դէր պիտոյ եղեւ խաւսն՝ այր ունել զՅովսէփ, պարտ է հանդիսա-
նալ եւ յայտնի առնել փոքր ի շատէ՝ ըստ մերում կարի: Նախ՝
այն իսկ է, զի ի մէջ հրէիցն կին առանց գլխոյ անարգ էր, եւ թէ
ինչ պատճառս վնասու գտանէին, դառն դահիճ եղեալ, առանց
խուզիւ քարկոծ առնէին, իսկ որոյ տէր գոյր, չէր ուրուք իշխա-
նութիւն քննել զգործս նորա, բայց միայն՝ այր իւր, յորժամ տե-
սանէին զնայ, զի առանց խուզիւ քարկոծ առնէին: Եւ պարտ էր
նմայ ի Բեղդասեմ երթալ եւ անդ ծնանիլ յանտառին եւ անտի ի
տաճարն գալ եւ դարձեալ ի յԵգիպտոս փախչել եւ դառնալ
յանդրէն, որպէս գուշակեցին Մարգարէքն: Զիա՞րդ մարթ էր
Կուսին՝ անտերունջ շրջել ընդ այս ամենայն: Եւ միւս պատճառն
Բարսեղ յայտ առնէ, թէ առ ի բազումն չարին կոչեցաւ Նա այր
Կուսին, զի յորմէ յէտէ լուաւ նա յԵսայեայ, թէ՛ «Ահաւասիկ
Կոյսն յղասցի» (Եսայի է 14):

Յայնմ աւրէ հետէ որսայր զԿոյսն եւ արկանէր ընդ մեղաւք
կամ ընդ պատժովք: Յայսմիկ կուրացաւ նա եւ ոչ ծանեաւ, թէ
կուսութեամբ ունի զյղութիւնն, որպէս ասաց ցՅովբ, թէ՛ «Մի՛
տեսցէ զնա [զարուսեակն] անգեղ» (Յովբ. Գ 9) եւ Սողոմովն, թէ՛

¹ 1 բառ:

² 3-4 տառ:

³ 1-2 բառ:

- (18ա) «Հետս աւձի մի՛ գծեսցէ ի վերայ [վիմի]» (Առակ. Լ 19): Դարձեալ եւ այլ խորհուրդ բարձրագոյն եւս [նկարես]ցուք, զի եկեղեցի փոխանակ դրախտին շինեցաւ վասն երկր//որդ Ադամայ, զի աւրհնութիւնն, որ ի դրախտին՝ աճել եւ բազմանալ անախտաբար, աստ կատարեսցի ի ձեռն երկրորդիս Ադամայ, զի չէր մարթլրոյն եղծանել, զի այն աւրհնութիւնն անիծիւք ապականեցաւ ի մեղացն: Արդ, որպէս էին ի դրախտ]ին Ադամ եւ կինն՝ մերկ ի ցանգութեանց եւ ոչ ամաչէին, զի անմեղք էին, զի ամաւթ եւ երկիր մեղաց մտին, զի լուեալ զձայն գնալոյ Տեառն ի դրախտին եւ երկեալ, զոր ոչ էր կրեալ յառաջ, եւ թաքեալ յամաւթոյն, զի մերկ էր ի գործոց առաքինութեան եւ անմեղութեան: Սոյնպէս եւ Յովսէփ եւ Մարիամ ի դրախտի եկեղեցւոյ մերկք ի մեղաց եւ առանց խղճի եւ ամաւթոյ, զի ոչ գիտէին զցանկութիւն, որպէս ասաց աւետարանիչն, թէ՛ «Ոչ գիտէր զնա»: Արդ, որպէս անդ ամաւթ չարին եղեւ աւձն զխորհուրդ, սկզբնաչար աւձին անկելոյ ի բարձանց արկ յականջ Եւայի զդեղ մահուն եւ կապեաց զնա ցանկութեամբ մահուն եւ արտաքսեաց անիծիւք ի դրախտէն եւ ի կենաց փայտէն եւ որոշեաց յԱստուծոյ: Սոյնպէս եւ աստ Գաբրիէլ, փոխանակ աւձին, գայ առ Կոյսն՝ բերելով զաւետիս կենաց ի բարձանց: Եւ, գտեալ զնա ի բացեայ յառնէն, արկանէ ընդ ականջն նորա զկեանսն, որ բղխեաց ի Հաւրէ: Եւ եկ լուծաւ յարգանդ Կուսին՝ անդ, ուր անէծք մահին, եւ արմատացան՝ բերելով զպտուղ մահուն, զի ջրեսցէ զարմատ անիծիցն եւ ապականեսցէ զպտուղ մահու նորա: Եւ զի եկն Գաբրիէլ առ Կոյսն աւրհնեալ, որ կարճեալ էր զլսելիսն իւր ի հրապուրանաց պատրանաց նենգաւորին, զի մի՛ անկցի ի բախանս ալեաց նորա. զի գիտէր, թէ զինչ անց ընդ առաջին Կուսի, որ ունկնդիրս խրատու նորա: Զի Մարիամ կոյս սուրբ հիմն է նորոյ աշխարհիս, զորոյ ոչ քա[յ]քայեաց, արարեն զգիրն ճշմարտութիւն նորա: Վասն այսորիկ առաքեցաւ առ նա հրեշտակն բարձանց եւ աւետարանեաց նմայ// վասն նոր ծննդեանն, զի բնութիւն նորա սուրբ էր ի չարէն [...]¹ Որպէս մորենին այն առ Մովսէսիւ, որում ոչ ոք երբէք պաշտաւն պղծութեան մատոյց եւ ոչ դրաւչեալ պատկեր ի նմանէ նկարեցաւ: Եւ ոչ դիւթին կախարդութեան հմայից ի նա սերմանեցաւ վասն տկարութեան բնութեան նորա, որ էր աւրինակ խո-

¹ 1 բառ:

նարհուլթեան Կուսին, յորում ոչ ինչ ախտ չարուլթեան բանսարկուին ի նմա գ[որ]ծեցաւ: Վասն որոյ եղեւ այս¹ տեղի բնակութեան Բանին, զի Ծնունդ է նա զարմանալի, որ ոչ թարգմանի, եւ նովաւ աւարտին ամենայն մարգարէութիւն մարգարէից, եւ ստուգին քարոզութիւնք առաքելոցն: Եւ ասէ Հրեշտակն՝ «Ողջո՛յն քեզ, աւրհնեալ դու միայն յամենայն կանայս» (Ղուկ. Ա 42), որ անիծեցան Եւայէ եւ այսր, զի ի ձեռն նորա մտանէ խաղաղութիւն յարարածս, եւ բառնայ թշնամութիւն, որ մտին յԵւայէ, եւ մտանէն կեանքն, որ կլանեն զմահ Եւայի, եւ խաղաղութիւն, որ բառնայ զթշնամութիւն, եւ աւրհնութիւն, որ ջնջէ զանէծս եւ լուծանէ զամենայն դաժանութիւն: Բայց Կոյսն, իբրեւ լուաւ, ի հիացման մեծի եղեւ, զի իբրեւ հուր յամենայն անդամս նորա վառեցաւ, եւ թնդեալ սկսան ամենայն խլրտմունք խորհրդոց նորա. զի հարցեն, թէ կին չիցէ ողջոյնն այն, որ մի ի դարուց անտի ոչ անկաւ յունկն կնոջ, զի ճաշակ կենաց փայլէր ի նմա, զի գուշակէր յԱստուծոյ, որ ծագէր արգանդ նորա, զի իբրեւ զփայլակն զգեցաւ ի նա: Յայնժամ դարձոյց [...] ² առ Հրեշտակն, զի ստուգեսցէ զճշմարտութիւն նորա, զի լուաւ, թէ արքայ է եւ վախճան ոչ ունի, այլ ոչ եցոյց, թէ ի խորութենէ, թէ ի բարձրութենէ: Վասն որոյ պահանջեաց ի նմանէ, թէ՛ «Ուստի՞ զիտացից զայդ, զի զայր ոչ գիտեմ»: Յայնժամ Հրեշտակն մեկնեաց յայտնապէս, թէ ի նմա կախեալ կան կեանք ամենայն արարածոց [...] ³ Ետ գաս նորա, նմանէ սերման, որ անկան ի յերկիր, մէկնութիւն// Բանին նման անձրեւոյ, առանց որոյ ոչ բուսանի հատ, անկաւ ի նմա պատգամս՝ իբր սերմ: Եւ էջ մեկնութիւն նորա իբրեւ զան[ձր]եւ, եւ յայտնեցաւ ճշմարտութիւն նորա իբրեւ հատ, եւ կերակրեցան հնձողք ի կենաց հացէ անտի:

(19ա)

Ասէ՝ «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանացի քեզ» (Ղուկ. Ա 35): Եցոյց, եթէ Որդի է նա Բարձրելոյն, եւ նա ասէ՝ «Ահաւասիկ, աղախին քո, եղիցի ինձ ըստ բանի Քում» (Ղուկ. Ա 38): Եւ այս հնազանդութեան խղեալ ելոյժ զկապանս անհնազանդութեան Եւայի: Եւ «մինչ չեւ եկեալ առ միմեանս, գտաւ,- ասէ,- յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»: Ոչ եթէ Հոգին Սուրբ ստեղծ զմարմինն, եւ ապայ Բանն բնակեաց ի նմա՝ ըստ

¹ Չեռագրում աթ:

² 1 բառ:

³ 1 բառ:

կարծեաց երկաբնակացն, այլ միայն մաքրեաց զԿոյսն յամենայն խլրտմանց մարմնոյ: Եւ ապա Բանն, մտեալ ի մաքուր արգանդին յարենէ Կուսին մաքրեցելոյ շրջաստեղծեաց Իւր մարմին՝ միացեալ յերկուց անշփոթ խառնուած, եւ անդէն փոխաշրջէր յանապականութիւն*։ Որպէս շրջեաց զՉուրն ի գինի ի մէջ թակուկացն, զի զվեց թակոյկսն յայտնիս միոյ Կուսին, որ անյայտն էր, վկայս կացոյց. զի ոչ ըստ բնութեան ի մէջ որթուն շրջեցաւ Չուրն ի գինի, այլ արտաքոյ բնութեան՝ ի մէջ թակուկացն: Այսպէս եւ ոչ ըստ նմանութեան այլոց տնկեցաւ որթն ճշմարիտ յարգանդի անդ ամուսնութեան, այլ՝ արտաքոյ բնութեան ի վեր, քան զա[յ]ս եւ զիմաստս, զի որպէս զառաջին Ադամն ստեղծ ի կաւոյ եւ յաւրճնեալ եւ յանապական երկրէ, եւ ոչ պիտոյ եղեւ գործակցութիւն ամուսնութեան, այլ անապականաբար ի պատկեր Աստուծոյ ստեղծաւ յԱրարչէն: Այսպէս եւ երկրորդ Ադամն առանց գործակցութեան ամուսնութեան ստեղծաւ աւրճնեալ Կուսէն: Վասն այնորիկ հրեշտակն նախ եբարձ գանէծսն, որ յ[Եւ]այէ, զի [...]¹ լիցի աւրճնեալ երկիր բանաւոր առ ի հառնումն երկրորդս Ադամայ: Եւ զի զառաջին Ադամն եկն նա բժշկել, վա//սն այնորիկ ոչ ստեղծ գմարմին գայն յերկրէ կամ յայլ իմէք, եւ [ի] նմի[ն] այլ ոմն Ադամ իցէ, եւ այլ ոմն՝ Փրկիչ նորա, այլ ի նմին գանգուածոյ ստեղծանէ գմարմինն գայն, զի նոյն իցէ արմատն եւ պտուղ նորա անմահացուցիչ:

(19բ)

Եւ զի ասաց աւետարանիչն, թէ՛ Ի Հոգւոյն էր ծնունդն (Ա 20) զի մի՛ անհաւատ թուեսցի լսողաց, ածէ զՅովսէփ վկայ բանից իւրոյ. զի թէ ոչ էր ի Հոգւոյն, ոչ հաւանէր այրն այն, որ վերագոյն էր արդարութեամբ, քան զաւրէնս², վերակացու լինել նմա: Եւ հրեշտակն փարատէր գերկիւղն, զի ի մեծի տարակուսի կայր եւ ոչ գիտէր զինչ գործիցէ, զի յայտնել մահ գործէր Կուսին, եւ պահէին մեծաւ խղճիւ տագ[ն]ապէր զնա: Հաճէր հաւանեցուցանէր Մարիամ զՅովսէփ վասն յղութեան իւրոյ, թէ «Ի Հոգւոյն է»։ Պատմէր զաւետիս հրեշտակին եւ զյղութեան Եղիսաբեթի եւ զխաղալն Յովհաննու եւ զպապանձումն Զաքարիայի: Եւ այս ամենայն վկայութիւնք յայտնի էին, եւ զի տեսանէր գերեսս Կուսին գուարթ եւ առանց ամալթոյ, եւ երբէք ոչ ետես ի նմա խոր-

* Յայսմ. Ապր. Զ:

¹ 1 բառ:² Ձեռագրում՝ գալրեսն:

հուրդ լիտուլթեան, խորհեցաւ ի միտս իւր, թէ վերագոյն է ծնունդն այն, եւ ոչ արժան է ինձ հայր անուանել նմա, կամ գուցէ կորուսանիցեմ զանուն կուսորդւոյն, եւ ծածկի ի բազմաց հրաշափառ Ծնունդ Նորա: Արդարութիւն զայն համարեցաւ ի բաց կալ ի նմանէ ի մեծի ահի եղեալ: Վասն այնորիկ ասաց հրեշտակն, թէ՝

Մի՛ երկնչիր, զի ծնունդ անոռա Փրկիչ աշխարհի է, զի Նա փրկեցէ,- ասէ,- զժողովորդ Իւր ի մեղաց իրեանց (Ա 21).

(20ա) Վասն այս ամենայնի խորհեցաւ արդարութեամբ արձակել զնա, զի թէ գիտէր, թէ չէ ի Հոգւոյն, ոչ էր նմա արդարութիւն լռելեալին արձակել ըստ հրամանի աւրինացն. «Ձեռք քո,- ասէ,- նախ [...]՝ բն արասցեն քարկոծել զնա» (Հմմտ. Բ Օրէն. ԻԲ 21), զի էր արդար աւրէնքն գ[...]՝² ուղիւղ ըստ գործոցն հատուցանել: Եւ ընդէ՞ր ոչ յառաջ //յայտնեցաւ հրեշտակն կամ Մարիամ, այլ երկիւղէր միգուցէ, ո[ր] հաւատայց, եւ պատժեցի իբր Ջաքարիան: Այլ յորժամ ի խոյզ եղեւ իրացն՝ յահէն ըմբռնեալ, ապա հրեշտակն փարատէր զերկիւղն. «Մի՛ երկնչիր,- ասէ,- զի որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն է»: Եւ չասաց, թէ յղացեալն, այլ՝ ծնեալն, յայտ արար զկատարելապէս առնուլ զմարմինն, եւ ոչ որպէս մերս ի Խ (40) առուր կատարի ամենայն զգայութեամբ, այլ՝ ամենայն պիտոյիւք առ զմարմինն կատարեալ զգայութեամբ ե՛ւ շնչով, ե՛ւ հոգւով անդ ի ստեղծմանն, որպէս ասէ սուրբն Բարսեղ՝³:

Ծնցի,- ասէ,- Որդի, եւ կոչե[ս]ցէս զանուն Նորա Յիսուս (Ա 21):

Այսու հաղորդ արար զՅովսէփ ծննդեանն այն, որ ոչինչ ունէր հաղորդութիւն անուանադրութեանն, արար զնա Տէր, զի հաւրէ աշտիճան կոչել անուանս որդւոց: Արդ, որպէս Աստուած հաղորդ արար զԱդամ արարչութեանն յանուանակոչութեան եղելոց, որ ոչինչ էր կցորդ արարչութեանն, սոյնպէս եւ աստ ասէ՝ Կոչեցաւ զանուն Նորա Յիսուս, զՈրոյ անուանակոչութիւն Մովսէս նկարագրեաց յառաջագոյն. մինչ հանդերձեալ էին ժողովուրդն

¹ 3-4 տառ:

² 3-4 տառ:

³ Տե՛ս «Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կապադովկացւոյ ասացեալ ի Ծնունդն Քրիստոսի», աշխատ. հ. Պ. Տէր-Պօղոսեան, ՀԱ, 1968, էջ 427-428, տ. 135-145:

մտանել յերկիրն աւետեաց, փոխեաց զՈվսէէ Յեսու, զի նա փրկեաց է զժողովուրդն յամենայն պատերազմաց, իսկ սա՝ ոչ ի պատերազմաց, այլ՝ ի մեղաց եւ ի դ[ժո]խոց: Եւ այսու յայտ արար, թէ Աստուած է ծնեալ Մանուկն, զի Աստուծոյ միայն է ի մեղաց ազատել զմարդիկ: Նա յետ վախճանին Մովսէսի մկրտեաց ի Յորդանան եւ ժառանգեցաւ զերկիրն աւետեաց: Եւ այս յետ վախճանի աւրինացն մկրտեաց ի Յորդանան եւ ժառանգեցոյց զարքայութիւնն: «Նա փրկեացէ,- ասէ,- զժողովուրդ Իւր ի մեղաց»: Եւ անդէն կնքեաց բան իւր վկայութեամբ մարգարէին. ասէ՝

(20բ) «Այս ամենայն եղև, զի լցցի, որ ասաց[աւն ի Տեառնէ [...]՝ արեւն, այլ յԱստուծոյ՝ ի ձեռն Եսայեայ. Ահաւասիկ Կոչսն յղասցի եւ ծնցի Որդի] (Ա 22-23) ամենայն ասելովն: Միով բանիւ յայտ առնէ զան//բաւ շնորհսն Աստուծոյ ի մարդիկ հեղեալ, զի թէ Որդին աստուծոյ մարդ եղեւ, ապայ ամենայն ինչ տուաւ մեզ, ազատութիւն ի մեղաց, որդեգրութիւն, արդարութիւն, երկնից արքայութիւն, յԱստուած միաւորութիւն: Եւ այս ամենայն անթիւք պարգեւք տուան մեզ, զի լցցի ասացեալն ի Տեառնէ: Եւ մի՛ կարծիցես, թէ այժմ ինչ եղև. անդուստ ի վերուստ երկնէր գայր խորհուրդ մերոյ փրկութեանն: Որպէս առաքեալ ի բազում տեղիս Չանայ յայտնի կացուցանել, թէ անսկզբնաբար էր նկարագրեալ առ Աստուծոյ մեր փրկութիւնս եւ ծածկեալ յամենայն ազգաց առ Աստուծոյ, որ զամենայն առնէ: Արդ, զբանէ, նայեաց, յուշ առնէ նմա, զոր միշտ ընթեռնոյր, զի թէ մոռացցի կամ թիւրեացցի ի բանէն, որ հաստատեացցի, զի թէպէտ բերանն յԵսայեայ² էր, որ խաւսէր, այլ Բանն Աստուծոյ էր, որ ազգէր ի նա:

Կոչեացես զանուն Նորա Էմանուէլ (Ա 23).

Զի թէպէտ եւ ոչ եղաւ այս անուն, այլ յորժամ իրքն արդեամբք ի գլուխ ելին, չէր պիտոյ անուանակոչութիւնն: Վասն որոյ, հաւանեալ բանին Յովսէփայ,

Առ,- ասէ,- յինքն, եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զՈրդի (Ա 24): Արդ, մինչ՝ ոչ եթէ սահման ինչ է, այլ Գրոց սովորութիւն է. ասէ՝ «Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշխարհի» (ԻԸ 20): Դարձեալ՝

¹ 1-2 բառ:

² Ձեռագրում յեստեայ:

«Մինչեւ դիցին թշնամիք ի ներքոյ ոտից Նորա» (Սաղմ. ՃԹ 1):
 Բայց եւ այլ իմն խորհուրդ մեզ յայտնէ, զի յաւրէ, յորմէ
 բնակեաց Բանն ի նմա, բարձաւ ամենայն խորհուրդ մար[դ]կու-
 թեան յերկոցունց, զի մտածութիւն անգամ խորհրդոց ոչ ծնանէր
 ի նոսա, զի որպէս գազանաց չարութիւն բարձաւ ի տապանին ի
 կենդանեացն՝ ի պատճառս նոյն այն, որ սանձեաց զամենայն
 խլրտմունս բնութեան մարմնոյ ազատութեամբ իւրով: Սապէս
 բնութիւն այնորիկ, որ բնակեալ էր յարգանդ նորա, սանձեաց
 (21ա) զցանկութիւն նոցա, մինչ ի //ծնունդն իւր իբրեւ կատարեցաւ
 սահման բնութեանն ի ծնանելն, զմինչն եղ ի միջի, եւ յայնմհետէ
 ազատութեանն իւրեանց էր սրբութիւնն:

Բ

«Եւ ի ծնանելն Յիսուսի, - ասէ, - ի Բեդդահէմ Հրէաստանի» (Բ 1ա):

Զի անտի գուշակեցին մարգարէքն զգալուստ Նորա: «Ահա, լուաք,- ասէ,- զՆմանէ եւ գտաք զՆա ի մայրիս Եփրաթայ» (Սաղմ. ՃԼԱ 6): Ասեն, թէ որպէս խաչեցաւ ի Գողգոթայի ի վերայ հողիցն Ադամայ, այսպէս եւ ծնաւ յայրին, զի անդ էր գերեզմանն Եւայի, զի բար[ձ]ցէ գանէծս նորա:

Արդ, ծնաւ նա զԱնդրանիկն արարածոց առանց ցաւոց, դարձաւ նա ծնող արարածս առանց երկանց յԱւագանէն եւ անդրանկացոյց զամենեսեան, զի չիք ի ծոց Աւագանի երէց եւ կրսեր, զի ամենեքեան անդրանիկք եւ զաւակք աւրհնութեան: Եւ կատարեցաւ այն, թէ՛ «Ամենայն անդրանիկ, որ բանայ զարգանդ, սուրբ Տեառն կոչեսցի» (Ղուկ. Բ 23): Արդ, ել Նա ի փակեալ արգանդէն, որպէս եմուտ դրաւքն փակելովք եւ զկնիք կուսութեանն ոչ խախտեաց, որպէս եւ ել ի կնքեալ գերեզմանէն՝ ամբողջ թողլով զկնիքն: Զայս երկուս յայտնիս վկայս կացոյց ծած[կ]եալ կուսութեանն: Եւ զի ասէ՝

Յաւորս Հերովդիայ արքայի (Բ 1բ):

Զժամանակն յայտ արար: Զի որք կամին ստուգել զժամանակ ծննդեանն, գտցեն ճշդիւ կատարեալ յայսմ վայրի եւ հաւատասցեն թուոցն, զոր սահմանեաց Դանիէլ ի բերանոյ հրեշտակին, թէ է-երորդք Ե եւ է (7)-երորդք, ԿԲ (62) համառատեցան ի վերայ ժողովրդեան մինչեւ Աւծեալն եւ ապա բարձցին աւծութիւնք եւ կնքեսցին անաւրէնութիւնք եւ եկեսցեն յաւիտենական սրբութիւնք: Եւ զայս ետես Դանիէլ ի ԿԶ (66) զուժպիադին, եւ այս կատարի [ի] թագաւորելն Հերովդի ալ[ազգւոյ], զի ՃԶԵ (185) զուժպիադին թագաւորեաց նա ի Հրէաստանի, [որ լինի ամք] ՆԶԵ (485) եւ զուժպիադք ՃԻԲ (122) եւ է (7)-երորդքն Դանիէլի եւ ՅԼԴ (334) ամիս, որ ծնաւ Աւծեալն: Զի յորժամ թագաւորեաց Հերովդէս եւ տիրեաց սրբութեանն եւ յայնմհետէ (22ա) կաշառաւք կացուցանէր// ամ [յամի] քայանապետ արտաքոյ աւրինացն հրամանի, որ մինչ ի վախճան քահանայապետին ոչ ոք

կարէր յափշտ[ակ]ել զաշտիճան նորա: Աստանաւր բարձաւ աւ-
ծութիւնն, եւ կնքեցան մեղք նոցա, զի խոտեցան¹ այնոքիկ, որ
արծաթով լինիր ընտրութիւն քահանայութեանն: Եւ արդ, ի սորա
թագաւորելս կատարեցան է (7)-երորդքն Դանիէլի, եւ ՅԼ Դ (334)
ամի սորա ծնաւ Աւծեալն: Ասէ՛

Յաւուրս Հերովդի ահա մոգք եկին յարեւելից եւ ասեմ՝ ուր իցէ ծնեալ
Արքայն (Բ 2):

Եւ զի մարգարէքն սպառէալ էին ի մէջ Իսրաիղի. փոխանակ
մարգարէիցն զբարբարոսս ած ի յանդիմանութիւն նոցա. որ այն-
չափ ժամանակաւք կրթեալ էին աւրինաւք եւ մարգարէիւք եւ ոչ
հաւատային, իսկ վայրենագոյնքն միով նշանիւ հաւատացին եւ
եկին ի յանդիմանութիւն հրէիցն: Եւ զի ընթացաւ աստղն ցուցա-
նել, թէ Սա է, զՈրմէ մարգարէքն գուշակեցին, զի որպէս դառնալ
արեգականն յարեւմտից յարեւելս առ Եգեկիայիւ: Եկին բաբելոն-
ցիքն դրսովել զանհաւատութիւն հրէիցն: Այսպէս յարեւելից
աստղն ընթացաւ՝ գալ ի յանդիմանութիւն անհաւատութեան նո-
ցա: Արդ, եկին մոգքն պատարագաւք ի նշան աստեղն, եւ իբր
զմարգարէքն վկայեցին ի վերայ ծնեալ Մանկանն, զի մի՛ յորժամ
յայտնեսցի Նա, աւտարացուցեն զՆա, այլ գիտացեն ամենայն
արարածք զծնունդ Նորա: Վկայեաց եւ Զաքարիաս ի պապան-
ձելն իւրում, եւ Եղիսաբեթ՝ ծննդեամբ իւրով, այլ եւ աստղն այն
իշխան էր գնացիւք իւրովք՝ վերանալ եւ խոնարհիլ եւ ոչ կա-
պեալ, որպէս այլ աստեղքդ, եւ զի ծածկեցաւ ի նոցանէ, զի մի՛
դէպ ուղիղ եկեսցեն ի Բեդդէէմ, այլ երթիցեն յԵրուսաղէմ, զի
դպիրք պատմեսցեն զծնունդ Նորա եւ առցեն ճշմարիտ վկայու-
թիւն ի մարգարէից անտի, զի մի՛ կարծիցեն, թէ այլ գաւրութիւն
(22ա) իցեն [...] ² արտաքո քան//զհանգիստ Նորա, որ բնակեալն էր յԵ-
րուսաղէմ: Արդ, արեւելեայքն աստեղքն լուսաւորեցան, իսկ
հրեայքն ի խաւարել արեգական կուրացան: Արդ, նախ արեւելք
երկիր պագին Նմա: «Արեւելք,- ասի,- ի բարձանց լուսաւորեցին
զխաւար հեթանոսաց», եւ առաջնորդեաց աստղ եւ ած կացոյց ի
վերայ արեգականն արդարութեան, եւ կատարեաց զգնացս իւր,
որպէս Յովհաննէս, որ քարոզեաց ի վերայ Բանին: Իբրեւ կատա-

¹ Չեռագրում խոտորեցան, յետոյ՝ ուղղուած:

² 1 բառ:

րեաց ձայնն զկարգ իւր, վկայեաց ի վերայ Բանին, ասէ. «Ինձ պարտ է նուազել, եւ Նմա՝ աճել» (Հմմտ. Մատթ. Բ 11) (Յովհ. Գ 30): Պարտեաց զնոսա աստղն լուսով իւրով եւ ած յերկրպագութիւն ճշմարիտ Լուսոյն, զի սէր նոցա, որ կապեալ էր ի լոյս անցաւոր, ձգեաց Աստուած զնոսա առ Լոյսն, որ ոչ անցանէ: Եւ զի աստեղագիտութիւն իմաստից ի նոցանէ յայտնեցաւ, զի նախ ի նոցանէ եղեւ գիւտ այսպիսի իմաստից, զի երկիրն պարզէ ի խոնաւութենէ եւ աւղքն վճիտք եւ ընթացք աստեղացն յայտնագոյնք. իւրեանց սովորական արուեստիւն հաւանեցոյց զնոսա, որոց հաւատային, որ ի նոցանէ յայտնէր նոցա: Նա եւ զմարգարէութիւնն Բաղամու ունէին, որ ասաց, թէ՛ «Ծագեսցի աստղն Յակովբու, եւ երեւեսցի այր Իսրաիլի» (Թիւք ԻԴ 17), որում առաւել հաւատային, քան մարգարէից: Իսկ Հերովդէս խռովեցաւ, զի ոչ էր նա ի ցեղէ թագաւորեաց, այլ եկամուտ: Յիրաւի սաստեաց ի լուր ճշմարիտ Թագաւորին ծննդեան: Իսկ Երուսաղէմ ընդէ՞ր խռովեցաւ, զի Փրկիչ աւետարանեցաւ նոցա: Ընդ որ պարտ էր ուրախ լինել ընդ Մանկանն: Այլ զայս եւ Եսայի գուշակեաց. նախ, ասէ, նոքա կամէին, թէ հրոյ ճարակ լեալ էին, զի «Մանուկ ծնաւ մեզ, Որոյ իշխանութիւն ի վերայ ուսոց ունի» (Եսայի Թ 6): Իսկ Հերովդէս նենգութեամբ կամէր խաբել զմոզան, եւ նենգութիւն նորա ի գիշեր յայտնէր մոգուցն, զի ի գիշերիւն ընդ հայելի տեսանէին զնեղութիւն [...]»¹, զի նշան աստեղն ոչ միայն վասն մոգուցն// երեւեցաւ, այլ վասն ամենայն արարածոց, զի հաւատայցեն ի պատճառի նորա, զի աստղն, որ հնազան[դ]եցաւ, որ ոչ ըստ բնութեան իւրում: Եւ արար ճանապարհ առաջի մարդկութեանս յարքայութիւն իւր: Եւ որպէս աստղն զուարթագին պայծառ լուսով իւրով քարոզեաց զծնունդ Նորա ամենայն արարածոց, սոյնպէս արեգակն ի խաւարել իւրում մթագոյն տեսեամբ իւրով քարոզեաց ամենայն արարածոց զմահ Նորա: Եւ որպէս Եգեկիա նշանաւն ապրեցաւ ի յայտնի մահուանէն, ապրեցան նոքա նշանաւ աստեղն ի ծածուկ մահուանէ անտի, զի որպէս աստղ նոր երեւէր նոցա, այլ հետք նորա ծածուկ էր յամենայն մարդոյ: Այսպէս եւ երեսք ծնեալ Մանկան երեւէր ամենայն մարդոյ, այլ հետք Նորա ծածկեալ էր յամենայն արարածոց: Եւ զի ասէ՛ մատուցի Նմա ոսկի իբրեւ Թագաւորի եւ կնդրուկ՝ իբրեւ Աստուծոյ

¹ 1 բառ:

եւ զմուռն՝ իբրեւ մահկանացուի (Հմմտ. Մատթ. Բ 11), զի տեսին զաստղն հրաշալի եւ զծնողսն աղքատ եւ զմսուր անասնոյ եւ զխանձարուրսն անպաճոյճ, ոչ կարէին ճշմարտութեամբ վերահասու լինել եւ զի մի՛ ի տեսիլ գձուճ գայթակղեսցին: Ի մտանել յայրն հուր փայլ[լ]ատակեաց ի Մանկանէն ի դէմս նոցա: Եւ նոցա տարակոյս մթեալ խորհրդաբար մատուցին զընծայսն, զի թէ թագաւոր իցէ, ոսկի պատշաճի նմա, եւ եթէ Աստուած՝ կնդրուկ, եւ եթէ մահկանացու՝ զմուռ: Դարձեալ՝ ոսկի, զի դառնալոց է երկրպագութիւն պատկերի ոսկոյն՝ Տեառն ոսկոյն, եւ զմուռ՝ իբր բժշկի, զի բժշկելոց է նա զբեկումն Ադամայ, եւ կնդրուկ, զի հոտ անուշից, որ բուրեաց ի նմանէ, ելոյժ զհոտ մահու, որ բուրեաց յԱդամայ՝ ըստ այնմ, թէ՛ հոտ անոյշ եմ Քրիստոսիւ փրկելոցն (Հմմտ. Եփես. Ե 2, Փիլիպ. Դ 18): Եւ այն, որ յայտնեաց նոցա՝ (23ա) չդառնալ առ // Հեր[ովղէս], եւ ի նոյն յայտնեաց նոցա՝ ելանել զալ յերկրպագութիւն նորածին Թագաւորին: Եւ մոգուցն, իբրեւ լուսաւորեալ եւ լցեալ զիտութեամբ, գնացին յաշխարհն իւրեանց:

Դարձեալ¹ երեւեր հրեշտակս ի տեսլեան Յովսէփայ եւ ասէր. արի, ա՛ն զՄանուկդ եւ զմայր Իւր եւ փախի՛ր յԵգիպտոս (Բ 13).

Չոր պարտ է ի միտ առնուլ մեզ, թէ ընդէ՞ր այսմ երկուց թագաւորացս միշտ ցուցանէ զզաւրութիւն սքանչելեաց Իւրոց, զի եւ ի սոցա ձեռս մատնեալ զժողովուրդն ի գերութիւն նախ յԵգիպտոս իջոյց զ[Յ]ակովբ որդովքն իւրովք ի ծառայութիւն եւ ապա ի Բաբելոն գերեաց զնոսա ի չար ծառայութիւն վասն մեղաց իւրեանց, զի ամենայն դիւթութիւնք եւ կախարդութիւնք, հնարք սատանայի ի սոսա զաւրանային վասն երկուց ցանկութեանց՝ Ադամայ մեղաց եւ Եւայի. զի Եւա ցանկացաւ աստուածորդիս ծնանել եւ ընկալաւ զցաւս չարչարանաց ընդդէմ յանդդնութեան իւրոյ, եւ Ադամ, զի հպարտացաւ աստուած լինել, ընկալաւ ընդդէմ ցանկութեան իւրոյ զվաստակս եւ զքիրտն երեսաց եւ զփուշ պսակ թագաւորութեան իւրոյ: Եւ այս երկու ախտք թագաւորեցին ծննդոց Ադամայ ցանկութիւնդ ունակութեան, վասն որոյ ջրհեղեղաւն կորեաւ եւ ամբարտաւանութիւն, որով հսկայքն ջնջեցան: Եւ զայս նկարագրեաց Աստուած յԵգիպ-

¹ Չեռագրում դարդեալ:

տոս եւ ի Բաբելոնովն. զԵգիպտոս նկարագրեաց ի դէմս պոռնկութեան կանանց ի ձեռն մարգարէին, որ ասէ. «Վիշապը, որ տիրի ջուր Աստուծոյ, եւ ասէս՝ իմ են ջուրքս, եւ ղեւիաթան՝ թագաւոր ջուրց» (Հմմտ. Եգեկ. ԻԹ 3). այն, որ զՅորդանան յակնակապիճսն ժողովէր եւ ոչ երբէք յագի ի պոռնկութենէ պղծութեան, որով ամենայն ծնունդք Ադամայ ըմբռնեցան այսու ախտիւք եւ իջին ի ծառայութիւն փարաւոնի պոռնկութեան դիւին, վասն որոյ բոլոր մարգարէական յընթերցուածս ընդ Եգիպտոսի խաւսին եւ սպառ//նան զկորուստ նմա: Սոյնպէս եւ Բաբելոնի սպառնան ի լուծանել¹ յաթոռոյ հպարտութեան եւ մտանել ի խաւար դժոխոց մահու: Եւ այս երկուց գլխաւորացս գերիլ ժողովրդեանն, եւ ի սոսա ցուցանել զբազում զաւրութիւն սքանչելեաց Իւրոց, յայտ առնէ մեզ, եթէ բոլոր ծնունդք Ադամայ յայսց երկուց ախտից գերեալ ըմբռնեցան ի պոռնկութիւն եւ յագահութիւն ամբարտաւանութեան. վասն այնորիկ փարաւովն զարիական խորհուրդսն ընկղմէր ի յորձանս պոռնկութեան եւ զէգան զհեշտալի ցանկութեանն գործաւնեա[յ]ս ապրեցուցանէր: Սոյնպէս եւ բաբելացին զամբարձեալ երկրպագուան Բեղայ ապրեցուցանէր եւ զերկրպագուան Աստուծոյ հրով դատիւր: Ըստ որում եւ ինքն ամբարձեալ կարծեաց աստուածանալ եւ զմարդկութիւնն եւս կորոյս: Եւ զի յայս երկու տեղիս էր թագաւորեալ չարն, վասն այնորիկ նախատէր² զբաբելացին յերկրպագութիւն, որք երկրպագուք էին Բեղայ, զի ծանուցէ նոցա զճշմարիտ երկրպագելին Աստուած: Եւ դարձուցէ զերկրպագութիւն ղիւացն յերկրպագութիւն Աստուծոյ, եւ ինքն չոգաւ յԵգիպտոս հանդերձ Կուսիւն Մարիամայ, զի ուսուցէ նոցա կուսութեամբ պատերազմիլ ընդդէմ պոռնկութեան եւ կատարեսցէ զկանխասաց մարգարէութիւնն Եսայեայ, թէ՛ «Տէր նստեալ ի թեթեւ ամպ» (Եսայի ԺԹ 1) անջրդի ի գիրկս Կուսին, որ է մաքուր յամենայն խոնաւ ցանկութեանց, իջցէ յԵգիպտոս: Եւ շարժեսցին հնարագիտութիւնք մարդկան ի ձեռակերտս իւրեանց, եւ կատարեսցեն³ զմարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. «Մինչ չեւ ծանուցեալ իցէ Մանկանն կոչել զանուն Հաւր, առցէ Նա զզաւրութիւն Դամասկոսի», (Եսայի Ը 4) այսինքն՝ զերկրպագութիւն բաբելացւոցն, «եւ զա-

¹ Չեռագրում՝ լուցանել:

² Չեռագրում՝ նախածէր:

³ Չեռագրում՝ կատարեսցեն:

լար Սամարիայ» (Եսայի Ը 4), այսինքն՝ զհաւատ ի եգիպտաց-
 ւոցն: Եւ դարձեալ՝ զի յԵգիպտոս կոչեաց, զանուն Իսրայէլի Որդի
 (24ա) // անդրանիկ: Եւ այսու անուամբ բարգաւաճեալ զնոսա ի վերն
 զամենայն որդիս Ադամայ: Իսկ նոքա երկրպագութեամբ Բաաղու
 ջնջեցին զգիր որդեգրութեանն, որպէս ասաց Ովսէէ, եթէ՝ «Տղայ
 էր ի Երուսաղէմ, եւ Ես սիրեցի զՆա եւ յԵգիպտոսէ կոչեցի զՈր-
 դի» (Ովս. ԺԱ 1), նոքա Բաղիմայ ծառայեցին եւ ջնջեցին զանուն
 որդեգրութեան իւրեանց, եւ զի չէր մարթ Գրոյն եղծանել եւ ան-
 կատար մնալ: Վասն որոյ էջ Նա յԵգիպտոս, զի կատարե[ս]ցի
 բանն, թէ՛

ՅԵգիպտոսէ կոչեցից զՈրդի Իմ (Բ 15):

Եւ այսպէս կատարեաց զամենայն մարգարէութիւն մարգա-
 րէիցն, զի կործանեցէ զամենայն հնարս չարին: Իբրեւ գիտաց
 Հերովդէս, թէ խաբեցաւ ի մոգուցն, զորս կամեցաւ խաբել ի
 պատճառս երկրպագութեան իւրոյ, բարկացաւ յոյժ: Փոխանակ,
 զի պարտ էր քննել զնա վասն սքանչելեացն, զոր լուաւ ի մո-
 գուցն եւ ծանեաւ ի մարգարէութենէն Միքիայ, զի յայտնի էր
 ազգ նորա յԵսայեայ եւի Յակովբայ, թէ՛ «Բղխեսցի գաւազան
 Յուդայ, մինչեւ եկեսցէ Այն, որ յոյսն է հեթանոսաց» (Հմմտ. Ե-
 սայի ԺԱ 1): Եւ ժամանակ Նորա՝ ի Դանիէլի յեւթներորդացն եւ
 Յակովբայ սահմանելոյն, եւ տեղի Նորա՝ ի Միքիայ եւ ի Դաւթէ,
 եւ մայր Նորա՝ յԵսայեայ, թէ՛ «Ահա Կոյս յղացցի» (Եսայի է 14):
 Եւ զի կուրացեալ էր նա նախանձու չարութեամբն եւ ծարաւի էր
 արեան Մանկանն, որպէս Սաւուղ՝ արեանն Դաւթի, զի ի գաւակէ
 էր նա Քանանու եւ նման փարաւովնի ի չարէն չարժեալ, որ
 ընկղմեաց զտղայսն ի գետն, զի կորիցէ եւ Մովսէս կործանիչն Ե-
 գիպտոսի եւ ոչ եհաս, որում ցանկայրն: Եւ Սաւուղ կոտորեաց
 զքահանայսն փոխանակ Դաւթի եւ ոչ կարաց ըմբռնել զԴաւթի:
 Եւ Հերովդէս կոտորեաց զմանկունսն, զի կոտորիցէ եւ նորածին
 Մանուկն ընդ նոսա: Եւ զի անգաւակեց[ոյց] մեղս ի մանկանց
 իւրեանց, ետ զպատիժ պատուհասիցն// ինքն հան[դ]երձ կնաւ եւ
 որդւովք իւրովք, որպէս փարաւովն փոխանակ տղայոցն հան-
 դերձ գլխաւորաւքն¹ ընկղմեցաւ յանդունդս խորոցն: Եւ Սաւուղ
 հանդերձ որդովքն սատակեցաւ, եւ Դաւթի ապրեցաւ: Եղեն

¹ Ձեռագրում գլխաւորաւքն:

մանկտին վկայք արդարոցն կոտորելոց եւ ամբաստանողք սպանողացն. զի թէ զնա, զի ասաց՝ Որդի եմ Աստուծոյ, աւտարացուցին, զանմեղ մանկտին ընդէ՞ր կոտորեցին, մինչ չեւ էին լեալ վկայք Նորա: Այլ Նա անդէն ի ծննդեան Իւրում յայգւոյ անտի, որ զլացաւ տալ զպտուղ Նորա, առաքեաց Հաւր Իւրում կողովն ուղկուզաց վաղահասուկ զերախայրիս հնձանոյ, յուրախութիւն առաքեաց¹ Հաւրն երկնաւորի: Եւ զի լցցի, ասէ, բան մարգարէին, թէ՛

«Ձայն գոլթեաց ի Հոամայ» (Բ 17) (Եսայի Ը 4):

Այսու յայտ առնէ զկանուխ գիտութիւնն Աստուծոյ, զի թէ կանխաւ գուշակեաց, որ ինչ լինելոց էր, կարող էր եւ փրկել զնոսա, այլ թոյլ ետ կատարել զչարութիւն կամաց իւրեանց, զի լցցի չափ մեղաց նոցա: Եւ հասցէ վրէժխնդրութիւն արեան անմեղացն:

Հոաքել լայր,- ասէ,- գորդիս իւր (Բ 18) (Ովսէ ԺԱ 1):

Վասն է՞ր արդեւք. զի Հոամայ վիճակ Բենիամենի էր՝ որդւոյն Հոաքէլի, եւ յափշտակեցաւ ի ցեղէն Յուդայ, եւ զրկեցին զՀոաքէլ: Վասն որոյ սուգ առեալ կայր, զի ոչ հանդիպեցան որդիք նորա վասն Քրիստոսի մեռանել, այլ յորդւոյն Լիայի եւ նոր նահատակեցան ի ծննդեանն Քրիստոսի: Եւ զի Լիա աւրինակ էր առաջին ժողովրդեանն բազմորդութեամբն իւրով եւ Հոաքէլ՝ Եկեղեցւոյ, զի գեղեցիկ էր տեսլեամբ, այլ ի պատճառս բազմորդութեանն սիրէր Յակովբ, որպէս ժողովուրդն թէպէտ եւ զազիր էր գործովք եւ խաւարային՝ մտաւք, այլ ի պատճառս արդարոցն եւ մարգարէիցն եւ առաքելոցն, որ ծնան ի նոցանէ, խնամէր զնոսա Աստուած: Ո՛վ Հոաքէլ, մի՛ լար դու իբրեւ զլալիւնն [...]², որ եկին հասին թշնամիքն եւ կոտորեցին զորդիս [քո եւ գերեցին]³,

(25ա) //այլ լա՛ց դու զայնոսիկ, որ կոտորեալ ընկեցեալ կան ի հրապարակս յաւտարաց, այլ յորդոց հաւրն իւրեանց Յակովբայ, այլ արգելցու զձայն լալոյ քո, զի գրեցան վարձք արտասուլաց քոց այնոքիկ, որ ընդ Որդւոյն Դաւթի ծնան ի ծննդեան Նորա, զի քարոզք Նորա եղեն եւ առին վիճակ զՎերինն Երուսաղէմ. այն, որ Մովսէսի երեւեցաւ ի լերինն, եւ մխիթարեա՛ զարձեալ յորդին քո

¹ Ձեռագրում՝ առաքեայ:

² 1 բառ:

³ 1 բառ:

ի Սաւուղ, որ նա ինքն է Պաւղոս, որ նա լինի քեզ փոխանակ ցաւոց եւ արտասուաց մխիթարութիւն: Արդ, հալածեցաւ Դաւիթ ի Սաւուղայ եւ գնաց ի մէջ հեթանոսաց, եւ Որդին Դաւթի՝ ի Հերովդիայ եւ՝ ի մէջ Եգիպտոսի: Կոտորեաց Սաւուղ ցքահանայսն, եւ մնաց Աբիաթար քահանայ. եւ Հերովդէս՝ զմանկտին, եւ մնաց Յովհաննէս: Աբիաթարաւ հատաւ քահանայութիւն տանն Հեղեայ, եւ Յովհաննաւ բարձաւ մարգարէութիւն տանն Յակովբայ: Եւ զի շնորհաւք կոչեցաւ նա որդի անդրանիկ յԵգիպտոս եւ կորոյս զորդեգրութիւն իւր: Բարձին ի նոցանէ զորդեգրութեանն անուն Եսայի եւ Յովհաննէս. մինն կոչեաց զնոսա «իշխան սողովմացւոց եւ ժողովուրդ գումարացւոց» (Եսայի Ա 12), եւ միւսն՝ «ծնունդք իժից» (Մատթ. Գ 7, ԺԲ 34), նմանող գործոց իւրեանց ընկալան անուանս: Եւ յիջանելն Տեառն մերոյ յԵգիպտոս եւ յելանել՝ ճշմարտեաց զբանն մարգարէին, թէ՛

ՅԵգիպտոսէ կոչեցից զՈրդի Իմ (Բ 15): Եւ զի ասէ. Նազովրեցի կոչեցի (հմմտ. Եսայի ԺԱ 1):

Հերբայեցի զաւագանի¹ ասէ, եւ մարգարէն Նազովրայ ծնունդ ասէ, զ[ի^o] զաւագան (^o) ծնունդ է, այլ աւետարանիչն՝ զի «սնաւ ի Նազարէթ»: Ետես, եթէ սա եւս նմանեալ է այնորիկ, եւ նա՝ այսմիկ, ասէ. «Նազովրեցի կոչեցի»:

¹ Բնագրում զանագանի:

Գ

(25բ) Յաւորն յայնոսիկ գալ,- ասէ,- Յովհաննէս Մկրտիչ (Գ 1), այսինքն՝ յետ Լ (30)ամի,զի եկաց մնաց, մինչ կատարեցաւ հասակաւ, զի լուծանելոց էր զաւրէնսն: Նախ կատարեաց զամենայն հրամ[անս] [...] ¹ աւրինացն եւ զգրեալսն ի մարգարէսն, զի մի՛

ասից// [են, եւ] ոչ կարաց կատարել, յայն սակս ելոյծ: Եղեւ կատարեալ [հ]ասակաւ, որով զամենայն կիրս մարմնոյ մարթ էր ընդունել, զի առաջին հասակին յոյժ անմտագոյն եւ կարճամտագոյն եմք, եւ ապա ցանկութիւն գրգռէ. եւ յետոյ յընչասիրութիւն եւ ի սնափառութիւն գամք: Վասն այնորիկ անց ընդ ամենայն հասակս եւ յաղթեալ սպան զմեղս ի մարմնի անդ: Եւ յորժամ կատարեաց զաւրէնսն, ապա եկն ի մկրտութիւն, զի այնու աւարտեսցէ զամենայն գրեալսն, այսինքն՝ թէ զամենայն աւրէնս ի գլուխ հանաք. այս միայն պակասէ, զայս եւս կատարեսցուք, զի լցցուք զբնաւ հրամանս աւրինացն, եւ զի Ադամ երեսնամեայ ստեղծեալ ընկալաւ զբնաւին պարգեւս շնորհաց ի Տեառնէ: Եւ դարձեալ անխոհեմ իմաստիւքն կորոյս զլոյսն եւ զանապականութիւնն: Սակս այսորիկ եւ Տէր մեր երեսնամեայ եկն ի մկրտութիւն, զի իջմամբ Հոգւոյն զբողոքսն առցէ զշնորհս մարմնով մեր, զոր Ադամն կորոյս: Իսկ որդին Զաքարիայ ոչ եթէ յանձնէ եկն, այլ յԱստուծոյ յորդորեալ եկն ի մկրտութիւն, որպէս ասէ Ղուկաս, թէ՛ «Բանն Տեառն եղեւ ի վերայ նորա» (Ղուկ. Գ 2): Եւ ինքն ասէ, թէ՛ «Որ առաքեաց զիս մկրտել ջուրբ, Նա ասաց զիս՝ յՈր վերայ տեսանիցես զՀոգին իջեալ, Նա է, որ մկր[տ]է ի Հոգին Սուրբ» (Յովհ. Ա. 33): Եւ զպատճառսն եւս յայտ առնէ, թէ՛ «Ես ոչ գիտէի զՆա», այլ զի յայտնի լիցի Իսրայելի: Վասն այսր եկի մկրտել ջուրբ, զի թէպէտ եւ ասէ, թէ ի թողութիւն մեղաց, այլ ոչ լինէր թողութիւն մեղաց մինչեւ ի Խաչն անդ: Եւ եղեւ հին մարդն մեր խաչակից թաղեալ մկրտութեամբ ի մահ Նորա, զի ամենայն ուրեք արեամբ Նորա լինի թողութիւն մեղաց: Որպէս ասէ առաքեալ. «Այլ լուացարո՛ւք եւ սրբեցարո՛ւք ի Հոգին Սուրբ յանուն Տեառն մերոյ» (Ա. Կորնթ. 2 11): Այլ Յովհաննէս [մկրտէր

¹ 1 բառ:

- (26ա) //]ո¹ յապաշխարութիւն, զի հաւատայցեն յԱյն, որ գալոցն էր, զի չեւ էր զենուամն պատարագեալ ի Խաչին, եւ ոչ Հոգին իջեալ, եւ ոչ թշնամութիւն բարձեալ, եւ անէծք եղծեալ, զիա՞րդ մարթ էր յառաջ թողութիւն մեղաց լինել: Այլ զի ապաշնորհք էին հրեայքն եւ յայնչափ մեղս կային եւ ոչ զգային չարեացն, այլ զանձինն առ լաւս ունէին եւ ի հաւատոցն արդարանալ ոչ կամէին: Վասն որոյ եկեալ Յովհաննէս, զի զչարիս նոցա յուշ արասցէ նոցա, զի ոչ, որպէս կարծեն, արդարք են, այլ կարաւտ ապաշխարութեան: Եւ գայս քարոզութիւնն յայտ առնէ, թէ՛ «Ապաշխարեցէ՛ք ըստ արժանի պտղոյ», զի յորժամ ի միտ անկանիցի նոցա մեղք իւրեանց, եւ թողութեան փափագիցեն, գայս եկն կազմել Յովհաննէս եւ յորդորել յապաշխարութիւն եւ խոնարհել եւ ըստգտանելով զանձինս, ընթացին առնուլ զթողութիւն: Վասն որոյ ասէ, թէ՛ «Եկն Յովհաննէս քարոզել մկրտութիւն յապաշխարութիւն» (Մարկ. Ա 4), եւ ածէ գնովիմբ, թէ՛ «եւ թողութիւն», զի վասն այնորիկ յաւժարեցոյց զնոսա խոստովան լինել զմեղս իւրեանց եւ ապաշխարել, զի յետ այնր դիւրաւ ընդունիցին զթողութիւն ի հաւատոցն, զի թէ՛ ոչ էին զանձինս ջուր գտեալ, ո՛չ զչնորհս խնդրէին եւ ո՛չ թողութեան հասանէին: Եւ այսպէս առաջի մկրտութեան հորդէր ճանապարհ, զի ասէ իսկ, ե-թէ հաւատայցեն յԱյն, որ գալոցն է յետ նորա, եւ այլ եւս պատճառ մկրտութեանն, զի չէր մարթ տանէր տուն, տանել զՔրիստոս եւ ասել, թէ՛ ի Սա հաւատացէք. այլ յորժամ ի մի վայր ժողովեալ էին եւ աչաւք տեսանէին զՀոգին եւ ականջաւք լսէին զի վերուստ գերանելի բարբառն, յայն//ժամ գայր ի մկրտութիւն, զի Մկրտչին լաւութիւն եւ իրացն պատճառք ածէին յամենայն քաղաքաց ի Յորդանան, եւ նորանչան տեսիլք եւս երեւէին: Եւ յայտ ցուցանէր նոցա, եթէ բազում չարեաց են պարտապանք, թէ՛ ոչ ապաշխարեացեն եւ մի՛ ի նախնիսն պարծեսցին, այլ յեկեալ հասեալ պարգեւսն վայելեսցեն, եւ զի ծածկեալ էր համբաւն Քրիստոսի, որ ի ծննդեանն եղեւ: Եւ կարծէին մեռեալ ընդ մանկտին Բեղզահեմի, զի թէպէտ եւ յերկոտասան ամի եցոյց զինքն ի տաճարին, այլ թաքոյց միւս անգամ: Վասն այսորիկ բարձրագոյն եւ պայծառագոյն քան զառաջինն երեւէր, զոր ոչ երբէք էր տեսեալ հրէիցն: Եւ զի մեծամեծս քարոզէր եւ զերկ[ն]ից արքա-
- (26բ)

¹ 1 բառ:

յուլթենէն առնէր յուշ եւ արքայութիւն աստ զառաջին եւ զվերջին գալստենէն ասէր: Եւ այս ախորժելի յուսով յաւժարեցուցանէր գալ ի մկրտութիւնն: Եւ մաքսաւորք եւ զինաւորք հարցանէին, թէ զինչ արժան է առնել եւ զանձանց ցկեանս գտանել. զի գաշխարհս թողեալ յայլ իմն կեանս [յ]ուշ եղեալ հայէին, ի հանդերձեալսն սբաղնուին, եւ բանքն եւ արդիւնքն մեծամեծ միտս տային ստանալ նոցա. զի գայր մի յետ երեսուն ամի իջեալ յանապատէ տեսանէին, որ յամենայն պատուոյ մարդկեղէն հրաժարեալ էր: Եւ զԵսայի եւս վկայ ունէր եւ այսպէս քարոզէր, թէ Սա է, որ գալոցն էր, զոր յառաջագոյն քարոզեաց, թէ՛ «Ձայն բարբառոյ յանապատի», որ լուսաւորէր զամենայն անապատն. զի այնպէս փոյթ ունէին մարգարէքն: Զի ոչ միայն զՏէրն իւրեանց, այլ եւ որ սպաս Նմա ունելոց էին, քարոզէին, նա եւ զտեղեացն, որ շրջելոցն էր, քարոզէին եւ զքարոզութեանն աւրինակ եւս յայտնէին եւ զողորմութեանցն եւս, որ ի Նմանէ լինելոց էր, գուշակէին, եւ զժամանակն յայտ առնիցեն, որ ինչ ի Նմանէ ուղղութիւնքն լինելոց էր, յայտնիցէ: [Եւ տես] զհարդ // մարգարէն եւ Մկրտիչն ընդ նոյն միտս գնան, զի մարգարէն ասէ. «Պատրա՛ստ արարէք զճանապարհս Տեառն եւ ուղի՛ղ արարէք զչաւիղս Աստուծոյ մերոյ» (Եսայի Խ 3): Եւ Մկրտիչն ասէ. «Արարէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան» (Մատթ. Գ 8)՝ հանգոյն այնմ, թէ՛ «Ուղի՛ղ արարէք զճանապարհս Տեառն», եւ զի կարապետել եկն եւ ճանապարհորդել եւ ոչ պարգեւս շնորհել թողութեան, այլ պատրաստել զողբիս առ ի յընդունել զամենեցունցն Աստուած: Իսկ Ղուկաս զբոլոր մարգարէութիւնն ասէ, թէ՛ «Ամենայն ձորք լցցին եւ բլուրք, որք խոնարհեցին» (Ղուկ. Գ 5), այլովքն հանդերձ: Տե՛ս զհարդ զժողովելոցն ի մի վայր եւ ի լաւութիւն փոխելոցն գուշակեաց եւ զգիւրութիւն շնորհացն, թէպէտ եւ աւրինակաւ իմն դնէ, զի մարգարէութիւն էր. խորս լցեալս զխոնարհս բարձրացեալս կոչէ եւ բլուրս զբարձացեալս խոնարհեալս եցոյց եւ զաւրինացն դժուարինս ի հաւատոցն դիւրութիւնս փոխեալս. զի ոչ ջանուց եւ քրտանց պէտք են, այլ հաւատոց միայն ի թողութիւն մեղաց: Ապա յետոյ զպատճառս իրացն ասէ, թէ՛ «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ» (Ղուկ. Գ 6). ոչ միայն հրեայքն, այլ եւ ամենայն աշխարհ: Իսկ դժուարինս զչար կեանս մարդկան ասէ՛ զպոռնիկս, զմաքսաւորս, զկախարդս, որ յառաջ վրիպեալքն էին եւ յետոյ եկին յուղիղ ճա-

նապարհն՝ ըստ այնմ, եթէ՝ «Մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեցեն քան զձեզ արքայութիւնն Աստուծոյ» (Մատթ. ԻԱ 31), եւ գայլք եւ գառինք որպէս լծորինք (°)* եւ ձորք եւ հարթ ճանապարհ եկին, նոյնպէս եւ գայլք եւ գառինք զմի կրաւնս ընկալան, եւ զպատճառս իրացն ցուցանէ, եթէ՝ «Որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ի նա յուսասցին հեթանոսք» (Եսայի ԺԱ 10), հանգոյն այնմ, թէ՝ «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ» (Ղուկ. Գ 6), զի ցուցցէ, թէ յամենայն ծագս երկրի [...]¹

(27բ) առցու աւետեացն գաւրութիւն եւ գիտութիւն, զի ի //վայրենի գազանութենէն եւ յանասնութենէն ի սգաւնութիւն եւ ի հանգարտութիւն փոխելոց են:

Եւ Յովհաննէս,- ասէ,- ունէր [հ]անդերձ ի ստեւոյ ուղտու եւ գաւտ[ի] մաշկեղէն (Գ 4).

Զի մարգարէքն էր ինչ, զոր ասացին, եւ էր ինչ, զոր աւետարանչացն թողին. զսգեստին աւրինակն, զոր Մատթէոս գրեաց առ ի յիշատակ ածել զհրեայսն մեծին Եղիայի եւ եւս մեծագոյն քան զնա, զի նա ի քաղաքս բնակէր եւ կերակուր ճաշակէր, եւ սա ի խանձարրոցն յանապատի բնակէր՝ ոչ ինչ ճաշակելով. զի պարտ էր կարապետին, որ զհինն ամենայն լուծանելոց էր, զաշխատութիւնն, զանէծս, զքրտունսրն աւրինակ ինչ այսպիսի յանձին ցուցանել, զի ո՛չ երկիր գործէր եւ ո՛չ քրտամբ երեսաց ուտէր, այլ դուզնաքեայ սեղանով եւ հանդերձիւ վարէր. զի ո՛չ տան եւ ո՛չ սեղանոյ կարաւտէր, այլ հրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր, որպէս Ադամ, մինչ չեւ էր յանցեալ. զի ապաշխարութեան եւ արքայութեան էին աւրինակ այնպիսի կեանք, եւ հրեշտակաց նմանութիւն ի մարմնի ցուցանէր: Եւ այն յայնժամ, մինչդեռ ո՛չ մեղք լուծեալ էին, եւ ո՛չ անէծք՝ բարձեալ, եւ ո՛չ Հոգին՝ իջեալ, զոր եւ Քրիստոս հրաշանալով ասէր. «Զի՞նչ ելէք տեսանել յանապատի» (Մատթ. ԺԱ 7): Նա զի եւ ունէր մեծն ի ծնունդս կանանց զբնաւ խոնարհութիւն եւս եւ սգեստուն տեսակաւ՝ յաւրինակ խոնարհութեան մեծին Կուսորդւոյն եւ վասն մեր թափելոյ հովիւն առ ոչխարս համարեալ: Սակս որոյ մնայր Կարապետն կտրելոյ ոչխարին, որով սգատես սգեստին սպասէր սգե-

* Թերևս ունի լծակից հմաստը.

¹ 1 բառ:

ցուցանողին գաշխարհս գերծուլ ի նմանէ զքուրձն աւրինակաւն, որ զաւետիսն անդր ի դժոխս ընկալաւ զլոյս ի յարուցելոյն զգեցեալ եւ իբրեւ զաւթոց արկէր: Մարգարէութիւն՝ առ Յովհաննէս, եւ խորհուրդք մարգարէութեանն՝ առ Տէրն Յովհաննու: Որպէս

(28ա) քահա[նայութիւնն՝ առ] // որդին Զաքարիայ, եւ արքայութիւն եւ քահանայութիւն՝ առ Որդին Մարիամու, աւրէնք՝ ի ձեռն Մովսէսի, նշան Գառինն հանդերձ բազում խորհրդովք: Ամաղէկ եւ ջուրքն, որ քաղցրացան, եւ աւձն պղնձի եւ ճշմարտութիւն՝ ի ձեռն Տեառն մերոյ: Մկրտութիւնն Յովհաննու բարձրագոյն էր քան զաւրէնսն եւ խոնարհագոյն էր քան զՔրիստոսին: Զի ոչ եթէ անուամբք մկրտէր ոք մինչեւ ի ժամանակ վերանալոյ նորա: Եւ Յովհաննէս յանապատ ո՛չ զի եղիցի նա անդ ամեհի, այլ զի ցածուցէ յանապատին անդ զամեհութիւն շինին, զի ցանկութիւն այն, որ ի մէջ շինին խաղաղութեան իբրեւ զգազան ամեհաբար խռովեալ լինի, յորժամ ելանէ յանապատ, ցածնու եւ հանդարտէ, հաւանեցուցէ զքեզ ցանկութիւնն Հերովդի, զի ամեհաբար ի մէջ շինի խաղաղութեան ի վերայ կնոջ եղբաւր իւրոյ առանց աւրինաց մոլեգնեալ լինէր, զի ապականեսցէ նա զհեզութիւն զգաստութեանն Յովհաննու՝ այն, որ խաղաղութեամբ ի մէջ անապատի եւ ոչ ըստ աւրինաց անգամ ամուսնացաւ նա: Այլ զի մի՛ դատեալ լիցի Յովհաննէս ի նոցանէ, թէ Եղիա կառաւք սրբովք վերացաւ, եւ զնորա գլուխն աղջիկն պղծալից սկտեղբ եբարձ: Վասն այսորիկ մուտ Եղիշա կաց ի միջի ի մէջ Յովհաննու եւ Եղիայի: Յորժամ կամիցին, թէ սուտ արասցեն զՅովհաննէս, կշտամբեալ յանդիմանեսցէ զնոսա Եղիշա, որ ստոյգն է նոցա, զի հաւատան նոքա, թէ կրկին ընկալաւ նա զհոգի վարդապետին իւրոյ: Թէ այդպէս իցէ, երկիցս անգամ երկու կառաւք պարտ էր Եղիշայի վերանալ ընդ երկինս, թերեւս՝ ընդ երկնից երկինս: Այլ յայտ է, թէ զաւրութիւնս Եղիայի տուաւ նմա գործովք իւրովք ոչ եթէ ամենեքեան, այլ ինքեանք տիպքն գործոցն, ապա

(28բ) թէ ոչ լինէր մեկն// [ութ՞]իւն աւագտութեանն եւ եթէ ոչ էր արարեալ, կրկին ոչ լինէր երեւեալ առաւելութիւնն, զոր ընկալաւ: Արդ, այնոքիկ, որ առ Տէր մեր առաքեցան հարցանել զնա, թէ՛ «Որո՞վ զաւրութեամբ առնէս դու զայդ» (Մատթ. ԻԱ 23), նոյնք առաքեցին առ Յովհաննէս: Եւ քանզի ոչ եկն նա ուսուցանել, զապստամբողս ոչ յայտնեաց. զի ոչ եթէ իբրեւ մարդք, որ կամին

ուսուցանել զճշմարտութիւնն, թէ ով է Յովհաննէս, այլ պատու-
 հասելով պատուհասէին զնա. դու ո՞վ ե[ս], ասեն, որ զայս առ-
 նես, եւ նա ոչ ետ նոցա պատասխանի՝ [ոչ] իբր ուսուցանելեաց,
 այլ իբրեւ ապստամբողաց: Եւ զամենայն ինչ, զոր ինչ մի անգամ
 հարցին ցնա, ասէ ցնոսա՝ «Չեմ ես Քրիստոսն եւ ոչ Եղիա եւ ոչ
 մարգարէն, այլ՝ Չայն» (Յովհ. Ա 25), որ[պես]զի ոչ Յովհաննէս
 եւ մարդ, եւ իբրեւ մարգարէ էր նա եւ Եղիա եւ Քրիստոս, այլ
 ա[յ]նոքիկ, որք հարցինն ցնա, ոչ էր նա եւ ոչ մի յայսցանէ: Որ-
 պէս եւ Տէր մեր ասաց ոմանց, թէ՛ չեմ դատա[ւ]որ, իբրու դատա-
 ւոր էր Նա: Եւ ոմանց ասէ՛ չեմ բարերար, իբրու բարերար էր, զոր
 աւրինակ բախէ ձայն քարոզ լուսոյ ի դուռն լսելեաց այսպէս ծա-
 գել ճրագի ի դուռն բբաց, որպէս եւ գիրք ընկեր ձայնի. զի մի են
 ճրագ եւ հաւ, որպէս Եղիա եւ Յովհաննէս. հաւ ձայնիւ իւրով
 լսելի առնել մեզ խորհուրդ ձայնի Յարուցչին մերոյ, եւ ճրագ ի
 ծագել իւրում ցուցանէ մեզ զխորհուրդ լուսոյ Լուսատուին մե-
 րոյ: Վասն այսորիկ ի մէջ երկոցունց կոփեցին զխաւար
 խորհուրդ Հաւր եւ Որդւոյ, զի կոճոպեցին զչարութիւն եւ
 խորհուրդ մարգարէից եւ առաքելոց, զի յերկոցունց կողմանց
 արեգականն զաւրացեալ լինին: Այլ տե՛ս դու, զի եւ ճրագ յայտ
 առնէ այրիչ բերանոյն իւրոյ, եթէ խորհուրդ է նա Եղիայի,
 որ այրեաց զչարագործս լեզուաւ իւրով եւ պապեցոյց զնոսա ի
 ջրոյ, ի կիզումն բան իւրոյ նայ// եւ հաւ խաւսի ի լուութեան գի-
 շերոյ. խորհուրդ է Յովհաննու, որ քարոզէր ի լուութեան անապա-
 տին, այլ ընդ գալ ճրագին ընդ երեկոյս ոչ գտանի ընդ նմա հաւ,
 որ խաւսի ընդ առաւաւտս, այլ ընդ ձայն լուսանալոյն գտեալ լի-
 նի ճրագն երեկորին, զի վկայեցէ վասն գալստեանն Եղիայի, զի
 եղեւ խորհրդիւ ընդ Յովհաննէս: Արդ, ձայն Յովհաննէս է, այլ
 բան, որ գնայ ի մէջ ձայնի, Տէր մեր է: Արդ, ձայնն զարթոյց զնո-
 սա, ձայն աղաղակեաց եւ զարթոյց զնոսա, եւ բանն զպարզեւս
 իւր բաշխեաց նոցա ըստ մեղաց, սոյնպէս եւ՝ խրատ. փոքր մի ամ-
 պարշտեցան, սակաւիկ խրատեաց զնոսա: «Եւ կոտորեսցէ,- ասէ,-
 գոստն անտառին փայտատաւ» (Հմմտ. Եսայի Իէ 10). ասաց Եսա-
 յի «գոստս» եւ ոչ զարմատս: Արդ, զի լցաւ չափ մեղաց նոցա,
 եկն Յովհաննէս եւ խլեաց, հան զարմատս ծառոյն:

(29ա)

Ահաւասիկ հասեալ է,- *ասէ,-* տապար առ արմին ծառոյ (Գ 10)՝
զայն, զոր Եսային եթող:

Եւ երբ եղեւ այս, այլ ի ծագելիս¹ ճշմարտին՝ այն, որ անուանեցաւ ի գաւազան եւ ի ծաղիկ, եւ հանգեաւ ի վերայ Նորա Հոգին. այն, որ եւթն մասամբ կոչեցաւ: Եւ զի ասէ՝ «Ի քարանց աստի յայցսանէ կարող է Աստուած յարուցանել որդիս Աբրահամու» (Մատթ. Գ 9), այսինքն՝ երկրպագուաց քարանց եւ փայտից: Իբրեւ զայն, զի ասէ. «Հայր ազգաց բազմաց ետու զքեզ» (Ծննդ. Ժէ 5): Պահեաց Յովհաննէս զանձն իւր յամենայն մեղաց, զի այն մկրտելոց էր, որ առանց մեղաց է: Մի՛ զարմանար, Յովհաննէ՛ս, զի մկրտես դու զիս, ուր մկրտութիւն իւրոյ ի կնոջէ կայ Ինձ ընդունել, «զի յաւրն,- ասէ,- պատանաց իմոց պահեսցէ զայդ» (Յովհ. ԺԲ 7), եւ մահ նորա մկրտութիւն կոչեցաւ: Խաւսեցաւ Եղիազար զՌեբեկայ ի վերայ աղբեր ջրհորոյն: Յակովբ՝ զՀռաքեղ ի վերայ աղբեր ջրհորոյն, Մովսէս՝ զՍիփովրայ ի վերայ աղբեր ջրհորոյն: Արդ, ամենեքեանս [այս] աւրինակ եղեն Տեառն մերոյ, զի խաւսեցաւ (29բ) զԵկ/եղեցի Իւր մկրտութենէ անտ ի Յորդանանու, զոր աւրինակ ցոյց յականէ Եղիազար Ռեբեկա զԻսահակ տէր իւր, մինչդեռ գայր ի դաշտի անդ ընդառաջ նորա, սոյնպէս եւ Յովհաննէս ցոյց յականէ Յորդանան գետոյ զՓրկիչն մեր: «Ահաւասիկ,- ասէ,- Գառն Աստուծոյ, Սա է, որ գայ բառնալ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Եւ տեսեալ զբազումս ի սաղուկեցւոցն եւ ի փարիսեցւոցն եկեալս մկրտութիւն, ասէ.

Ծնո՛ւնդք իծից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է (Գ 7):

Եւ ընդէ՞ր յանդիմանէր. զի ոչ եթէ ճշմարտութեամբ զային ի հաւատս, այլ ի կեղծիւք առ աչս ժողովրդեանն: Եւ նա հոգւով տեսանէր զկեղծիս նոցա՝ յայտնութեամբն Աստուծոյ: Եւ զայս Քրիստոս յայտ առնէ, եթէ Յովհաննու ոչ հաւատացին, նա եւ հարք նոցա կարծիս տային մարգարէիցն ունկնդիր լինել, այլ ոչ ճշմարտութեամբ: Որպէս ի Բաբելոն վն առ Եզեկիեղ ժողովեալ ծերոցն կեղծաւորութեամբ հարց ունել ի նմանէն: Վասն որոյ ասէր Աստուած ցմարգարէն, թէ՛ «Կենդանի եմ ես Տէր» (Եսայի ԽԹ 18). թէ՛ տայց քեզ բան խաւսել դոցա: Նա եւ աւրինագրին ասէին

¹ Չեռագրում ճագել:

ունկնդիր լինել, այլ ոչ ումեք եղեն ունկնդիր. զի զորմէ նոքայն մարգարէանային, զայն ոչ ընկալան, զի թէ հաւատացեալ էր, աւէ, ձեր Մովսէսի, ապա եւ Ինձ հաւատայիք: Եւ իբրեւ հարցան ի Քրիստոսէ, թէ՛ «Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր», ասեն՝ «Ոչ գիտեմք» (Մատթ. ԻԱ 25): Եւ այսու յայտ է, թէ եկին եւ մկրտեցան եւ ոչ հաւատացին հաստատապէս ի քարոզութիւն նորա: Եւ Յովհաննէս յայտ առնէ, որովք առաքեցինն առ նա, թէ՛ «Դու ո՞վ ես. Եղիա՞ ես, թէ՞ մարգարէն» (Յովհ. Ա 21): Եւ որք առաքեցինն, ի փարիսեցւոցն էին եւ կամէին բանս հանել ի նմանէ նենգութեամբ, զի Քրիստոս յայտ էր, թէ Բեդղաճէմէ գալոց է, յագգէն Դաւթի, իսկ նա ղեւտացւոցն է: Եւ նոքա հարցանելովն, որով առ[ի]թ իմն կազմէին վասն միոյ// ոչ ինչ յորոց կարծէինն, եւ եղեւ խոստովան, եւ նոքա ասէին. «Դու ընդէ՞ր մկրտես, զի չես Քրիստոսն» (Յովհ. Ա 25): Իսկ ժողովրդեանն այլ իմն էին միտք. զի նոքա խոստովան լինէին նախ զմեզս իւրեանց եւ ապա մկրտէին: Իսկ փարիսեցւոցն ոչ այսպէս, վասն որոյ ասէր համարձակութեամբ ծնո՛ւնդք իժից այնոցիկ, որ ծարաւի էին արեան մարգարէիցն եւ չէին ինչ ընդհատ յաւճից: Վասն որոյ զնոսա եւ զծնողս նոցա բազում համարձակութեամբ կշտամբէր, զի ոչ յերեւելիս նոցա հայէր, զի պնդեալ եկեալ էին առ Նա, այլ զգաղտնիս նոցա տեսանէր Հոգով, զի մեծամտեալ ի հարսն պարծէին, եւ այն էր նոցա կորստեան պատճառք: Վասն այնորիկ զարմատս հպարտութեանն կոտորէ: Որպէս Եսայի, «իշխանք սողովմայեցւոց» (Եսայի Ա 10) կոչէր զնոսա, եւ այլ ոմն՝ «իբրեւ զորդիս այլազգեաց էք դուք» (Հմմտ. Նեեմ. Թ՝ 2): Եւ այսպէս ամենեքեան մերժեն զնոսա այսպիսի կարծեաց եւ զհպարտութիւնն, որ բազում չարեաց էր նոցա պատճառք, ցածուցանեն: Եւ այս յաւժարութիւն տալոյ էր նոցա եւ ոչ յանդիմանելոյ: Եւ ցուցանէ նոցա, թէ յառաջն յորպիսի չարիս կային եւ յանհնարին մեզս եւ յորպիսի մեծամեծ եւ ի սքանչելի շնորհս փոխեցան: Եւ զի «որդիք իժից» էին եւ բազում չարեաւք սնեալք եւ ապաշխարեցին: Արդ, աստ է եւ այնչափ փոփոխուն նոցա, զի զխիստ եւ զանբժշկելի բարս կակղեաց: Տե՛ս, զիարդ գեհենին անուամբն մորմոքեցուցանէ, զի չասաց, որում իւրք սովորէին, թէ ով եցոյց փախչել ի պատերազմաց կամ ի գերութենէ եւ ի սովոյ այլ այլ իմն տանջանս, զոր ոչ երբէք լուեալ էր նոցա զգեհենէն, յիրաւի եւ «ծնունդս իժից»

(30ա)

(30բ) կոչեաց զնոսա, զի գազան այն սպանանէ զծնողն եւ ուտէ զորովայն ծնունդին եւ ապա ելանէ ի լոյս: Որպէս եւ նոքա զծնողս իւր//եանց սպանանէին եւ զվարդապետս իւրեանց: [Բայց] ոչ զպատուհասն միայն յաճախէր, այլ եւ խրատ եւս, թէ՛ «Արարէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան», զի չէ բաւական փախչելն միայն ի չարեացն, այլ եւ առաքինութիւն բազում եւս ցուցանել. մի՛ ասէ զհակառակսն, որպէս սովորէք սակաւ մի կարծել ի մեղացն եւ անդէն ի նոյն դառնալ ոչ զնոյն խնդրեմ, որպէս առաջի մարգարէիւքն առնէիք: Նոր է այս եւ բարձրագոյն, զի նոյն ինքն Դատաւորն գայ, որ Տէրն է արքայութեանն եւ մեծամեծ սգաստութեամբ յերկինս կոչէ եւ յայն հրահանգս ձգէ: Վասն որոյ զարքայութենէ եւ զգեհնէն ճառէ, զի պատիժքն եւ պարգեւքն անմահականք են: Մի՛ այսուհետեւ ի նմին չարիս կայցէք եւ զնոյն սովորական պատճառսն պատճառիցիք, թէ զԱբրահամ հայր ունիմք եւ յիսահակ եւ Յակովբ պանծացեալ ի նախնեացն ազնուականութիւնն: Եւ այսու ոչ եթէ արգելոյր, զի մի՛ կոչեսցին որդիք սրբոցն, այլ զի մի՛ այսպիսի պանծանաւք ծուղայցեն յոգւոյն առաքինութեանցն, զի թէպէտ եւ զմտացն ծածուկս յայտ բերէր եւ գապառնիսն մարգարէանայր, սակայն ասէրն յետոյ, թէ՛

Մեք հայր զԱբրահամ ունիմք (Գ 9ա):

Եւ այս էր, որ ածէր զնոսա ի հպարտութիւն. նախ զայս կարծէ, թէ զպատիւ նահապետին ի մէջ բերէ եւ ապա զայսպիսի ուղղութիւն պահանջէ եւ չասէ, թէ ոչ կարէ աւգնել ձեզ նահապետն, այլ մեղսագոյնս առակով իմն ասէ, թէ՛

Կարող էր քարանց յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու (Գ 9):

(31ա) Ոմանք ասեն, թէ զհեթանոսաց ասէ, բայց ես այլ իմն ասեմ, թէ մի՛ կարծէք, թէ մեք կորնչիմք, անորդի լինի նահապետն, զի Աստուծոյ՝ զիւրին է եւ ի քարանց առնել մարդիկ եւ տալ նմա որդիս: Քան]// զի եւ յառաջն այսպիսիս արար, զի ի քարանց մարդիկ առնէ, հանգոյն է այնմիկ յամուլ արգանդէ՝ տալ որդի, որպէս մարգարէիւն ասէր. «Հայեցարո՛ւք ի վէմն հաստատուն,

¹ Չեռագրում՝ Տեր:

² Չեռագրում՝ արգարդէ:

յորմէ կոփեցարուք, եւ ի գուբ հրոյն, յորմէ փորեցայք» (Յսայի ԾԱ 1): Յայսպիսի մարգարէութիւն հայեցեալ յիշեցուցանէր, որ յառաջումն այսպիսի զքանչեկեալք արար զնա հայր, զի յամուլ արգանդէն եւ յանցեալ հասակէն ետ նոցա որդի, զնոյն աստ կարող է առնել: Եւ տե՛ս, զի բնաւին հատանէ, ընկենու, զի ոչ ասաց, թէ «յարոյց», զի մի՛ անյոյս առնիցէ, այլ թէ՛ «կարող է», եւ ոչ ասաց, թէ կարող է ի քարանց մարդիկ առնել, այլ զդիւրինն, թէ՛ «յարուցանել»: Եւ կարճեաց զնոսա ի մարմնաւոր պարծանացն, զի մի՛ նախնեալքն, այլ անձանց ապաշխ[ար]ութեամբ հասցեն փրկութեան: Եւ խոտէ զմարմնոյ ազնուականութիւնն եւ յարգէ զհոգւոյս առաքինութիւնս: Եւ տե՛ս, զիարդ յաջորդովքն աճեցուցանէ զերկիւզն. զի յորժամ ասաց, թէ կարող է ի քարանցս որդիս Աբրահամու յարուցանել, անդ է, ասէ, «Ահաւասիկ տապար առ արմի ծառոյ կայ», եւ ահագին զբանն առնէ եւ իւրով բարձրագոյն վարուքն համարձակագոյնս զնոսա մորմոքեցուցանէ, զի ի բազում ժամանակաց հետէ էին խոպանացեալք: Զինչ ասիցեմ, ասէ՛ թէ անկանելոց էք ի նահապետին ազնուականութենէ եւ զայլս ի քարանց տեսանիցէք լեալ որդիս նախծինս. ոչ զայս միայն աղէտս տեսանիցէք, այլ եւ այլոց եւս մեծամեծ տանջանաց լինիցիք պատժապարտք: Ահաւասիկ, «տապար առ արմին ծառոյ կայ». չիք ինչ ահագին քան զայնպիսի բանք, զի ոչ եւս գերանդի թռուցեալ եւ ոչ ցանկոյ քակեալ եւ ոչ կոխան անցաւորաց լեալ, այլ [տապար սր]եալ եւ եւս¹ ահագին, զի եւ ի դուրս եւս եկեալ հաս//եալ են, զի մարգարէիցն բազում անգամ չհաւատային եւ ասէին, թէ՛ «Ուր իցէ աւր Տեառն, եկեսցէ հասցէ խորհուրդ սրբոյն Իսրաիլի, զի գիտասցուք»: Եւ զի բազում ժամանակս կարծէին զկատարումն իրացն, յայտ առնէ, թէ մերձ են չարիքն՝ ասելովն, թէ՛ «Ահաւասիկ առ արմին դնի», եւ ոչ ասաց, թէ՛ առ ոստս կամ առ միրգս, այլ առ արմին, զի թէ ծուղանայցեն, առանց բժշկութեան առնին վէրքն եւ անյոյս եւ առանց ողջանալոյ են ցաւքն, զի ոչ եթէ ծառայ ոք է, որ դատելոց է իբրեւ զառաջինսն, այլ Ինքնին Տէրն ամենեցուն, որ զանհնարին պատիժս ածէ ի վերայ եւ թէպէտ երկեցոյց, այլ ոչ եթող անյոյս լինել որպէս վերագոյնն: Ոչ ասաց, թէ՛ յարոյց որդիս Աբրահամու, այլ թէ՛ «կարող է», զի երկեսցուցէ միանգամայն եւ միխթարեսցէ:

¹ Ձեռագրում քերես:

Նոյնպէս եւ աստ. ոչ ասաց, թէ «մխեցաւ յարմատն», այլ թէ մերձ է եւ «դնի առ արմին» եւ ոչ է յապաղելոց: Եւ թէպէտ եւ այնպէս մերձ է, սակայն զձեզ արար տեարս կտրելոյ եւ ոչ կարելոյ, զի եթէ լինիցիք պիտանացու, ոչինչ մեղանչէ ձեզ տապարն, ապա եթէ ի նմին չարիս կայցէք, արմատաքի տակակոտոր խլէ գծառն: Վասն որոյ ոչ վերացեալ եւ միւսովն, թէ ի սակաւ ժամանակս կարող էք դառնալ եւ լեալ: Վասն այսորիկ յամենայն կողմանց աճեցուցանէ զերկիւղն, զի զարթուցեալ ածցէ յապաշխարութիւնս, զի նախնեացն անկանել եւ այլոցն փոխանակ նոցա մտանել եւ չարիքն ի դուրս հանեալ եւ զանհնարինսն կրեալ: Եւ զայս՝ամենայն տապարովն եւ արմատովն, յայտ է, թէ անհնարին անկելոցն մարթ է յառնել եւ ստանալ առաքինութիւն: Որպէս եւ Պաւղոսի առեալ ի մարգարէէն ասէ, թէ՝ Բան մի հակիրճ եւ համառաւտ արար Տէր ի վերայ երկրի եւ ի վերայ ամենայն տիեզերաց (Հմմտ. Եսայի Ժ 22): Արդ, մի՛ անյոյս լիցիս, զի գոյ յոյս դառնալոյ, զի ոչ եթէ ամպ, որ կոտորէ տապար, եւ ոչ// վասն այնորիկ եկն, զի կտրեսցէ, ապա թէ ոչ, զի՞նչ էր, որ արգելոյր ի կտրելոյ, այլ եկեալ հասեալ առ արմատն եւ զտեղի [առե]ալ, զի զքեզ երկիւղիւն արասցէ պիտանացու առ ի յաճախել [զպ]տուղս արգարութեան: Եւ յայտ յաջորդաւն առնէ, թէ ասէ.

(32ա)

Այն ծառ, որ ոչ առնէ պտուղ քաղցր, հատաճէ եւ ի հուր արկանի (Գ 10):

Եւ ամենայն ասելով՝ հանէ, մերժէ զպարծանսն ի նախնիսն պանծացելոցն. զի թէեւ նորին իսկ Աբրահամու իցես, ասէ, որդի եւ բիւրս բիւրոց համարեսցին նահապետս ունել, կրկին պատիժս կրիցես վասն անպտղութեանն: Եւ այսպիսի բանիւք եւ զմաքսաւորս երկեցոյց եւ զզինուորսն ստրջացոյց, այլ չարար անյոյս եւ զծուղութիւնսն պնդեաց երկիւղիւն եւ զմխիթարութիւնն չեբարձ ի միջոյ՝ ասելովն, թէ՝ «ճառս, որ ոչ առնէ պտուղ քաղցր, ի հուր արկանի» եցոյց, եթէ որ առնէ պտուղ քաղցր, ապրի ի պատուհասիցն: Եւ զիարդ ասեն՝ կարիցեմք առնել պտուղ ինչ, զի աւանիկ եկեալ կայ տապար առ արմին, զի ժամանակն կարճեալ է, եւ կէտն՝ հասեալ. կարող էք, ասէ, զի ոչ այնպիսի ինչ է պտուղ այս, որպէս ծառոցն, եթէ ժամանակաց կարաւտանայցէ եւ աւուրց փոփոխմանց: Այլ աստ կամացն եւեթ պիտոյ է եւ վաղվաղակի ծաղկաւ եւ պտղով զարդարի, զի ոչ միայն արմատն եւ պտուղն ծա-

ույն, այլ եւ ճարտարապետ մշակն առնէ յանկարծահաս վաղեփեաց զպտուղն: Եւ զի մի՛ ասիցեն, թէ դու աւանիկ քար ու վրէժ եւ անյոյս առնես: «Տապար,- ասես,- առ արմին ծառոյ դնի», եւ մեք զիարդ ժամանակի պատժոցն կարիցեմք պտղաբերք լինել, ցուցանէ դիւրաւ զպտղաբերութիւնն:

(32բ) Ես, ասէ, մկրտեմ զձեզ ի ջուր: Իսկ որ զկնի իմ գալոց է, զաւրագոյն է քան զիս, Ռոմ չեմ արժանի թէ լուծից զխրաց մի կաշկացն, Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի //հոյր (Գ 11ա):

Եւ այսու յայտ առնէ, թէ կամաց եւեթ պէտք են եւ հաւատոց եւ ոչ աշխատութեանց կամ քրտանց: Եւ որպէս դիւրագոյն է մկրտելն, նոյնպէս դիւրագոյն է նորոգելն եւ լինել առաքինի: Զարհուրեցոյց զնոսա դատաստանին ահիւ եւ տանջանաց համբաւաւն անուամբ տապարին: Եւ խոտելով ի հարցն պարծանաց եւ մտանել այլոց փոխանակ նոցա, եւ կրկին պատժովք կտրեսցի, ասէ, եւ ի հուր անկցի: Եւ յամենայն կողմանց կակղեաց զխստութիւն նոցա եւ յաւժարեցոյց ի ցանկութիւն ազատանալ ի չարեաց: Ապա բերէ ի մէջ եւ զՔրիստոսի ճառս մեծաւ առաւելութեամբ, զի ցուցցէ, թէ որչափ ինչ է ի մէջ նորա եւ Այնր, զՈր քարոզէր. եւ զի մի՛ ոք կարծիցէ, թէ պաշտաւն ինչ ունելով յարգէ զՔրիստոս, ասէ. «Եւ ոչ գիտէի զՆա»: Եւ ոչ նախ զայն ասաց, թէ՛ «Չեմ արժանի լուծանել զխրացս կաւշկաց Նորա», այլ նախ զնուագութիւն իւրոյ մկրտութեանն եղեալ ցուցանէ, թէ ոչ ինչ աւելի էր, այլ միայն յապաշխարութիւն, զի եւ ոչ իսկ ասաց, թէ՛ ես մկրտեմ ի ջուր թողութեան, այլ՝ յապաշխարութիւն: Եւ սոյն իսկ այս անճառ պարգեւաւք լինէր, զի մի՛ յորժամ լսիցեն, թէ՛ յետոյ իմ գալոց է, կարծիցեն, թէ՛ յետոյ քան զիս լեալ իցէ: Տե՛ս, որպիսի զաւրութիւնս պարգեւաց ունէր ընդ իւր եւ խելամուտ լեր հաստատութեամբ, թէ ըստ առաւելութեան զաւրութեան ոչինչ կարասցի արժանի ասել: Նա եւ ոչ այն ինչ է, զոր ասացին, եթէ՛ Ոչ եմ արժանի լուծանել զխրացս կաշկաց Նորա: Եւ մի՛ յորժամ զայն լուիցես, թէ զաւրագոյն քան զիս է, համեմատութիւն իբրեւ մեծի ընդ փոքու կարծիցես զՆորայն ընդ իս, զի եւ ոչ ընդ [ծառ]այս անգամ արժանի եմ մի կարգ անկանել, նա եւ ոչ [ընդ] յետին իսկ ծառայս եւ ոչ սակաւ ինչ մասն սպասաւորութիւն յանձին ցուցանել: Վասն որոյ ոչ ասաց, թէ՛//զկաւշիկս, այլ թէ՛ «եւ ոչ խրացս կաւշկացն»: Եւ զի մի՛ համարեցիս (°), եթէ խոնար-

(33ա)

Հուլիանի ինչ բանք իցեն, ածէ զնովիմբ զիրացն հաստատութիւն. նա,- աւե,- մկրտեսցե՞¹ զձեզ ի Հոգի Աստուծոյ եւ ի հոյ: Տեսանես զիմաստութիւն Մկրտչին, զի յորժամ ինքն քարոզէ, ահաւորս եւ մեծամեծս բարբառի, եւ յորժամ առ Տէրն առաքիցէ՝ քաղցրունս եւ ախորժականս, զի ո՛չ տապար ի մէջ բերէ եւ ո՛չ ծառոյ կտրելոյ եւ ի հուր արկանելոյ եւ ո՛չ զհանդերձեալ բարկութենէն, այլ՝ զմեղաց թողութենէ եւ զառ ի պատժոցն ազատութենէ եւ զարդարութենէ եւ զսրբութենէ եւ զլուսնալոյ յաղտոյ եւ զորդեգրութենէ եւ զեղբայրութենէ եւ զժառանգութենէ եւ զհաղորդակից լինելոյ եւ զառատութենէ Սուրբ Հոգւոյն պարգեւաց: Յայս ամենայն հայեցեալ՝ ասէ. «Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ»: Եւ այսու այլափոխ բանիւ զառաւելութիւն պարգեւացն յայտ առնէ, զի ոչ ասաց, եթէ տացէ ձեզ Հոգին Սուրբ: Եւ պատմութեամբ հրոյն դարձեալ զ[յ]որդութիւն եւ զանարգել շնորհացն ցուցանէ: Եւ արդ, մի՛տ դիր, զինչ ինչ համարէին լսողքն լինել, այլ ըստ մարգարէիցն դառնալ վաղվաղակի եւ նորոգել ըստ մեծամեծացն եւ ըստ արդարոցն, վասն որոյ եւ զանուն հրոյն յիշեցուցանէր եւ զմիտս նոցա ի յիշատակ այնոցիկ, որով հրովն երեւեցաւ, տանիցի. զի գրեթէ եւ ամենայն իսկ մարգարէիցն ի կերպարանս հրոյ երեւեցաւ, որպէս Մովսէսի՝ ի մորենուջն եւ ժողովրդեանն՝ ի Սինէ եւ Եգիպտոսի՝ ի քրովբեան: Եւ տե՛ս, զիարդ գարթուցանէ զմիտս լսողացն այնու, զի նախ զայն դնէ, որ յետոյն լինելոց է, զի պարտ էր նախ Գառինն զենուլ եւ մեղացն մեռանել եւ թշնամութեան ի միջոյ բառ[ն]ալ եւ թաղիլ եւ յառնել եւ ապա հատանել Հոգոյն Սրբոյ. այլ այսցանէ ոչ մի ինչ ճառեաց, այլ [նախ] զվերջ/ինն, վասն որոյ այն ամենայն լինելոց էր, եւ մանաւանդ բաւական իսկ այն էր, զի նախապատիւն նորա քարոզեցի, զի յորժամ լսիցէ լսողն, թէ Հոգի ընդունելոց է, թէպէտ եւ խնդրիցէ ի միտս՝ զիարդ կամ որով աւրինակաւ լինիցի այս, մինչդեռ տիրեալ կան մեղքն ի վերայ, մարթիցէ ընդունել Հոգի: Այլ նախ կրթեաց զլսողսն, եթէ մկրտէ Հոգւովն եւ նորոգէ հրովն եւ ապա այնուհետեւ առանց գայթակղութեան ածէ զնոսա ի ճառս չարչարանացն: Վասն որոյ եւ յետոյ իսկ ասաց, եթէ՝ «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա. 29): Եւ ոչ ասաց, թէ «թողու», այլ զառաւել գութ տեսչութեանն յայտ ա-

¹ Ձեռագրում մկրտեսցէ:

րարեալ, թէ՛ «բառնայ», զի ոչ հանգոյն է թողուլն այնմ, յորժամ յիւր անձն բառնայցէ, զի մինն առանց ճգանց լինէր, եւ միւսն՝ մահու չափ: Եւ դարձեալ ասէ, թէ «Որդի Աստուծոյ է», այլ եւ ոչ այսու յայտնի ինչ ցուցանէ լսողացն զպատիւն, քանզի չեւ եւս գիտէին, թէ արդարեւ Որդի իցէ Աստուծոյ: Բայց ի տալոյ զՀոգին եւ այսու եւս հաստատուն լինէր: Վասն այսորիկ եւ Հայր յորժամ առաքէրն զՅովհաննէս, այսպիսի իմն նշանս զպատուոյն զԱյնորիկ, որ գալոցն էր, տայր, թէ՛ «ՅՈրոյ վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի, նա է, որ մկրտէ ի Հոգին Սուրբ» (Յովհ. Ա 33): Վասն որոյ եւ ինքն իսկ ասէ, թէ՛ «Ես տեսի եւ վկայեմ, թէ Սա է Որդին Աստուծոյ» (Յովհ. Ա 34), զի յայսմանէ եւ միւսն եւս յայտնագոյն հաստատուն լիցի: Ապա իբրեւ զխորժականսն ասաց: Եւ վարժեաց նոքաւք զլսողսն, յետոյ եւ պնդէ, զի մի՛ անկանիցին ի ծուղութիւնս, զի այնպէս էին ազգ հրէիցն. յախորժականսն դիւրաւ մեղկէին եւ ի փափկութեանն անպիտանք լինէին: Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն, թէ՛

Որոյ հեծանոցն ի ձեռին է (Գ 12):

(34ա) Վերագոյն// գտանջանացն ճառէր, իսկ աստ ե՛ւ զգատաստանն մատամբ ցուցանէ, ե՛ւ զպատուհասն անմահ ընծայեցուցանէ՝ ասելով, թէ զ[յ]արդն անշէջ հրոյն պատրաստ իցէ: Տեսանես զնոյն Տէր իրացն, զնոյն եւ մշակ, թէպէտ եւ այլուր զՀա[ւ]րէ աւիցէ, թէ՛ «Հայր Իմ մշակ է» (Յովհ. ԺԵ 1), քանզի ածէ ի մէջ զճարտարապետն, զի մի՛ կարծիցես, եթէ վաստակոյ ինչ պէտք են, այլ իմն իրաց դիւրագոյն ցուցանէ, եթէ ամենայն աշխարհս նորա է, զի մի՛ երեւեսցի, թէ զայնոսիկ միայն, որ Իւրն իցեն, տանջիցէ: Բայց յայժմ աւասիկ զամենայն խառնէ, զի սրբագոյն երեւեսցի ցորեան: Բայց այժմ ընդ [յ]արդին խառ[ն]եալ է ի կալն եւ ոչ յշտեմարանսն, զի յայնժամ լինի համառաւտ ընտրութիւն: Եւ արդ, ո՞ւր իցեն, որք ի գեհենէն թերահաւատ իցեն, թէ չիցէ գեհեն. զի երկուս իրս ի մէջ եդ, եթէ՛ մկրտեաց ի Հոգին Սուրբ եւ այրիցէ հրով զչհաւանեալսն. զի եթէ այն հաւատարիմ իցէ, յայտ է, թէ եւ այս եւս: Վասն այնորիկ եւ յաջորդաւն գերկուս կանխասաց իրս դնէ. զի որով եղեւ առժամայն եւ զմիւսն, որ առյապայն իցէ, առնիցէ հաւատարիմ, զի եւ բազում անգամ իսկ Քրիստոս աստի իրաւքս զհանդերձեալսն յայտ առնէ զտանջանաց եւ զարքայութեան: Որպէս եւ զՅովհաննէս յայտ առնէ զերկոսին զաս-

տիս՝ եթէ մկրտէ ի Հոգիս, եւ հանդերձեալն՝ եթէ այրէ անշէջ հրովն, զի եթէ ոչ էր աստէն մկրտեալ զառաքեալսն եւ զհաւատացեալսն: Յիրաւի, թերահաւատ էիր հանդերձելոցն, զի եթէ որ դժուարագոյն թուէր, արար եւ առնէ հանապազ. զիա՞րդ դիւրագունիցն ոչ հաւատայցէք, զի թէ ասաց, թէ՛ «Մկրտեսցէ ի Հոգին Սուրբ»: Եւ զայսպիսի մեծագոյն պարզեւս խոստացաւ աստէն եւ կատարեաց եւ վերայ էած եւ զպատիժս հանդերձելոցն՝ ասելով, (34բ) թէ՛ Որոյ Բ/եծաւոցն ի ձեռին Իւրում: Եւ զընտրութիւնն ո՞ ի հանդերձեալն եցոյց, զի մի՛ բաւական համարիցին զմկրտութիւնն, թէ անպիտանք լինիցին, զի պիտոյ է յետ այնոցիկ զգաստութիւն եւ քաջութիւն: Վասն այնորիկ ի տապարէն ի մկրտութիւնն փախուցանէ եւ յետ մկրտութեանն շնորհաւք ի հեծանոցէն եւ յանշէջ հրոյն երկեցուցանէ: Եւ յառաջ քան զմկրտութիւնն ոչ առնէ այսպիսի ընտրութիւն, այլ մեկնագոյնս ճառէ, թէ՛ «Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ, հատանի եւ ի հուր արկանի», այսինքն թէ՛ ամենայն անհաւատք ի հուր մատնիցին: Եւ այսպէս յետ մկրտութեանն այլ իմն որոշումն ի մէջ դնէ, զի բազումք յետ հաւատալոյն անարժանք գտանիցին: Վասն որոյ ահ արկանէ սպառնալեալքն, թէ՛

Որոյ Բեծաւոցն ի ձեռին Իւրում է, զցորեանն ժողովէ եւ զ[յ]արդն այրեսցէ (Գ 12):

Եւ զի ցորեանն եւ ցաւղուն միապէս սփռին ի միում կալի, եւ կամնասայլն հասարակաբար կոխեալ հասու զնոսա, այլ հատն ոչ ինչ վնասի ի կամնասայլիցն, այլ առաւել աւգտի, զի զցաւղունն ջախջախեալ ի բաց կորչէ եւ հողմով հոսեալ առնէ ճարակ հրոյ եւ անասնոյ: Սապէս եւ բարիք եւ չարք, արդարք եւ մեղաւորք հասարակաբար կեան ի միում աշխարհի: Եւ փորձութիւնք կամնասայլից եւ նեղութիւնք միապէս հասանէ ի վերայ ամենեցուն, այլ արդարոց եւ առաքիներեաց ոչ ինչ կարէ վնասել, որպէս եւ ոչ կամնասայլն՝ ցորենոյն, այլ առաւել մաքրէ եւ սրբէ զարդարսն, որպէս զոսկի՝ հուր: Իսկ մեղաւորքն զաւրէն ցաւղնոյ տկարագունի մանրեալ եւ հողմակոծեալ հալածին ի ձայնէ Կոչողին զարդարսն ի կեանսն: Եւ լինին կերակուր անհանձար, անասուն ցանկութեան աստէն: Եւ վասն այնորիկ նախ զգաւրութիւնն Նորայտ արար ասելն, թէ մաքրէ Հոգևով եւ թողու զմեղս, զի աստէն

(35ա) եղելովքս հաւատայցեն եւ հան//դերձելոց տանջանացն եւ յարու-
թեանն եւ դատաստանին, եւ զայլն ամենայն ընդ սմին փակէր-
զմահու՝ լուծումն, զմեղաց՝ բառնալն, զանիծիցն՝ ապականու-
թիւն, զբազմաժամանակեան պատերազմացն՝ դիւրութիւն, ի յեր-
կինս վերանալ, ի դրախտն մտանել, հրեշտակաց կաճառակից լի-
նել, հանդերձեալ բարութեանցն հաղորդ լինել: Զի այս ամենայն
այնց առհաւատչեայ էր, զի իբրեւ ասաց զայն եւ զմարմնոցն յա-
րութենէ եւ զբարութեանցն, «զոր ակն ոչ ետես» (Ա Կորնթ. Բ 9):
Եւ այս ամենայն այնու շնորհաւք պարգեւեցաւ, աւելորդ էր
վասն նշանաց, որ աչաւք տեսանէին, ճառել, այլ զայնցանէ, որ
անյայտ էր, ճառէր, թէ՛ Որդի է Աստուծոյ եւ անհամեմատութիւն՝
ի վեր քան զԻնքէնէ: Եւ եթէ բառնայ զմեղս աշխարհի, եթէ վրէժ
ընդ գործոց պահանջիցէ, եւ թէ չիցեն աստէն եւեթ մերքս, այլ
ըստ արժանաւորութեանն ընդունիցի իւրաքանչիւր ոք: Եւ այս
ամենայն յանդիման առաջի երեսաց կայցէ, զի փոյթ յանձին կալ-
ցուք, մինչդեռ աստէնէ կալսցիցեմք, յորում կարողութենէ ցաւդ-
նոյ ի ցորեան դառնալ, որպէս եւ ցորենոյ ի ցաւդուն դառնալ:
Արդ, մի՛ փքասցուք ի վերայ նուաստից մեծութեամբ, զի եւ ցաւ-
դուն քան զցորեան մեծագոյն է հասակաւ եւ տկարագոյն՝ զաւ-
րութեամբ եւ խոտան եւ հրոյ պատրաստեալ: Եւ վասն այնորիկ
ներէ ցաւդնոյն աստէն, զի սնուցիչ է ցորենոյ, որպէս եւ աշխար-
հակալք՝ արդարոց: Եւ գոյ յոյս դառնալոյ եւ լինել ցորեան՝ ըստ
Տեառն բանի, թէ՛ թո՛յլ տուք որոմանդ, զի մի՛ զցորեանն ապաշ-
խարութեանն խլիցէք (Հմմտ. Մատթ. ԺԳ 30), զի եւ մորենին
փուշ էր, այլ զի ոչ պաշտեցաւ ի նմա դիւական բաջադմունք
վասն նուաստ տեսլեանն, սակս որոյ Աստուած բնակեաց ի նմա:
Եւ խոնարհք, որ ոչ ունին զկերպարանք աշխարհի, հան[դ]երձ
ողորմութեամբ եւ նուաստութեամբ ընդունին զԱստուած՝
(35բ) բնակեալ յինքեանս//:

Եւ Ինքն Յիսուս էր,- ասէ,- ամաց իբրեւ երեսուն (Ղուկ. Գ 23) ի
ժամանակ իբրեւ եկն Նա կնիք առնուլ ի Յովհաննէ. եւ այն վասն
ամաւթոյ մարկիովնացւոցն. զի թէ մարմին ոչ զգեցաւ, առ
մկրտութիւն զի՞ մերձենայր, զի աստուածեղէն բնութիւն
մկրտութեան չէ կարաւտ, եւ զի երեսնամեայ էր Նա. ո՞չ ահա
զմարդկութենէ Նորա յայտ արար: Եւ զի ասէ.

Թո՛ղ տուր այժմ, զի կատարեսցուք զարդարութիւնս ամենայն (Գ 15).

զի ընկալեալ լինէին փրկիչք եւ թագաւորք զաւծումն եւ զա[ւ]րէնս ի քահանայից, զոր աւրինակ զգեցաւ Նա մարմին եւ երեւեցաւ Նա իբրեւ կարաւտեալ, սոյնպէս մերձեցաւ եւ առ մկրտութիւն: Եւ զի վկայեացէ վասն ճշմարտութեան Իւրոյ, առաւել եւս, զի մկրտութեամբ Իւրով սահմանեացէ զնա յայնմիկ, զի դարձաւ մկրտեաց զայնոսիկ, որ Յովհաննէ մկրտեալ էին, ցոյց եւ յայտ արար, թէ մինչեւ առ նա միայն պաշտեաց զնա, զի ճշմարիտ մկրտութիւն ի ձեռն Նորա յայտնեցաւ, այն, որ արդարացոյց զնա ի պատուհասից անտի աւրինացն: Եւ զի ասէ՝ Թո՛ղ տուր այժմ, զի մի՛ մտցէ նա ի գաւիթ Իւր իբրեւ զգալ: Եւ զի յամաւթ արասցէ զփարիսացիսն, զի հպարտացեալ էին եւ արհամարհէին զմկրտութիւնն Յովհաննու: Իբրու յարգէ դարձեալ զխոնարհութիւն քարոզին Իւրոյ, իբրեւ զայն, զի ասէ. «Ամենայն, որ խոնարհ արասցէ զանձն իւր, բարձրացի» (Մատթ. ԻԳ 12): Եւ զի խոստովան եղեւ Յովհաննէս, բայ՝ «Ոչ թէ արժանի լուծանել զխրացս կաշկաց Նորա» (ագ[՞]) (Գ 11): Առ Տէր մեր զակն Յովհաննու եւ եղ ի վերայ գլխոյ իւրոյ: «Թո՛ղ տուր,~ ասէ,~ այժմ, զի կատարեսցուք զարդարութիւնս ամենայն»: Քանզի Յովհաննէս կատարիչ [գարշապար] աւրինացն¹. աւրէնք եւ մարգարէք մինչ ի Յովհաննէս, այլ ի Քրիստոս սկիզբն է Նոր Կտակարանացն: Զգեցաւ Նա զարդարութիւն հնոյն մկրտութեամբ, զի ընկալցի (36ա) Նա զկատարած աւծման եւ տացէ [զնա լի եւ բովանդակ] // աշակերտաց Իւրոց, զի ահաւանիկ եւ զմկրտութիւնն Յովհաննու աւրինաւքն հանդերձ սահմանեաց եւ մկրտեցաւ նմա արդարութեամբ, քանզի առանց մեղաց էր Նա, այլ մկրտեաց Նա շնորհաւ, զի մեղաւորք էին, լռեցոյց զաւրէնս արդարութեամբ Իւրով եւ դարձեցոյց զմկրտութիւնն մկրտելովն Իւրով: Բայց դարձեալ կատարեսցուք զարդարութիւնս ամենայն, զի Յովհաննէս էր ի դուռն բակին, զի ի մէջ նորա ամփոփեալ ժողովեալ էր հաւտն ի երուսաղէմացւոց, մուտ նա առ հաւտ անդր ոչ իշխանութեամբ, այլ արդարութեամբ: Եւ վկայեաց Հոգին, որ հանգեալ ի վերայ Նորա ի մկրտելն Նորա, թէ՛ Նա է Հովիւ, զոր ընկալաւ Նա ի ձեռն Յովհաննու զքահանայութիւն, զարքայութիւն եւ

¹ Քանզի աւրինացն լուսանցքում:

զմարգարէութիւն: Արդ, առ Նա զարքայութիւն տանն Դաւթի ծննդեամբ, որ եղեւ ի տանէ Դաւթի: Եւ առ զքահանայութիւն տանէն Ղեւեայ երկրորդ ծննդեամբն մկրտութեանն որդւոյն Ա-հարովնի: Արդ, այն, որ հաւատայ, թէ ծնունդ երկրորդ լինի նմա յաշխարհի, ոչ երկմտեալ լինի նա յայնմանէ, թէ վերջին ծննդեամբ մկրտութեամբն Յովհաննու առ Նա զքահանայութիւն Յովհաննու: Եւ քանզի բազումք մկրտեցան անդ յայնմ աւուր, էջ հանգեաւ Հոգին ի վերայ Միոյն, զի որ նշեալ լիցի յամենեցունց նշանաւ Այն, որ ոչ էր որոշեալ յամենայն մարդոյ տեսեամբ: Եւ քանզի ի մկրտել Նորա էջ Հոգին, վասն այնորիկ մկրտութեամբն Նորա տուեալ լիինէր Հոգին: Եւ զի ասէ.

Յայնժամ գայ Յիսուս առ Յովհաննէս՝ մկրտիլ ի անանի (Գ 13):

Եւ զի մի՛ կարծիցեն, թէ իբր զկարաւտ մկրտի: Վասն այսորիկ յառաջագոյն բառնայ զայսպիսի կարծիս ասելովն, թէ՛ «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս» (Յովհ. Ա 29), եւ թէ՛ «Զեմ բաւական լուծանել զխրացս» (Մարկ. Ա 7, Յովհ. Ա 27), եւ զայն եւս, թէ՛ «Դատաւոր է», եւ թէ՛// «Տէր ի գործոց հատուցանէ» (Հմմտ. Ղուկ. ԻԳ 41) եւ զՀոգին առ որ շնորհելոց է: Եւ այսու ամենայնիւ բառնայ զկարծիս կարաւտութեանն, եւ յորժամ զայր առ նա, արգելոյր, թէ՛

Ինձ պարտ է ի Քէն մկրտել (Գ 14):

Եւ զի մկրտութիւնն Յովհաննու յապաշխարութիւն եւ յամբաստանութիւն յանցաւորաց էր, եւ զի մի՛ այսպէս զՆա ոք կարծիցէ: Գառն Աստուծոյ եւ Փրկիչ զՆա կոչեաց, զի ի միտ առնուցուս, թէ այլ իմն մատակարարելոց էր. յայն սակս մկրտէր, վասն որոյ ի գալն ասէր, թէ՛ «Ինձ պարտ է ի Քէն մկրտիլ, եւ առ ի՞ս գաս», եւ չասաց, թէ՛ Դու յինէն մկրտիս, զի զայս պատկառէր ասել: Եւ զայս մարգարէանայր, զի կարապետ էր առաջի երեսաց Նորա: Որպէս զիջումն Նորա յորովայն Կուսին, յորովայն Եղիսաբեթի գուշակեաց՝ զամլութիւնն ի պողաբերութիւն փոխելով, թէեւ կուսութիւն կարող է պողաբերել զՔրիստոս: Եւ յորովայնի խայտայր առ Նա գալով ի ձեռն Կուսին: Այսպէս եւ զգալուստ Նորա ի դժոխս գուշակէր, թէեւ Դու առ իս գաս, որպէս Պետրոս, որ ոչ գիտէր զխորհուրդ լուանալոյն, արգելոյր զՆա եւ յետոյ հնազանդէր, սոյնպէս եւ սա իբրեւ լուաւ, թէ՛ «Թո՛յլ տուր». առ այժմ հնազանդէր: Եւ զի մի՛ դոյզն իրս կարծիցէ զմատակարա-

րուծիւնն, վասն այնր ասէր՝ այսպէս վայել է առ այժմ, եւ ոչ եթէ միշտ այսպէս առնիցես, այլ տեսցես յետոյ եւ զփառս Իմ զանգուգականս: Բայց «առ այժմ այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս աւրինացն»: Աստ արդարութիւն՝ զլրումն ամենայն պատուիրանացն ասէ. զամենայն պատուիրանսն հանաք ի գլուխ, եւ այս միայն պակասէ, եւ զայս ես մի՛ թողցուք անկատար: «Եւ զի լրումն աւրինացն Քրիստոս է» (հմմտ. Հռոմ. ԺԳ 10),- որպէս ասէ առաքեալ, որ լցեալ կատարեաց զալստեամբն Իւրով զթերութիւն նորա: Այսպէս եւ մկրտութիւնն Յովհաննու [թեր]ի էր մինչ ի մկրտութիւնն Քրիստոսի, որ ելից զթերութիւն նորա մկրտելովն եւ լի կատարեալ ետ զնա առաքե//լոցն ի թողութիւն մեղաց եւ յընդունելութիւն Հոգւոյն: Եւ զի եկի, ասէ, լուծանել զանէժս աւրինացն, որ վասն յանցուածոցն եղան, վայել էր [ի]նձ նախ զամենայն կատարել եւ ազատել զձեզ ի դատապարտութենէ աւրինացն, վայել է Ինձ կատարել զաւրէնսն եւ ապա լուծանել զաւրէնսն, որ կան հակառակ ձեզ գրեալ: Զի յայն սակս առի մարմին եւ եկի, եւ ապա թոյլ ետ: Եւ ի մկրտել Նորա իջանէր Հոգին աղաւնակերպ, վասն զի մեծ քան զՆա համարէին զՅովհաննէս վասն սքանչելի ծննդեանն եւ հրաշալի վարուցն եւ զարմանալի գործոցն: Իսկ զՔրիստոս իբր զդոյզն մարդ ոք, որ զհասարակաց կեանս կեար համարէին: Վասն այնորիկ ընդ բարբառոյն յայտնէր Հոգին, եթէ ոչ Յովհաննէս է Որդի, այլ որ մկրտեցաւն, զի եւ Յովհաննու զայն ետ նշան, թէ՛ «ՅՈյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգիցէ, Նա է, որ մկրտէ ի Հոգին Սուրբ եւ ի հուր» (Յովհ. Ա 33): Եւ իմասցիս, թէ եւ ի քո մկրտիլն նոյն ինչ լինիցի, թէպէտ եւ ոչ այնպէս յայտնիք. զի ի սկզբանն սովոր է Աստուած հրաշացուցանել, զի հաստատեցեն զնորա հաւատս: Իսկ հաւատացելոյն ի հաւատս բաւական են սքանչելեացն հաւատքն: Վասն այնորիկ ի Վերնատանն լեզուք երեւէին վասն հրէիցն, եւ յետոյ ոչ այնպէս ինչ լինէր: Եւ վասն այնորիկ ի կերպարանս աղաւնոյ յայտնէր Հոգին, զի զգաւն է թռչունն այն եւ սուրբ, զի եւ Հոգին հեզութեան Հոգի ասի: Վասն այնր այսու կերպարանաւք յայտնէր: Եւ դարձեալ զհին գործսն յիշատակէ, զի յորժամ զայր հասանէր աշխարհի նաւակոծութիւնն եւ եղծեալ ապականէր զամենայն մարդկութիւն, յայնժամ նոյն թռչունն երեւէր եւ փարատելոյ կարա// ձմերանն, բերէր աւետիս ոստով ձիթենւոյն, զոր ունէր [ի] բերանն այնմիկ, առակ աւրինակի

Հանդերձելոցն լինէր: Զի եւ յայնժամ յանհնարին պատիժս կայր ազգ մարդկան, զի մի՛ անյոյս լինիցին, յիշեցուցանէր զճառս առաջնոցն, զի եւ յայնժամ անյոյս իրաց լինէր վճիռ եւ ուղղութիւն, այլ յայնժամ՝ պատժոց, իսկ աստ՝ շնորհաց եւ անճառ պարգեւաց աւետիք: Վասն այնորիկ ի կերպարանս աղաւնոյ երեւի՝ ոչ ճիթենւոյ տերեւք բերեալ, այլ զազատիչն ամենեցուն յամենայն չարեաց ցուցանէ եւ յոյս բարեաց ամենեցուն սերմանէ, զի ոչ ի տապանէ հանէ սակաւ մարդիկ, այլ զտիեզերս ամենայն յերկրէ յերկինս վերացուցանէ եւ փոխանակ տերեւոյ ճիթենւոյն զորդեգրութեանն հասարակաց ամենայն աշխարհաց բարձեալ բերէ. զի ուր որդեգրութեան պատիւ իցէ, անդ եւ չարեացն ամենայնի կորուստ եւ բարութեանցն ամենայնի գիւտ: Վասն այնորիկ զհրէական մկրտութիւնն լուսեցուցանէր եւ մերումս սկիզբն արարեալ յառաջ խաղացուցանէր, եւ որ ինչ իրք ի զատկին կատարեցան, նոյն եւ ի մկրտութեանն, քանզի ընդ երկուսին անց եւ զմինն դադարեցոյց եւ միւսոյն սկիզբն արար: Նոյնպէս եւ աստ. զհրէական մկրտութիւնն ի գլուխ եհան եւ եկեղեցական մկրտութեանս դուռն եբաց, որպէս յայնժամ ի միում սեղան զմինն կատարեաց եւ զմիւսոյն սկիզբ արար ի միտս Յորդանան, զմինն դադարեցոյց եւ միւսոյն սկիզբն արար, քանզի զստուերն եղծ եւ զճշմարտութիւնն հաստատեաց, զի Հոգւոյն միայն շնորհք ունին զայսպիսի մկրտութիւն: Իսկ Յովհաննուն թափուր էր յայսմ ամենայնի, եւ վասն այնորիկ ի վերայ այլոց մկրտելոցն ոչ երեւեցաւ այսպիսի ինչ, բայց միայն ի վերայ հանդ//երձեալ էր տալ զայն: Վասն այնորիկ երկինք բանային, եւ Հոգին իջանէր. ի հին վարուցն ի նոր առաքինութիւնս բերէր զմեզ, զի դրունք բարձանց բանային, եւ Հոգին առաքի անտի՝ կոչել զմեզ յայն բնակութիւն ոչ վայրապար, այլ մեծաւ պատուով, զի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտակա[կա]պե[տս] Տեառնէ, այլ Որդիս սիրելիս Աստուծոյ պատրաստէ եւ այնպէս ձգէ զմեզ յայն հանգիստն:

(38ա)

Գ

Նոյն ժամայն ասէ.

Հոգին Սուրբ վարեաց հան զՆա յանապատ, զի փորձեսցի Նա ի Սատանայէ (Դ 1):

Եւ վասն է՞ր մինչեւ յերեսուն ամն ոչ փորձեաց զՆա, այլ քանզի նշան յայտնի յերկնից ի վերայ Աստուածութեանն Նորա ոչ էր տուեալ եւ դոյզնաբար իբրեւ զայլս երեւէր Նա: Եւ վկայութիւնս մեծամեծս ի մէջ ժողովրդեան Նորա ոչ ունէր, լուեաց նա ի փորձելոյ զՆա, մինչեւ եղեւ սկիզբն լինելոյ այսմ: Այլ իբրեւ լուաւ նա, թէ՛ «Ահաւասիկ գայ Գառն Աստուծոյ», եւ «Սա է, որ բառնայ զմեզս աշխարհի», յապշութեան մեծի կայր նա, սակայն հաս բեր մինչեւ մկրտեսցի տեսանել, թէ իբրեւ զկատարեալ մկրտի: Եւ իբրեւ ետես, թէ իբրեւ զլցուցիչ կարաւտութեան էջ ի ջուրս անդր, եւ ոչ եթէ իբրեւ զկարաւտեալ եկն Նա առ մկրտութիւն անդր. ի փայլիւն լուսովն, որ լինէր ի վերայ ջուրցն, եւ ձայնիւն, որ եղեւ յերկնից: Եդ ի մտի իւրում եւ ասէ, եթէ՛ մարտիւ փորձանաւ ոչ փորձեմ զՆա, ոչ կարեմ ճանաչել զՆա: Այլ քանզի ոչ էր արժան Բարերարին հակառակ կալ ընդդէմ կամաց այնորիկ, որ եկն փորձել զՆա, նա եւ համարձակէր ոչ վարել զՆա յայնմիկ, զի ոչ գիտէր, եթէ որպէս փորձեսցէ զՆա, մինչեւ հանդերձեաց պատրաստեաց զԱնձն Իւր ի մարտ պատերազմի եւ զգեցաւ զաւրութիւն Հոգւոյ ելանել նահատակիլ, ոչ մերձեցաւ առ Նա փորձել զՆա: «Հան,- ասէ,- վարեաց զՆա //Հոգին Սուրբ յանապատ, զի փորձեսցի ի Սատանայէ», այլ վասն քաղցրութեան Իւրոյ հակառակ կալ ընդդէմ նորա ոչ կամեցաւ, թէ գուցէ լքեալ լինիցին ականջք լսողաց կարծեաւք, զի ոչ կարէր Նա դիմակալ լինել մարտին նորա: Վասն այսորիկ ոչ կամեցաւ Նա երթալ ընդ փորձչին Իւրում. առաւել եւս, զի մի՛ եղիցի տեղի ուրացելոցն յասել, թէ կրսերագոյն է Հոգի քան զՈրդի, զի եթէ ի մարտ պատերազմի հանէր Նա զՆա եւ ոչ ի պատիւ եւ հանգիստ, զիա՞րդ ոչ անկանէր խիղճ ի խորհուրդս մաքառողաց ի քննել զայս, զի թէեւ էր կրտսերութիւն Հոգւոյն քան զՈրդի, զիա՞րդ Հոգւոյն

տուեալ լինէր¹ իշխանութիւն հանելոյ զՆա յանապատ, զի ահա-
 ւասիկ իբրեւ իշխան երեւեցաւ ի հանել զՆա: «Եւ զի հան վա-
 րեաց զՆա Հոգին յանապատ, զի փորձեսցի Նա ի Սատանայէ»: Այն իսկ է, զի ասէ. «Ոչ ոք կարէ մտանել ի տուն հզաւրին եւ ա-
 ւար հարկանել զգանձս նորա, եթէ ոչ նախ զհզաւրն կապիցէ, եւ
 ապա զգանձս նորա աւար հարկանիցեն» (Մատթ. ԺԲ 29): Արդ,
 կապեաց Նա զհզաւրն եւ յաղթեաց նմա ի ներքս ի տան իւրում:
 Եւ ապա սկիզբն արար քարոզութեան Իւրում, եւ հորդեաց մեզ
 ճանապարհ պահոց, զի նովաւ յաղթեսցուք խորամանկութեանց
 նորա: Եւ յետ քառասուն աւուր, ասէ, զի պահէր, քաղց[եաւ], այ-
 սինքն՝ վասն յաղթութեան ախոյեանին, զի առաջի ամենայնի
 խայտառակեսցէ զպատրաստութիւն նորա: Եւ ուսոյց մեզ բա-
 նիւք իւրովք, զի յայսմ եւ թէ իցեմք քաղցեալ բանին Տեառն:
 Իսկ ընդէ՞ր վասն Մովսէսի եւ Եղիայի ոչ ուրեք յայտ առնէ, թէ
 քաղցեան: Եւ վասն Տեառն մերոյ գրեալ է, եթէ՞ «քաղցեալ», այլ
 զի յամալթ արասցէ զայնոսիկ, որ ասեն, թէ ոչ առ մարմին, եւ զի
 տացէ պատճառս սատանայի մերձենալ առ Նա ի փորձել զՆա՞//
 (39ա) յասել անդ նորա.

Ասա՛ դու քարանցս այսոցիկ, եթէ հաց լիցիմ (Դ 3):

Եւ զի ոչ արար, զի մի՛ տացէ զցանկութիւն մեղաւորին. եւ ի
 խոզս անդր, զի ետ նմա, որպէս եւ խնդրեաց, ոչ եթէ նմա ինչ
 կամս արար, այլ վասն նշանաց, զի արասցէ, զի ոչ ոք կամեցաւ
 ելանել առ Նա ի գաւառաց անտի գերգեսացւոց, մինչեւ առ ար-
 ար Նա անդ զսքանչելիս: Եւ զի ոչ ամաչեաց Նա յառաջին փոր-
 ձանաց անտի, ած հան կացոյց զՆա ի վերայ անկեան տաճարին:
 Եւ ահա ցարդ եւս կանգուն կայ տեղին, եւ տաճարն կործանեալ
 է, որպէս եւ ասաց Ինքն, ասէ. «Մի՛ մնասցէ ի նմա քար ի քարի
 վերայ» (Մատթ. ԻԴ 2): Եւ տեղին, յոր վերայ կաց Նա, պահեցաւ
 իբրեւ ի նշան: Ասէ ցՆա.

Ա՛րկ գՔեզ ի վերուստ ի վայր, զի գրեալ է, թէ պահեսցեն գՔեզ, զի
 մի՛ երբէք հարցի զքարի ոտն Քո (Դ 6):

Ո՛վ փորձիչ. թէ ի վերայ Նորա կատարի սաղմոսն. «Ոչ ահա
 գտեալ անդէն,- ասէ,- ի թիկնամէջս իւրն իւր ընկալցի գՔեզ»

¹ Ձեռագրում լիբեր:

(Սաղմ. Ղ 4): Արդ, ոչ ինչ մարթ է անկանել թռչնոց, զի աւղքն իբրեւ զերկիր հաստատուն են ի ներքոյ թեւոց Նորա: Կամ ոչ ահա դարձեալ գրեալ է, թէ՛ «Ի վերայ աւձին քարբի գնասցես Դու» (Սաղմ. Ղ 13): Այլ զայն ինչ, որ ինչ պիտոյ էր նմա, ուսաւ ի գրոց անտի, եւ որ ինչ վնաս էր, եթող: Սոյնպէս եւ հերեսիտացիքն առնուն ինչ ինչ ի պէտս գայթակղութեան իւրեանց եւ թողուն զայն, որ յանդիմանէ զմոլորութիւն նոցա, զի յայնմիկ յայտարասցեն, թէ այն աշակերտք այն վարդապետի են:

Դարձեալ առ զՆա ած հան ի լեառն մի բարձր յոյժ եւ ասէ ցՆա.

Իմ են այս ամենայն թագաւորութիւնք (Դ 8):

(39բ) Եւ յայնմիկ մոլորին եւ կարծեն, եթէ ինքնութիւն ունի նա: Եւ որպէս ասաց բամ, զոր ինչ վնասուն էր, թողուն եւ զայլն առնուն: Եւ թէ զի ասաց [նա, բա] իմ են տան նմա ինքնութիւն. իբր ոչ եթէ ի նո//ցանէ ինչ ուսանիմք մեք զճշմարտութիւն, այլ այնու, որով վկայեն, թէ յաղթեն նովին, առաւել եւս պարտաւորին, թէ այդպէս է, յորժամ ասէ զկնի նորա, թէ՛ «Ինձ տուեալ է» (Հմմտ. Յովհ. Ե 27). ի միտ առցեն, թէ այլ արարիչ է նոցա, եւ նմա տալով տուաւ: Եւ զի ասէ. «Իշխանութիւն ունիմ ես ի վերայ այսր ամենայնի» (Հմմտ. Յովհ. Ժ 18) ոչ եթէ բնութեամբ իւրով ունի զիշխանութիւնն, այլ զի նոքա կամեցան, զի ասէ այսպէս. «Որում պատրաստեցէք զանձինս ձեր ի ծառայութիւն հնազանդութեան՝ ծառայէք նորա» (Հռոմ. 9 16), եւ այլն եւս: Եւ զի ասէ.

Անկցես ի վերայ երեսաց Քոց եւ ինձ խոնարհ երկիր պագցես (Դ 9),

զի յայտնի լիցի ամբարտաւանութիւն հպարտութեան այնորիկ. ո՞ր, որ ի սկզբանէն կամեցաւ լինել Աստուած: Մարմին Տեառն մերոյ յանդիմանէ զամենայն մարմին. զի թէ մերկ իջանէ ի պատերազմ, պարտաւորի նա: Զի զգեցաւ նախ յառաջնոցն զզէն պահոցն եւ [ապա] էջ սա ի մարտ պատերազմի: Արդ, զէն հաստատուն պիտոյ է ընդդէմ այնորիկ, որ ձգէ զնետս մուխս մեքենաւորս:

Ասա՛,- ասէ,- քարանց այսոցիկ, թէ հաց լիցին (Դ 3):

Զգեաց նետ, որ ուսուցանէ զլիութիւն, զի խողտիցէ զՆա ի քաղցութիւն անդ, զի մտցէ ի փորձանս, այլ ոչ կարէր նա տիրել

քաղցութեանն, զի զպահանս իբրեւ պատեանս զգեցեալ էր. դարձաւ քաղցութիւնն, ձգեաց ի նա զնետս լիութեան իւրոյ, զի ուսուցանէ նմա զայն, որ ուսուցանէր զարտաքին լիութիւն, թէ գոյ եւ ներքին լիութիւն, որ ոչ երեւի:

Ոչ եթէ հացի միայն, այլ ամենայն բանի, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ (Դ 4):

Արդ, այնու, որ եկն փորձել, փորձեցաւ, եւ որ ի զեկնն ուսուցանել, յանդիմանեցաւ: «Եթէ Որդիս [ես] Դու Աստուծոյ, ասա՛ քարանցս այսոցիկ, թէ հաց լիցին առ այժմ»: Բերանն սատանայի դաւեաց զՆա. թէ Որդի Աստուծոյ է, կարէ զքարինս հաց առնել: (40ա) Արդ, [ուսոյ]ց զնա //Տէր մեր նովին իսկ բանիւ նորին, զի եթէ՝ «Կարէ Աստուած զքարինս դարձուցանել առնել հաց»: Ուսի՛ր, փորձի՛չ, զի եւ առանց հացի կարող է Աստուած լցուցանել: Եւ եթէ զքարինս կարէ դարձուցանել ի կերակուր, կարէ նա եւ զքաղցութիւնս դարձուցանել ի լիութիւն, զի այնու դարձուցանել զբնութիւն քաղցութեան ի լիութիւն. ոչ եթէ զի լցուցէ զնա յայլ ընչէ, այլ զնոյն քաղցութիւնն ի գլխովին ի լիութիւն արասցէ: Որպէս եւ զքարն իսկ գլխովին ասաց Փրկիչն, թէ արասցէ հաց: Արդ, ի լերին անդ արար կոխան Տէր մեր զցանկութիւն փորձչին եւ առ ընկեց ի խոնարհ, զի կոխեսցեն զնա հեթանոսք, որ կոխեալն լինէին երբեմն ի նոցանէ: Եւ հան փոխանակ նոցա զամենայն բարութիւնս, զի թագաւորեսցեն ի վերայ ամենայնի այնք, որ երբեմն կոխան լինէին. զաւրաբանակ ջուրքն, որով հեղձուցանէրն փարաւովն զմանկտին, նոքիմ[բ] հեղձաւ: Սոյնպէս եւ Գողիադ սրով, որով սատակէր զբազումս, նովին սրովն եհատ Դաւիթ զգլուխ նորա: Մովսէս խաչին խորհրդով հերձաւ պատառեաց զձովն, եւ Դաւիթ վիմին խորհրդով հերձ¹ կործանեաց զԳողիադ: Եւ Տէր մեր բանիւ բերանոյ նորին պարտաւորեաց զՍատանայ, մինչդեռ փորձէրն զՆա. փարաւովն ջուրքք, որով հեղձուցանէր, հեղձաւ, եւ Գողիադ, որովն սրով կոտորէր, սպանաւ, եւ սատանայ, մարմնովն որով կորուսանէր, նովին յանդիմանեցաւ, թէ չէր նա Աստուած: Խորհուրդ երիցն մկրտութեանցն, յոր մկրտեցաւ, փորձեցաւ Փրկիչն, ասէ՝ «Ասա՛ քարինցս այսոցիկ, թէ հաց լիցին», զի սա է սնուցիչ ծննդեան, եւ դարձեալ զթագաւորու-

¹ Ձեռագրում՝ հերձ:

թիւնս եւ զփառսն նոցա Քեզ տաց, զի սա է աւետիք աւրինաց: Եւ դարձեալ¹ «Ա՛րկ զՔեզ վերուստ ի վայր», զի սա եւ իջանել մահուն: Այլ նա միով իւրք յայսցանէ ոչ խռովեցաւ եւ ի խնդացուցանելն զՆա ոչ ինչ ուրախ եղեւ Նա: Եւ զի ի զարհուրեցուցանելն զՆա նա ինչ ոչ տագնապեցաւ, այլ ի ճանապարհի Իւրում գնայր Նա եւ զկամս չաւր Իւրոյ կատարէր Նա: Արդ, զայս ամենայն, զոր կարգեաց, եղ նա առաջի Կենդանոյն, նմա ոչ եթէ նեղութիւնք ինչ եղեն, զի նեղութիւնք մեր անդորրիչք են մեր, եւ մեք ամենեքին ի չարչարանաց անտի Նորա զհանգիստ ընդունիմք: Զի՞նչ երկչեալ էր Այնմիկ, որ գիտէր, թէ ոչ կարէ լինել վնասեալ: Ժամէ ի ժամ ծնանի ի մէջ երկիւղ այնուիկ, զի ճշմարիտ գիտեմք մեք, եթէ կարեմք լինել վնասեալ, նա եւ այնոքիկ, որ պղծեն զնա ծննդեամբն, ոչ գիտէն, զի մոլորեալ են, եւ ոչ կարեն ուսանել, զի հպարտացեալ են, զոր աւրինակ եւ ոչ երկնչին, զի ոչ ապաշաւեն, զի աշխարհս այս, յորում եկն Նա, ոչ է սա որոշեալ յարգանդէ անդի, զի ամենայն պղծութիւնք գոյ ի սմա: Նա եւ ի դժոխս դարձեալ, որ քան զամենայն ատելի եւ պիղծ է, եմուտ Նա եւ մանաւանդ վասն մարմնոց, զի ասացեալ է, թէ տաճար են Աստուածութեան: Արդ, ոչ ինչ աղտեղութիւն է Աստուծոյ բնակել ի տաճարս Իւրոյ, քանզի կամեցաւ Նա սպանանել զմահ եւ զհետս նորա սպառել սկիզբն արար յարմատոյ անտի իւրացն, զի ուր եւ մարմինն է, անդ է մահ: Եւ արմատք մարմնոյ արգանդ է, զի անդ առնէ սկիզբն ստեղծանելոյ, եւ անդէն սկսանի մահ ապականել զնա, զի բազում կանայք են, զի յամսեանն, յորում յղենան, եւ ի նմին մեռանին մանկունք իւրեանց, եւ երկնեն եւ յերկրորդումն եւ յերրորդումն եւ այլ եւս

(41ա) ամս//ոյ ամսոյ: Արդ, եթէ մահ արգանդէ սկսանի եւ ի դժոխս կատարէ, զիա՞րդ կարէր Այն, որ Որսորդն է մահու, եթէ ոչ յարգանդէ զսկիզբն առնէր գնալ ընդ նմա եւ մինչեւ ի կատարած դժոխոց արգելանին նորա: Արդ, մի՛տ առ դու, որ պէս պէս ազգաւք կամեցաւ Կենդանին յանդիմանել զմահ, եւ եղեւ Նա սաղմն, եւ յարգանդի անդ ոչ կարաց ապականել զՆա: Եւ մանուկ. ի սննդեան Նորա ոչ կարաց ամաչեցուցանել զՆա: Եւ տղայ. եւ յուսման անդ Նորա ոչ կարաց յողբողգել զՆա: Եւ երիտասարդ.

¹ եալ լուսանցքում:

եւ ցանկութեամբ Նորա ոչ¹ կարաց գայթակղեցուցանել զՆա: Եւ գիտուն. եւ խորամանկութեամբ իւրով ոչ կարաց յաղթահարել զՆա: Եւ վարդապետ. եւ ի ճշմարտութեան Նորա ոչ կարաց յանդիմանել զՆա: Եւ զգուշացեալ. եւ պատուիրանաւք Նորա ոչ կարաց խոտորեցուցանել զՆա: Եւ պնդակազմ. եւ ի սպանանելն զՆա ոչ կարաց զարհուրեցուցանել զՆա: Եւ մեռեալ. եւ ի զգուշանալն գերեզմանին ոչ կարաց պահել զՆա: Ոչ հիւանդացաւ Նա, զի Բժիշկ էր. եւ ոչ մոլորեցաւ, զի Հովիւ էր. եւ ոչ յանցեաւ, զի Ուսուցիչ էր. եւ ոչ գայթակղեցաւ, զի Լոյս էր: Այս ճանապարհ կատարեալ, զոր հորդեաց Քրիստոս Եկեղեցւոյ Իւրոյ, ի սկզբանէ յղանալոյն մինչեւ ի կատարած յարութեան: Արդ, եթէ Եկեղեցի մարմին Նորա, որպէս ասաց Պաւլոս՝ վկայ Նորայ, հաւատա՛ դու, թէ Եկեղեցի Նորա զնաց այսու ամենայնիւ առանց ապականութեան, զոր աւրինակ դատապարտութեամբ միոյ մարմնոյ Ադամայ ամենայն մարմինք մեռան եւ մեռանին, այնպէս յաղթութեամբ այսր միոյ մարմնոյ Քրիստոսի ամենայն Եկեղեցի եկաց եւ կեայ: Այլ, զոր աւրինակ, զի ինքեանք մարմինքն մեղան եւ ինքեանք մեռանին եւ երկիր՝ մայր նոցա, անիծաւ, //սոյնպէս՝ վասն այսր մարմնոյ, զի սա ինքն Եկեղեցի, որ ոչ ապականի, աւ[ր]հնեցաւ երկիր սորա ի սկզբանէ, զի երկիր՝ տաճար ի մարմինէ Մարիամայն, որ ի նմա սերմանեցաւն: Հայեա՛ դու, զի եւ հրեշտակն, որ եկն սերմանել զնա ի լսելիս նորա ի ձեռն յստակ ձայնին: Այսպէս արար սկիզբն սերմանն. «Ողջո՛յն ընդ քեզ, ասէ,- աւ[ր]հնեա՛լ ի կանայս» (հմմտ. Ղուկ. Ա 28): Կնքեաց եւ Եղիսաբեթ զձայն երկրորդ: «Աւրհնեալ ես դու ի կանայս» (Ղուկ. Ա 28)- ասէ, որպէս զի յայտ լիցի, եթէ վասն առաջին մաւրն անիծաւ: Վասն այսորիկ մայրն երկրորդ աւ[ր]հնեալ անուամբք յորջորջեալ լինէր: Եւ զի ասէ՝ ի բա՛ց գնաց ի Նմանէ առ ժամանակ մի, մինչեւ պատրաստեսցի, զի հարախաւսութեամբ եւ նախանձուն դպրաց խափանեսցէ զյաղթութիւնն Նորա: Այլ որպէս պարտաւորեցաւ² ի սկզբանն³ նա եւ սոյնպէս⁴ ի կատարածի, զի մահուամբ Իւրով յաղթեաց Նա առաւել: Եւ զի ասէ՝

¹ Չեռագրում՝ որ:

² Եցաւ՝ տողամիջում:

³ բանն՝ տողավերջում:

⁴ սոյնպէս՝ տողամիջում:

Յե՛տու երթ, սատանա՛յ (Դ 10):

Եւ գժտեցաւ նմա, զի ստեաց նա այնչափ եւ ասէ. «Իմ են թագաւորութիւնքս»: Եւ ոչ ամաչեաց նա յայնմանէ, զի ասէ՝ Աստուած տիրէ ի վերայ թագաւորութեանց մարդկան եւ ում կամի, տացէ զնա: Արդ, կշտամբեաց զհպարտութիւն ամբարտաւանութեան նորա բանիւ Իւրով, եւ այլ ոչ եւս կարաց կալ առաջի բանի Նորա, զի յայտ արասցէ վասն խրատու Իւրոյ ճշմարտութեանն եւ իմաստնացուցէ զհաւանեալսն Իւր, զի ի ճշմարիտ Տըւչէ անտի ընկալցին զամենայն բարութիւնս: Եւ զի ասէ՝

Եկին հրեշտակք եւ պաշտէին զնա (Դ 11),

զի տացէ մեզ աւրինակ, եթէ զկնի մկրտութեան մտանեմք ի փորձանս եւ յետ փորձանացն ապա եւ՝ արքայութիւն երկնից:

Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն (Մատթ. Դ 1):

(42) Յորժամ ընկալաւ զվկայութիւն ի վերուստ եւ զՀոգին, որ տուեալ ի պատերազմ ընդդէմ չարին, ոչ իբր կարաւտ աւգնակա- նի //, այլ աւրինակ մեր ըստ տնտեսութեանն, եւ անսայ զվարիչն եւս ի Հոգւոյն եւ մարտնչիլ եւս ընդ չարին, զի եւ ի մկրտելոցն, յորժամ փորձութիւնք մեծագոյնք գայցեն ի վերայ, մի՛ խռովեսցեն կամ անյոյսք լիցին ի յաղթութենէ, այլ համբերել քաջութեամբ եւ ի միտ առնուլ, թէ կարգաւ իմն յետ մկրտութեանն գալոց են փորձութիւնք, զի վասն այնորիկ ուսէր¹ զսպառազինութիւն Հոգւոյն, զի կռուիցիս: Նա եւ ոչ իսկ արգելու Աստուած գեկեալ փորձութիւնն, զի ուսցիս, թէ որչափ ինչ եղէր զաւրագոյն եւ կայցես մնայցես հաստատուն արմատովք եւ մեծագոյն պարգեւաւքն հպարտանայցես, զի փորձութիւնք կարճեցեն ի մեծամտութենէն: Եւ յորժամ չհաւատայցէ չար դեւն քում ապստամբութեանն, հանդիսիւ փորձութեանն զգայցէ քում յաղթութեանն եւ գիտասցէ, թէ ամենեւին թողէր զնա, եւ զաւրագոյն քան զերկաթ պատրաստեցար եւ զընծայութիւն գանձուցն, որ հաւատացաւ քեզ, առնուցուս, զի եւ ոչ իսկ պատերազմէր քեզ, եթէ ոչ մեծագոյն պարգեւս տեսեալ էր ի քեզ: Եւ վասն այնորիկ ի սկզբանն դիմեաց ի վերայ Ադամայ, զի ետես զնա ի մեծագոյն պատիւ զարդարեալ: Սմին իրի եւ ընդ Յովբայ պատրաստեցաւ ի մարտ

¹ ուս՝ տողամիջում:

պատերազմի, զի մեծագոյն գովեստիւ տեսանէր պսակեալ զնա առ ի յամենեցունց Աստուծոյ. վասն այսորիկ պատուէր տայր յաղաւթս կալ, չմտանել ի փորձութիւն: Եւ յաղագս այսորիկ ոչ իւրով ի վայրապար ցուցանէ Քրիստոսի երթեալ յանապատն, այլ վարեալ ի Հոգւոյն՝ ըստ տնտեսութեանն: Եւ զի մի՛ ոք իւրով յամբայրս զիմիցէ երթեալ ի փորձութիւնս, այլ վարեալք¹ յայլոցն, [կացցէ] պնդակազմ արիաբար: Եւ տե՛ս ուր տանէր. ոչ շէնս, այլ յանապատ տեղիս, զի զթշնամին կամէր զբռամբ² ածել ոչ միայն քաղցիւն, այլ եւ անապատաւն տայր Նմա յաւժարութիւն մատնչել, զի յայնժամ գուն գործել զիմէ ի վերայ թշնամին, յորժամ գտցէ միայն կեալս: Այսպէս եւ կնոջն յառաջումն յարձակէր ի վերայ, զի մեկուսի եզիտ յառնէն: Իսկ մեր բազմութեանն ոչ ժպրհի յարձակիլ ի մարտ: Եւ վասն այնորիկ պարտ է մեզ շաղապատիլ սիրով, զի մի՛ զիւրաւ ըմբռնիցիմք ի ձեռս սատանայի: Արդ, գտանէր զՆա յանշէն անպատին, որպէս Մարկոս ասէ, թէ՛ «էր Նա ընդ գազանս» (Մարկ. Ա 13): Եւ արդ, տե՛ս որպէս մեղմեխանաւք մերձենայր, յորժամ գտանէր պատճառս պատերազմի. զի ոչ ասէ, թէ՛ յորժամ պահէր, այլ թէ՛ յորժամ քաղցեաւն, զի դու ուսանիցիս՝ եւ որպիսի ինչ բարի են պահք եւ կարծր գէն ընդդէմ թշնամւոյն, եւ ի միտ առցես, թէ՛ յետ մկրտութեանն ոչ փափկութեան եւ արբեցութեանն տալ զանձն, այլ պահոց եւ աղաւթից: Եւ զի Նա պահեաց, ոչ իբր կարաւտ, այլ զի զմեզ խրատեսցէ, զի մեղքն ի սկզբանէ յորովայնին ծառայ լինելոյ մտին. որպէս եթէ զախտացեալ ոք կամիցի բժշկել, պատուեր տայցէ, թէ՛ յորոց պատճառաց ցաւքն մտին, յայնմանէ պատրաստ կայցէ անձինն: Վասն այնորիկ յետ մկրտութեանն կարգեաց զպահսն, զի եւ զԱբամ անժուժկալութիւնն եհան ի դրախտէն եւ զՋրհեղեղն նոյն ած եւ ի՛ սովով զհրացան բարկութիւն յղփութիւն որովայնի ած, յորմէ պոռնկութիւնն բղխեալ արմատացաւ, որպէս ասէ Եզեկիէղ, թէ՛ «Այս է անաւրէնութիւն Սողոմոնայ, զի յամբարտաւանութեան եւ յղփութեան որովայնի զբաղեալ էին» (Եզեկ. ԺԶ 49):

(43ա) // ցան: Վասն այսորիկ Նա պահեաց զիս (40) աւր, զի զփրկութեան դեղն մեզ ցուցցէ: Եւ ոչ եւս յաւելու, զի մի՛ առաւելութիւն առ-

¹ Ձեռագրում՝ վարեաց:

² Ձեռագրում՝ գրոմամբ:

³ ի՛ տողամիջում:

նիցէ չհաւատալ գտնտեսութեան ճշմարտութիւնն, այլ որչափ Մովսէս եւ Եղիա կարացին երթալ ի կէտն՝ Աստուծոյ զաւրութեամբն ժոյժկալեալք: Եթէ յաւելեալ էր, հաւատայ ոք ոչ թէ ճշմարիտ մարդ եղեւ: Եւ զի յետ Խ (40) աւուր քաղցեալ, զի պատճառս թշնամւոյն տացէ մերձենալ ի մարտ, զի ցուցցէ մեզ, թէ որպէս պարտ իցէ կռուել մեզ եւ յաղթել: Սոյնպէս եւ աստ. յորժամ կամեցաւ ի դիմի յարկանել եւ զքաղցն եւս յայտնեաց եւ ի դիմի յարեալ միանգամայն երկիցս եւ երիցս զգետնեաց, ըստ Իւրում պատշաճ զաւրութեանն: Եւ արդ, սկիզբն արարեալ յառաջին կարգէն ըստ միողէ, բացայայտեսցուք առ ի յաւգուտ ձեզ: Եւ զի մատուցեալ փորձիչն ասէ.

Եթէ Որդի եւ Աստուծոյ, ասա քարանցս, զի հաց լինիցին, քանզի լուաւ ի վերուստ, թէ՛ «Դա է Որդի Իմ սիրելի» (Գ 17), եւ լուալ զայնչափ վկայութիւնս ի Յովհաննէ, որ ի վերայ Նորա: Եւ ապա ետես եւս քաղցեալ եւ ի վարանս մտեալ այնուհետեւ, զի ոչ մարդ լոկ հաւատայր վասն մեծամեծ վկայութեանցն ի վերայ Նորա եւ ոչ Որդի Աստուծոյ յանձին ունէր վասն քաղցեալ տեսանելոյն զՆա եւ անհնարին վարանս մտեալ տարակուսանաց բարբառս արձակոյր, որպէս մատուցեալ առ Ադամ զառաջինն այլ ընդ այլոյ խաւսէր, զի ի նմանէ ստուգեցէ զիրան: Նոյնպէս եւ աստ, զի չէր տեղեակ անճառ խորհրդոյն տնտեսութեան եւ ոչ գիտէր, թէ [ով] իցէ, [որ եկնն.] .այլ վարմս¹ մտաբերէր անկանել, զի մարթացէ ճանաչել զձած[կ]եալ խորհուրդն, որ չէր նմա յայտնի, ասէ. «Թէ Որդի եւ Աստուծոյ, ասա՛, զի քարինքս հաց լինիցին»: Եւ չասաց, // եթէ՛ քաղցեալ ես, այլ՝ «Թէ Որդի եւ Աստուծոյ»: Կարծէր յարգանաւք զմիտան գողանալ, վասն որոյ զքաղցն լռեաց, զի մի՛ թուիցի, թէ նախատանս նմա յառաջ բերիցէ, զի չէր տեղեակ մեծի տեսչութեանն: Եւ այնպէս հնարիւք զպատուոյն իմն ճառէր: Իսկ առ այս Քրիստոս զինչ առնիցէ. կարճէր զհպարտութիւն եւ յայտ առնէ, թէ չէր ինչ ամաւթոյ գործն եւ ոչ անարժան ինչ իմաստութեան Նորա: Եւ զոր նա մեղմեխանաւք ծածկէր, Սա զնոյն ի մէջ բերեալ յայտնէր. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»: Եւ արդ, մի՛տ զիր խարդախութեան չար եւ խորամանձ զիւին եւ տե՛ս՝ ուստի սկսանի կռիւ, եւ կամ զհարդ

¹ Ձեռագրում վարանս:

չմոռանայ զիւր արուեստն, զի որով զառաջին մարդն եհան ի զրախտէն եւ զայլս բազումս կործանեաց, ի պէս պէս չարիս անդի նիւթէ եւ աստ զնենգութիւնն առ ի յաւժարացուցանել ի կերակրոցն տենչանս, զի որպէս անդ յաճախեաց բարուրս, սոյնպէս եւ աստ նիւթէ վասն որովայնի, այլ Քրիստոս, զի յայտ արա[ս]ցէ, եթէ բռնաւորին ոչ կարէ հնազանդեցուցանել գործել զանպատշաճ իրս, այլ քաղցնուլ եւ հնազանդել կամացն Աստուծոյ: Եւ դարձեալ խրատէ եւս զմեզ, զի մի իւրիք հնազանդեցուք հակառակորդին, քանզի առաջին մարդն այսպի[սի] իրաւք գտաւ հակառակ Աստուծոյ եւ անց զաւրինաւք Նորա: Եւ զի զմեզ առաւելագոյնս ասասցէ թէպէտ եւ չիցէ զաւրինաւք անցանել յորժամ ուտիցեմք, որ ինչ ի նմանէն է հրամայեալ, սակայն եւ այնպէս մի հաւանիցիմք թշնամւոյն, եւ զինչ ասացից զաւրինաւքն անցանել, այլ թէպէտ եւ բարի ասիցեն դեւքն, մի՛ սակայն եւ այնպէս անսասցուք նոցա, որպէս եւ ինքն իսկ ըմբերանէր զնոսա, որ քարոզէին Որդի Աստուծոյ գոլ: Եւ Պաւղոս սաստէր այսոցն,

(44ա) որ //կոչէր զնա «ծառայ Աստուծոյ բարձրելոյ», զի թէպէտ զոր ասէրն բարւոք ասէր, սակայն յաճախ խոտէր զնա Պաւղոս եւ պարսպեալ ամբացուցէր ի նորա նենգութենէն, զի թէպէտ եւ զփրկութեան կրաւնսն քարոզէր, այլ նա կարկէր զնոսա, վասն այնորիկ ոչ ինչ բանիւք պարտ էր, այլ զինչ ասէր Քրիստոս. ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այսինքն՝ թէ կարող է Աստուած եւ բանիւք կերակրել զքաղցեալս: Բերեալ հին վկայութիւն ի Գրոց՝ խրատէ. զի թէպէտ եւ սովամահ լինիցիմք կամ այլ ինչ իրաւք չարչարիցիմք, սակայն ի Տեառնէ մի հեռասցուք: Եւ զի առաջին մարդն մոռացաւ զպատուիրանն զտուեալն յԱստուծոյ, եւ վասն այնորիկ ըմբռնեցաւ ի չարէն եւ կաղեցաւ մեղաւքն: Սորին վասն Տէրն յիշէ զպատուիրանն եւ ընդդէմ պարսաքարեալ ընձձէ զնա, որպէս Դաւիթ այն՝ զԳողիադ: Այլ զի չէր տեղեակ նա, թէ Որդի իցէ Աստուծոյ ոչ զի հաւատայցէ, այլ զի ի թերահաւատութիւն ածցէ եւ յանդիմանեացէ ոչ որպէս զառաջին մարդն խաբեաց. եւ յորժամ թերահաւատեցին յԱստուծոյ, յանդիմանեաց եւ լի արար ամաւթով, զի այլ ընդ այլոյ խոստանայ, զի վրիպեալ արկցէ ի թերահաւատութիւն եւ զոր ունիցին բարի, հանցէ ի նոցանէ: Այլ Քրիստոս ոչ նմա եւ ոչ հրէիցն, որ զխորհուրդս նորա ունէին, եցոյց նշանս, զի խրատեցէ զմեզ, զի թէպէտ եւ նեղիցիմք առն ինչ, մի՛ վայրապար հաւանեալ չարախաւսին, առնիցեմք ինչ ար-

տաքոյ հրամանացն Տեառն: Եւ տես զչար դեւն իբրեւ գիտաց, թէ չկարաց ոտն ունել նմա որով խաւսեցաւն ինչ, զիարդ հնարէր այլ իմն ոճիրս: Մինչդեռ քաղցն ի վերայ գայր ձգեալ յայլ ոմն փորձութիւնս ասէր: «Եթէ Որդի ես Աստուծոյ, արկ զՔեզ վերուստ ի վայր, զի գրեալ է, եթէ հրեշտակաց Իւրոց պատուիրեալ է // վասն Քո, զի ի բազուկս իւրեանց բարձեն զՔեզ»: Եւ ընդէր յամենայն փորձութիւնսն զայն դնէ, թէ՛ «Որդի ես Աստուծոյ»: Այլ որպէս յառաջնումն ասաց, սոյնպէս եւ աստ, զի որպէս յայնժամ չարախաւսեաց զԱստուծոյ ասելովն, թէ՛ «Գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր եւ լինիցիք իբրեւ զաստուածս» (Ծննդ. Գ 5): Եւ այսու կամէր ցուցանել, թէ խաբեալ իցեն յԱստուծոյ բարերութենէն: Սոյնպէս եւ աստ ասէ ակնարկելով, թէ վայրապար կոչեաց զքեզ «Որդի», եւ խաբեաց այն անուամբ: Եւ թէ չիցէ այսպէս ասէ, այլ ցոյց ինձ զհանդէս այն զաւրութեան, եւ զի որոց խաւսեցաւ ընդ նմա: Եւ ի մարգարէն եբեր վկայութիւն: Եւ զիարդ ոչ ցասեալ նմա Քրիստոս կամ զայրացաւ, այլ մեծաւ հանդարտութեամբ միւսանգամ եւս ընդ նմա ի Գրոց վիճէր: «Մի փորձեսցես զՏէր Աստուած քո», զի այսու եւս տացէ մեզ միտս, եթէ սատանայի ոչ նշանաւք ինչ, այլ հանդարտութեամբ եւ համբերութեամբ պարտ է յաղթել եւ ոչ ի ցոյց ինչ կամի պատիւ անձին համարել զյաղթութիւնն: Եւ արդ, միտ դիր, զի վկայութիւնն զոր եբեր անմտութեամբ եբեր, զի Քրիստոսի երկոքեան վկայութիւնքն ի դէպ էին եւ նո[րայքն] վայրապար եւ յանդէպս եւ ոչ այնպէս ի [...]՝ նոցին ի դէպ ինչ, զի ոչ եթէ, որ գրեալն է, թէ հրեշտակաց եւ իւրոյ պատուիրեալ է վասն քո, միտս ինչ տայցէ ընկենու զանձն եւ քարավրեժ առնել, զի եւ չէ իսկ պարտի առնուլ զբանն, այլ զայս ինչ այժմ ոչ յանդիմանեաց, թէպէտ եւ թշնամանաւք ասաց զբանն եւ կարի իսկ ընդդէմ, զի ոչ եթէ Որդւոյ Աստուծոյ իցեն այսպիսի իրք, այլ՝ սատանայի եւ դիւաց ընկենու զամենս ի խոնարհ: Իսկ Որդւոյ Աստուծոյ եւ զանգեալսն յարուցանել//, թէ պէտք ինչ չէին անդ զհանդէս զաւրութեանն ցուցանել, այլ ոչ զիւր անձն ընկենու եւ քարավեժ առնել պիտոյ էին, այլ զայլս յարուցանել եւ կեցուցանել, զի զանձինս քարավեժ ի խորխորատ ընկենուլ այնր բանսարկուի է, զի ի նոսա թագաւորեալ է մոլորութիւն: Առ Քրիստոս թէ-

¹1 քառ:

պէտ զայս ամենայն լուաւ ոչ ինչ յայտնեաց իմա զանձն, այլ իբրեւ զմարդ տայր պատասխանի, զի ասելովն, եթէ. «Ոչ միայն հացիւ կեց[ց]է մարդ» եւ միւսովն, եթէ «Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո» ոչ ինչ յայտ առնէր զանձն, թէ Աստուած իցէ, այլ եթէ ոք ի բազմաց իցէ: Եւ ընդ այն մի զարմանար, թէ զիարդ կայր ընդդէմ զաւրութեան նորա, մի անգամ եւ երկիցս, այլ զոր աւրինակ, որ կամիցին, սաստիկ տանջանաց ժուժկալ լինել, թէպէտ եւ ամենեւին յարիւն եւ յապաժոյժ կայցեն, սակայն ժուժկալեն՝ առ հետեւ նոցա: Նոյնպէս եւ նա. թէպէտ եւ յառաջին եւ յերկրորդ վիրացն խաւարեալ ցնորէր, սակայն եւ միւսումն անձինն տուեալ քաջալերս բարբառէր.

Եւ եհան զնա ի լեառն մի բարձր, եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս եւ ասէ. զայս քեզ տաց, եթէ երկրպագեսցես ինձ: Ասէր ցնա Յիսուս, երթ ի բաց սատանայ, զի գրեալ է. Տեսոն Աստուծոյ քո երկիր պագցես» (Դ 8-10).

Եւ արդ, այնուհետեւ ի հայր մեղանչէր. զնորայն ամենայն իւր առնէր, եւ զիւր անձն փութայր ցուցանել արարիչ ամենայնի: Յայնժամ սաստեաց, այլ մեղմով ասէ. «Երթ ի բաց, սատանայ» որ հրաման էր մանաւանդ եւ ոչ սաստ: Եւ անդէն ընդ ասելն, լինէր հալածական չարն, եւ յայլ ոչ թէ յաւելոյր փորձութիւնս: Եւ ընդե՞ր Ղուկաս¹ ասէ, թէ իբր «կատարեաց զամենայն փորձութիւնսն» (Ղուկ. Դ 13): Ինձ այսպէս թուի, եթէ (45բ) զգլխաւորացն յայտ առնէ «ամենայն» աս//ելով որպէսզի այլքն ամենայն ընդ սոքաւք իցեն փակեալ, զի յորժամ որովայնի ոք ծառաիցէ կամ ի սնոտի ոք փառասիրութիւն անձանիցի կամ ընչից յղփութեամբ, զոր եւ պղծոյն իմացեալ, զզաւրաւորագոյն յետոյ դնէ, զոր ի սկզբանէ երկնէր գայր, զի գայն ծնանիցի յետոյ, զի եւ կռուոյ սովորութիւն է զսաստիկ ինչ մեքենայս յետոյ ածել ի վերա, որպէս եւ Յովբայ զսաստիկ հարուածսն յետոյ ածեր ի վերա: Սոյնպէս եւ աստի յայնցանէ, որք ղիւրագոյն թուէին տկարք, սկսե[ա]լ գայր հասանէր ի զաւրաւորն: Եւ արդ, զիարդ պարտ է յաղթել նմա, որպէս եւ Քրիստոս խրատեաց յԱստուած ապաստան լինել, ոչ ի քաղցին նուաղիլ հաւատացելոյն պարտ է, զի կարող է եւ բանիւ կերակրել, եւ ոչ ի բարիս ինչ, զոր առնու-

¹ Տողամիջում աս:

ցումք, փորձել զտուրչն, այլ շատանալ վերին հաշուովն, եւ զմարդկան աւրինաց չունել ինչ փոյթ յանձին եւ զամենայն աւելորդս պիտոյիցն արհամարհել, զի չիք ինչ այնպէս, որ ընդ սատանայի կործանէ քան զշատիցն ցանգանալ եւ ազահուլթեան տենչալ, զի եւ այժմ ասեն ոմանք. զամենայն ինչ քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ: Որ մարդիկ են բնութեամբ եւ եղեն նորա գործիք, եւ ոչ այլ ինքն մի այլ եւ այլովք եւս ածէր ի սերունդս փորձութիւնսն: Զոր եւ Ղուկաս յայտ առնէ ասելովն, թէ՛ «ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի»: Եւ այսու ցուցանէ, եթէ յետ այսորիկ այլովք գործակցաւքն դիմեաց ի վերա նորա ի ժամ խաչին դպրաւք եւ փարիսեցաւք:

Եւ ահաւասիկ, ասէ, եկիմ հրեշտակք եւ պաշտէիմ զնա (Գ 11):

(46ա) Մինչդեռ ի պատերազմին էր ոչ ետ թոյլ հրեշտակաց յայտնել, զի մի՛ իբրեւ նոցա յիս աւգնականութեամբն երեւցի յաղթութիւնն այլ զթշն//ամին հալածէր եւ ապա յայտնէր զհրեշտակսն, զի եւ դու ուսանիցիս, թէ ի քում փորձութեանն հրեշտակք ընդունելոց են զքեզ եւ յարգեալ փառաւորեն, որպէս եւ զՂազար յետ հնոցի աղքատութեանն եւ սովամահն լինելոյ եւ պէս-պէս նեղութեանցն տարան հրեշտակքն ի գոգն Աբրահամու: Եւ զի նախ ի կերակրոցն արար սկիզբն պատերազմի, զի սայ է ախտ առաջին բնաւորեալ ի մեզ, զի քաղց ապականութիւն է եւ ցանկութիւն՝ ախտ ոգւոց. գերկոսին յղացաւ Ադամ եւ սերմանեաց ի մեզ: Վասն որոյ եւ Տէր նախ զայս կրեաց կամաւորութեամբ, զի լուծցէ զկիրս կարեաց, որ հարկեն զմեզ բռնաբար եւ բնաւորապէս քարշիլ զկնի պի[տ]ոյից մարմնոյ, որով կորոյս սատանայ զազգս մարդկան: Եւ զայս կրեալ Տեառն՝ ելոյժ զբռնութիւն նորա եւ յետ յաղթութիւն ամենայն առաքիներաց, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեն, այլ հոգւով սպանցեն զգործ մարմնոյ: Եւ յորժամ յաղթէ ոք որկորստութեան, դարձեալ սկսանի ախտ հպարտութեան, զոր սերմանեաց յԱդամ մինչեւ յԱստուածային պատիւն ամբառնա առ մահաբերեաց, զոր եւ ի վայր կործանեաց Տէրն խոնարհութեամբն, եւ իբրեւ յայս երկուս ախտս ոչ կարէր դրդուել սատանայ: Եւս ապայ այնուհետեւ յընչասիրութիւն գրգռէ, զի արծաթասիրութիւն է մայր ամենայն չարեաց, զոր եւ կռապաշտութիւն կոչեաց առաքեալ (Հմմտ. Կողոս. Գ 5), զի «ոչ ոք կարէ երկուս տերանց ծառայել» (Ձ 24): Յայնժամ չսկսանի

(46բ) մեծարել ի թագաւորաց եւ պատուիլ ի մեծամեծաց եւ զփառս աշխարհի մատուցանէ ցանձալ[ե]ացն փառաց կենցաղոյս ընդ նմին պահանջէ զերկրպագութիւն գողանալ ոմանս նոցա պատրանաւք փառաց կենցաղոյս: Եւ // եթէ յայսմ եւս անշարժ մնայցէ նահատակն յամաւթ լեալ թեեւ անագանիցէ լի ամաւթով, եւ ի հրեշտակաց ընկալցի եւ կատարի եւ յետ այնորիկ, իբր զնահատակ քաջ, մտցէ յառագաստն յուսոյ, որպէս Տէր ի հարսանիսն Կանայ զաղ[ղ]ացւոց իբր յաղթող պսակեալ:

Իբրեւ լուս Յիսուս, թէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս ետ եւ գնաց ի կողմանս գաղիղեացոց (Դ 12)

Եւ ընդէր ետ խոյս, զի այնու եւս ուսուցանէ զմեզ չխրոխտալ ընդդէմ փորձութեանց, այլ խորշել եւ տեղի տալ, զի այն ոչ վնասէ: յորժամ ոչ ոք յանդգնութեամբ տայցէ զա[ն]ձն ի նեղութիւնս, այլ, յորժամ ըմբռնիցի եւ կայցէ հաստատուն ի վիշտսն: Եւ դարձեալ զհրեական նախանձն ցածուցանէ: Գնաց ի Կափառնայումն, զի զմարգարէութիւնն եւս կատարիցէ եւ զվարդապէտսն ամենայն աշխարհաց որսայցէ, զի անդ շրջէին: Զի թէպէտ ի հեթանոսս երթալոց էր, սակայն ի հրէիցն կամէր առնուլ պատճառս երթալոյն ի հեթանոսս, զի եւ աստ եւս նենգելով զվարդապետն եւ ի բանդ արկանելովն եւ զնա եւս մերժէին երթալ ի Գաղիղեայ հեթանոսաց: Եւ զի ոչ միայն զմասնէ յուղայեան, այլ զամենայն ցեղիցն արկնարկէ: Տե՛ս, զիարդ զատանէ գտեղին մարգարէն. «Երկիր Զաբողովնի եւ Նեփթաղեմի ճանապարհ ծովուն յայնկոյս Յորդանանու Գաղիղէէ հեթանոսաց ժողովուրդ, որ նստէր ընդ խաւարի, ետես զլոյս մեծ գիտութեան» (Եսայի Թ 1-2) Իսկ խաւար ոչ գերեւելի, այլ զմոլորութեանն կոչէ, զի ասէ ոք. «Նստէին յաշխարհի եւ ի ստուերս մահու լոյս ծագեաց նոցա» (Եսայի Թ 2), զի ուսցի, թէ լոյսն ոչ այս լոյս է, եւ ոչ խաւարն երեւելի խաւար. զի ոչ պարզաբար լոյս ասէ, այլ թէ՛ «մեծ», որպէս այլուր, թէ՛ «լոյսն ճշմարիտ» (Ա Յովհ. Բ 8): Եւ զխաւարն ոչ դոյզն, այլ ստուեր [մահու], եւ զի// յայտ արասցէ, եթէ ոչ նոքա սիրեցին զնա եւ գտին, այլ սա ի վերուստ եցոյց զանձն, ինքն ծագեաց եւ լուսաւորեաց: Եւ ոչ նոքա ընթացան առ լոյսն, քանզի յանհնարին չարիս կէին, զի ոչ ասաց գնացին, այլ թէ՛ «նստէին», որ էր նշանակ անյուսութեան թէ՛ չէ ինձ հնար ազա-

տանալ ի խաւարէն, զի այնչափ պաշարեալ էին խաւարաւն, զի ոչ գնալ անգամ գիտէին:

Յայնմհետէ սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից (Դ 17).

«Յայնմհետէ», յորմէ արկին զՅովհաննէս ի բանդ: Եւ ընդէ՞ր ոչ ի սկզբանն ինքն քարոզէր, այլ կարաւտէր Յովհաննու վկայութեանն, զի վկայութիւնն նշանացն բացայայտ քարոզէր զնմանէ: Այլ զի այսու եւս պատիւ նորա յայտ լիցի, զի որպէս Հայր, սոյնպէս եւ սայ ուսուցանէ, զմարգարէսն, զոր եւ Զաքարիայ եւ Տրեշտակն գուշակէին¹, թէ՛ «Դու մանուկ մարգարէ բարձրելոյն կոչեսՆիր» (Ղուկ. Ա 76) զի մի՛ պատճառս ինչ տացէ անամաւթ ազգին Տրէից, զոր եւ ինքն իսկ ասէր, եթէ՛ «Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէին. դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասէին. ահա կերող եւ արբեցող» (Մատթ. ՓԱ 18): Եւ այն եւս զհարկէր այլում նախ ճառել զնմանէն եւ ապա իւր վասն իւր, զի եթէ յետ այնչափ զվկայութեանն Յովհաննու եւ մատամբն ցուցանելոյ ասէին, թէ՛ «Դու վկայես անձին քո, վկայութիւնն քո ոչ է ճշմարիտ» (Յովհ. Ը 13): Եթէ չէր այնչափ վկայեալ Յովհաննու որչափ եւս ամբարշտագոյն խաւսէին: Վասն այնորիկ ոչ քարոզեաց զյառաջ քան զնա եւ ոչ նշանաբար մինչեւ մատնեցաւ նա ի բանդ, զի այնու բաժանեսցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ արար նշանս, զի առ Յիսուս պահեցին արուեստք նշանացն, քանզի զՅովհաննէս // կարծէին, թէ՛ Քրիստոս իցէ, եթէ նշանս ինչ արարեալ էր, որչափ եւս առաւել կարծիքն հաստատէին: Եւ վասն այնորիկ նշանակէ Մատթէոս, թէ՛

Յայնմհետէ սկսաւ քարոզել Յիսուս (Դ 17):

Եւ զայս ինչ քարոզէր, զոր Յովհաննէս ուսուցանէր եւ ոչ ինչ վասն իւր ճառէր ի քարոզելն: Եւ այնպէս սիրելի առնէր զքարոզութիւնն, զի ոչ ինչ պատշաճ զնմանէ իմանաին: Վասն որոյ ոչ ինչ տաղտկալի առնէր զքարոզութիւնն որպէս զՅովհաննէս: Եթէ՛ «Ահաւասիկ տապար առ արմին դնի» (Մատթ. Գ 10, Ղուկ. Գ 9) Գեւ՛ «Որ ոչ առնէ պտաւղ, հատանի» (Մատթ. Գ 10) եւ՛ «Որոյ

¹ Չեռագրում գովեա ասէին, հետո ուղղված՝ գուշակէին:

հեծանոցն ի ձեռին է» (Մատթ. Գ 12) որ էր յիշատակ պատժոց եւ գեհնէնի: Այլ ախորժելի առնէ զքարոզութիւնն, զի եւ զերկնից արքայութենէն ճառէ եւ զպարգեւաց աւետիս տայ, որք լսեն նմա:

«Եւ մինչդեռ անցանէր Յիսուս առ ծովեզերքն գաղիղեացոց, ետես երկուս եղբարս՝ զՊետրոս եւ զԱնդրեաս, եւ կոչեաց զնոսա» (Դ 18ա).

Բայց Յովհաննէս այլ ազգ իմն ասէ զկոչումն նոցա, ուստի յայտ էր, թէ երկրորդ կոչումն էր այս, եթէ կամիցի ոք իմանալ, յայտնի, զի անդ ասէ. թէ՛ «Ձեւ եւս էր արկեալ զ[Յ]ովհաննէս ի բանդ, յորժամ կոչեաց զնոսա, եւ եկին» (Յովհ. Գ 24): Եւ անդ ասէ. Յետ մատնելոյն կոչեաց. անդ Անդրեաս կոչէ զՊետրոս, իսկ աստ զերկոսեանն Յիսուս: Արդ, ասէ. «Իբրեւ ետես Յիսուս զՍիմովն, զի գայր, ասէ զնա, դու ես Սիմովն, որդի Յովնանու, դու կոչեսձիր Կեփաս, որ թարգմանի վէժ» (Յովհ. Ա 42) Իսկ ասէ թէ ի վաղուց կոչեալ էր զանուն իբրեւ ետես զՍիմովն, որ անուանեալն Պետրոս (Դ 18բ): Նա եւ ի տեղւոջէն եւ յայլ բազում իրաց յայտ է եւ մանաւանդ յարագ յանձ առնելոյն, զի ամենայն ինչ վաղվաղակի թողին, զի ի վաղուց հետէ էին խրատեալք: Արդ, ասէ, թէ ի տուն իսկ չոգաւ Անդրէաս առ Յիսուս եւ բազում ինչ //լուաւ: Իսկ աստ լոկով բանիւ հաւանեցան երթալ զկնի: Եւ յայտ է, զի յառաջին գալոյն մեկնեցան իբրեւ տեսին զՅովհաննէս ի բանդ մտեալ եւ, սորա խոյս տուեալ, գնացին միւս անգամ յիւրեանց արուեստն: Եւ ապա անդ գտանէր զնոսա Յիսուս, զի որսային ձուկն, զի յորժամ մեկնիլն կամեցան ի նմանէն, գառաջինն չարգել, բայց ոչ բնաւ եթող, այլ անսայր եւ այնմ, եւ դարձեալ միւս անգամ գայր եւ առնոյր եւ առնէր իւր, որ եւ այս իսկ մեծի որսորդութեանն էր աւրինակ եւ մեծի հնազանդութեան նշանակ. թողուլ զգործն եւ զհայրն իւրեանց եւ երթեալ զհետ նորա որպէս Եղիսէ զկնի Եղիայի:

Եւ զի լուան աշակերտքն Յովհաննու, մինչդեռ խաւսերն նա Տեառն մերոյ, եւ թողին զվարդապետն իւրեանց եւ գնացին զկնի Տեառն մերոյ, զի ոչ կարէր ձայնն առ ինքն ունել զաշակերտսն: Եւ վասն այնորիկ առ Բանն առաքեաց զնոսա. պարտ իսկ է, յերեւել լուսոյ արեգականն, անցանել լուսոյ ճրագին: Նա եւ վասն այնորիկ իսկ կաց մնաց Յովհաննէս, զի սահմանեսցէ զմկրրտութիւնսն իւր մկրրտութեան Տեառն մերոյ: Եւ մեռաւ, եւ ապա, զի

ի մեռեալ անդ, նա եղեւ առաքինի եւ քարոզ, որպէս եւ յորովայն մաւրն իւրոյ՝ նշան դժոխոց: Եկին որսորդք ձկանցն եւ եղեն որսորդք մարդկան որպէս եւ գրեալ է. «Ահաւասիկ առաքեմ զորսորդս եւ որսայցեն զնոսա յամենայն լերանց եւ յամենայն բարձանց» (Երեմ. ԺԶ 16): Զի եթէ իմաստունս առաքեալ էր կամ հաւանեցուցին եւ կալան կամ խաբեցին եւ ըմբռնեցին, եւ եթէ մեծատունս դարձեալ առաքէր կամ պարտեցին կերակրեցին կամ կաշառեցին եւ տիրացուցին, եւ հզաւրս՝ դարձեալ նոյնպէս կամ զարմացուցին զաւրութեամբ իւրեանց կամ բռնադատեցին բռնութեամբք իւրեանց: Այլ// առաքեալքն եւ ոչ մի յայսցանէ ունէին: Շմաւովնիւ լուոյց ամենեցունց, զի տագնապեալ էր, զի ի ձայնէ աղախնոյ միոյ երկեալ, աղքատ էր, զի եւ զհարկն անգամ ընդ անձին իւրոյ ոչ եղեւ բաւական տալ զկէս սատերին: «Եւ ոչ ոսկի, ասէ, եւ ոչ արծաթ իմ չգոյ»: Եւ տգէտ էր, զի ոչ իբր ուրացաւն, զիտաց խորամանկութեամբ փախչել: Արդ, ելին որսորդքն եւ յաղթեցին հզաւրաց եւ մեծատանց եւ իմաստնոց. զարմանք մեծ. զի իբրեւ զհզաւրս ձգէին յուսումն վարդապետութեան եւ ոչ բռնութեամբ: Եւ իբրեւ աղքատք, զմեծատունս ուսուցանէին եւ, իբրեւ տգէտք, զիմաստունս եւ զխորագէտս աշակերտէին: Տեղի ետ իմաստութիւն աշխարհիս այնմ իմաստութեան, զի նա Ինքն է իմաստութիւն իմաստութեանց:

(48բ)

Ե

Եւ տեսեալ Յիսուսի ժողովորդ բազում, ել ի լեառն» (Ե 1).

(49ա) Նախ սկիզբն արար մարմնոյ բժշկութեան, զի ի ձեռն երեւելի բժշկութեանն, զոր աչաւք տեսանէին, բացին աչք ոգւոց կուրացելոցն, հաւատայցեն եւ ոգւոցն բժշկութեան, զի յետ յանցանացն նախ ցաւք մարմնոյ մտին յանիծիցն ցաւովք եւ դառն հեծութեամբ ծնանել եւ ի քիրտն երեսաց եւ ի մահ դատապարտել: Վասն որոյ նախ ի մարմնոյն սկսանի բժշկութիւնն եւ ապա տայ եւ ցաւոց բժշկութիւն: Եւ նախ Ինքն շրջէր ընդ գաւառս եւ ընդ գեւղս եւ բժշկեր զցաւս եւ զվէրս մարմ[ն]ոց, եւ ոչ պահանջեր հաւատս: Եւ իբրեւ լցան հաւատովք, եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք յայնժամ հանէ ի լեառն եւ յանապատ տեղիս, զի յամենայն կողմանց յապահովացեալք մտադիւրութեամբ ուշ դիցեն ընդունել եւ զոգւոցն բժշկութիւն, որպէս ի սկզբանն արար մինչ եհան յԵգիպտոսէ յանապատին տայր նոցա զկենաց պատգամսն, որպէս որ գմանկ//տի ուսուցանեն յանապատ տեղիս տանին, զի յամենայնս բազմաց ժողովեալ, զմիտս դիւրաւ ուսցին զոգւոցն փրկութիւն: Անդ ի լեառն հանեալ զնոսա խաւսէր այսու սաստկութեամբ ի խաւարէ եւ ի միգոյ, ըստ արժանի նոցա ստահակութեանն եւ կուրութեան: Իսկ աստ ի մարմնոյ անտի խաւսէր քաղցրութեամբ եւ վճիտ լուսով մաքրէր զմիտս նոցա, եւ բժշկէր զոգիս ժողովելոցն: Եւ նստեալ բազմեցաւ նոսխայաւրէն¹ առ ի բաշխել զկենաց կերակուրն ոգւոց, ըստ այնմ, թէ՛ Բանս կենաց յաւիտենականաց ունիս ընդդէմ մահաբեր երկանցն, զոր կրեաց ի բերանոյ աւձին՝ ի ձեռն ականջաց ունկնդրութեամբ խորամանձ չարին: Եւ բացեալ զբերանն բղխէր աղբիւրաբար զկենացն ջուր, զի խցցէ զբերան մահաշունչ աւձին: Եւ յայտ առնէր, թէ մինչ լուռն կայր, զործաւք ուսուցանէր մինչ բանայր բանիւ: Եւ սկիզբն առնէր յերանութեանցն, որ է պարառութիւն ամենայն բարեաց, եւ ոչ պատուէր տայր ի հրաժարականացն հեռանալ, որպէս Ադամ եւ ապերախտիցն Իսրաէլի, զի սոքա կատարեալք էին եւ հրաժարեալք ի կրից կենցաղոյս, երանականաւքն յորդորէր

¹ Չնուագրում՝ Գուսխայերէն:

գնոսա եւ յուսովք արդարութեանն հաստատէր ի գործս բարիս: Եւ, իբր ի դիտանոցէ, մատամբն ցուցանէր զերանական կեանսն անմահական դրախտին: Եւ մինչ մարմնոցն բժրչկութեան էր սահման, ինքն շրջէր եւ բժրչկէր, եւ մինչ բազում եղեն ժողովք ի միում տեղւոյ նստէր, եւ կենարար բանիւն զոգիսն բժրչկէր: Եւ զայն ոչ ի շէնս, այլ անապատ տեղիս, զի մարդահաճութիւն մեծարգութեան ի բաց մաքրեսցէ ի մէնջ եւ յայտ արասցէ, թէ նա է

(49բ) արարիչ մարմնոց// եւ հոգւոց, զի երկոցունցն տանէր խնամս բժրչկութեան, եւ ոչ ընդ ժողովրդեանն խաւսէր, այլ ընդ աշակերտսն, զի մի ծանր թուեսցի աշխարհասիրացն աղքատութեան աւրէնս, այլ գաշակերտսն երանէ, որք հրաժարեալ էին յամենայն յնչից եւ աղքատութեամբ շրջէին, եւ նոքաւք յորդորէր զամենեւին ընդունել զաղքատութեան երանութիւնն: Որպէս եւ Դաւիթ յեր[ան]ութենէն սկսանի զսաղմոսերգութիւնն՝ առ ի յորդորել զլսողն յաւժարութեամբ զհետ երթալ երանականացն գործոց: Վասն որոյ եւ Տէրն հանէ զժողովուրդն ի լեառն բարձր առ ի յորդորել զնոսա զհետ երթալ երանութեանցն: Եւ նախ սկիզբն առնել նշանացն, զի լինիցին մաւտաւորքն ականատեսք: Եւ զայն հաստատէ Յովհաննէս ասէ. «մտանէր ստէպ ի ժողովուրդս եւ ուսուցանէր եւ առնէր նշանս» (Յովհ. 2 14), զի եւ ի ժողովուրդսն ստէպ մտանելով ուսուցանէ, եթէ ոչ Աստուած ոք հակառակ Աստուծոյ է կամ մոլորեցուցիչ, այլ հաւան եւ միաբան Հաւր, եւ ստեպ նշանք յառաջնումն յայն սակս լինէին, քանզի յորժամ ինչ մի նոր եւ չքնաղ կամ առաքինութեանս ինչ աւրէնս կամիցի Աստուած յաշխարհի ցուցանել, նըշանս սովոր է առնել, զի լինիցին առ հաւատչեայ իւրոյ զաւրութեանն առ այնոսիկ, որք ընդունելոցն իցեն զաւրէնսն: Այսպէս եւ ի ժամանակի յորժամ զմարդ առաջին առնելոց էր, նախ զաշխարհս ամենայն հաստատեաց, եւ ապա ետ նմա զաւրէնսն ի դրախտին: Եւ յորժամ Նոյի ետ տալոց աւրէնս, եւ անդ նախ մեծամեծ սքանչելիս եցոյց, զի վերըստին իմն դրորդէին եւ նորոգէին արարածք: Եւ ահագին համատարած ծփեալ ծովն ունէր զտարի մի ողջոյն զաշխարհ: Եւ

(50ա) այսպէս մեծասքանչ նշանաւք ապրեցուցանէր// ի կարա (°) ձմեռն ձմերայնոյն զարդարն: Եւ Աբրահամաւ բազում նշանս ցուցանէր. զյաղթութիւն, զոր յաղթեաց թագաւորացն ի պատերազմի, զհարուածսն, որ ած վասն նորա ի վերա փարաւովնի, զի բազում անգամ ի բազում վշտաց փրկեաց զնոսա: Եւ հրէիցն, յորժամ տալոց

էր զաւրէնսն, մեծամեծ նշանս եւ շքանչելիս եցոյց եւ ապա ետ զաւրէնսն: Նոյնպէս եւ աստ, քանզի բարձրագոյն առաքինութիւնս մուծանէր յաշխարհ, զոր ոչ երբէք ուրեք լուեալ էր, պիտոյ էր եւ նշանացն ընծայութիւն, զի զոր ինչ բանիւքն ասիցէ զնոյն եւ նշանաւքն հաստատեսցէ, քանզի զարքայութիւն երկնից քարոզէր, որ ոչ ուրեք երեւէր, վասն այնորիկ երեւելի նշանաւքն զաներեւոյթան հաստատէր: Եւ տե՛ս զաւետարանիչն, զհարդ ոչ զի մի նշանացն ուրոյն պատմէ, այլ սակաւ բանիւք զամենայն միանգամայն նշանակէ: Մատուցանէին,~ ասէ,~ առ Նա զամենայն ախտաժեռք, որք ի պէս պէս ցաւս եւ հարուածս նեղեալ էին, եւ դիւահարս, եւ զլուսնոտս, եւ զանդամալոյծս, եւ վաղվաղակի բժշկեաց զնոսս (Մատթ. Դ 24):

Այլ զոր ինչ խնդրելն պարտ է, այս է, թէ ընդէ՞ր ոչ պահանջեաց ի նոցանէ հաւատս, որպէս եւ յետոյ ասէր ցայլսն, ասէ. «Հաւատայք, եթէ կարող եմ ես առնել զայս ձեզ» (Մատթ. Դ 28) քանզի չեն յայնժամ զիւրոյ զաւրութեանն ցուցեալ զհանդէս: Եւ այլագգ եւս, զի եւ գալն իսկ եւ մերձենալ ոչ սակաւ ինչ հաւատոյ ցուցանէր զնշանակ: Քանզի ի բացարձակ տեղեաց բերէին զհիւանդս, զի եթէ ոչ մեծամեծս իմանաին զնմանէ, զհարդ ի հեռաւոր տեղեաց գային եւ բերէին առ նա, եթէ ոչ մեծամեծս ինչ հաստատեալ էին զնմանէ: Վասն որոյ տանի զնոսս անապատ տեղիս եւ ի յորդոր//ականացն սկսանի, ասելով այսպէս. Երանի աղքատաց հոգւով (Ե 3):

Աստ զխոնարհսն կոչէ «աղքատ», զի ոչ պարզաբար ասաց «աղքատս», այլ յաւելուածովն. թէ՛ «հոգւով». յայտ առնէ զխոնարհսն սրտիւ: Եւ ոչ վայրապար խոնարհ, այլ՝ հոգւով եւ շնչով. զի են խոնարհք, որ ոչ կամաւ, այլ՝ ի բռնութենէ: Թողեալ զայնպիսիսն, որ կամաւ եւ յաւելութեամբ խոնարհին, երանէ: Եւ ընդէր ոչ խոնարհ ասէ, այլ՝ աղքատս. զի այս քան զնայն յոլովագոյն էր, եւ աստ աղքատս, որ ի հրամանացն Աստուծոյ երկնչին կոչէ, զոր եւ Եսայիաս յայտ առնէ թէ՛ «Յո՞ հայեցայց, թէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որք դողան ի բանից իմոց» (Եսայի ԿԶ 2): Եւ ոչ զվայրապար զցածութիւն մտացն խնդրէ, այլ զյոլովագոյն բեկումն սրտին: Վասն որոյ ասէ Դաւիթ, թէ՛ «Պատարագ Աստուծոյ՝ հոգի բեկեալ» (Սաղմ. Ծ 19) Եւ երեք մանճունքն ասէին.

«Այլ անձամբք բեկելաւք եւ հոգւովք խոնարհութեան¹ ընդունելի լիցուք» (տե՛ս Դան. Գ 39, Ա Տիմ. Գ 6) Զայնպիսիս Քրիստոս երանէ այժմ քանզի յաճախութիւն չարեաց, որ զաշխարհս ապականեցին, յամբարհաւաճութենէ մտին: Վասն զի սկիզբն չարին ամբառնալն էր, եւ վասն նորին բանսարկու կոչեցաւ, որ յառաջն չէր այսպիսի, զոր եւ Պաւղոս բացայայտէ մեզ, թէ՛ «Հպարտացեալ ի դատաստան սատանայի անկցի»: Քանզի առաջին մարդն ուսուցեալ սնտի յուսովքն թշնամւոյն պատրանաւք, Հպարտացեալ լինէր, մահկանացու կարծէր լինել Աստուած, եւ, որ ունէրն, կորոյս, զոր եւ Աստուծոյ դրսովեալ զանմտութիւնն ասէր հեճոյնելով. «Ահաւաղիկ Ագամ եղեւ իբրեւ զմի ի մէնջ» (Ծննդ. Գ 22) եւ յետ այնորիկ, որք ամբարտաւանութիւն մտաբերեցին կործանեցան, որք զուգական Աստուծոյ տենչացան լինել, զի այս է արմատն եւ բղխումն ամենայն չարեաց, վասն որոյ [եւ ըստ] // (51ա) իւրաքանչիւր ախտիցն զդեղս կազմէ, զի իբրեւ հիմն ինչ հաստատուն զայս նախ աւրինագրէ: Զի յորժամ սա հաստատուն եւ զգուշութեամբ ի մէջ կայցէ, ապա եւ զայն ամենայն անխեթ ի վերա դնէ շինողն: Իսկ եթէ սայ ի միջոյ բառնայցէ. թէպէտ եւ մինչեւ յերկինս բարձրանայցէ առաքինութիւնն, ամենայն դիւրաւ քակուի եւ անկցի, թէպէտ պահք իցեն կամ աղաւթք եւ սրբութիւնք եւ ամենայն առաքինութիւնք առանց սորա խարխաւեալ կորնչին: Որպէս փարիսեցոյն դիպեցաւ, զի յետ հասանելոյն նորայ ամենայն գլուխ առաքինութեանցն կորուսալ զամենայն իջանէր յատակս չարութեանցն, զի որպէս աղբիւր ամենայն չարեաց ամբարտաւանութիւն է, նոյնպէս խոնարհութիւն սկիզբն եւ աղբիւր ամենայն բարութեանցն է: Վասն որոյ անտի սկիզբն առնէ արմատաքի խլել զամբարտաւանութիւն ի մտաց լսողացն: Եւ զի աշակերտքն թէպէտ եւ յայնժամ ոչ ունէին պատճառք Հպարտութեան, զի աղքատք էին, այլ ի դէպ էր յետոյ, յորժամ զմեծամեծ նշանս գործէին Հպարտանալ եւ նոքաւք զայլս եւս խրատէր, որք ի նայն հաւատալոցն էին, նա եւ բազմութիւն ժողով, այն որ շուրջ վարդապետաւ էին, ածէր զնոսա ի մեծամտութիւն: Եւ յետ այս, յորժամ յամենայն աշխարհէ զպատիւ ընդունելոց էին: Վասն որոյ վաղվաղակի խլեց այսպիսի որոմն ի մտաց նոցա, եւ ոչ ի կարգի խրատուց եւ հրամանաց ճառէ, այլ՝ զերանութեանցն,

¹ Ձեռագրում՝ ակռապանովք փիս խոնարհութեան:

(51բ) զի անտ աղտ սկզբանն առնիցէ եւ ամենեցուն հորդէ ճանապարհ, զի ոչ ասէ թէ այս անուն կամ այն, այլ թէ՛ ամենեքեան եւ, որ առնիցեն զայս, երանելիք են: Այնուհետեւ առաջ մատուցեալ ի միւս եւս պատուիրանն, որ իբր// հակառակ իմն թուէր վճիռն համարէն ամենայն տիեզերաց, որք զուրախալիցան երանելիս համարէին եւ զայնոսիկ, որ ի տրտմութեան եւ յաղքատութեան եւ ի սուգ իցեն հեք եւ թշուառականս: Իսկ նա աւանիկ սոցա փոխանակ, երանէ զսգաւորս:

Երանի,~ ասէ,~ սգաւորաց (Ե 4).

Թէպէտ եւ ամենեքեան եղկելիս համարին, այլ նոքա երանելիք են: Եւ վասն այնորիկ յառաջն բազում նշանս արար, զի յորժամ այսպիսի ակրէնք առնիցէ, հաւատալի լիցի: Եւ ոչ վայրապար սգաւորսն երանէ, յայլ՝ որ վասն մեղացն իցեն ի սուգ. զի աշխարհ սուգ Պաւղոս գործող մահու ասաց, իսկ ըստ Աստուծոյ տրտմութիւնն ի փրկութիւն անզղջանալի ասաց (Տե՛ս Բ Կորնթ. Է 10): Եւ սա այսպիսեացս տայ երանի, որք ոչ վայրապար, այլ յոյժ իցեն ի տրտմութեան եւ ի սուգ, զի այսպիսի պատուիրան զգաստութեան է վարդապետ: Եւ զփոխարէնսն յաւելու, թէ «նոքա մխիթարեսցին» ե՛լ աստ իսկ, ե՛լ անդ: Եւ զի տաղտուկ եւ ծանրագոյն պատուիրանն, որ կարողն էր թեթեւագոյնս առնել, զայն խոստանայր տալ, զի թէ մխիթարիլ կամիս, ի սուգ մտանիջիր, զի. զոր Աստուած մխիթարէ, ամենայն տրտմութիւնք հալածեալ լինին յոգւոցն, զի յոյժ առաւելութեամբ քան զվաստակս կայ զփոխարէնն Աստուած, զի որք վասն մեղացն ի սուգ իցեն ոչ միայն զմեղսն թողու, այլ եւ երանելիս եւս առնէ, եւ բազում մխիթարութեանց է արժանիս եւ սգալ ոչ միայն վասն իւր մեղացն հրամաէ, այլ եւ վասն այլոց մեղաց, որպէս առաջին սրբոցն էր սովորութիւն:

Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցին գերկիր (Ե 5).

Ոմանք իմանալի իմն «երկիր» ասեն. այլ չէ այնպէս, զի ոչ գտանի ի Գիրս իմանալի ասել «գերկիր», այլ ըստ բանին հատուցումն երեւելի, ըստ այնմ, թէ՛ «Պատուեա՛ զհայր քո եւ մայր, զի քեզ լինիցի եւ երկայնակեաց իցես» (Ել. Ի 12). եւ Տէրն, թէ՛ «Այսաւր ընդ Իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43) Զի ոչ միայն հանդերձելաւքն, այլ եւ մաւտաւորաւքն յորդորէ զթանձրա-

միտան, զի որպէս որ յանդուգն իցեն, աստէն տանջին եւ անդէն, սոյնպէս եւ հեզքն աստէն պատուին եւ անդէն, ըստ Տեառն բանի զհարիւրապատիկն աստէն առնուն եւ բիւրապատիկն՝ անդէն:

Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան (ե 6).

Աստ կամ զամենայն առաքինութեանցն ասէ կամ զմիոյ մասնէ, որ ընդդէմ ազահուութեանն իցէ, զի վասն ողորմութեան պատուիրելոց էր, ցուցանէ, եթէ որպէս ողորմել պատշաճիցէ, ոչ յապշտակութենէ կամ յազահուութենէ, այլ երանէ զայնոսիկ, ոյք արդարութեան փափագեալ իցեն, եւ ոչ վայրապար ինչ յաւժարել, այլ զի եւ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեանն, զի ազահք ոչ այնչափ կերակրոց եւ ըմբելեաց ցանկան որպէս ընչից եւ երեւելի հանդերձից: Արդ, զայսպիսի տենչանս ի բաց հրամայէ թաւթափել: Դարձեալ երեւելի հատուցմունս ասէ, զի նոքա յագեսցին, զայս վասն կարծեաց բազմաց ասեն, որք կարծեն, թէ ազահէն ընչաւետս առնէ: Սա զնորին հակառակս դնէ, թէ արդարութիւն է, որ առնէ զայն: Եւ արդ, մի՛ յորժամ զարդարութիւնն գործիցես, յաղքատութենէ երկնչիս, զի յապշտակողն է, որ յամենայնի անկանիցի: Եւ որ արդարութեան ցանկայ, այն է, որ զամենայն ինչ ունիցի զգուշութեամբ:

Երանի,~ ասէ,~ ողորմածաց (ե 7):

(52բ) Ինձ այնպէս թուի, թէ ոչ միայն, որ Ռնչիւքն ողորման [ասիցէ], այլ եւ՝ որք իրաւք ինչ աւգնական լինին. զի բազմ//աղիմի են ողորմութեանն աւրինակք եւ ընդարձակ է պատուիրանս այս: Զի՞նչ է հատուցումն, ասէ. «Զի նոքա ողորմութիւն գտցեն»: Եւ թուի, թէ հասարակաց իցէ առաքինութեանն հատուցումն, բայց առաւել յոյժ մեծ է քան զուղղութիւնն, զի նոքա ողորմութիւն իբրեւ զմարդիկ առնեն, եւ ինքեանք ողորմութիւն գտանեն յամենեցունցն Աստուծոյ, որ անհամեմատ է մարդկային ողորմութեան, զի աստուածական է:

Երանի ոյք սուրբ եւ սրտիք, զի նոքա զԱստուած տեսցեն (ե 8).

Ահա դարձեալ հոգեւոր հատուցումն. «սուրբ» զայն կոչէ, որ զամենայն առաքինութիւնս կատարեն եւ ոչ ինչ զիտիցեն խեղճ զանձնէ եւ որ ցածութեամբ եւ զզաստութեամբ վարիցին, զի չիք ինչ քան զայն պատշաճագոյն առ ի զԱստուած տեսանելոյ, իբր

զայս առաքինութիւն: Որպէս Պաւղոս ասէ. «Զխաղաղութեան զհետ երթայք եւ զսրբութեան, զի առանց այսր ոչ ոք տեսանէ զԱստուած» (Եբբ. ԺԲ 14): Իսկ երեսս աստ զմարդկեղէն կերպարանաց նորա ասէ, զի ոչ ոք Աստուածութեանն կարէ տեսանել: Եւ զի բազումք ողորմութիւն առնեն եւ չզրկեն զոք եւ չյապշտակեն, բայց պոռնկին եւ պղծին, զի ցուցցէ, թէ չէ բաւական առաջինն միայն, յաւելու եւ զայն եւս, որպէս Պաւղոս մակեդոնացուոցն վկայէր, թէ ոչ միայն ողորմութեամբն առատանան, «այլ եւ զանձինս եւս ետուն նախ Տեառն եւ ապա՝ մեզ» (Բ Կորնթ. Ը 5):

Երանի խաղաղարաց (Ե 9ա).

Աստ ոչ միայն զկռուելն արգելու, այլ զի եւ զայլս եւս, որք կռուեցին, ածել ի հաշտութիւն: Դարձեալ եւ աստ եւս տրիտուր խոստանայ.

Զի անքա,- ասէ,- որդիք Աստուծոյ կոչեսցին (Ե 9բ).

Նա եւ Միածին իսկ Որդւոյն Աստուծոյ սոյն գործ եղեւ, զի ժողովեսցէ զցրուեալսն եւ ածցէ ի հաշտութիւն զպատերազմողսն (53ա) //: Եւ զի մի՛ կարծիցես, թէ ամենայն ուրեք խաղաղութիւնն բարեաւք իցէ, յարէ նոյն, թէ՛

Երանի ոչք հալածեալ իցեն վասն արդարութեան (Ե 10).

Այն իսկ է յորժամ վասն առաքինութեան կամ վասն այլոց վերակացութեան կամ վասն աստուածապաշտութեան ոք ճգնիցի, քանզի արդարութիւն միշտ զամենայն առաքինութիւնս ոգւոցն սովոր են կոչել Գիրք: Եւ աստ եւս հոգեւոր հատուցումն դնէ, «զի նոցա է,- ասէ,- արքայութիւնն երկնից»: Ի ժամանակի իբրեւ տայր Տէր մեր զերանութիւնս ընդ աշակերտսն հայէր.

Բարձ,- ասէ,- Յիսուս զաչս Իր առ նոսա եւ սկսաւ ասել. երանի աղքատաց յոգիս իրեանց (Ե 3).

Աղքատք, որք թարթափեցան յնչից իւրեանց եւ զանձեցին յոգիս իւրեանց: Իսկ սոքա միմեանց հակառակեն՝ ըստ առաքելոյ սահմանի, թէ յղփանայ մարմին ընչիւք, լնու զոգիսն ամենայն չարեաւք (Հմմտ. Հռոմ. Ը 6, ԺԳ 14, Գաղատ. Ե 17): Իսկ յորժամ յաղթահարէ հոգի զմարմին եւ թափուր առնէ յամենայն յեշտու-

թեանց եւ ի մարմնական զբաղմանց, աղքատանայ ինքն ի չար արգասեաց եւ փարթամանայ հոգեւոր գանձիւք: Արդ, զայսպիսի աղտաքս երանէ Տէրն, որոց ոգիքն են աղքատք յամենայն չարեաց եւ լի ամենայն արդարութեամբ, զի մարմնոյ փարթամութիւն ծանրացեալ ի վայր քարչէ յանդունդս կորըստեան, որպէս կապար ի ջուրս սաստիկս, իսկ փարթամութիւն ոգւոցն ի վեր թռուցանէ իբր զամպս եւ իբրեւ զձագս աղաւնեաց: Վասն որոյ ոչ պարզաբար երանեաց զաղքատս, այլ յաւել` «զհոգւովն», որոց ոգիքն աղքատ ի չարեաց են եւ փարթամք` արդարութեամբ: Եւ զի միմիայն միով առաքինութեամբ բարձրասցին, յաւել եւ զմիւսն եւս.

Երանի,- ասէ,- հեզոց (Ե 5)

(53բ) «Հեզ էր Մովսէս, քան զամենայն որդիս ազգին իւրոյ» (Թիւ. ԺԲ 3): Եւ` «Յո՞յ հայեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնար//հս սրտիւ» (Եսայի ԿԶ 2). եւ` «Յիշեայ Տէր զԴաւիթ եւ զհեզութիւն նորա» (Սաղմ. ՃԼԱ 1). եւ` «Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց» (Մատթ. ԺԱ 29) Զի բարկութիւն ակտ է բնական եւ ընդոյծին, որ իբր վառի, հրդեհեալ ապականէ զամենայն բնութիւն` ամբոխեալ զաւրէն մրրկի, որ խռովէ զծով: Որ ոք հեզութեամբ շիջուցանէ զնա, պսակի ընդ երկից մանկանցն, որ շիջուցին զբաբեղովնական հնոցն (Տե՛ս Դան. Գ 20-51): Եւ հատուցումն, ասէ, ժառանգել զերկիր աստէն զգուշացեալ կենաւք խաղաղականաւք կեցեն երանեալք յամենեցուն, եւ զերկիրն կենդանեաց յերկրորդումն ժառանգեսցեն (Հմմտ. Սաղմ. ԼԶ 11):

Երանի, որ սգայցեն այժմ (Ե 4).

Զի բոլոր աշխարհս անսգաբար ոչ գիտեն զինչ գործեն եւ յորպիսի յիմարութիւն ըմբռնեցան: Արդ, որ սգան¹ զկեանս իւրեանց եւ զմտաւ ածեն, թէ յորպիսի բարձրութենէ խոնարհեցան եւ ափշեցան, նոքա միշտ ի սուգ տխրութեան կան, եւ կատարի այն` «Թէ ընդ Նմին չարչարիմք, ընդ Նմին եւ փառաւորիմք» (Հռոմ. Ը 17) զի չարք անզգաբար կեան այժմուս զաւրէն անասնոց. ըստ Դաւթա, թէ` «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հա-

¹ Ձեռագրում՝ զգան:

լասարեաց անասնոց անզգայից» (Սաղմ. ԽԸ 13), իսկ իմաստունք զգացեալք ընդունին զերանութիւն ի Տեառնէ:

Երանի,~ ասէ,~ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան (Ե 6).

Իբրեւ զայն, զի ասէ. ոչ քաղցեալ հացի եւ ծարաւի ջրոյ, այլ՝ բանից Տեառն: Որպէս որք յոյժ սովեալ իցեն, մոռանան զոսկի եւ արծաթ եւ զամենայն փառս աշխարհի եւ բաղձան միայն ընդ զպէտս քաղցին, սոյնպէս քաղցեալք արդարութեան պատուիրանին արհամարհեն զամենայն կեանս աշխարհի եւ ոչ երբէք յագին բարեպաշտութեամբ կենաւք, մինչ են յաշխարհի, այլ յորժամ հասցեն ի կէտն եւ ընգալցին զերանութիւն ի Տեառնէ, թէ՛ «Նոքա յագեսցին»:

(54ա) Երանի ողորմ/աճաց (Ե 7).

Զի չիք այլ ինչ յառաքինութեանց, որ ի նմանս Աստուծոյ առնէ զմեզ, որպէս ողորմածութիւն, որ ի սրտէ լինի, եւ ոչ յերեւելիս, ըստ Տեառն հրամանի, թէ՛ «Եղերո՛ւք նմանողք Հաւրն ձերոյ, որ հասարակաբար եւ ոչ խրատանաւք ծագէ զարեգակն եւ ածէ անձրեւ չարաց եւ բարեաց, արդարոց եւ մեղաւորաց» (Մատթ. Ե 45): Եւ յայսմիկ եղերո՛ւք դուք կատարեալք, որպէս Հայրն ձեր երկնաւոր, եւ գտջիք հատուցումն ողորմութեան հանդիպեալ, զի նմա նման լինիցիմք, որպէս ասաց Յովհաննէս:

Երանի, որ սուրբ իցեն սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն (Ե 8).

Այն իսկ է, զոր խնդրեաց Դաւիթ. «Սիրտ սուրբ հագեա՛ յիս, Աստուած՝» (Սաղմ. Ծ 12): Արդ, որոց սիրտ իւրեանց սուրբ է, եւ նոքա զԱստուած տեսանեն, որպէս Մովսէս, զի սիրտն անդամ ոգւոյն է եւ ոչ դադարէ ի խլրտելոյ եւ ի կենաց: Եւ եթէ սուրբ իցէ, առաքէ զսրբութիւն իւր ամենայն անդամոց: «Ի սրտէ,~ ասէ,~ ելանեն ամենայն չարութիւնք խորհրդոց» (Մարկ. Է 21): Եւ Տէրն ասէ զարատ հայեցողացն, թէ շնացաւ ոչ զգայարանաւքն, այլ՝ ի սրտին գործարանի (Մատթ. Ե 28), զի նա շտեմարան ընդունող ամենայն չարեաց արտաքուստ ի ձեռն տեսարանաց եւ աղբիւրաբար բղխէ զչարիսն, զոր ընկալաւ արտաքուստ: Եւ նոյն լինի աղբիւր կենաց՝ ընդունելով ի պատուիրանացն Աստուծոյ զշնորհս Հոգւոյն, եւ լինի խաղաղասէր առ ամենեսեան: Վասն որոյ յարէ ի նոյն, թէ՛ Երանի խաղաղարաց (Մատթ. Ե 9) զի նմանեն Որդոյն

Աստուծոյ, զի նա արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի ոչ դոյզն¹ սգաբար, այլ՝ արեամբ Խաչին Իւրոյ, որպէս երգէին հրեշտակք. «Փա՛ռք ի բարձունս երկնաւորաց եւ խաղաղութիւն մարդկան յԱստուծոյ» (Ղուկ. Բ 14) եւ պատուէր տայր աշակերտացն. «Յոր տուն մտանիցէք, ասասջիք նախ, թէ՛ «ողջո՞յն տանս այսմիկ» (Մատթ. Ժ 12, Ղուկ. Ժ 5) Արդ, խաղաղասէրք որդիք Աստուծոյ են, որպէս ռազմասէրք² որդիք սատանայի, զի նա արկ զխռովութիւն ի մէջ մարդկան եւ բանսարկու անուանեցաւ: Եւ խռովասէրք որդիք սատանայի են եւ կատարիչք կամաց հաւրն իւրեանց, որպէս որդիք Աստուծոյ կատարիչք են կամաց Հաւրն երկնաւորի, ըստ այնմ, եթէ՛ «Որք Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ» (Հռոմ. Ը 14): Եւ զի մի՛ կարծիցես, եթէ ամենայն ուրեք խաղաղասէրն լինել բարի իցէ, վասն որոյ յարէ ի սոյն, թէ՛

Երանի իցէ, ոչք հալածեալ իցեն վասն արդարութեան (Ե 10).

Իբր գայն, զի ասէ. «Հալածիցեն զձեզ եւ մատնիսցեն» (Մատթ. Ե 11): Եւ ոչք կամիցին կեալ աստուածպաշտութեամբն Յիսուսի Քրիստոսի, եւ նոքա ի հալածանս կայցեն: Վասն որոյ եւ առաքեալքն իբրեւ անարգեցան, ուրախ եղեն, ասէ, զի արժանի եղեն, ասէ, անարգանս կրել վասն անուան Նորա: Որպէս պատուիրեաց նոցա, ասէ. «Յնծացէ՛ք եւ ուրա՛խ լերուք յայնմ աւր, զի վասն Իմ անարգեցայք եւ ընդ Իս փարաւորիջիք» (Մատթ. Ե 12):

«Վա՞[յ] ձեզ մեծատանցդ» (Ղուկ. Զ 24)~ ասէ, եւ ոչ եկաց յայսմիկ, զի մի՛ մնասցէ նա առ ամենայն մեծատունս, զոր աւրինակ իբրեւ ասաց. Երանի աղքատաց (Ե 3) յաւել, թէ՛ «յոգիս իւրեանց», զի մի՛ ձգեսցի նա ի վերայ ամենայն աղքատաց: Սոյնպէս եւ յասելն. «Վա՞յ ձեզ մեծատանցդ», այս[իւնքն]՝ որոց այս եւեթ իցեն խնդրուածք իւրեանց եւ միտք իւրեանց թաղեալ իցեն ի սմա: Արդ, ոչ եթէ անուամբք բարեաց եղեն խոստացեալ երանութիւնքն, այլ՝ առնելեաց երանութեանցն զանուանս ամենայն ոք կարէ ստանալ, որովք պատճառանաւք եւ իցէ, այլ գործ անուան առ այն մերձ է, որ ինչ կամի, եթէ իցէ ի վերայ

¹ Չեռագրում՝ գուզն փիս դոյզն:

² Չեռագրում՝ խազմասէրք փիս ռազմասէրք

(55ա) նորա անուն առաւելութեան կար//ծեալք միայն եւ ոչ արդեամբք: Արդ, խոստացաւ Նա միմիայն երանութիւն միո միո գործոց առնլոյ վարձ աշխատութեամբ հանդերձ եւ հատուցումն՝ գործաւք հանդերձ, եւ ցասումն՝ պակասութեամբ հանդերձ, եւ պատիժս՝ յանցանաւք հանդերձ:

Երանի իցէ ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն զամենայն բան չար զձեզ սուտ վասն Իս (Ե 11).

Կամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ՝ անդագործս կամ այլ ինչ չարութիւն. երանի իցեն ձեզ: Զինչ կայցէ այլ ինչ այնպիսի նորրնձայ հրամանք, յորժամ որ սոսկալի իցէ, գայն տենչալի վարկանել. աղքատանալ, ի սուգ մտանել, հալածական լինել, անարգանս ընդունել, բայց սակայն ասաց եւ հաւանեցոյց ոչ զսակաւսն, այլ՝ զամենայն տիեզերս, զի լսեն զժանրատաղտուկսն եւ զհակառակս սովորութեան կենցաղոյս եւ խնդութեամբ ընդունին: Որպէս եւ յայնժամ եւ զի զարմանային եւս ընդ վարդապետութիւն Նորա, զի բազում էր զաւրութիւն Ասողին, զի մի՛ կարծիցես, եթէ վայրապար չարաց բանից լսելոյ տացէ երանութիւն, երկուս դնեմք, յորժամ վասն Նորա իցէ: Եւ միւս եւս, յորժամ սուտ իցեն բանքն: Ապա եթէ որ այսպէս իցէ, եղկելի է քան ամենեսեան: Եւ ասէ գտրիտուրն.

Վարձք ձեր,- ասէ,- բազում են յերկինս (Ե 12).

Զի թէպէտ եւ այլ եւ այլ են զանազանեալ ի միմեանց պարգեւքն, այլ զամենայն յարքայութեանն ընդունին որպէս ի միուս երկնի են լուսաւորք, այլ ոչ միով պայծառութեամբ. այլ յամեն զանազանեալք ի միմեանց, ըստ առաքելոյ ցուցման: Այսպէս եւ արդարքն, որք մի մի ընկալան գերանութիւն ըստ իւրաքանչիւր գործոց: Ածէ զսովիմբ եւ զմխիթարութիւն եւս. «Զի այսպէս,- ասէ,- հալածէին զմարգարէսն, որ յառաջ քան զձեզ էին»¹:

(55բ) Եւ զի արքայութիւնն առ յապա էր, եւ յուսով ակն ունել ի հասարակաց վշտակից լինելոյն, ընդ մարգարէս տայ նոցա զմխիթարութիւնն: Մի՛ ինչ կարծիցէք, ասէ, թէ հակառակս ինչ Աստուծոյ խաւսիցիք եւ աւտարոտի պատուիրանս դնիցէք: Եւ վասն այնորիկ չարչարիցիք եւ չարաց կրաւնից իցէք վարդապետք եւ

¹ Նոյն տեղում:

վասն այնորիկ հալածիցիք ի հրէիցն, քանզի ոչ եթէ ի չարութենէ բանից ասողացն, այլ ի լսողացն չարութենէ գան ի վերայ ձեր նենգութիւնք եւ վիշտք: վա[սն] որոյ ոչ գձեզ, այլ զնոսա, որ զչարչարանսն ածիցեն, ի վերայ ձեր դատապարտիցին: Եւ վկայեն այդմ առաջին ժամանակքն, զի ոչ եթէ զանաւրէն կրաւնս կամ Աստուած ընդ Աստուծոյ փոխանակ մոծանէին եւ վասն այնորիկ բամբասէին, զի ոմանս հալածէին եւ զայլս քարկոծ առնէին եւ այլ բազում չարչարանաւք չարչարէին: Եւ արդ, մի ինչ գձեզ խռովեցուցէ, զի նովին մտաւք եւ այժմ գձեզ հալածեն: Տե՛ս, ուր տարաւ կացոյց. մաւտ առ Մովսէսի եւ Եղիայի: Որպէս Պաւղոս Թեսաղոնիկեցոցն ասէր, թէ՛ «Դուք չարչարեցայք ի ձերոցդ, որպէս հրեայքն յիւրեանց ազգէն, որք եւ Տէր Յիսուս սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ հալածեցին եւ ամենայն մարդկան հակառակ կան, զի մի՛ ապրեսցին» (Ա. Թեսաղ. Բ 14-15) զոր եւ աստ իսկ յաւրինեաց Քրիստոս, զի յայլ երանութիւնսն հասարակաբար երանեաց, թէ՛ որք եւ իցէ աղքատ կամ ողոր[մ]ած, երանէ: Իսկ աստ յատկաբար առ աշակերտսն շրջէ զբանն եւ ասէ.

Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն եւ ասիցեն բան չար գձեց (Ե 11).

(56ա) Եւ այս առ նոսա առաւել [իմն էր այն եւ առ] այլ ամենայն վարդապետս սեպհական: Եւ զի[ւր իսկ] պա[տիւն] //եւս ակնարկէ ընդ ծնողին զհանգիտապատիւ զուգականութիւնն: Զի որպէս մարգարէքն՝ վասն Հաւր, նոյնպէս եւ դուք վասն Իմ չարչարիցիք: Եւ յասելն, թէ՛

Մարգարէքն, որ յառաջ քան գձեզն էին (Ե 12ա).

Եցոյց, թէ՛ եւ նոքա անդէն մարգարէք եղեն, եւ յայտնէր, թէ՛ այս իսկ առաւել երանելի առնէ գձեզ: Ոչ ասաց, եթէ չստախաւսեցեն եւ հալածիցեն, եւ Ես արգելից չլսել ձեզ անարգանս, այլ ի լսելոյ զանարգանս եւ առաքինութեամբ տանելոյ գործի բարութիւն, զի ոչ չարչարելն միայն, այլ չարչարելն եւ ոչ լքանելն մեծի քաջութեան: Եւ ոչ միայն զբամբասելսն վասն Աստուծոյ երանէ, այլ եւ զգովեալսն յամենեցունց եղկելի համարի եւ վայ տայ: Նա եւ զառաքեալսն գովէին, այլ ոչ ամենեքեան, զի ոչ ասաց պարզաբար, թէ՛ «Եւ յորժամ բարի ասացեն ձեզ», այլ յաւել, թէ՛

ամենայն մարդիկ (Ե 11) զի չէ հնար առաքինեացն ամենայն մարդկան եւ գովեստ ընդունել: Եւ դարձեալ ասէ, թէ՛

Յորժամ հանիցեն զձէնջ անուն չար, ցնծաւքի՛ք (Ե 12բ).

զի ոչ միայն վասն ճգանցն, այլ եւ վասն բա[ն]բասանացն առնուցուք վարձս: Զի ոչ ասաց, թէ՛ յորժամ հալածիցեն եւ սպանցեն զձեզ, այլ թէ՛ «Յորժամ նախատիցեն եւ ասիցեն զամենայն բան չար սուտ զձէնջ», զի քան զտանջանսն չար բանբասանքն են¹ զի ճգունսն բազում ինչ է, որ մխիթարէ, բազմացն խրախոյս տալ, մատակացացն՝ յարգանք, պսակացն² յոյսն անուանի զքարոզելն, իսկ չարախաւսութեանն չիք ինչ մխիթարութիւն եւ չերեւի, թէ՛ մեծ ինչ ուղղութիւն իցէ, եւ առաւել քան ճգունսն զկծեցուցանէ զպատերազմողն, զի եւ բազումք առ չժուժալ նախատանացն ի խեղդ [...] ³ մտաբերեսցեն, զի եւ զՅուդայ այնպիսի քար[ուական] մահուն ամաւթն սխալանացն (56բ) հանդիպեցոյց: Եւ //Յովբ, որ աղամանդեայն էր, եւ զամենայն⁴ զարմ եւ զկարասի [...] ⁵ արհամարհեաց եւ զցաւս անձինն ի նախատել բարեկամացն զչարէր եւ զայրանայր նահատակն: Եւ Դաւթայ թողեալ զամենայն վիշտսն ընդ բա[ն]բասանացն վրեժխնդիր կոչէր զԱստուած. «Թո՛յլ տուր,~ ասէ,~ դմա անիծանել, զի Տէր այնպէս հրամայեաց դմա, զի տեսցէ զվիշտս իմ եւ հատուցէ ինձ բարի փոխանակ անիծից դորա այսր աւուր» (Բ Թագ. ԺԶ 11-12): Եւ Պաւղոս ոչ միայն զճգնեալսն, այլ եւ զբա[ն]բասեալսն յարգէ. «յիշեցէք, ասէ զաւուրսն առաջին, յորս բազում ճգանց համբերեցիք հալածանաց եւ նախատանաց» (Եբր. Ժ 32): Վասն այսորիկ եւ Քրիստոս մեզ վարձս խոստացաւ ընդ նախատանացն: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ՛ աստ վրեժ ոչ խնդրեաց զիարդ անգիտայցէ վարձս. դնէ զմարգարէսն ի միջի. թէ՛ եւ ոչ զնոցա վրէժ խնդրեաց Աստուած, զի թէ՛ ուրանաւր առ ոտս խնդրէին վրէժք յաւրինացն, ի հանդերձեալսն կրթէր Աստուած զմարգարէսն՝ որչափ եւս առաւել աստ, յորժամ լուսաւորագոյն եւ մեծ եղեւ յոյսն, առաւել զգաստութիւն պահանջէ ի մէնջ: Եւ

¹ Տողամիջում Ը:

² Տեղին ակնհայտորեն աղավաղված է. Ոսկերեքանի մոտ պսակս Ըմա մատուցանել (էջ 220):

³ 1 բառ:

⁴ Վերին լուսանցքում այն:

⁵ 1 բառ:

տես որչափ պատուիրան ետ յառաջ, եւ ապա գայ յետոյ յայս, զի ցուցցէ եթէ ոչ նախ կրթեսցի, այսու ամենայնիւ չէ հնար յայլ եւս նահատակութիւնս¹ ելանել: Վասն այնորիկ յառէ մեն յայլս հորդէ ճանապարհ պատուիրանաց իբրեւ շատ ոսկի տողեալ զպատուիրանսն: Զի յորժամ խոնարհ ոք իցէ յայտ է, թէ ի սուղ իցէ վասն մեղացն, իսկ որ ոգաւոր իցէ եւ հեզ, յայտ է, եթէ արդար է եւ ողորմած: Իսկ ողորմածն եւ արդարն, յայտ է, թէ մտախորհ² եւ սուրբ իցէ սրտիւ: Իսկ այնպիսին պատշաճ է, եթէ խաղաղարար իցէ, իսկ որ դամենայն ուղղութիւնսն յանձին ցուցանիցէ այնպիսին եւ առ ճգունս պատ//րաստագոյնս գտանիցի եւ ոչ ինչ խռովի յորժամ բանբասանաց լուիցէ: Եւ ոչ ի բիւր չարչարանաց ինչ գանգատի: Եւ յորժամ կրթեաց պատշաճ խրատութեն, դարձեալ մխիթարէ զնոսա յարգանացն գովութեամբ: Եւ զի բարձրագոյն հրամանք էին եւ մեծամեծ քան յառաջնոցն եւ զի խռովեսցեն ինչ եւ ասիցեն, թէ՛ զի՞ արդ կարիցեմք զայսպիսի ուղղութիւնս յանձին ցուցանել: Լուր զինչ ասէ.

Դուք էք,~ ասէ,~ աղ երկրի (Ե 13ա).

Եւ զայսպիսի հրամանս տայ ստէպ, զի ոչ միայն վասն անձին ինչ կենաց, այլ եւ վասն ամենայն աշխարհաց լինիցիք պիտանիք, զի ոչ մի ազգ կամ ի սակաւ քաղաքս առաքեմ զձեզ որպէս զմարգարէսն, այլ՝ ընդ ծով եւ ընդ ցամաք մինչեւ յոլորտս աշխարհաց, որք յար ի յարմարի եւ ի չարիս եւեթ կայցեն: Նա եւ ասելովն, թէ՛ «Դուք էք աղ երկրի», յայտ առնէ, թէ անհամեալ էր ամենեւին ամենայն բնութիւն մարդկան եւ փտեալ հարեալ էր ի մեղացն հարուածոց: Վասն այսորիկ զայսպիսի առաքինութիւնս ի ձէնջ պահանջեմ, որ մանաւանդ առ ի դարման կարող իցեն լինել պիտանացուք բազմաց: Զի յորժամ հեզ եւ խոնարհ եւ ողորմած լինիցի, ոչ յիւր անձն միայն կորչիցէ զուղղութիւնսն, այլ առ ի բազմացն աւգուտ, զի գեղեցիկ զայսպիսի աղբիւրս պեղէր բղխել ջուր յստակ, զի յորժամ սուրբ եւ հալածեալ իցէ եւ առ հասարակաց շահսն ուղղիցէ զիւր կեանսն: Մի՛ այնուհետեւ ի սակաւ ճգունս ձգեալ զձեզ համարիցիք եւ մի՛ վասն դոյզն ինչ իրաց կարծիցէք, զոր պահանջեմք ի ձէնջ: Այլ «դուք էք աղ երկ-

¹ Չեռագրում՝ նախատակութիւնս:

² Տողամիջում՝ ր:

(57բ) րի»։ ոչ զի զնեխութիւն աստենից համեմիցէք, զի չէ հնար նեխեալ ի մէջ աղի սա զնել, այլ որ ինչ նախ նոր աղիցէ։ Եւ ի չար հոտոյն [սրբեցաւ] եւ աւանդիցէ ձեզ, զայն յաղեալ ունիցիք, պինդ //եւ պահիցէք, զի նորոգել ի փտութենէ մեղացն իմոյ զաւրութեան եւ ուղղութեան է գործ եւ անդէն չդառնալ յապականութիւն մեղացն ձերոյ փութոյ եւ տառապանաց է գործ, զի այսու ցուցանէ զնոսա ազնուականագոյնս քան զմարգարէսն, զի ոչ միայն Պաղեստինայ, այլ ամենայն աշխարհաց էին վարդապետք ոչ վայրապար, այլ՝ ահագինք։ Եւ զարմանք այն էին, զի ոչ ողորքէին զոք։ Եւ ոչ հպատակէին ումեք, այլ եւ կսկծեցուցանէին եւս իբրեւ գաղ։ Եւ նոյնպէս ցանկալի ամենեցուն լինէին։ Եւ ընդ այն մի՛ զարմանայք, ասէ, զի զայլս թողեալ ընդ ձեզ եւեթ խաւսիմ եւ ի մեծամեծ ճգունս հանեալ տանիմ։ Այլ ընդ այն զարմացարուք, թէ որչափ քաղաքաց եւ ազգաց առաքելոց եմ զձեզ վերակացուս եւ ոչ զայն կամիմ, թէ դուք միայն եւեթ իցէք իմաստունք, այլ զի եւ զայլս եւս բազումս իմաստագոյնս առնիցէք, զի զայնպիսեացն պարտ է յոյժ իմաստունս լինել, զորոց փրկութիւն այլոցն կայցէ կախեալ։ Եւ այնպիսեացն յաճախագոյն պիտոյ է ունել յանձին զառաքինութիւն, զի յայլսն եւս փոփոխիցէ զշահսն, զի թէ այնպիսիք ոչ լինիցիք եւ ոչ անձանց իսկ կարիցէք աւգուտ գործել։ Արդ, մի՛ դժուարիցիք, թէ թախանձելիք իցեն բանքս, զի այլոց անհամելոց մարթի գալ ձեւք ի համեստութիւն։ Բայց թէ դուք այնպիսիք չլինիցիք, ընդ ձեզ եւ զայլս կորուսանէք, զի որչափ մեծ ինչ յանձն առնոյք, նոյնչափ փոյթ պարտիք յանձին ցուցանել։ Վասն որոյ ի վերայ բերէ։

Թէ աղն անհամիցի, ի՞նչ յաղեսցի (Ե 13բ)։

(58ա) Զի ոչ իմիք այնուհետեւ յաղթիցէ, բայց եթէ ընկենուլ արտաքս եւ կոխան լինել ի մարդկանէ։ Զի այլս թէպէտ եւ բիւր անգամ անկանիցին, կարեն հասանել ներելոյ թողութեան։ Իսկ վարդապետ ոք, որ //զնոյն ախտ ախտանայցէ, յամենայն պատասխանելոյ զրկեալ գտանիցի եւ զվերջին պատժոցն տուժեալ տայցէ տոկոսիս։ Զի յորժամ լսիցեն, թէ իբրեւ նախատիցեն եւ հալածիցեն եւ ասիցեն բան չար զձէնջ։ Մի՛ գանգիտիցէք ինչ ի մէջ առեալ, ասէ, զի եթէ ոչ առ այս ամենայն պատրաստական գտանիցիք, ի զուր է ընտրութիւնն ձեր։ Զի ոչ ի բամբասանաց ասաց պարտ է երկնչել, այլ զկեղծաւորակիցսն գովելոյ, այն է՝

կասկածանաց: Եւ յայնժամ անհամիցիք, ասէ, եւ լինիցիք կոխան, ապա եթէ կայցէք հաստատուն առ ի կսկծեցուցանել իբրեւ զաղ: Յորժամ բանս չարս լսիցէք, ուրա՛խ լերուք, զի այն իսկ է գործ աղի՝ կսկծեցուցանել զլոյծսն¹, որում հարկ իսկ է ստէպ զհետ գալ բաշբասանացն, որ ոչ ինչ կարեն ստնանել ձեզ, այլ եւ վկայիցեն իսկ հաստատութեան ձերոյ: Ապա թէ երկուցեալ ի ձեռս տայցէք զպատճառս առաքինութեան ձերոյ, եւս ահագին կրիցէք անարգանս, զի եւ բամբասիցիք եւ արհամարհեալք յամենեցունց լինիցիք, զի այն իսկ է կոխան լինել ի մարդկանէ: Ապա յայլ եւս բարձրագոյն աւրինակս հանեալ ասէ.

Դուք էք լոյս աշխարհի (Ե 14).

Ոչ միում ազգի ասէ, այլ ամենայն տիեզերաց լոյս իմանալի էք եւ՝ առաւել պայծառագոյն քան արեգական ճառագայթս: Եւ զոր աւրինակ աղն հոգեւոր, նոյնպէս եւ լոյսն հոգեւոր. եւ նախ՝ աղ եւ ապա՝ լոյս, զի ուսանիցիս, թէ որչափ լաւ իցէ բանիցն կսկծելեաց է աւգուտ ի լուսաւոր վարդապետութենէն, զի եւ պնդէ եւ չտա ժողխել, եւ լուսաւորէ եւ յառաքինութիւնս առաջնորդէ:

(58բ) Վասն որոյ ասէ. Դուք էք լոյս աշխարհի: Եւ զոր աւրինակ հաղորդութեամբ ականն արեգական երեւի ամենայն, որ ինչ// ի մէջ երկնի եւ երկրի իցէ: Այսպէս եւ Կենարարն Լոյս է կենդանեաց: Եւ յորժամ հաղորդի Նա ընդ միտս մեր, վերացուցանէ զնա ի բարձունս եւ ցուցանէ նմա զծածկեալսն եւ իջուցանէ զնա խորս եւ յայտնէ նմա զգաղտնիս: Եւ վասն այսորիկ ասէ՝ լոյս էք դուք աշխարհի եւ աղ էք դուք երկրի փոխանակ Ադամայ, որ եղեւ խաւար հաղորդութեամբ ամբարձեցելոյ խաւարին: Եւ աղ էք դուք երկրի փոխանակ նախաստեղծ մարդոյն, որ եղեւ հող կերակուր աւճին՝ իւրոյ պատրողին: Արդ, արար Տէր մեր աղ զաշակերտսն իւր՝ կուրացուցիչ աւճին եւ մահացուցիչ ի ճաշակս նորա, զի եղեն նոքա ի նմանութիւն աղի ի վերայ պղծոց եւ ի նմանութիւն լուսոյ՝ առ ի զսուրբս լուսաւորել:

Ոչ կարէ,- ասէ,- քաղաք թաքչել, որ ի վերայ լերին կայցէ. եւ ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ (Ե 14-15).

¹ Ձեռագրում՝ զլոյծսն:

Դարձեալ եւ այսուիկ առաջնորդէ նոցա ի վարուցն հաստատութիւն եւ խրատէ կասկած կալ, որպէս թէ առաջի աչաց ամենեցուն կայցէ եւ ի մէջ ամենայն տիեզերաց կամ թատերաց պատերազմեալք, մի՛ յայս եւեթ հայիցիք, զի այժմ աստ նստիմք ի միում անկեան աշխարհի, զի այնպէս լինելոց էք երանելիք, որպէս քաղաք, որ ի վերայ լերին կայցէ եւ իբրեւ ճրագ ի վերայ աշտանակի յայտնի: Տես [...]՝ յիւրեանց աշխարհին չէին ումեք ծանաւթ. ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա (Հռոմ. Ժ 18) եւ ոչ միայն բարբառք, այլ եւ՝ զաւրութիւնք շնորհաց նոցա, եւ ոչ թէ բարբառքն առնէին զնոսա յայտնիս, այլ՝ գործոցն հանդէսք առաւել քան զարեգական ճառագայթս ընթացեալ ընդ ամենայն տիեզերս սերմանէին զաստուած//պաշտութեան լոյս, բայց եւ ի համարձակութիւն իսկ կրթէ զնոսա այսուիկ՝ ասելովն, եթէ՝ «ոչ կարէ քաղաք թաքչել»: Եւ այսու գիւր զաւրութիւնն յայտ առնէ, զի որպէս քաղաքի անմարթ է թաքչել, սոյնպէս եւ քարոզութեանն անհնար է լռել: Քանզի ասաց բամբասանս եւ հալածանս, զի մի՛ կարծիցեն, եթէ այն ինչ կասեցուցանել կարիցէ զնոսա: Քաջալերէ զնոսա եւ ասէ, թէ՝ ոչ միայն ոչ թաքչիցիք, այլ հասեալ ժամանիցէք ընդ ամենայն տիեզերս. եւ այսու գիւր զաւրութիւնն յայտ առնէ, իսկ յաջորդաւն զնոցա համարձակութիւնն պահանջէ: Ասէ. «Ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ՝ ի վերայ աշտանակի, եւ լոյս տայ ամենեցուն, որ ի տանն իցեն»: Այսպէս լուսաւորեսցէ լոյս ձեր. Ես լուցի, ասէ, զճրագն, այլ պահել անշէջ՝ ձերում փութոյ գործ լիցի ոչ վասն ձեր միայն, այլ եւ՝ վասն այլոց, որ վայելելոց իցեն դովին լուսաւորութեամբ եւ առաջնորդելոց ի ճշմարտութիւն, զի ոչ կարիցեն բամբասանք² ծածկել զձեր լուսաւորութիւնն, թէ դուք իցէք ի ճշմարիտ վարս եւ այնպէս կարող լինիցիք դարձուցանել զտիեզերս, յորժամ արժանի շնորհացն ցուցանիցէք վարս, զի որպէս նա ընդհանուր քարոզիցէ, նոյնպէս ընդ նմին համերասանակ ընթայցէ քարոզութիւնն ձեր: Ապա եւ այլ իմն շահ դնէ ի միջի հան[դ]երձ այլոց փրկութեամբն արկանէ կասկած ի միտս նոցա, եւ յորդորէ ամենեւին ի փոյթ, զի ոչ միայն, ասէ, զտիեզերս ուղղիցէք ձերով լաւ կարգաւքն, այլ եւ Աստուծոյ փառաւորութեանն լինիցիք պատ-

¹ 1 բառ:

² Ձեռ. բաշբասանք:

(59բ) *ճառք: Որպէս յորժամ հակառակագործ իցէք եւ զմարդիկ կորուսանէք եւ Աստուծոյ անուանն լինիք հայհոյիչք: Ոչ զի [այդպէս] առնիցէք՝ զայս ասեմ, այլ յորժամ յաճախիցէ հուրն եւ անչափ վառիցէ այս, ձերոյ գործոցն չէ հնար//թաքչել, թէպէտ եւ բիւր անգամ կամիցի ծածկիլ, որ առնեն զնա անարատ ցուցցին վարք, զի մի՛ յիմիք գտցեն պատճառք բամբասանաց եւ բարեաւք իսկ կոչեաց լոյս, զի ոչ ինչ կարէ այնպէս նշանաւոր առնել զմարդ, որպէս առաքինութեանն հանդէս, թէպէտ եւ ծածկել ջանայցէ. որպէս զճառագայթս զգեցեալ, այնպէս անթաքչելի է, զի ոչ յերկիր ծագէ, այլ եւ քան զերկիրնս ի վեր տարածանէ զճառագայթս, զի թէպէտ ի բազմաց բամբասիցիք, այլ եւ ի բիւրոց փառաւորեաց ի հայ[ր]ն ձեր եւ յերկոցունց պսակիցիք փառաւորելովն զՀայրն ձեր եւ բամբասելովն ձերով վասն Նորա: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ վայրապար բամբասելն վարձք ինչ իցեն, երկուս խտրոցս ի միջի դնէ. մի՛ զի սուտ իցէ բաշբասանքն, եւ միւս եւս՝ զի վասն Նորա իցեն, զի ոչ իսկ կարողն են բաշբասանք չարացն կուրացուցանել զտեսողսն առ ի չտեսանելոյ զձեր լոյսն, զի յորժամ անհամիցիք, յայնժամ կոխեն զձեզ, եւ ոչ յորժամ ուղղութիւնս ինչ գործիցէք, կարեն աղարտել զձեզ, այլ «զՀայրն ձեր փառաւորեն» (Մատթ. Ե 16) եւ ոչ ասաց, թէ՛ զԱստուածն. այսու հանդերձեալ ազնուականութիւնն անդրէն սերմանեսցէ ի սիրտս նոցա եւ զիւր հանգիտապատիւ զուգականութիւնն ընդ Հաւր ցուցանիցէ: Վերագոյնն ասաց, թէ՛ մի՛ տրտմիք, յորժամ վասն իմ նախատիցիք: Իսկ աստ զՀայր դնէ, զի այսու զիւր զուգականութիւնն ընդ Հաւր ցուցցէ, եւ զի Նորա եղեալ ւարէնսն եկն կատարել առ ի դպիրսն եւ փարիսացիսն, որք խնդրէին պատճառս գտանել: Ասէ.*

Ես ոչ եկի առ ի լուծանել զարեւնս կամ զմարգարէս, այլ՝ ի լնուլ (Ե 17).

(60ա) *Եւ զստուերսն հանել ի ճշմարտութիւն ամենայն, որ ինչ մի անգամ ւարինակքն էին, կատարէ ցանժամանակք // ազգէ յազգ, եւ բովանդակեցան առաջինն յԱղամայ ի Նոյ ուխտիւն, զոր հաստատեցին տունս Սեթայ, զի զատեալ որոշեալ էին ի տանէն Կայէնի: Եւ միւս եւս ի տանէ Նոյի Աբրահամ, զի մի՛ կերիցեն արիւն: «Ետու ձեզ ասէ, զամենայն իբրեւ բանջար վայրի, բայց միայն զարիւն շնչոյ եւ հեղձուցից մի ուտիցէք» (Ծննդ. Գ 18, Ղեւ. Է 26): Եւ յԱբրահամէ ի Մովսէս թլպատութեամբ առանց ւարինաց,*

եւ ի Մովսէսէ մինչեւ ի ծագել նորա աւրինաւք: Եւ կատարեցան ամենայն, զի չիք այլ ոք, որ փոխէ եւ զանցուցանէ զայս: Ասի դարձեալ, թէ ժամանակք առաջին զպատարագ կամացն Աբելի մինչ ի Նոյ մխիթարեսցէ, ասէ, զմեզ պատարագաւք իւրովք: Եւ միւս եւս ի Նոյի սեղանոյն, որ շինեցաւ ի լերինն Կորդուաց, եւ միւս եւս Աբրահամուն, որ շինեցաւ ի լերինն Ամուրհացուոց, եւ միւս եւս Յակոբայն՝ ի Բեթէլ, եւ միւս եւս Յեսովայն՝ յանցս Յորդանան գետոյն, եւ միւս եւս ի Սեղովամ խորանն, որ բնակեալն [...] ¹ եւ միւս եւս Սողոմոնին յետ խորանին վկաութեան՝ յԵրուսաղեմ, եւ այս Քրիստոսի ² որ ուղղեաց յեկեղեցւոջ իւրում մինչ ի վախճան կատարած, զի այլ ոչ եւս փոխի: Վասն այսորիկ կատարեալ են ժամանակք, եւ յայսմհետէ արքաութիւնն Աւետարանի կամ կատարեալ են առաջինք ժամանակք Իսրայէլի: Արդ, մի՛ համարիք, եթէ եկի եւս լուծանել զառաջին զնշմարանսն, այլ՝ լնուլ: Որպէս զպատկեր թագաւորի զծրագրեալսն կապարաւ ի տախտակի, յորժամ ծիրանափառ զարդարիցեն կայսերակերպ չքեղազարդ յաւրինեալ ոչ առ առաջին ծրագրութիւնն ի բաց բառնի, այլ ընկղմի ի պայծառութեան զարդուն, եւ լինի կատարեալ պատկեր թագաւորի, այսպէս եւ նա լնուլ ³ զթերութիւն տիրատեսիլ ստուերին ի պայծառակշիռ զարդ կատարելութեան: Եւ վասն այսորիկ ասէ. «Ոչ եկի ես լուծանել զաւրէնս, այլ՝ լնուլ»: Եւ զայս յառաջագոյն հորդէ ճանապարհ բանից իւրոց, զի մի՛, յորժամ ասիցէ, թէ լուարուք, զի ասացաւ առաջնոցն այս ինչ եւ այս, այլ ես ասեմ ձեզ, կարծիցեն, թէ լուծանէ զառաջինսն եւ հաստատէ զիւրսն հակառակ առաջնոցն: Արդ, ասէ. Ոչ իմքս լուծիչ առաջնոցն, այլ՝ կատարիչ եւ լրումն ամենայն թերութեանց նոցա. զի աղքատն լինել եւ հեզ, եւ ի սուգ մտանել, եւ կարաւտ արդարանալոյ, եւ ողորմած, սուրբ՝ սրտիւ եւ խաղաղարար՝ նման Որդւոյն Աստուծոյ, եւ հալածեալ վասն աստուածպաշտութեան. Որչափ բարձրագոյն եւ կատարելագոյն է քան առաջինն: Եւ, զի մի այս աւելորդ եւ աւտար թուեսցի, տանի յարէ յառաջինսն, թէ՛ լրումն է այս ամենայն առաջնոցն: Եւ նա ի սմա ծածկեալ եւ սայ ի նմա նկարագրեալ, զի ի նոյն եւ ի մի կատարումն ածեն զմարդն:

¹ 1 բառ:

² Չեռագրում՝ Քրիստոսի:

³ Չեռագրում՝ սլնուլ:

Եւ արդ, լուարուք դուք, զի ասացաւ, թէ մի՛ սպանանէր, այլ Ես ասեմ ձեզ՝ մի՛ բարկանայք (Ե 21-22)։

(61ա) Եւ այսու զաստուածային եւ երկնաւոր առաքինութեան հորդէ ճանապարհ: Եւ զի մի նորն ինչ խռովեցուցէ զոգիս լսողացն, զի թէպէտ ոչ կատարէին զաւրէնսն, այլ խնամիսն ունէին, եւ զոր միշտ լուծանէին զնորին նշանագիրսն անշարժ կամէին պահել, այլ եւ յաւելուածով աւանդութեամբ ծերոցն լուծէին զպատուիրան պատուոյ ծնողացն, եւ զայլ բազում ինչ լուծանէին իւրեանց վայրապար ճոխութեամբն: Իսկ Քրիստոս, զի չէր ի քահանայական ցեղէն եւ զոր ուսուցանէր, բարձրագոյն էր քան զաւրէնսն: Եւ այս երկոքեան խռովեցուցանէին զնոսա: Հանէ ի միջոյ զայն, որ զնոցա միտսն խարխափ//էր, զի կարծէին, թէ զոր ասէին այնուիկ զաւրէնս ի միջոյ բառնալոց է, եւ զի զնա Աստուած հակառակ Աստուծոյ կարծէին, զի զշաբաթն լուծանէր: Եւ արդ, զի բարձցէ զայսպիսի կարծիս դնէ բազում պատասխանիս ի միջի զկեսն, որ իւր իսկ պատշաճէին յորժամ ասիցէ. «Հայր Իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ Ես գործեմ» (Յովհ. Ե 17), եւ զկէսն վասն բազում զիջանելոյ ընդ նոսա, յորժամ զոչխար լուծեալ ի կապոյ ի շաբաթու ի մէջ բերիցէ եւ հանեալ ի խորխորատէ (Տե՛ս Մատթ. ԺԲ 11): Եւ նորա փրկութեամբն ցուցանէ զաւրէնսն լուծեալ, եւ զթլփատութիւնն յիշէ զնոյն գործեալ: Վասն որոյ խոնարհագոյն բանս խաւսի, զի կարծիս Աստուած հակառակ Աստուծոյ ի բաց բարձցէ: Վասն որոյ բազում մեռեալս բանիւ միայն յարոյց, եւ յորժամ զՂազար կոչէր եւ աղաւթս եւս առնէր, եւ զի միայնու նուագագոյն քան զծնողն կարծիցի յարէ ի նոյն, թէ՛ «Չայս վասն ժողովրդեանս առնեմ, զի հաւատայցեն, թէ դու առաքեցէր զիս» (Յովհ. ԺԱ 42): Եւ այսպէս ոչ ամենայն ուրեք իշխանութեամբ գործէ, զի զնոցա տկարութիւնն ուղղեսցէ: Եւ ոչ ամենայն ուրեք աղաւթէ, զի մի՛ չար պատճառս վերջնոցս թողուցու տկար գոլ զնա կարծել: Այլ խառնէ ընդ միմեանս զբարձ[ր]ագոյնսն ընդ նուաստիցն, զի զմեծամեծն իշխանութեամբ գործէր, եւ վասն նուաստագունիցն ընդ երկինս հայէր զմեզս թողուլ, զծածկեալսն յայտնել, զզրախտն բանալ եւ զգեւս հալածել, զծով սանձել, զմեռեալս յարուցանել: Եւ բազում այլ ինչ այսպիսին հրամանս միայն կատարէր, իսկ յորժամ զկարի փոքունս գործէր ի սակաւ հացէ աճել եւ զիւրս կերակրել ընդ երկինս հայէր, զի

- (61բ) ցույց է թէ, որ գմեծամեծս իշխանութեամբ գործէր ի փոքունս// կարոտանայր աղաւթից: Այլ զի զնոցա յանդգնութիւնն [ըմբերա]նիցէ, առնէր զայն: Զայն եւ բանիւքն ցուցանէր, զի զբազում բանից եւ գործոց այսպիսեաց այս եւս պատճառք, զի մի աւտար կարծիցի Աստուծոյ, եւ մեզ զխոնարհութիւն ուսուցանէ: Եւ զի մարմին էր զգեցեալ, եւ չէր մարթ զամենայն ինչ հրէիցն ասել: Եւ զի ուսուցէ մի ինչ զանձնէ կարծել, վասն այսուիկ ինքն բազում բանս խոնարհագոյնս զանձնէ խաւսէր: Իսկ յորժամ ընդ հրէայսն խաւսէր՝ «Յառաջ քան զԱբրահամու լինելն եմ ես» (Յովհ. Ը 58): Իսկ յորժամ աշակերտն զնմանէ ճառէր. «Ի սկզբանէ էր, ասէ, Բանն եւ Աստուած էր Բանն» (Յովհ. Ա 1): Եւ դարձեալ. թէ՛ զերկիրնս եւ զերկիր եւ որ ի սմա եւ Նորա է արարեալ (Հմմտ. Գործ. Դ 24), զոր ինքն յայտնապէս ոչ ճառեաց: Իսկ աշակերտն մեծաւ համարձակութեամբ ճառէր, այլ յաճախ ասէր, թէ՛ «Ամենայն Նովաւ եղեւ» (Յովհ. Ա 3), իսկ ինքն բանիւք ոչ յայտնէր, այլ արդեամբք ցուցանէր: Եւ զի զմարդն իւր արարեալ էր կուրիւն, որ կաւովն ելից զպակասութիւնն աչացն, յայտ արար: Իսկ զմարդոյն յայտնապէս ոչ ասաց, թէ՛ «եւ արարի», այլ՝ «որ արարն» (Տե՛ս Յովհ. Թ 1-8): Ասէ. «Ի սկզբանէ արու եւ էգ արար» (Մն. Ե 2), եւ զի զաշխարհսն, որ արարեալ էր ձկամբն եւ զինովն, որ ի ջրոյն, եւ հացիւն, զոր բազմացոյց, եւ ալեաւք ծովուն, զոր կարկեացն, եւ ճառագայթիւքն արեգականն, զոր շիջոյց ի խաչին: Եւ բազում այսպիսի իրաւք յայտ արար, թէ արարիչ է ամենայնի, իսկ բանիւքս ցուցին ինչ ոչ ճառեաց զինքենէ: Այլ աշակերտք համարձակ բարբառէին այսպիսի ինչ, զի եթէ աշակերտքն, որ այնչափ զաւրութիւնս տեսին եւ յանուն Նորա զդեւս հալածէին եւ գմեռեալս յարուցանէին եւ յետ այնչափ զգաստութեան ոչ կարէին ամենայնի հասու լինել: Իսկ հրեայքն, որ յամենայն իմաստութենէ կուրացեալ էին, զիարդ ոչ զնա յամենեցունցն Աստուծոյ աւտար համարէին, եթէ ոչ այնչափ ընդ նոսա զիջեալ էր նա եւ զշաբաթն լուծանելն պէսպէս եւ բազում// պատասխանիս յաւդէր: Իսկ եթէ զմի պատուիրան լուծանէր բազում անտնտեսութեան¹ ի կիր արկանէր, զի մի գայթ[ակ]ղեցուցէ զլսողսն: Որչափ եւս առաւել, յորժամ ամենայն աւրէնսն յաւելոյր կատարեալ աւրէնսդրութիւն, պարտ էր ազգի ազգի հնարս

¹ Ձեռագրում՝ անստնտեսութեան:

Հնարել առ ողորքելոյ, զի մի խռովեցուցէ զյսողսն: Վասն այսորիկ եւ ոչ վասն Աստուածութեանն իւրոյ ճառեաց ինչ զի թէ աւրինացն յաւելուածն խռովէր զնոսա, որչափ եւս թէ Աստուած զինքն էր քարոզեալ: Վասն որոյ բազում խոնարհագոյն բանս ճառէ զիւրոյ աստուածական պատուոյն: Եւ զի յաւրինացն յաւելուած մերձ էր առնել բազում ինչ, յառաջագոյն հորդէ ճանապարհ, զի ոչ մի անգամ ասաց, թէ՛ «Ոչ եկի լուծանել զաւրէնսն», այլ երկրորդէ զնոյն եւ ասէ. «Մի համարիք, եթէ եկի լուծանել զաւրէնս, այլ լնուլ»: Եւ այսու ոչ միայն զհրէիցն խնու զբերանս, այլ եւ՝ հերձուածողացն, որք ի սատանայ համարին զՀին Կտակարանսն: Զի եթէ զսատանա ի բռնութիւն եկն քակել Քրիստոս զիւրոյ ոչ լուծանէր զաւրէնս նորա այլ եւ լնոյր եւս, զի ոչ ասաց լուծանել, այլ լնուլ, որ ցուցանէ զյոյժ միաբանութիւնն: Եւ թէ զիւրոյ ելից զմարգարէսն, ասեմք, որ վասն նորա ասացեալ էին, եւ նա հաստատեաց զայն արդեամբք, զի եւ աւետարանագիրքն ասէին, եթէ զի կատարեսցի բան մարգարէին, զծնունդն եւ զկոտորել մանկտոյն, զաղաղակիլն ի տաճարին եւ զնստելն յէջ եւ այլաւք բազմաւք, զորս կատարեաց զալստեամբն, զի թէ չէր եկեալ, բոլորն անկատար մնայր: Իսկ զաւրէնսն ոչ միով, այլ երկու եւ երեք աւրինակաւք կատարէր: Մի զի ոչ իւրք անց զաւրինաւքն, որպէս ասէր զՅովհաննէս. «Այսպէս պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս աւրինացն» (Մատթ. Գ 15): Եւ ցհրեայսն ասէր. «Ո՞վ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց» (Յովհ. Ը 46): Եւ զաշակերտսն ասէ. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ» (Յովհ. ԺԴ 30). Եւ մարգարէն ի վաղուց հետէ աղաղակէ, թէ՛ մեղս ոչ արար, զի այսպէս ի կերպարանաւք ինքն կատարեաց եւ մեւք դարձեալ զ/նոյն առնէ, որպէս Պաւղոս ասէ, թէ՛ «Կատարումն աւրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց» (Հռոմ. Ժ 4) եւ «Զմեղս դատապարտեաց ի մարմնի, զի արդարութիւն աւրինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք» (Հռոմ. Ը 3-4): Եւ դարձեալ ասէ, թէ՛ «զԱւրէնս ինչ խափանեմք հաւատովք. քաւ լիցի, այլ հաստատեմք» (Հռոմ. Գ 31) զի եւ աւրէնքն իսկ ի նոյնս խոկան արդարս առնել զմեզ: Իսկ եթէ ինքն եկն եւ ընծայեցոյց զարդարութիւն հաւատովք, յայտ, եթէ հաստատեաց զկամս աւրինացն. զի, զորն այն գրովս չկարաց ուղղել, սա զայն հաւատովքն վճարեաց: Եւ վասն այնորիկ ասէ. «Ոչ եկի լուծանել զաւ-

րէնսն, այլ լնուլ»: Եւ եթէ հաւաստեալ քննեսցես երրորդ զնոյն գտցես զհանդերձեալ աւրէնսդրութիւնն ոչ խափանիչ, այլ «լրումն» նոյնպէս եւ այլոցն ամենեցուն: Վասն որոյ յառաջագոյն ցանէ զսերմն, յորժամ յայտնագոյն ընդ միմեանս հարկանելոց էր զառաջինս եւ զվերջինս: Եւ որ ինչ հակառակն թուէր յառաջագոյն բառնայ զկարծիսն, զի թէպէտ առակ աւրինակաց էին, սակայն յառաջագոյն ընծանեցուցանէ զիւրսն, զի ասելն. թէ՛ «Երանի աղքատաց» հոգևով, նոյն եւ չբարկանալն, զի խոնարհք հոգևով ոչ երբէք դրդին ի բարկութիւն եւ հեզն լինել հանգոյն է այնմիկ, թէ՛ «Լեր իրաւախոհ ընդ ոսոխին քում» (Մատթ. Ե 25) վաղագոյն եւ զգալ եւ հալածական լինել հանգոյն է այնմիկ, թէ՛ «Մտէք ընդ նեղ դուռն» (Մատթ. է 13). եւ՛ «Քաղցնուլ եւ ծարաւիլ արդարութեան» (Մատթ. Ե 6), ոչ այլ ինչ է, եթէ ոչ ասելն. «Զոր ինչ կամիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք եւ դուք նոցա» (Մատթ. է 12): Եւ «երանեալ զողորմածսն» (Մատթ. Ե 7) հանգոյն է այնմիկ, թէ՛ «Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկիր» (Մատթ. Զ 19): Եւ «սուրբ լինել սրտիւ» (Մատթ. Ե 8) այն իսկ է. «Զհայել արատ ի կին մարդ» (Մատթ. Ե 28): Եւ «խաղաղարարն» (Մատթ. Ե 9) լինել, նոյն է, թէ՛ «Թո՛ղ զպատարագն եւ ե՛րթ նախ հաշտեաց ընդ եղբաւրն քում» (Մատթ. Ե 24) եւ յառաջագոյն հաշտել ընդ ոսոխին: Եւ անդ զհատուցմունս ուղղութեանցն խոստացաւ: Իսկ աստ զպատիժս չառնել բացն սպառնայ, զի անդ (63ա) ասէ «հեզքն // ժառանգեսցեն գերկիր» (Մատթ. Ե 5) եւ աստի մորուսն կոչելոյ զեղբայրն ի գեհնն առաքէ (Մատթ. Ե 22): Անդ, ասէ, զԱստուած տեսցեն սուրբքն սրտիւ (Մատթ. Ե 8) եւ աստ. Շնացող կատարեալս կոչեաց զարատ հայեցողսն: Անդ զխաղաղասէրն Որդի Աստուծոյ կոչեաց եւ աստ թէ՛

Գուցէ մատնեսցէ զքեզ դատաւորին եւ դահնին, եւ արկանիցիս ի բանդ (Ե 25).

Եւ այսպէս զսգաւորսն, զհալածեալսն երանէ, իսկ աստ կորուստ սպառնայ, որք ոչ ընդ նոյն ճանապարհս գնայցեն, այլ ընդ արձակն եւ վրիպեցան ի կենաց: Եւ ոչ կարէք դուք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13):

Ընդդէմ ողորմածացն եւ քաղցելոցն արդարութեան: Եւ, որ վերագոյնն ասացի, թէ յայտնագոյնս է ճառելոց, եւ քան զնոսս առաւելագոյնս, զի ոչ ողորմութիւնն միայն խնդրէ, այլ եւ ի պա-

րեգաւտացն եւս մերկանալ (Ղուկ. 2 29): Եւ ոչ հեզս միայն լինել, այլ եւ զծնաւտս եւս մատուցանել հարողացն (Մատթ. Ե 39, Ղուկ. 2 29) զի որ ինչ ընդդէմ որու էր, այսու կամի զպատճառսն ի միջոյ բառնալ, զի ոչ միանգամ ասաց, այլ եւ երկրորդէ եւս զնոյնն. «Ոչ եկի,- ասէ,- լուծանել զաւրէնս, այլ՝ լնուլ: Ամէն ասեմ ձեզ մինչեւ անցեն երկիրք եւ երկիր, յաւդ մի գրախեցի ոչ անցցէ յաւրինաց եւ ի մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի» (Մատթ. Ե 18): այսինքն՝ անհնար է, թէ անկատար մնայցէ, այլ եւ որ փոքրն¹ իցէ, պարտ է եւ այնմ կատարել, զի եւ Ինքն հաւաստեալ կատարեաց: Եւ աստի մեզ իմն առակէ, թէ եւ աշխարհս ամենայն կերպարանափոխ լինելոց է եւ այլ իմն առաքինութիւն կատարեալ պահանջէ ի մէնջ, զի եւ արարածք ամենայն նորոգելոց են եւ ի բարձրագոյն պատիւ փոխելոց. պարտ է եւ նորընծայ վարս փոխել: Եւ եթէ ոք լուծցէ, ի փորձ պատուիրանաց սաստի եւ այնպէս ուսուցէ զմարդիկ փոքր կոչեսցի յարքայութիւնն: Յորժամ զանձն ազատեաց ի չար կարծեաց եւ զհակառակորդսն ըմբերանեաց, ապա այնուհետեւ մեծամեծ սպառ[ն]ալիս [դնէ] վասն հանդերձեալ աւրէնսդրութեանն, զի ոչ զհնոց աւրինացն, ասէ, լուծանել, այլ՝ զհանդերձեալսն, զոր Ինքն դնելոց էր, զի յաջորդաւքն յայտ առնէ՝ ասելով.

(63բ) Եթէ ոչ առաւ/եւուցու արդարութիւն ձեր քան զդպրացն (Ե 20).

Եթէ զհին աւրինացն ասէր ոչ հաւելոյր ասել, թէ՛ ոչ առաքել իցէք, զի թէ զայնցանէ ասէր չէր ինչ յորդորելոյ պէտք, զի «առաւել»ն չբարկանալն է եւ չհայել յարատ: Եւ ընդէր փոքունս կոչէ զբարձրագոյնսն, այլ զինքն տալոց էր աւրէնսդրութեանցն: Եւ յորժամ ասէ, թէ՛ «փոքր կոչեսցի» (Մատթ. Ե 19), մի՛ այլ ինչ կարծիցես, այլ զգեհենէն ակնարկել, զի արքայութիւն ոչ զփառսն, զոր առնլոցն կոչէ, այլ եւ չարութեան ժամանակն, եւ զահագին գալուստն, ապա եթէ զիարդ որ մորոսն կոչէ, ի գեհենս երթայ: Եւ որ լուծանէ զպատուիրանն եւ զայլսն ի նոյնն զրդիցէ յարքայութիւնն մտիցէ: Եւ արդ, ոչ ասաց, թէ յարքայութիւնն մտանիցէ, այլ եթէ ի ժամուն յայնմիկ փոքր, տարագիր եւ յետին գտանիցի եւ որդի գեհենին: Եւ քանզի գիտէր ի կանուխ գիտութեան Իւրում, թէ բազումք ծուլայցեն յետոյ եւ ասիցեն, թէ վասն

¹ Ձեռագրում՝ փորքն:

մորուս կոչելոյ եւ յարատն հայելոյ ի գեհենն երթիցեն, ո՞ կարիցէ ապրել, յառաջագոյն բառնայ զվհատութիւնն եւ մեծամեծ սպառնալիս դնէ երկոցունց կողմանցն, որք յանցանիցենն եւ զայլս եւս ի նոյնն զրդիցեն:

Եւ որ արասցէ,~ *ասէ*,~ եւ ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն (Ե 19)

Զի ոչ միայն զանձինս, այլ եւ զայլս պարտիմք ածել յուղղութիւն: Զի որպէս որ ուսուցանէ առանց գործով, դատապարտէ զանձն, սոյնպէս եւ՝ որ այլոց ոչ առաջնորդէ, կորուսանէ զվարձան: Եւ արդ, պարտ է յերկոցունց կողմանցն կատարեալ լինել, զի եւ Ինքն իսկ նախ զառնելն քան զուսուցանելն դնէր, զի մի՛ լուիցէ, թէ՛ «Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո» (Ղուկ. Դ 23):

Իսկ որ յերկոսին կողմանսն կատարեալ իցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից: Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ առաւել իցիք, քան զդպիրսն արդարութեամբ, ոչ մտանէք յարքայութիւնն (Ե 19-20):

(64ա) Արդարութիւնն աստ զամենայն առաքինութիւնս կոչէ, որպէս զՅոր Արդար կոչեն Գիրք: Եւ // Պաւղոս այնպիսեացն *ասէ*, թէ՛ «Ի վերայ արդարոց աւրէնք ոչ կան» (Ա Տիմ. Ա 9): Եւ դու մի՛տ դիր, զի զնոր աշակերտսն քան զհին վարդապետսն կամի կատարեալ առնել, զի դպիրս եւ փարիսձցիս ոչ զվայրապար ոք, այլ զպիտանիսն կոչէ եւ ոչ զոչեսն ընդերն համեմատէ: Եւ տե՛ս, զիարդ զմիմեանս համեմատէ զհինն եւ զնորն, զի ցուցցէ, եթէ համացեղք եւ ազգականք միմեանց են: Եւ արդ, այնպիսի արդարութիւն չտանիցի՞ յարքայութիւնն. այժմ չտանի, յետ Քրիստոսի գալստեանս, որք ըստ աւրինացն կամին պատերազմել: Զի որք յայնչափ շնորհս վայելեցին պարտին բազում ձգնութիւնս ցուցանել: Բայց զնոսա եւ զսոսա իբրեւ մախոխս¹ ի Նոյն յանձանձիչ գոգն տանի զամենեսեան, ըստ այնմ, թէ՛ «Բազում յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցեն ընդ Աբրահամու» (Մատթ. Ը 11), որպէս եւ Ղազար ի գոգն Աբրահամու կայր (տե՛ս Ղուկ. ԺԶ 23): Եւ եթէ զՀին Կտակարանքն չէին կատարեալք եւ ի գալ Նորա խափանեցան, եւ վասն այնր զՆա չար կոչեն, ապա եւ նորս զնոյն կրելոց են ի հանդերձեալ գալստեանն: Յորժամ եկեսցէ, *ասէ*, կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի, որպէս ի կատար

¹ Ձեռագրում գամոխախս:

րեալ այրացելոյ տղայութիւնն խափանի: Սակայն մեծ պարգեւք են եւ յորդ զաւրութիւն Հոգւոյն շնորհաց, զոր ընկալաք, յիրաւի եւ մեծագոյն վարք պահանջին ի մէնջ, զի ոչ երկիր կաթին բղխիչ եւ մեղու եւ ոչ որդւոց յաճախութիւնն եւ ոչ ծերութեան պարարտութիւն եւ ոչ խաշանց բազմութիւնք խոստացան մեզ, այլ՝ երկնից բարութիւնք եւ որդեգրութիւն եւ որ այլ եւ աստէն, իսկ աւրէնք Հոգւոյն կենաց ազատեցին զմեզ յաւրինաց մահու եւ մեղաց: Եւ արդ, իբրեւ սպառնացաւ յանցաւորաց եւ մեծամեծ պարգեւս խոստացաւ առաքինեացն եւ եցոյց, եթէ յիրաւի յոլովագոյն պահանջէ ի մէնջ ուղղութիւնս քան առաջնոցն է եւ սկիզբն առնէ այնուհետեւ աւրէնսդրութեանն, եւ ոչ վայրա//պար ինչ, այլ ըստ համեմատութեան հնոյ աւրինացն. եւ երկուս իրս ցուցանէ աստ, մի զի ոչ հակառակ, այլ յոյժ միաբան ընդ առաջին աւրէնսն եւ միւս եւս, զի ի դէպ ժամանակի զերկրորդսն յաւելոյր յառաջինսն: Եւ արդ, լուր ինչ ասէ.

Լուարոք, զի ասացաւ առաջնոցն, թէ՛ մի՛ սպանանէր (Ե 21).

Զի թէպէտ եւ ինքն էր աւրինադիրն, այլ ոչ յայտնէ զդէմսն ոչ զիւրն եւ ոչ զՀաւր, զի թէ ասացեալ էր՝ լուարոք, զի ասացի դժուարընկալ եւ անախորժելի լինէր լսողացն: Եւ թէ ասացեալ էր. «Լուարոք, զի ասացաւ առաջնոցն»՝ ի Հաւրէ, եւ ի նոյն յարեալ ասէր՝ «բայց Ես ասեմ ձեզ», առաւել ճոխութեան թուէր: Վասն որոյ խառնիխուռն ճառէ եւ ցուցանէ, թէ ի ժամանակի եկն պատշաճսն ուսուցանել, զի ասելն, թէ՛ «Ասացաւ առաքելոց», ցուցանէ, թէ բազում ժամանակք են, յորմէ հետէ այն պատուիրանք տուան եւ ոչ եկիք ի լաւութիւն: Եւ այսու պատկառեցուցանէ զլսողսն, որք դանդաղիցին ելանել ի բարձրագոյն հրամանսն: Որպէս վարդապետ ոք, որ մեղադրիցէ աշակերտացն, թէ որչափ ժամանակս ծախեցեր ի նշանագիրսդ, սոյնպէս եւ սա մեղադիր լինի, եւ մինչեւ յերբ ոչ առնոյք ի միտ զմեծամեծս հրամանացն շատ է ձեզ ժամանակքն, զորս յայդմ ծախեցէք, պարտիք այսուհետեւ ի բարձրագոյնսն փութալ: Եւ արդ, տե՛ս զի ոչ խարխարէ զկարգ պատուիրանացն, այլ յառաջմէն առնէ զսկիզբն, յորմէ եւ աւրէնքն սկսան, զի եւ այս ցուցումն միաբանութեան է:

Բայց ես ասեմ ձեզ, թէ որ բարկանայ եղբար իւրում, պարտաւոր լիցի գեհեմիցն (Ե 22ա).

(65ա) Տեսեր զկատարեալ իշխանութիւնն, ո՞ր ոք ի մարգարէից կամ յարդարոցն այնպէս բարբառեցաւ, այլ ասէին, թէ՛ այսպէս ասէ Աստուած բայց միայն Որդին: Նոքա զտէրունիսն պատմէին, եւ սա՛ զհայրենական կամ թէ՛ զԻւրսն իսկ եւս. ես՛ զլրումն առաջնոցն. զի որ ի ցասումն չգայցէ որչափ եւս ի սպանանելոյն խորշիցի. զի արմատ սպանմանն ցասումն է, որ զարմատ հատանէ առաւել եւս զոստն կոճոպիցէ, զի եւ բուսոյն սկիզբն ոչ տայ առնուլ: Բայց ոչ ամենեւին ի միջ//ոյ բառնայ զբարկութիւնն, զի չէ հնար մարդոյ ի կարեաց ազա[տա]նալ, բայց կարճել մարթի, զի եւ յաւգաւտ իսկ է ցասումն, եթէ ի պատշաճսն ոք վարիցէ եւ ի դէպ ժամանակի: Տե՛ս, որպիսի ինչ բարութիւնս գործեած Պաւղոս ի բարկանալն կորընթացւոցն, զի զնոսա ի չարեացն ազատեցէ եւ զգաղատացիսն նոյն կանգնեաց, յորժամ ոչ զանձանց վրեժ խնդրիցեմք, այլ զստահակս խրատիցեմք. բարեաւք է ցասումն ըստ այնմ թէ՛ «Մի՛ զանձանց վրէժ խնդրիցէք, այլ տուք տեղի բարկութեան» (Հռոմ. ԺԲ 19): Այլ մեք, յորժամ զրկիմք, գազանիմք եւ յայլոց զրկանս հանդարտեմք. եւ երկոքեան հակառակ են աւետարանական հրամանացն: Եւ արդ, ոչ եթէ բարկա[նա]լն չար իցէ, այլ՝ յանդէպ ժամանակի: Վասն որոյ ասէ մարգարէն. «Բարկանայք, բայց մի՛ մեղանչէք» (Սաղմ. Դ 5):

Որ ոք բարկանայ,~ ասէ,~ պարտաւոր լիցի ժողովրդեանն (Ե 22բ).

Ժողովուրդ աստ զհեբրայեցւոց ատեանն կոչէ, զի մի՛ աւտարոտի վարդապետութիւն կարծիցի: Իսկ ռակայն մեծ իմն թշնամանք հեբրայեցերէն է եւ արհամարհանաց, եւ որք զասորի լեզուն գիտեն, փոխանակ ընդ «այ դու» ասելոյն, ի սանգաստականաց¹ տեղի զռակայն ասեն: Այլ մարդասէրն Աստուած եւս զմանունսն կարճեաց եւ սոքաւք զմեծամեծսն խափանեաց: «Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս. պարտաւոր լիցի գեհենին»: Ոմանց աւելորդ իմն թուի ասացեալն. իբր ահ ինչ արկանելոյ սակս: Եւ արդ, երկնչիմ. գուցէ աստ խաբիցիմք եւ անդ արդեանցն հանդիպիցիմք: Ոչ ապաքէն բա[մ]բասանք եւ հայհոյութիւնք ի բանից են. զի ի ժամ ցասմանն եւ փոքրն մեծ թուի եւ բորբոքէ զբոց ցասմանն: Զի որպէս սպանութեան արմատ ցասումն է, սոյնպէս

¹ Ձեռագրում՝ սանգակաստանաց, Շնորհալու մօտ՝ սանգաստանաց. ընթերցումն՝ ըստ Ոսկերերանի (էջ 254):

եւ բարկութեանն պատճառք եւ արմատ թշնամանքն են, զի որ
 զցասուամն ոչ կարճէ՝ ի սպանութենէ ոչ ապրի, եւ որ թշնա-
 մանսն ոչ խափանէ՝ ի բարկութենէ ոչ սրբի: Եւ զոր աւրինակ
 ի հաշտութեան ժամուն եւ ծանունքն փոքր թուին, սոյնպէս ի
 (65բ) բարկութեանն եւ փոքունքն մեծ հուր բորբոքեն եւ հրդեհ//են
 զազգն եւ զքաղաքս, եւ որպէս զհուր սաստկացեալ ոչ միայն ցո-
 Ղուն, այլ եւ ջուր ցանեալ բորբոքէ զբոցն, սոյնպէս եւ դոյզն
 բանք ի ժամ ցասմանն վառէ զբոց բարկութեանն: Վասն որոյ եւ
 զբնաւն կամի ցածուցանել Քրիստոս զպատճառս բարկութեանն
 սպառնալով գեհենին: Վասն այսորիկ ասէ. Եւ վայրացասուամն
 պարտաւոր լիցի գեհենին: Եւ զի նախ զարքաութենէն բազում
 ինչ ճառեաց, եւ ապա զգեհենէն յուշ առնէ, զի յայտ արասցէ, թէ
 արքաութիւնն ի նորա մարդասիրութենէն պատրաստեցաւ, իսկ
 գեհենն՝ ի մերմէ ծուլութենէ եւ ի չարեաց: Եւ տե՛ս, զի աղերսիւ
 յայտ առնէ, թէ նա ոչ կամի այսպիսի ինչ սպառնալ, բայց մեք
 մեզէն ձգեմք ի մեզ զայսպիսի պատուհաս: Եւ արդ, միտ դիր
 նախ ասէ թէ. «Որ ասիցէ ռակա, պարտաւոր է ատենի»: Իբրու այ-
 սու ոչ խրատեցաւ, ասէ. «Պարտաւոր ես դատաստանի ժողովր-
 դեանն»: Եւ թէ զայս եւս արհամարհեցեր եւ ոչ խրատեցար, ա-
 պայ անհնարին պատիժ գեհենին մտանելոց ես, զի գոնեայ ի
 սպանանելն եւս ոչ մտաբերեցես, զի չիք ինչ այնպէս անհնարին
 որպէս թշնամանք զմարդկան միտս զայն ցուցանեն: Իսկ յորժամ
 թշնամանքն եւս կսկծելիք իցեն, անհնարին խարոյկ վառեն: Եւ
 մի՛ փոքր զմորոսն վարկանիցիս, զի որով ընդ հատ յանասնոց
 եմք եւ իմաստութեամբ եմք մարդիկ, եւ յայնմանէ զրկիցես զեղ-
 բայրն, զի եւ Պաւղոս ընդ շունս եւ զբամբասողն տարագրէ յար-
 քայութենէն (տե՛ս Ա Կորնթ. 2 9-10): Եւ յիրաւի իսկ, զի թշնա-
 մանողն զսիրոյն աւրէնս, որ մեծագոյնն է, լուծանէ, եւս պէսպէս
 աւճիրս զրգռէ եւ միշտ ատելութիւն գործէ եւ զՔրիստոսի ան-
 դաման քակտէ եւ զԱստուծոյ զցանկալի խաղաղութիւնն հալա-
 ծական առնէ, եւ բազում տեղի եւ մորոս տայ սատանա ի թշնա-
 մանողն եւ եւս հզորագոյն առնէ զհակառակորդն: Վասն որոյ եւ
 Քրիստոս, զի զՋիւղս զաւրութեան նորա հատցէ. յայն սակս տայ
 (66ա) այնպիսի պատուիրան, եւ բազ//ում իմն զսիրոյն պատուիրէ, զի
 մայր ամենայն բարութեան [է] եւ աշակերտացն ծանաւթ, եւ որ
 զմեր կեանս հաստատուն ունիցի նա է, եւ զարմատ թշնամու-
 թեանն ապականէ: Եւ արդ, մի՛ ընդվայր զբանսն համարիցիս, այլ

ի միտ առցես ուղղութիւնսն, եւ զարմանայցես ընդ աւրէնս նորա մեղմականս, զի ոչ այնպէս Աստուծոյ հաճոյ ինչ է, որպէս միաբանել մեզ ընդ միմեանս: Վասն այնորիկ եւ անձամբ եւ աշակերտաւքն ի նորումս եւ ի հնումն զսմանէ ճառէ, եւ յաճախ վրեժխնդիր լինի այնոցիկ, որ արհամարհեն զայսպիսի աւրէնս: Վասն որոյ ասէ թէ՛ «Ի բազմանալ անաւրէնութեանն ցամաքեսցի սէր բազմաց» (Մատթ. ԻԴ 12). որպէս Կայէն եղբայրասպան գտաւ եւ Եսաւ՝ եղբայրատեսց, նոյնպէս եւ եղբարքն՝ Յովսեփու: Վասն որոյ եւ Տէրն զապականիչս սիրոյն յամենայն կողմանց ի միջոյ բառնա, եւ յամենայն կողմանց փութացուցանէ ի նոյն. զի յետ սպառնալոյն, թէ պարտաւոր է այնպիսի ժողովրդեանն եւ դատաստանի եւ գեհեհին, յարէ դարձեալ յառաջիկանս եւ այլ եւս սոցին միաբան եւ ասէ.

Եթէ հանիցես զպատարագն ի սեղանն եւ յիշեսցես, թէ եղբայր քո ունի ինչ զբէն, թո՛ղ զպատարագն եւ ե՛րթ հաշտեա ընդ եղբար քում (Ե 23-24).

Ո՞վ մարդասիրութեան առաւելութիւն. զիւր պատիւն արհամարհեալ տայ առ զընկերն սիրելոյ, զի յայտ արասցէ, թէ զառաջինն, զոր սպառնացաւ, ոչ առ ատելութեան է եւ ոչ զի տանջիցէ, այլ զառաւելութիւն խնամոցն յայտ առնէ, խափանեսցի, ասէ ի պաշտաւնն, զի քո սէրն հաստատեսցի, քանզի եւ հաշտելն ընդ եղբաւրն պատարագ Աստուծոյ է: Վասն որոյ ոչ ասաց, թէ յետ մատուցանելոյն կամ յառաջ քան զմատուցանելն, այլ մինչդեռ առաջի կայցէ պատարագն եւ յսկիզբն ընծաին իցէ, առաքէ հատիլ ընդ եղբաւրն: Եւ վասն էր արդեաւք մի՛ զի զաւրէնսն պատուիցէ եւ լաւ եւս քան զպատարագն համարեալ: Եւ եթէ առանց սորա, եւ նա չէ ընդունելի: Եւ միւս եւս յորժամ հարկն ի վերայ կայցէ, անհնար է չհաճել: Զի յորժամ չ//հրամայիցէ մատուցանել նախքան զհաճիլն ի հարկէ ճեպի ածել ի հաշտութիւն տրամելոյն եւ լուծանել զթշնամութիւնն: Եւ ասելովն, թէ «առաջի սեղանոյն», զի եւ տեղոյն արկցէ նմա արհաւիրի: Եւ երթ, նախ հաշտեայ, ասէ, եւ ապա մատուցիր զպատարագն, զի յայտ արասցէ, թէ ամենեւին իսկ չընդունի սեղանն զայնպիսին, որ ընկերին խեթ ինչ ունիցի: Լուիցեն զայս միջամուխք խորհրդոյն, որ թշնամութիւն ընդ ընկերին ունիցին, թէ յորպիսի սեղան մատչեւոց է, լուիցեն եւ ժողովրդականք, զի եւ նոքա հաղորդութիւն

(66բ)

ունին ընդ բանին, զի եւ նոքա մատուցանեն պատարագ զաղաւթս եւ զողորմութիւնս, զի եւ այն եւս պատարագ է: Լուր մարգարէին, որ ասէ իբրեւ յերեսաց Աստուծոյ, թէ՛ «Պատարագ աւրհնութեան փառաւոր արասցէ զիս» (Սաղմ. ԽԹ 23): Եւ դարձեալ թէ՛ «Մատո Աստուծոյ պատարագ աւ[ը]հնութեան» (Սաղմ. ԽԹ 14), եւ թէ՛ «Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկորի» (Սաղմ. ՃԽ 2), զի թէ՛ աղաւթս մատուցանէս, լաւ է նախ թողուլ զաղաւթսն եւ երթալ հաճել զեղբայրն եւ ապա աղաւթել: Վասն այսորիկ ամենայն ինչ եղեւ, յայն սակս եւ Աստուած մարդ եղեւ եւ զամենայն հնարս հնարեցաւ, զի զմեզ ժողովեսցէ ի միաբանութիւն սիրոյ: Եւ աստ զվնասակարն առ վնասեալն առաքէ, իսկ յաղաւթսն՝ զզրկեալն առ զրկիչն: Անդ ասէ. «Թողէ՛ք մարդկան զյանցանս նոցա» (Մատթ. 2 14), եւ աստ ասէ. «Թէ՛ ունիցի ինչ ընդ քեզ խեղճ եղբայրն, ե՛րթ առ նա»: Զի եթէ սիրով, ասէ, ընդ ընկերին հաշտիցիս, ապա եւ զիս ընդ քեզ հաշտ առնես: Եւ մեծաւ համարձակութեամբ կարիցես մատուցանել զպատարագն, ապա եթէ դրդիցիս ի բարկութիւն, իմասջի՛ր, թէ՛ եւս առաւել Ես արհամարհեմ, զի Ես ախորժելով հրամայեցի զիմն արհամարհել զրգիւք միմեանց սիրելիք լինիցիք: Եւ զայն իսկ բաւական համարիցիք ի մխիթարութիւն ձեզ: Եւ ոչ ասաց, եթէ՛ յորժամ կարի մեծ ինչ վնաս գործեալ իցէ, հաշտեսջիք, այլ թէ՛ դոյզն ինչ խեղճ ունիցի ընդ քեզ եւ զայն ինչ ոչ յաւել թէ՛ յիրաւի իցէ կամ

(67ա) յանիրաւի, այլ թէ՛ զինչ եւ ունիցի խեղճ, թէ՛ պէտ եւ յիրաւ//ի իցէ, սակայն ոչ է պարտ թշնամութիւն ունել, զի Քրիստոս յիրաւի ցասուցեալ էր մեզ, բայց սակայն յետ զանձն փոխանակ մեր ի սպանումն: Եւ չհամարեցաւ ինչ զայն ամենայն յանցանս մեր: Նա եւ Պաւղոս այլով աւրինակաւ անէ ի հաշտութիւն՝ ասելով, թէ՛ «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ» (Եփես. Դ 26): Զի որպէս Քրիստոս ի պատճառս պատարագին անի հաշտութիւն, նոյնպէս եւ նա տուրնջեամբն յորդորէ ի նոյն, զի ամենեւին ինչ պատճառս դատապարտութեան գտանիցէ թշնամին առ ի բորբոքել զհնոց բարկութեան: Նոյնպէս եւ Քրիստոս ոչ սակաւ ինչ թոյլ տայ յապաղել, զի մի՛ ինչ պատարագն կատարիցի ի վհատութիւն անկեալ ժամ ի ժամ արարեալ յապաղիցէ, քանզի զհտէ, թէ՛ բազում երագութիւն պիտոյ է առ այնպիսի ախտ: Արդ, արգելլովն կոչէ մորոս, յառաջին թշնամութենէն արգելու, եւ հրամայելովն հաշտել զայն, որ յետոյ թշնամութիւն մտանելոց ի-

ցէ, խափանէ: Եւ տես, զիարդ զերկոսինս սաստկութեամբ բարբա-
 ուի: Զի անդ գեհէն սպառնաց եւ աստ զպա[տ]արա[գ]աւք յիսկ
 չընդունի, զի ցուցցէ, թէ որչափ ինչ չար իցէ ախտ բարկու-
 թեանն, եւ այսու ամենայնիւ զարմատն եւ զպտուղն կամի ջնջել:
 Վասն այսորիկ եւ զդատաստանէ ճառէ, եւ ի ժողովրդեանն եւ ի
 գեհէնին պատժապարտս առնէ, եւ զպատարագն ի սեղանն ա-
 պախտ առնէ յառաջ քան զհաշտելն: Ապա յաւելու ի նոյնն եւ
 զմիւսն, եթէ՝ յառաջագոյն հաշտեալիւ ընդ ոսոխին քում վաղա-
 գոյն մինչդեռ իցես ընդ մահ ճանապարհի, զի մի ասիցես, թէ ըն-
 դէր զրկիցիմ եւ յապշտակութիւն մատնիցիմ: Եւ զայն եւս պատ-
 ճառս ի միջոյ բառնաս, եւ հրամայէ այնպէս մի՛ թշնամութիւն
 ընդ ումեք ունել: Եւ այս մեծ հրաման է, եւ ի մերձաւորացս տա
 խրատ, զի թանձրամիտսն այլ աւելի քան զհանդերձեալսն սովոր
 է գրաւել: Եւ արդ, զի՞ ասիցես, թէ բուռն քան զիս է եւ եւս չար
 (67բ) հաղթահարէ. Եթէ ոչ յառաջագոյն հաշտիցիս//. եւ [հ]արկիցէ քեզ
 ատեան մտանել, զի յառաջ քան զատեան մտանելն, թէպէտ եւ
 յնչից անկանիցիս, սակայն անձին տեր ես: Իսկ յորժամ ի ձեռս
 դատաւորի մատնիցիս ե՛լ ի կապանս եւս մտանես, ե՛լ զյետին
 պատիժս կրիցես: Վասն այնորիկ յառաջագոյն ստիպէ հաշտել
 ընդ ոսոխին, եւ յարէ ի նոյն, թէ վաղագոյն եւ թէ մինչդեռ ի ճա-
 նապարհի իցես եւ այսու ամենայնիւ ստիպէ փութագոյն լինել ի
 սերն, զի ոչ այնչափ եղծանէ զմեր ոճս, իբրեւ զծուլութիւն ի
 գործս պատուիրանաց: Վասն որոյ եւ Պաւղոս յառաջ քան զմտա-
 նելն արեգականն խրատէ քակել զթշնամութիւնն: Եւ Տէրն առաջ
 քան զմատուցանել պատարագին հրաման հաշտել, նոյնպէս եւ
 աստ. մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի եւ մինչ չես մտեալ
 իցես յատեան, տէրն ես ամենայնի: Իսկ յորժամ ընդ հարկաւ
 մտանիցես ոչ որպէս դուռն կամիցիս, այլ որպէս բռնութիւնն հրա-
 մաիցէ, այն լինի: Եւ արդ, զինչ իցէ բարի միտս ունել ընդ աւսո-
 խին կամ այն իսկ է բնաւ յանձին. ունել զվնասն կամ այնպէս
 տալ իրաւունս որպէս թէ ընդ դատաւորաւն իսկ մտեալ իցէ եւ
 զարդարակշիռն կորովիցէ, զի մի՛ անձնսիրութեամբն զիրաւունս
 կորուսցէ: Այլ որպէս զիւրն, նոյնպէս եւ զընկերին իրս վճարիցէ,
 եւ եթէ մեծ ինչ թուիցի այս ընդ այն, մի՛ զարմանար, զի վասն
 ետ զայս ամենայն երանութիւնս՝ առ ի յորդորել եւ յերիւրել
 զմիտս լսողացն, զի պիտանացու լիցի առ յնդունել զայս ամե-
 նայն աւրէնսդրութիւնս: Իսկ ոմանք ասեն, եթէ զսատանայէ

արկնարկէ ոսոխին անուամբ եւ հրաման ոչինչ ունել ի նորայոցն, զի այն է՝ բարեմիտն լինել, հրաժարելն ի նմանէ: Յորժամ աստի երթեալ ոչ ինչ գտանիցի նորա մասն ի սմա: Ապա եթէ ոչ այնպէս իցէ՝ անհրաժեշտ լինիցի տանջանքն: Բայց ինձ այս թուի, եթէ զայնմ դատաւորաց եւ զատենէ եւ զբանդէ ասէ, որպէս Պաւղոս մերթ հանդերձելովքն եւ մերթ մաւտաւորաւքս յորդորէ զլսողսն: Վասն որոյ հարկէ հնազանդ լինել իշխանացն, զի Աստուծոյ պաշտաւնեայք են ի նոյն կարգեալք: Սոյ[նպէս] եւ Քրիստոս. ոչ միայն գեհենիւն, այլ եւ ատենիւ եւ բանդիւ, որ աստ դիպիցին, սպառնայ, զի այսու ամենայնիւ զարմատ սպանութեանն կոտորիցէ, զի որ ոչ բամբասիցէ եւ ոչ թշնամութիւն ընդ ումեք ունիցի զիւրդ իցէ, զի սպանանել ժտիցի: Զի այսու յայտ լիցի, եթէ որ ընկերին յաւգուտ է եւ մեզ աւգուտ գործէ, զի որ ընդ ոսոխին բարեաւք միտս ունիցի, որչափ եւս առաւել իւր շահ առնիցէ, զի յատենից եւ ի բանդից եւ յամենայն տառապանաց զանձն ազատիցէ եւ զպատուիրանս նորա կատարիցէ եւ մեծութեան փառացն նորա հասանիցէ:

Լուարոք, զի ասաց առաջնոցն եթէ մի շնայցես, այլ ես¹ ասեմ ձեզ, թէ ամենայն մարդ որ հաի ի կին մարդ առ ի ցանկեալ, անդէն շնացաւ ի սրտի իրում (Ե 27-28).

Յորժամ կատարեաց զառաջին պատուիրանն եւ ի գլուխ առաքինութեան տարաւ հասոյց, ապա իբրեւ յուղի անկեալ զայ հասանէ յերկրորդ պատուիրանն, զի գոնեայ այնու հաւանիցին մարդիկ աւրինացն, զոր չէ պարտ երկրորդ պատուիրան կոչել, այլ եր[ը]րորդ, զի առաջին ոչ այն է, թէ՝ «Մի սպանանէր», այլ այն է թէ՝ «Տէր Աստուած քո Տէր մի է» (Բ Օր. 2 4): Զոր եւ պարտ իսկ է խնդրել, եթէ ընդէր ոչ անդի արար սկիզբն, ուստի սկիզբն պարտ էր առնել եւ զնոյն աճեցուցանել եւ զիւր անձն ծանուցանել, այլ քանզի չէր ժամանակ զիւր անձն յայտնել, զի դեռ ի խրատականսն կրթել կամէր եւ նշանաւքն հաւանեցուցանել, թէ արդարեւ Որդի Աստուծոյ է, զի թէ վաղվաղակի ասացեալ էր, թէ լուարոք, զի ասացաւ, թէ՝ «Ես եմ Տէր Աստուած քո» (Ծննդ. ԺԵ 7, Ել. Ի 2,5): Եւ անդէն ասէր, թէ «Եւ ինձ եւս

¹ Չեռագրում՝ մի շնայցես, այլ ես ասեմ ձեզ, թէ՝ Մի շնայցես այլ ես փխ եթէ՝ մի շնայցես, այլ ես:

(68բ) երկրպագէք» (Ել. ԺԱ 8): Զամենեսեան խրտուցանէր իբր ի մոլեկան հայել ի նա, զի թէ յետ անչափ վարդապետութեանց եւ նշանաց եւ մինչ չեւ այնպիսի ինչ յայտնեալ էր դիւահար կոչէին զնա: Եթէ յառաջ այդպիսի ինչ յայտնեալ էր զինչ ինչ ոչ կոչէին զնա, իսկ ի դէպ ժամանակ պահելով զայսպիսի ինչ վարդապետութիւն[ս] դիւրընկալ առնէր բազմ//աց զկրաւնսն: Վասն որոյ առ ժամանակ մի զանցուցանէր զայնու եւ զառաւել վարդապետութիւնն յետոյ յայտ առնէր բանիւք, բայց նախ նշանացն հանդիսիւք եւ վարդապետութեանն աւրինակաւ առ սակաւ մեղմով ընդ նմին խառնեալ յայտնէր, զի իշխանութեամբ այնպիսի աւրէնս դնել եւ կարգել ուղղութիւնս զգուշականս մտադիւրս առ սակաւ մեղմով ի կրաւնս իսկ ածեալ ձգեր, քանզի ասէ իսկ, եթէ զարմանաին ընդ վարդապետութիւն նորա, զի ոչ իբրեւ զդպիրսն ուսուցանէր: Եւ սկսել յընդոյծին ախտիցն մերոց ի ցասմանէն եւ ցանկութենէն, քանզի եւ նոքա իսկ բռնաւորագոյնք իմն են ի մեզ, եւ քան զայլս առաւել բնակաւորք են ի մեզ: Վասն որոյ բազում իշխանութեամբ ածէ զայսպիսի¹ ախտս յուղղութիւն, եւ ամենայն հաստատութեամբ խափանեալ արգելոյր, զի ոչ ասաց. եթէ շնացողն միայն իցէ տանջելոց, այլ եւ զարատ հայեցողսն ի տանջանս հրաւիրէ, զի իմասցիս եթէ յաճախագոյն քան զդպրացն ճառէ: Վասն որոյ ասէ, թէ`

Որ հայի ի կին մարդ ցանկութեամբ արդէն շնացաւ ընդ նմա ի սրտին (Ե 28).

Այսինքն` որ յայն հարեալ զայն եւեթ գործ առնիցէ իւր զգեղեցիկ մարմինն նշմարելով հանապազ եւ զմիտսն կրթեալ յապուշ որսայցէ անհնարին ցանկութիւն ապականիչ զննելով աչացն: Քանզի ոչ եթէ զմարմինս եւեթ եկն զերծուցանել ի չարեաց, այլ եւ` զոգիս նախ: Եւ քանզի ի սիրտն զշնորհս Հոգւոյն ընդունիմք վնաս նախ սրբէ: Բայց աստ ոչ վայրապար զցանկութիւնն ի միջոյ բառնայ, այլ որ ի գեղեցիկ երեսաց զրգուութիւն ցանկութեան լինի: Վասն որոյ չասաց եթէ` որ ցանկայցէ, շնայ, այլ` «Որ հայիցի ցանկութեամբ»: Եւ որպէս ի բարկութեանն խտրոց ի միջի դնէ ասելովն, թէ` «Որ ի տարապարտուց եւ զուր բարկանա» (Մատթ. Ե 22) սոյնպէս եւ աստ խտրոց ի միջի դնէ, եթէ` «Որ

¹ Տողամիջում սի:

(69ա) ցանկութեամբ հայիցի»: Եւ ոչ պարզաբար ասաց, եթէ՝ // Որ ոք ցանկայցէ. զի որք ի լերինսն նստիցին չեն առանց ցանկութեան, քանզի երկոքեան ընդաբոյսք եւ ի բարի պետս հաստատեալ են ի մեզ ցասումն եւ ցանկութիւն, զի միովն չարսն խրատեմք եւ գստահակսն յուղղութիւն ածեմք եւ միւսովն որդիս ծնանիմք եւ պայազատ ժառանգ յետ մեզ թողումք: Վասն այսորիկ սրբէ յամենայն ախտից զայս երկու բոյս բարեաց, զոր հաստատեաց ի մեզ ի գործս բարեաց: Իսկ աւելորդ ցանկութիւնն ոչ եթէ ի բնութենէ ինչ լինիցի, այլ՝ ի քումմէ ծուլութենէ, զոր եւ հինն իսկ պատուիրէ անդուստ ի վերուստ, եթէ մի պշնուցուս ընդ գեղ աւտար (Հմմտ. Սիրաք. ԻԵ 28, ԽԱ 26) զի որ մի անգամ զբոց ցանկութեան բորբոքէ, այնպիսին կանգնէ ի միտսն կուռս իրացն աղտեղութեան եւ բազում մուտ եւ ընդարձակ տեղիս տայ սատանաի: Եւ այնուհետեւ ոչ կարիցես մերժել զնա ի բաց, յորժամ ի ներքս ի խորհուրդն ընդունիցիս: Վասն որոյ ասէ իսկ, թէ՝ Մի շնայցես աչաւքդ, զի մի եւ մտաւքդ եւս շնայցես:

Նա եւ ոչ վասն այն իսկ ետ քեզ Աստուած աչս, զի նոքաւք շնայցես, այլ զի տեսանիցես զարարածս եւ փառաւորիցես զարարիչն եւ ոչ զի զննիցես զգեղ լկտի կանանց, որք պաճուճեալ գեղով մատուցանեն զբաժակ մահու, թէպէտ եւ ոչ ոք իցէ, որ ըմբիցէ, այլ ոչ ասեն թէ առ կանայս ինչ իցէ աւրէնսդրութիւնն, այլ ես ցուցանեմ առ հասարակ առ արս եւ կանայս կարգեաց զաւրէնս, թէպէտ ընդ արս խաւսի գլխովն, առ ամենայն իսկ մարմինն կարգէ զխրատն, զի զայր եւ զկին մի՛ ինչ երես դիտէ կոչել, եւ ոչ ուրէք որոշէ ազգս ազգաց աւրէնսդրութեանն: Ապա թէ առանձինն կամիցիս զնոցա պատուհասն լսել, լուր Եսաեայ, որ յաճախ յերգ արկեալ [հե գ]նէ զնոցա կերպարանս եւ զհայեցուածս եւ զքարչել ստորոտոցն այլովքն հանդերձ (Հմմտ. Ես. Գ 16): Եւ Պաւղոս յանդիմանէ եւ բազում աւրէնսդրութիւն կարգէ նոցա:

(69բ) Նա եւ Քրիստոս յաջորդաւքն, իբրեւ առակալ իմն, զնոյն ճառէ, // յորժամ ասիցէ՝ Խլեայ ի բաց ընկեայ զմոլորեցուցիչն ի նոսա իմն հայեցեալ ասէ զնոյն սաստիւ, քանզի յարէ ի նոյն.

Թէ ակն քո աջ գայթակղեսցէ զքեզ, խլեայ զնա եւ ընկեայ ի բաց (Ե 29ա)

Ոչ զանդամոցն ինչ ասէ, քաւ լիցի, այլ ամենայն իրաւք զչար բանն բամբասէ, զի ոչ աչքն եւեթ տեսանեն, այլ միտքն են,

որ տան աչացն տեսանել. զի, յորժամ միտքն զբաւսեալ իցեն, աչքն ոչ տեսանեն զմերձաւորն, զի յայտ լիցի, եթէ ոչ ամենայն ինչ աչացն ազդմանէ, այլ՝ մտացն: Ապ[ա] եթէ ոչ, զիարդ զաջ աին միայն տա խլել, զի եւ ձախն զնոյն գործէ. զի յայտ լիցի, թէ ոչ վասն անդամոց ինչ իցեն բանքն, այլ վասն այնոցիկ, որ կարի ինչ ընտանութիւն ունիցին ընդ մեզ. զի եթէ այնպէս զոք սիրիցես իբրեւ զաջոյ աին եւ կամ թէ այնպէս պիտանի ոք իցէ քեզ իբրեւ զաջ ձեռդ, եւ ոգւոյդ վնաս ինչ առնիցէ, հատ եւ ի բաց ընկեայ: Եւ տե՛ս, զիարդ ոչ ասաց, եթէ մերժեաց ի նմանէ, այլ բազում որոշումն յայտ առնէ, «խլեայ ասէ, եւ ի բաց ընկեայ»: Եւ զի համառուտ իմն եւ ահագին ետ զհրամանն, ցուցանէ ի միւսմէ կողմանէն զչահն ի բարութեանցն եւ զչարեացն զվնասն, եւ յամէ յայլասացիկ յորջորջմանն.

Լաւ իցէ քեզ,~ ասէ,~ թէ մի յանդամոց քոց կորիցէ, քան թէ ամէնայն մարմինդ անկանիցի ի գեհեճն (Ե 29բ).

Յորժամ ինքն ոչ ապրիցի եւ զքեզ եւս կորուսանիցէ: Եւ եթէ երկոքեան ընկղմիցին, զի՞նչ շահ ի միաբանութենէ սիրոյն լինիցի: Վասն որոյ ոչ միայն ասէ թէ՝ «խլեայ» եւեթ, այլ թէ՝ «Եւ ի բաց ընկեայ». զի մի միւս անգամ անդրէն դարձցիս, այնպէս զնա իսկ ի բազում պատուհասից փրկեսցես եւ զքեզ ազատ ի կորստենէ առնիցես, զի թէ հարի ինչ լինէր զմի յանդամոցդ հատանել եւ զայլ ապրեցուցանել կամ թէ զբոլորն կորուսանել, ոչ ապաքէն ախորժեք զհատումն միոյ անդամոյն, քան զկորուստ բոլորին: Տեսանես, որչափ զգաւնութեամբ եւ խնամով լի են նորա պատուիրանքն: Եւ որ կարծերն//բազմաց սաստիկ գոլ, զոր [...] ¹ անդի երեւի նորա առաւել մարդասիրութիւնն, զի յամեն կողմանց զքո աւգուտ խնդրէ: Վասն որոյ ասէ. «Ոչ եկի ես լուծանել զաւրէնս եւ զմարգարէս, այլ՝ կատարել» (Մատթ. Ե 17) եւ կատարումն թերութեան լինի պիտոյ եւ թէ զինչ է կատարումն մարգարէից, յայտ առնէ. «Ահաւասիկ, ասէ, ելանեմք յերուսաղէմ եւ կատարի ամենայն ինչ որ մի անգամ գրեալ է վասն իմ» (Հմմտ. Մատթ. Ի 18, Մարկ. Ժ 33, Ղուկ. ԺԸ 31): Եւ վասն նոցին թերութեան ասաց. թէ՝ Անցեալ են առաջինքն, այլ զայս, որ մկրտտին ի կատարումն եւ ընկղմեցան ի յաւելուածն եւ նորո-

¹ 1 բառ:

գեցան առաւելութեամբն: Ասէ. «Դիւրագոյն է երկնի եւ երկրի անցանել քան յաւրինաց անտի միում նշանի անկանել» (Մատթ. Ե 18), եւ ամենայն, որ լուծանիցէ, ասէ, ինչ մի ի պատուիրանաց Նորոց Կտակարանաց:

Որ հարկանէ զծնատ քո, մատոյ դու նմա զմիւս կողմն (Ե 39).

Եւ հաստատէ զայն, զի ասէ ապտակ ընդ ապտակի թերի է այն, որ հաստատեաց, կացոյց ստուգութիւնն ի ժամանակ շնորհացն:

Եթէ ոչ, ասէ, առաւել գտանիցի արդարութիւն ձեր քան զդարացն եւ փարիսեցոցն, ոչ կարէք մտանել արքայութիւնն երկնից (Ե 20).

Արդ, նոցա ասացաւ ոչ սպանանել, եւ ձեզ՝ ոչ բարկանալ, նոցա՝ ոչ շնալ, եւ ձեզ՝ ոչ ցանկալ, նոցա՝ ապտակ ընդ ապտակի, այլ աստ. «Որ հարկանէ զծնաւտ քո, մատոյ դու նմա զմիւս եւս կողմն»: Եւ ուսուցանէ այլ կերպս.

Եթէ յորժամ մատուցեալ իցէ քո, ասէ, պատարագ ի վերայ սեղանոյ, թող զպատարագն քո եւ երթ հաշտեաց (Ե 23). զի մի՛ կարծիս դիցէ ի վերա ստուգութեանն, եթէ վասն պատարագին անփոյթ արար եւ ոչ պահանջես զյանցաւորն. «Եթէ ոչ, ասէ, առաւել գտցի արդարութիւն ձեր քան զդարացն եւ փարիսեցոցն»: Քանզի հրամանն աւրէնքն ասէ. «Մի՛ լինիր հասկաքաղ զկնի հնձողացն յանդի քում» (Բ Օր. ԻԴ 20): Եւ «Մի՛ առնէր ճռաքաղ զայգին քո այլ աղքատ այս ասէ եղիցի այն» (Ղեւ. ԺԹ 10): Եւ այն այնոցիկ, որ ընդ աւրինաւքն են: Իսկ արդ, այնոցիկ, որ քրիստոնեայք են զինչ եւս ասացէ, որոց Տէրն մեր ասաց. «Եթէ ոչ առաւել գտցի արդարութիւն ձեր աւելի քան դարացն եւ փարիսեցոցն, ոչ կարէք մտանել // յարքայութիւնն երկնից»:

Զայս լուարոք, ասէ, զի ասացաւ. Մի սպանանէր, զի որ սպանանէ դատապարտէ, այլ ես ասեմ ձեզ. որ կարդա եղբար իրում յիմար (Ե 21-22).

Եւ զի եւ այս եւս փոքրկութեամբ զայթակղեցուցանէ զմարդկութիւն. տգետ զգնացս ժամու ճանաչէ, իսկ իմաստունն՝ զգնացս խորհրդոց: Արդ, կատարեալս ի մէջ կատարելոց կամեցաւ մուծանել. այսինքն՝ կատարեալս ի մէջ հրեշտակաց: Առ Տէր

մեր արդարք պարտաւոր են, սոյնպէս նոքա յաչս միմեանց: Ետ ազատութիւն մարդոյն լինել նմանողս Աստուծոյ, զի կամաւք ստասցի զայն, ինչ զոր Աստուած բնութեամբ իւրով ունի: Եւ հայեաց դու, զի եւ նա իսկ թէպէտ եւ բնութեամբ ունէր, սակայն իբրեւ ազատութեամբ չըջեցաւ:

Լուարոք, ասէ, զի, ասացաւ, թէ՛ Մի շնար, այլ ես ասեմ ձեզ, թէ ամենայն, որ հայի եւ ցանկա, շնացաւ (Ե 27).

Քանզի էին, որ սիրէին գստացուածս եւ գփափկութիւնս գրգանաց եւ զբան չարութեան, ասէ Տէր մեր, զի եթէ ձեռն քո կամ ոտն քո, զի թէ մինչ յանդամս անգամ ասացի քեզ, զիա՞րդ անխաես դու ի վերա ստացուածոց կամ ի վերա փափկութեան գրգանաց. զի եթէ դադարեցուցանես ի քեզ անդամաւն հատանելով զանէծս եւ զհայհոյութիւն եւ թշնամանս, ընդէ՞ր ոչ հատանես դու զլեզու քո, զի ի հարկէ միոյ անդամէ անտի հանգիստ ամենայն ցաւոց լինի կամ թէ չարաչար գործեցեր, զի ոչ հատեր կամ թէ բարեաւք ոչ լուար կամ թէ չար հատէր զանդամն կամ անմտութեամբ լուար զպատուիրանն, զի այնու, որ ոչ հատէր զանձն քո յանդիմանեցար, թէ չար գործեցեր, զի ոչ հատէր, զի ի չարչարանաց երկեար դու եւ կամեցար լուծանել զպատուիրանն, զի մի՛ ապականեսցես զանդամն:

Բայց արդ, աղէ տեսցուք, եթէ դադարե՞ն հա[յ]հոյութիւնք ի հատանել¹ լեզուին. չարաչար գործեն այնոքիկ, որ ոչ հատանեն, ապա եթէ ոչ դա՞րեն², չարաչար լուան այնոքիկ, որ հատին: Կամ (71ա) ինքն՝ Տէր մեր զի՞արդ հրամաէր հատանել զանդ//ամն այն, որ ի հատանել նոցա մարմինն ապականի եւ կնճիռն ոչ խլի: Արդ, ոչ եթէ զանդամս գեղեցիկս, զոր յաւեաց Աստուածութիւնն, արժան է հատանել, այլ զխորհուրդս չարս, զոր [յաւեւ ազա]տութիւն: Եւ զայս դարձեալ եցոյց Տէր մեր, թէ մինչեւ յոր վայր պարտ է մեզ մարտնչել, զի մի՛ իցեմք յաղթահարեալ ի չարէն. իբրեւ զայն, զի ասէ. Մի՛ պատառէք զհանդերձս, այլ՝ զսիրտս. զի մեծատանն մեծութիւն իւր աջ ձեռն էր: Եւ գայթակղեցոյց զնա,

¹ Չեռագրում՝ հատատանել:

² Թերևս՝ դարարեն:

զի ոչ հար ընկեաց զնա: Եւ Հերովդի¹ աջ ակն էր Հերովդիադա, եւ փոխանակ խլելոյ ընկնլոյ զակն պիղծ, հար ընկեաց զսուրբ կառափն Յովհանու: Շմաւովն զամենայն անդամն հին մարդոյն հար ընկեաց, զի մի՛ գայթակղեցուցէ զնա, ահաւասիկ ասէ. «Մեք թողաք զամենայն» (Մատթ. ԺԹ 27):

Արդ, յորժամ լսես դու զամենայն, գիտասջիր, թէ ոչ ակն եւ ոչ ունկն եւ ոչ այլ ինչ թողին զհին մարդոյն, որ ոչ խլեցին ընկեցին: Ակն՝ զցանկութիւն, որ ի ձեռն ական ասէ, եւ ականջ՝ զչարախաւսութիւն, եւ այսպէս մի ըստ միոջէ: Եւ աստի առաքեալ յասելն. «Սպանէք զանդամս ձեր» (Կողոս. Գ 5), այսինքն՝ զպոռնկութիւն այլովքն հանդերձ: Բայց դարձեալ աջ ակն՝ սեր, քանզի սիրով ցանգս կնոջ, եւ վասն այսր պատճառի եկին այս ճառք ի մէջ, եւ ձեռն՝ կերակրչութիւն, եւ ոտն՝ թիկունք: Եւ վասն լեզուի ոչ ասաց, զի ոչ եթէ երկու լեզուք եւ ի մարմնի, եւ վասն լեզուի հատանել ոչ ասաց, սակայն լռութեամբ հակառակ լեզուի ասէ. «Որ ասէ զեղբայր իւր անարգ կամ յիմար»:

Այլ տես դու, զի ոչ եթէ որպէս արկանեսն այնպէս լինի քեզ հատուցումն, զի եթէ ասացեալ լինի ի վերա շան, թէ շուն է, ոչ քեզ վարձք են յայսմիկ եւ ոչ նա դարձեալ աւելի ինչ հատուցումն ընդունի քան որ արժանին է: Ապա եթէ հոգ տանիցի նմա այն, ինչ, զոր ասացին ի վերա նորա, Նա ընդ միոյ երկու քան որ էրն, յառաջ առաւելու եւ ի վերա քո հասանէ այն, զի ասէ. «Որպէս կամեցաւ նա առ եղբաւր իւրում, եղիցի նմա»: Զի ստուգութիւն՝ այն որ փութաս դու դարձուցանել նմա զփո//խարենն իմ չէ լոյծ եւ հեղգ դարձուցանել եւ քեզ փոխարէն փոխոյն քո: Արդ, սպանումն յանդիմանեցելոյն դառնա ի վերա յանդիմանչին, սոյնպէս շնութիւն զրպարտեցելոյն դառնա ի վերա զրպարտչին: Ժողովրդեանն կռապաշտութիւն շնութիւն կոչեցաւ նմա: Արդ, ոչ է աւտար եւ սմա եւս կոչել նմա զրպարտութիւն իւր շնութիւն, զի եւ սա եւս պոռնկեցաւ ի ճշմարտութենէ անտի: Քննեայ զնա եւ տես, զի մի են ամենեքին: Արդ, է ժամանակ, զի զգործ չարութեան ընկենու սատանա ի վերա մարդոյ ի ձեռն միոյ յանդամաց Նորա եւ շարժէ զնա: Եւ է զի այլոց բերանաւք ընկենու ի վերա նորա ստուգութեամբ, մի յանուանց չարաց եւ

¹ Չնուագրում՝ Հերովդի:

աղտեղէ զնա, իբրու զաւրացուցանէ զնա չարախաւսութեամբ ի զրպարտել եւ լսողք ի հաւատալ:

Լուարութ,- ասէ,- զի ասացաւ. ակն ընդ ական, այլ ես ասեմ ձեզ՝ մի՛ կալ հակառակ չարին (Ե 38-39).

Այլ զի կատարեցան ժամանակքն որ եկեալ էին ի չափ սննդեանն, ապա քարոզեցաւ առողջ կերակուրն, զի նախ յառաջագոյն եղան ժամանակք յանդիմանիչք, զի նախ ի չարեաց արժան է որոշել իբրեւ կատարեաց զստուգութիւնն զսահմանն իւր, սոյնպէս եւ ողորմութիւն շնորհացն զկատարումն իւր: «Ակն ընդ ական» (Ղեւ. ԻԴ 20) կատարումն է ստուգութեան, եւ «Որ հարկանէ զծնաւտ քո, մատոյ նմա զմիւս կողմն»՝ կատարումն է շնորհացն: Եւ, իբրեւ երկոքեան հանապազորդ էին զճաշակս իւրեանց, բղխեցին մեզ կտակարանաւքն, առաջինն գազան սպանանէր ի քաւութիւն, զի ոչ թող ստուգութիւնն միումն փոխանակ միւսոյն մեռանել, եւ երկրորդն սահմանեցաւ արեամբ մարդոյ, այն որ շնորհաւք իւրովք ետ յանձն իւր ընդ ամենայնի: Արդ եղեւ մին սկիզբն եւ միւսն եւս կատարած, զի այն առ որում կատարածն եւ սկիզբն է, նա է կատարեալ առանց իմաստութեան հանճարոյ յապաղեալ եւ զատեալ են ի միմեանց սկիզբն եւ կատարածն, այլ քննութեամբ մի են: Այսուհետեւ շրջեցաւ այն ծնաւտն ծնաւտի կատարումն. «Որ հարկանէ զծնաւտ // քո, մատոյ նմա զմիւս կողմն»: Արդ, գառաջինն [գիտացաք արմ]ատով իբրեւ զՂուր, այլ ըստ պահպանութեան այս «Որ հարկանէ զծնաւտ քո» արբաք իբրեւ զգինի: Արդ, մինն լինի մեզ, զի մի մոռասցուք եւ մոռցուք զաւտարութիւն: Եւ միւսն եւս լինի մեզ յաւատութիւն, զի մի՛ խոտորիցիմք եւ առնիցեմք զայն, ինչ որ անցեալ իցէ: Եւ ներկաւ իբրեւ զՂուրքն, զի եղեն գինի: Եւ այսպէս ամենայն աւր զաւագտութիւն մեր խնդրեսցուք իբր ի պակասութենէ, թէ յայլոց հեռի իցեմք ընդ մեզ ինչ մի՛ լիցի համարեալ մեզ, զի վասն մեր առաք հրաման սիրել զթշնամիս մեր եւ ոչ վասն նոցա: Եկն Տէր մեր աշխարհ եւ մարմնեղէն պարգեւաւքն պարտեաց զնոսա իբրեւ զանմեղ տղայս եւ մի ի հարուածոց անտի, զոր արարին առաջինքն առ ժողովուրդն, Նա ոչ գործեաց, եւ իբրեւ պարտեաց, ած զնոսա առ ինքն երեւոյթ բժշկութեամբքն սկսաւ խառնել նոցա զհոգեւոր բժշկութիւնս յայնմիկ՝ «Եթէ հաւատաս դու», ասէ: Եւ քանզի կատարեալ էր նա քան զամենայն

(72ա)

ուսուցիչս այն, ինչ չափովք որ չափովք աճէր եւ գայր ի ձեռն առաջնոցն: Իբրեւ եկն եհաս առ նա, ետ զպտուղ կատարեալ ճաշակաւ իւրով տանջեցաւ ի ծնաւտ իւր ցոյց ընդ պատուիրանին եւ գործն եւ ուսոյց ասէ, ասէ. «Որ հարկանէ զծնաւտ քո, դարձոյ դու նմա զմիւսն»: Մովսէս հան վերացոյց յաշտիճանէ անթլփատութեանն ի թլփատութիւն, եւ հաստատեաց¹, կացոյց յաշտիճան ստուգութեան, ասէ՝ «Մի՛ հարկանէր ընկեր քո անիրաւութեամբ, ապա եթէ հարկանէ զքեզ, խնդրեայ զվրէժ ան[ձին քո]² ստուգութեամբ» (Հմմտ. Բ Օր. ԼԲ 41): Այլ Տէր մեր հան վերացոյց աշտիճանէ անտի ստուգութեանն, եւ հաստատեաց կացոյց յաշտիճան շնորհացն, զի մի՛ խնդրեսցէ[ս] զվրէժ յայնմանէ, որ եհար զծնաւտ քո, այլ մատոյ դու նմա զմիւսն եւս: Արդ գուցէ մինչդեռ կամի ոք հարկանել ստուգութեամբ այնու Մովսէսին, կորուսանէ զայն, որ ուսոյց նմա, թէ՛ մի հարկանէր անիրաւութեամբ // զի թէպէտ եւ առ հատուցումն այնմիկ, զի պահանջեցան, այլ ոչ պարտի յայնմիկ, զի ոչ անիրաւեցաւ: Եւ որպէս, զի յաւելու ոք զվաշխ տոկոսացն ի վերա գլխոյն, այնու մեր տէրունիւն, կորուսանէ՞ զայն, որ ոչն պահանջեցաւ, վասն այնր, զի թող: Ո՞չ ահա հատուցումն առաջին ապտակին պահեալ է նմա ի հարկէ, վասն զի տանջեցաւ եւ հատուցումն միւսոյ ապտակի գոյ նմա թէպէտ եւ ոչ տանջեցաւ, վասն զի մատոյց նմա: Արդ, ազատեաց յանիրաւութենէն որպէս Մովսէս, եւ յաւել աւելի քաջ քան զՄովսէս: Իսկ այն, որ պահանջողն լինի կորուսանելով կորուսանէ: Արդ, ոչ կամի եթէ կողոպտեալ լիցին ի ծածուկ սիրելիք շահիցն, այլ ուսոյց նոցա համբերութեամբ իւրով, եթէ գորպիսի՞ փառս շահի համբերութիւն: Եւ քանի բազում են պահանջողք նորա, զի ինքն զանձն իւր ոչ պահանջեաց: Նա իբր ի փայտի անդ բեւեռեալ³. լուսաւորքն ի մտանելն իւրեանց եղեն նորա պահանջողք եւ վրէժխնդիրք: Այլ, աղէ տե՛ս դու, զի եւ ինքեանք բարբառքն թուին ընդդէմ միմեանց, սակայն ի գաւրութիւն շահիցն կապեալ են նոքա: Յառաջին աշտիճանէ անտի սկիզբն արասցուք իմանալ զաւգուտն մեր: Շահ մեծ է այնմիկ, որ ոչն հարկանէ զընկեր իւր անիրաւութեամբ եւ աւգուտ մեծ է յայնմիկ, որ ոչն խնդրէ զվրէժ անձին իւրոյ ի չարչարէ անտի իւրմէ

¹ Ձեռագրում՝ հաստատեաց:

² Ձիւ-ի փոխարեն ձեռագրում բազմակետ:

³ Ձեռագրում՝ բեւեռեալեալ (եալ-ը ջնջուած) էր:

ստուգուածութեամբ: Եւ յաղթութիւն մեծ է այնմիկ, որ մատուցանէ զմիւս կողմն շնորհաւք: Եւ զի ոչ անիրաւեցաւ, վասն այնորիկ ոչ պատժի: Եւ զի ոչ խնդրեաց զվրէժ իւր վասն այնորիկ առնու զհատուցումն, եւ յաւել եւս զմիւս կողմն, վասն այնորիկ պսակի:

Ասացաւ ասէ, Որ արձակէ զկիս իւր, տացէ նմա զգիր արձակմանն: Բայց ասեմ ձեզ, թէ որ արձակէ զկիս իւր առանց բանի պոռնկութեան, նա տա նմա շնալ, եւ որ զարձակեալն առնու, շնա (Ե 32):

(73ա) Ոչ նախ եւս յառաջ մատչի մինչեւ զառաջին քաջ ի բաց սրբիցէ: Եւ նա // աւանիկ եւ այլ իմն նշանակ շնութեան ցուցանեմք աստ եւ թէ զինչ իցէ ասացից. աւրէնք իմն հին էին. եթէ այն, որ ատիցէ զկին իւր յինչ պատճառս եւ իցէ, մի ոք արգել հանել, եւ փոխանակ այլ ածել ի տուն: Եւ թուղթ եւս ապարհազի տալ կնոջն, զի մի՛ լիցի նմա իշխանութիւն առ այր իւր դառնալ, զի մի՛ գոնեայ կերպարանաւք ինչ հայթայթանք լինիցին երկրորդ ամուսնութեան: Եւ թէ համարձակեալ էր զառաջինն հանել եւ այլ առնել եւ դարձեալ յառաջինն դառնալ, բազում չար խառնակութիւն լինէր, եւ միշտ զմիմեանց կանայս յապշտակէին, եւ յայտնի իսկ հանապազ շնութիւնք գործէին: Վասն որոյ հնարեցաւ զայս տալ զիր ապահարզանի. զի թէ հրամաեալ էր աւրինացն զատել ի կինն ի տան ունել, սպանանէր իսկ զատել ի կինն, զի այնպէս յանդուգն էր հրէից ազգն. զի յորդիսն ոչ խնայէին եւ զմարգարէսն կոտորէին, եւ իբրեւ ջուր հեղուին զարիւն, որչափ եւս եւ ի կանայսն չխնայէին: Վասն այնորիկ զփոքրն թողացուցանէ, զի զմեծ վնասն խափանիցէ: Եւ զի յառաջինսն այսպիսի աւրէնք ոչ էին, լուր զինչ ասէ. «Մովսէս, ասէ, վասն խստասրտութեան ձերոյ հրամանաց զայն» (Մատթ. ԺԹ 8), զի մի անդեն ի տան մահս գործիցէք, այլ ի բաց հանջիք: Եւ զի ոչ միայն զսպանութիւնն, այլ եւ զցասումն կարճէ, յայն սակս եւ զայսպիսի աւրէնս դնէ: Եւ վասն այնորիկ ստեպ զառաջին բանս աւրինացն յիշէ, զի ցույցցէ, թէ ոչ հակառակ ինչ, այլ յոյժ միաբան նոցին է, զի ոչ լուծանէ, այլ առաւել յուղղութիւն ածէ եւ միշտ ընդ արս խաւսի. «Որ արձակէ, ասէ զկին իւր»: Թէպէտ եւ այլ ոչ առնէ, այնու իսկ արար զանձն պարտական, զի շնացաւ կնոջն ի հանելն, եւ միւսն զայլոյ հանեալն առնլովն եղեւ շնացող: Եւ զի մի ամենեւին ի կնահանսն ձգիցէ զվնասն եւ ճոխանալով

(73բ) պատճառս տացէ կնոջն: Եւ այնմ, որ առնուլն կամիցի զկինն փակեաց զդուրս առ ի նմանէ, զի ասելովն թէ՛ «Որ զարձակելն առնէ, շնակամ//աւ»: Սա իսկ զկինն ածէ ի զգաստութիւն եւ յամենեցունց խնու զճանապարհ նորա: Եւ զի ուսցի, թէ՛ ամենայն հարկաւորութեամբ այնմ, որ սկզբանէ բաժին տուաւ, նմա պարտ է նստել եւ թէ՛ յայնմանէ վրիպեսցի յայլմէ ումէքէ պատասպար մի գտցէ, զի ի հարկէ այնուհետեւ նեղիցի յանձն առնուլ իւրում ամուսնոյն հսկել: Ապա եթէ ծանրագոյն ինչ զայս համարեսջիր յիշեսջիր զառաջին բանսն, որովք երանէ զլսողսն, եւ տեսջիր, զի յոյժ դիւրին է եւ հնարաւոր, զի հեզն եւ խաղաղարարն եւ խոնարհն սրտիւ եւ ողորմածն զիարդ յանձն առնուցու զկինն հանել, որ զայլոյ կագ ի հաշտութիւն ածիցէ, զիարդ իցէ, զի ինքն ընդ իւրում կնոջն կագ գրգռիցի: Եւ ոչ այսու միայն, այլ եւ այլով եւս աւրինակաւ ցուցանէ զաւերէնս թեթեւագոյնս, եւ յայտ առնէ զպատճառս արձակելոյն եւ չարձակելոյն, ասելովն թէ՛ «առանց բանի պոռնկութեան», ապա թէ՛ ոչ, ի նոյն իսկ դառնալոց էր, զի թէ՛ հրամանալ էր. թէպէտ ընդ բազումս լինիցի, սակայն ունիցի ի տուն եւ ոչ հանիցէ: Այնպիսի իշխանութիւնն կործանէր զիրսն: Տեսանես՝ զիարդ միաբանեն յետին բանքս ընդ առաջինսն, զի որ ոչն հայիցի յարատ ի կին ընկերին յայտ է թէ՛ ոչ պոռնկի, իսկ որ ոչն պոռնկի, ոչ տա պատճառս այլում առն հանել զիւր կինն: Վասն այնորիկ մեծաւ զգուշութեամբ պարսպեալ պնդէ բազում երկիւղիւ ածել ի ճգունս զայրն, եթէ հանել զայն, զի եթէ պոռնկութեան կնոջն ինքն լիցի պատժապարտ, զի մի՛ յորժամ լսիցես, թէ՛ «Խլեայ եւ ընկեա ի բաց գակն քո» զկնոջն կարծիցես, թէ՛ վասն դոյզն ինչ իրաց պարտիցէ արձակել, յարէ ի նոյն ի դէպ ժամանակի եւ զառաջագոյն նորին յուղղութիւն, զի միով իրաւք հրամայէ հանել եւ միւսովն՝ չհրամայէ:

(74ա) Դարձեալ լուարոք, զի ասացաւ առաջնոցն, թէ մի՛ երդնուցուս սուտ, այլ հատուցիր Տեառն գերդումն քո: Այլ ես ասեմ ձեզ, թէ ամենեւին // մի՛ երդնուր (Ե 33):

Վասն էր արդեաւք զգաւորութենէն չճառէ, զի այնու զանց արարեալ եւ ի սուտ վկաութիւնսն վագէ, զի ոք չգողանայցէ հարկ է թէ՛ եւ երդնու իսկ ոչ: Իսկ որ ոչն երդնու եւ ոչ ստել կարիցէ, որչափ եւս առաւել եւ ոչ ի գողանալն յաւժարեսցի, որպէսզի եւ այսու իսկ զայն մեղս խափանիցէ, զի սուտն խաւսել ի գողանալոյն

լինի: Եւ զինչ իցէ թէ՛ «Հագուսջիր Տեառն զերդումն քո», այսինքն՝ արդար երդնուցուս:

Բայց ոմանք այլազգ ասեն, եթէ մի յայլ Աստուած երդնուցու հրէայն. պատուէր ետ, զի յորժամ երդնուցուն ի նա երդնուցուն, եւ մի՛ զայլ աւտար աստուածոց անուն անուանեսցեն (Հմմտ. Բ Օր. ԺԸ 20):

«Բայց ես ասեմ ձեզ, թէ ամենեւին իսկ մի երդնոյք» որպէս եւ յաջորդին. Ամենեւին չար [է] երդնուլ յԱստուած: Եւ մի՛ յերկինս, ասէ, զի Աթոռ է Աստուծոյ եւ մի յերկրի, զի պատուանդան է ոտից նորա, եւ մի յերուսաղէմ, զի քաղաք է մեծի արքաի (Ե 34-35):

Դեռեւս տակաւին ի մարգարէականացն բարբառի եւ յայտ առնիցէ զանձն, եթէ ոչ է ինչ հակառակ առաջնոցն, զի սովորէին յայտ երդնուլ հրէայքն: Եւ զայս ի կատարածի Աւետարանիս յայտ առնէ: Եւ տե՛ս, զիարդ յարգէ զարարածս ոչ յիւրեանց բնութեանէ, այլ վասն Աստուծոյ խնամոցն, զոր ընդ նոսա ունի: Ըստ զիջանելոյ ընդ մարդկան ճառէ զայսպիսի բանս, քանզի բազում բռնութիւն էր յայնժամ կռապաշտութեանն: Եւ զի մի՛ ոք կարծիցէ, թէ անձամբ ինչ պատուական են արարածք, դնէ զայնպիսի պատճառս ի միջի, զոր ասացաք: Եւ դարձեալ, զի Աստուծոյ իսկ ի փառս հանցէ զամենյան, զի ոչ ասաց, եթէ գեղեցիկ եւ մեծ են երկինք եւ բարուք եւ յարգոյ է երկիր, այլ թէ՛ մինն Աթոռ Աստուծոյ է եւ մինն՝ պատուանդան ոտից Նորա, զի ամենայն ուստէք առ Տէրն մղիցէ զնոսա:

Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մի մազ սպիտակ առնել եւ միւս եւս՝ թուխդ (Ե 36).

(74բ) Եւ աստ դարձեալ ոչ եթէ փառաւոր ինչ զմարդն համարելով յարէ ի նոյն ի գլուխն չերդնուլ, զի թէպէտ // եւ մարդն երկրպագութիւն առնուցու իբրեւ զմարդ յայլմէ մարդկանէ, այլ գիտացէ, թէ Աստուծոյ միայն վայելին փառք: Վասն որոյ ի նա իսկ հանէ զփառաւորութիւնն եւ ցուցանէ եթէ՛ «Եւ ոչ քում իսկ անձինդ Տէր էս» (Ա Կորնթ. 2 19): Ապա յայտ է թէ եւ ոչ ի գլուխն երդնոյ, զի թէ զիւր որդի ոք այլում ոչ կամիցի տալ, որչափ եւս առաւել Աստուած զիւր Որդ[ի]ն չտայցէ քեզ, թէպէտ եւ քո իցէ գլուխն, այլ նորա արարեալ է, եւ այնչափ հեռի ես ի Տէրն լինելոյ գլխոյդ, զի եւ ոչ փոքրն, քան զամենայն կարես գործել ի

նմա. զի եւ ոչ ասաց թէ՛ ոչ կարիցիս ածել մագ, այլ թէեւ ոչ զգոյնն իսկ կարիցես փոխել:

Եղիցի ասէ ձեր այոյն այո եւ ոչն՝ ոչ եւ որ ինչ անելի քան զայս էր, չարէն է (Ե 37).

Եւ զի՞նչ իցէ անելի քան «զայոյն» եւ «զոչն»: Երդնուլն իսկ. եւ ոչ եթէ սուտ երդնուլն. զի այն յայտ իսկ եւ չէ ոք կարաւտ ուսանել, եթէ ոչ ի չարէն է եւ ոչ եթէ անելի ինչ է, այլ զհակառակ անելոյն, այլ անելի երդումնն է: Իսկ առ անբնութիւն ի հնումն հրամայէին երդնուլ, զի մի՛ յանուն կոոցն երդնուցուն, քանզի եւս ասէ իսկ եթէ երդնուցուք յԱստուած ճշմարիտ (Բ Օր. 2 13): Եւ արդ, ոչ սակաւ ինչ ուղղութիւն գործեցին անբնութիւն, այլ առաւել մեծամեծ, զի ի հաստատուն կերակուրն գալ փութոյ անբնութիւնացն էր գործ: Զի որ զառաջին երանութիւնս լսիցէ, եւ այնպիսի ինչ յարգարիցէ զանձն որպէս եւ Քրիստոս պատուիրեաց, եւ ոչ մի ինչ հարկ յուժեքէ ստիպիցէ երդնուլ, յորժամ համեստ եւ պարկեշտագոյն յամենայն իրս գտանիցի:

Լուարութեւ,- ասէ,- զի ասացաւ՝ ակն ընդ ակն (Ե 38).

Տեսանես, զի ոչ վասն ական ասաց զառաջինն, յորժամ դնէր անբնութիւն իսկ ընկենուլ զակն զայթակղեցուցիչ, այլ զայնպիսեաց, ուժեքէ ասէ, որք բարեկամութեամբ կամիցին մեզ վնաս ինչ առնել եւ ի խորխորատ ընկենուլ: Եւ զի յառաջնումն եւս այնպիսի անբնութիւնս. «Ակն ընդ ական». ոչ զի զմիմիեանց աչս հանիցեն, այլ (75ա) զի կարճեալ զձերս կայցեմք յանձանց պայմանի, զի սպ// առնալիք վրիժուցն զանդգնութիւնն արգելոյր եւ այնպէս մեղմով սերմանէր զցածութիւն եւ զիմաստութիւն, յորժամ խզելոյն կշեռ հրամայէր առնուլ վրեժ, թէպէտ եւ մեծի պատժոց արժանի է, որ այնպիսի անանբնութեան եղեւ ձեռներեց: Բայց քանզի մարդասիրութիւն կամի խառնել ընդ իրաւունս մեծամեղին սակաւ պատիժ հրամայէ դնել, զի եւ զմեզ ուսուցէ զնոյն միտս ունել ի պատժելն: Իսկ իբրեւ ասաց զհին անբնութիւնս եւ ընթերցաւ զամենայն, ապա յայտ առնէ, թէ ոչ եղբայրն ինչ գործեաց զայնպիսի գործ, այլ՝ չարն: Վասն որոյ յարէ ի նոյն.

Բայց ասեմ ձեզ. մի՛ կալ հակառակ չարին (Ե 39).

Եւ ոչ ասաց թէ՛ ընդ եղբաւրն, այլ թէ՛ «ընդ չարին» զի յայտ արասցէ. թէ ի նորա զրդուելոյն յանդգնեցաւ յայնպիսի գործ անաւրէն, եւ այսու զայրոյթս ցասմանն ցածուցանէր, զի զգործելիսն կարճեսցէ: Բայց զպատճառսն ի չարէն դնէ: Իսկ արդ, չիցէ պարտ հակառակ կալ, այլ ոչ այնպիսի աւրինակաւ, այլ որպէս Տէրն պատուիրեաց տալ զանձն ի չարչարանս, զի այնպէս յաղթեցես նմա, զի ոչ եթէ հրով հուր շիջանի, այլ՝ ջրով: Իսկ որ ձեռներեց լինի չարին, նա է որ զիւր ակն հանէ եւ զընկերին: Վասն որոյ եւ անդ սկզբանն ճառեալ ասէ. «որ բարկանա եղբաւր իւրում», եւ «որ կոչէ զեղբայր իւր մորոս պարտաւոր լիցի գեհնին»: Իսկ աստ ոչ միայն հրամայէ զգաւնանալ, զի այլ առաւել եւս քաղցրանալ եւ պատուել զհարողն եւ զմիւսն եւս ծնաւտն մատուցանել: Եւ զայս ասելով ոչ միայն վասն ապտակին դնէ արէնս, այլ եւ յամենայն աւրէնս անոխակալ լինել հրամայէ, որպէս յորժամ ասաց. եթէ՛ «Որ կոչէ զեղբայր իւր մորոս» այլ եւ վասն ամենայն բամբասանաց սպառնա: Նոյնպէս եւ աստ ոչ յորժամ ապտակ միայն ի ծնաւտ առնուցու յայնժամ եւէթ պարտիմք (75բ) ժուծկալ լինել, այլ եւ յամենայն չարչարանս մի զանգիտեսցուք// [Վասն] այսորիկ ոչ միայն հրամայէ չբարկանալ ընդ ապտակ [...] ¹ այլ եւ յագեցուցանել զցանկուլթիւն հարողին, զի մի առաջինն իբրեւ ի հարկէ ինչ համբերութիւնն կարծիցի: Նա եւ ոչ այնչափ յանդուգն իցէ, թէ յետ առաջին ապտակին՝ տից ի միւս անգամ հարկանել, թէպէտ եւ զառաջինն յանդուլթեամբ գործեաց, այլ եւ զնա ի մեծ հեզութիւն դարձուցանես քոով համբերութեամբն:

Եւ որք կամիցի, ասէ, դատել ընդ քեզ եւ առնուլ զպարեգաւտ քո թող ի նա եւ զհանդերձ քո (Ե 40).

Զի ոչ միայն ի հարկանելն, այլ եւ ի հանդերձիցն մերկանալ եւ յնչիցն արկանելով կամի առնել առանց ոխակալութեան: Վասն որոյ զնոյն առաւելութիւն ի միջի դնէ զոր աւրինակ անդ չարչարանացն համբերելով: Նոյնպէս եւ աստ յնչիցն ակնարկելով ² աւելի քան որչափ ինձ ագահելն կամէր հրամայէ տալ: Բայց սակայն ոչ վայրապար ինչ զնոյն ճառէ, այլ մեծաւ յաւելուածով: Քանզի ոչ ասաց եթէ՛ որ եւ պանդիպեսցի, տաջիր զհանդերձդ,

¹ 1 բառ:

² Ձեռագրում՝ արկնարկելով:

այլ թէ՛ որ կամիցի դատել եւ յատեալ ձգել զքեզ, եւ աշխատութիւն հասուցանել: Եւ որպէս չհրամաէ կոչել «մորոս», եւ ոչ բարկանալ զուր, եւ յառաջ մատուցեալ զծնաւտս եւս հրամաէ մատուցանել: Նոյնպէս եւ աստ. յետ ասելոյն թէ յառաջագոյն հաշտ լիջիր ընդ ոսոխին եւս առաջ ձգէ զհրամանն, զի ոչ միայն, զոր կամիցինն առնուլ, հրամաէ տալ, այլ եւս առաւել առատութիւն ցուցանել, քանզի ոչ առանձինն եւեթ կամի զմեզ Աստուած պիտանիս լինել, այլ զի եւ լայլս եւս ի պիտանութիւն ածիցեմք. զի եթէ տայցես եւ ընդդէմ ոչ դառնայցես, եւ զնա եւս ածես ի լաւութիւն, քանզի այնպիսի է աղն. որպէս ինքն է, նոյնպէս եւ յոր մարմին մերձենա նոյնպիսի առնել կարէ: Նոյնպէս եւ լոյսն. որպէս ինքն է, նոյնպէս եւ զայլս լուսաւորէ, եւ քանզի ի նոցա տեղի կարգեցար, նոյնպէս եւ դու լինիջիր համ//եմիչ անհամիցն եւ լուսաւորիչ խաւարելոց: Արդ, շահեա զնորա մեղսն քո հեզութեամբն: Եւ եթէ զքո առաքինութիւնն մեծ լինել համարիցիս, անսա եւ տեսանիցես ստոյգ, զի չեւ համեր ի կատարումն, զի ոչ եթէ յայսմ վայրի հանգուցանէ զոխակալութեանն աւրէնսդրութիւնն: Եւ այլ եւս յառաջ մատուցեալ ասէ.

(76ա)

Եթէ որ պահակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա եւ երկուս (Ե 41).

Տեսանես զգաստութեանն առաւելութիւն, զի յետ տալոյ զպարեգաւտն եւ զբաջկոնն, զի թէեւ մերկա[նա]լ հասանիցէ, սակայն մի տայցես պատճառս թշնամւոյն բիծ գտանել ի քում ազատութեանն, զի հասարակաց իմն կամի ստանալ մեզ զմարմին եւ զինչս, զի եւ կարաւտելոց եւ թշնամեացն անխտիր տայցեմք, զի մինն արութեան գործ է եւ միւսն՝ սգաստութեան: Վասն այսորիկ ասէ.

Թէ որ կամեսցի [տարա]պարհակ վարել զքեզ, ե՛րթ ընդ նմա:

Զի եւս վերագոյնս կամի հանել զքեզ եւ զնոյն սգաստութիւն հրամայէ ցուցանել զի, եթէ որ զառաջինսն ասաց նուազագոյն էին քան զսոսա այնչափ երանութեամբ լի էին, ի միտ առ որպիսի հանգիստ կայցեն այնոցիկ, որ զայսպիսի ուղղութիւն յանձինս կրիցեն: Եւ նախ քան զանդ հատուցումն ի մարմնեղեն եւ ի չարչարելի մարմնի երթեալ գտանի անչարչարութիւն, զի յորժամ ոչ թշնամանաւք եւ ոչ հարուածովք եւ ոչնչիցն յապշտակութեամբ

քասքնիցի եւ ոչ այլով իւրիք վհատիցի, միտ դիր որպիսի ինչ ու
 գիքն յաւրինիցին: Վասն այնորիկ, զոր ինչ ի հարուածսն եւ
 յնչիցն յապշտակութեան, զնոյն եւ աստ հրամայէ գործել: Զինչ
 ասես, ասէ, թշնամանս կամ ընչից անվանել, այլ թէ եւ զմարմինդ
 իսկ յերկս եւ ի վաստակս մաշել ի զուր սակայն եւ յայն եւս գեր
 ի վերոյ գտանիցիս քան զապիրատ ցանկութիւն բռնաւորին զի
 (76բ) պահակ վարել այն իսկ է՝ զուր փետել տար// ապարտուց [ձգձգել]
 յանդէպ վարել խօսելով: Սակայն ասէ. եւ [առ այն եւս] պատ-
 րաստ գտանիցիք. [աւելի եւս ճգունս յանձն առնուցուս], քան
 զոր նայն կամիցի ի վերայ հասուցանել:

Որ ինչ ոք խնդրէ ի քէն, տաշիր եւ որ կամի փոխ առնուլ, մի՛ դարձու-
 ցանէր (Ե 42):

Եւ եթէ այս փոքր քան զառաջիննէ, ընդ այն մի՛ զարմանար,
 զի սովոր է ընդ մեծամեծս զփոքունսն խառնել: Իսկ փոխ աստ ոչ
 ընդ որոց զտոկոսիսն առնուցուն, ասէ, այլ յորժամ պէտք ինչ լի-
 նիցին աղքատին, եւ փոխ տայցես, որպէս այլուր յայտնի իսկ աս-
 սէ, եթէ այնոցիկ տալիք փոխ, որոց ոչ ակն ունիցիք առնուլ:

Լուարոք, զի ասացաւ, թէ՛ սիրեսցես զընկեր քո եւ ատեսցես զթշնա-
 մին: Բայց եւ ասեմ ձեզ. սիրեցէ՛ք զթշնամիս ձեր (Ե 43) այլաւքն հան-
 դերձ:

Տե՛ս, զհարդ գգլխաւոր բարութեանցն ի վերջոյ դնէ: Վասն
 այնորիկ հրամայէ ոչ միայն ապտակ ընդունել, այլ եւ զմիւսն
 դարձուցանել, ոչ միայն տալ զպարեգաւտն, այլ եւ զբաճկոնն
 եւս յաւելուլ, եւ այլ եւս երկուս մղոնս երթալ ընդ վարողին, այլ
 եւ ի բնաւ զթշնամի գոք ունել: Քանզի ոչ ասաց եթէ՛ Մի ատի-
 ցես, այլ թէ՛ եւ սիրեսցիս եւս: Եւ ոչ ասաց, եթէ մեղանչիցես, այլ
 թէ եւ բարի առնիցես, եւ ոչ վայրապար ինչ հրամայէ սիրել, այլ
 եւ աղաւթս առնել: Տեսանես, որչափ յաշտիճանէ յաշտիճան հա-
 նէ եւ բնաւ իսկ ի կատար իսկ առաքինութեանցն հասուցանէ: Եւ
 արդ, միտ դիր անդուստ ի վերուս[տ իսկ] թուոյն. զի առաջին աշ-
 տիճան է անիրաւութիւն նոյն յաղթու, երկրորդ աշտիճան՝ վրէժ
 չպահանջել, երրորդն՝ բառնալ ընդդէմ հարողին, այլ հանդարտ
 եւ զգաւն լինել, չորրորդն՝ յանձին ունել թէպէտ ի զուր ինչ չար-
 չարիցի, հինգերորդն՝ աւելի եւս տալ քան զոր կամիցի ոք հանել,
 վեցերորդն՝ չատել զայն որպիսի լլկանս հասոյց, եւթներորդն՝

(77ա) սիրել եւս զայնպիսին, ութերորդ՝ բարի եւս առնել, ինն //երորդն՝ զԱստուած եւս աղաչել վասն նորա: Տեսանես զբազմութիւն աշտիճանաց առաքինութեանն: Վասն որոյ [հատ]ուցումն նոցին լուսաւորագոյն է, զի եւ փորձան այսպիսի իմն դնէ, որպէս ոչ ինչ այնպիսի առաջնոցն խոստացաւ: Քանզի ոչ եւս յերկրէ յիշէ, որպէս ի հեզոյն պատուիրանի եւ ոչ զմխիթարութենէ, եւ զողորմութենէ, որպէս ի սգաւորացն եւ ողորմածացն ճառի, եւ ոչ զարքայութենէն երկնից, այլ որ եւս քան զամենայն ահագին է լինել նմանողս Աստուծոյ, որպէս մարդկան մարթիցէ լինել: Եւ տե՛ս, զի ոչ աստ եւ ոչ յառաջինսն Հայր իւր կոչէ զԱստուած, զի անդ Աստուած եւ թագաւոր մեծ, յորժամ վասն երդմանցն ճառեր, եւ աստ Հայր նոցա կոչէ եւ ոչ իւր: Եւ զայս դիպող ժամանակի իմն իմաստութեամբ պահէ, եւ զնմանելն եւս, թէ որպէս պարտիցէ նմանել, յառաջ բերէ:

Եթէ որ զարեգակն իւր ծագէ ի վերայ չարեաց եւ բարեաց եւ ամէ անձրեւ ի վերա արդարոց եւ մեղատրաց (Ե 45).

Քանզի եւ նա, ասէ, ոչ միայն չատել, այլ եւ բարի եւս առնէ թշնամողացն. եւ ոչ մ[ի]այն վասն յորդ բարերարութեանն, այլ եւ վասն պատուոյն առաւելութեան, զի դու քոց ծառակցացն արհամարհիս եւ նա՝ յիւրմէ ծառայէ, որում բազում երախտիս եցոյց: Դու զբանս եւեթ ծախես աղաւթս առնել, իսկ նա՝ արդիւնս բազումս եւ զարմանալիս, զի եւ զարեգակն ծագէ եւ զամ ըստ ամենայնէ ցողն պարգեւէ: Եւ արդ, այսուհետեւ մի՛ ատիցես զայն, որ չարչարիցեն զքեզ, զի այնպիսի բարութեանց լինելոց է քեզ առիթ եւ այնչափ առաւել պատիւ հասուցանելոց: Բայց դու զաշխատութիւնն յանձին կալար եւ ի պտղոյն զրկեցա՞ր: Մի անիծանէք զնեղիչն, ապա եթէ ոչ զվնասն կրեցեր, եւ վարձան կորուսեր: Եւ զիարդ մարթի, ասէ, այսմ լինել եւ այդու զԱստուած տեսանես մարդ [լեալ] եւ այնչափ չարչարանս կրեալ վասն քո եւ տակաւին հարցա//նե՞ս յերկբայեալ, թէ զիարդ մարթի ծառակցին թողուլ զվնասն: Չլո՞ւար ի Տեառնէ, զի ասէր խաչին. «Հայր, թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ 34): Եւ Պաւղոս ասէ, եթէ՝ «Ել ի բարձունս եւ նստաւ ընդ աջմէ, որ եւ բարեխաւսէ վասն մեր» (Հռոմ. Ը 34): Արդ, դու զինչ այնպիսի չարչարանս կրեցեր, որպէս քո Տէրն կապեալ տանջեալ, ապտակեալ, թուք ի ծառաէն ընկալեալ, եւ տակաւին եւս աղաւթս առնէր ի վերա նո-

ցա: Եւ արդ, մի ինչ գայն ածիցես զմտաւ, թէ խիստ իցէ հրամանն, այլ թէ որպիսի ինչ հատուցումնն իցէ եւ գայն իմասցուք, թէ ում նմանողք լինիցիմք, յորժամ ի մեղսն զառածիցիմք ընդ եղբարն հաշտել հրամայէ, եւ մի՛ ումէք խուսափել, եթէ ոչ նախ զթշնամուկութիւնն ի միջոյ բառնայցեմք: Եւ յորժամ վասն ամենայն պատուիրանացն ճառէր ոչ եւս ընդ նովին հարկաւ մուծանէր զմեզ, այլ առ ի մէնջ միայն պահանջէ զդիւրուկութիւնն եւ այնու հաստատէ զաւրէնսն: Եւ քանզի ասաց, թէ՛ «Հալածէին զմարգարէսն», զի մի՛ այնպիսի բանիւք դժկամակ լինիցին, ընդ նոսա հրամայէ ոչ միայն յորժամ այնպիսի ինչ կրիցեն, այնմ եւեթ տանել, այլ զի սիրիցեն եւս զչարհարիչսն: Տեսանես, զիարդ արմատաքի խլէ զցասումն եւ մարմնոյ ցանկուկութիւն եւ զընչիցն տենչանս եւ զփառաց եւ զկենաց աշխարհիս ընկենու ի բաց, եւ գայս յառաջնումն իսկ արար, բայց աստ աւելի իմն. զի յորժամ հեզ եւ խոնարհ հոգևով ոք լինիցի եւ [ողորմած] հարկ է, զի զընչիցն տենչանսն ի բաց թափիցէ: Իսկ որ սուրբն սրտիւ իցէ, հարկ է, զի ի չար ցանկութեանցն ազատ իցէ: Եւ որ հալածեալն եւ թշնամանեալ իցէ, եւ չար բանս լսիցէ ու համբերեսցէ, նա ամենեւին իսկ կիրթ՝ առ ի չհայել յիրս կենաց աշխարհիս, եւ յամբարտաւանութենէ սուրբ եւ ազատ գտանիցի: Եւ յորժամ ելոյժ յայսպիսի կապանաց զլսողսն եւ // կրթեաց ի պատերազմունս, դարձեալ այլազգ եւս խլէ զախտն: Եւ բազում հաւաստեալ սկիզբն արարեալ ի ցասմանէն եւ ամենայն ուստէք կոտորէ զջիղս ախտիցն այսուրիկ, թէ՛ որ զպատարագն մատուցանէ, մի՛ մերձեսցի ի սեղանն, եթէ ոչ լուծցէ զթշնամուկութիւնն, եւ որոյ ոխ ունիցի, նախ քան յատեանն մտանել, հաշտեսցի, եւ անտի ի ցանկութիւնն փոխի: Որ հայի, ասէ, յարատ իբրեւ զշնացաւղն պատժեսցի, եւ որ աւրինաւք կին ունիցի, մի իշխեսցէ՛ հանել եւ յայլ կին մտաբերել: Եւ այսու ամենայնիւ զչար ցանկութիւնն արմատաքի խլէ, եւ ապա տենչանս ընչիցն կարծել հրամայէ: Մի՛ երդնուլ եւ մի՛ ստել եւ ի պարեգաւտսն եւս խնայել, եւ զմարմնոյ պէտսն հանդերձ ընչիւքն բազում առաւելութեամբ խափանել հրամայէ: Եւ յետ այսր պէս-պէս պատուիրանացն զպատակն ի սոյն յաւելու, եւ ասէ, թէ՛ Աղաւթս արարէք ի վերա այնոցիկ, որ զրկեն զձեզ: Եւ որպէս քան զհեզն լինել ապտակ ընդունելն մեծ է եւ քան զողորմածն լինել զպարեգաւտն տալ, եւ քան զարդարն լինել զսուրն չարհարել եւ քան ի հալածականս կալ, զհալածիչսն աւ[ր]հանել: Եւ արդ,

(78ա)

զարմանալ արժան է ընդ վարդապետութիւնն, զիարդ ընդ ամենայնի խոստանա հատուցումն բարեաց. զԱստուած տեսանել, եւ ողորմութիւն գտանել, եւ զարքաութիւնն երկնից ժառանգել, եւ որդիս Աստուծոյ լինել, եւ նմանող նմին լինել, եւ բազում վարձ ընդունել, եւ ուր գտրտմականացն ճառէ մեղմագոյնս բարբառի, զի զգեհներին անուն միանգամայն ճառեաց, եւ այլ ինչ թէպէտ եւ ճառեաց հանդարտագոյնս եւ պատկառելով եւ այն, զի լսողին միտսն ուղղեսցէ: Ոչ ապաքէն ասէ, եւ մաքսաւորք զնոյն գործեն, եւ թէ՛ Ազն անհամեսցի, եւ Փոքր կոչեսցի յարքայութեան: Եւ (78բ) դարձեալ. Զոր ինչ աւելին է, // չարէն է, եւ յայտ առնէ, թէ ոչ մեծամեծս ինչ պահանջէ, այլ՝ սակաւ ինչ աւելի քան գտովորութիւնն: Քանզի ասէ իսկ, թէ՛ մաքսաւորք զդոյն գործեն, բայց ոչ յայսմ վայրի միայն գետեղէ զբանն, այլ եւս առաւել տանի հանէ ի հատուցումն զերանելի զյոյսն խոստանա: Եւ «Լերուք,- ասէ,- կատարեալք, որպէս հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Ե 48): Բազում անգամ զերկնի սերմանէ զանունն, զի տեղեալն իսկ զարթուցանիցէ զմիտս նոցա, քանզի դեռեւս տկարագոյնք եւ ծանրամիտք էին:

Ջ

Ջգոյշ լերուք ողորմութեան ձերոյ. մի՛ առաջի մարդկան ինչ առնել իբրեւ ի ցոյց ինչ նոցա» (Ջ 1ա).

Ջբռնաւորագոյն իսկ քան զամենայն ախտս մերժէ Հանէ այնուհետեւ զկատարողութիւնն, որ ի սնապարծութենէն լինի, այնոցիկ, որ ուղղութիւնս ինչ կամիցին գործել, զի յառաջինսն ոչ ինչ ճառեաց յայսմանէ, քանզի աւելորդ իսկ էր յայնժամ ճառելն մինչ չեւ հաւանեցուցեալ էր ի պատշաճիցն գործել ինչ թէ զհարդ պարտ իցէ առնել զայն ամենայն եւ զի Աստուած հասոյց ի գլուխ առաքինութեան, ապա եւ զառընթեր նորին զեղծագործ ապականութիւնն քակէ, զի ոչ վայրապար ծնանի այսպիսի ախտ, Այլ, յորժամ զի ոչ վայրապար ծնանի այսպիսի ախտ: այլ, յորժամ զուղղութիւնս հրամանացն յանձին ցուցանեմք, յայ[ն]ժամ վաղ-վաղակի առ ոտս բուսանի: Եւ արդ, պարտ է նախ տնկել զառաքինութիւնն եւ ապա զվնասակար պտղոյն զախտսն ի միջոյ բառնայ: Եւ դու տես՝ ուստի բուսանի ախտն. ի պահոց յաղաւթից, յողորմածութենէ. զի այսպիսի իմն ուղղութեանց սովոր է հակել հպարտութիւն, որով փարիսացին իսկ կորեալ յաղաւթիցն եւ պահոցն. «Չեմ, ասէ, իբրեւ զայլ մարդիկ¹ եւ ոչ իբրեւ զմաքսաւորս զայս» (Ղուկ՝ ԺԸ 11): Եւ տես՝ ուստի առնէ սկիզբն՝ իւր զանհնարին չար գազանէ. ճառէ զհպարտութենէն, որ գողանա զայն, որ չիցեն կարի արթուն: Վասն որոյ ասէ.

(79ա) Ջգոյշ կացեք // ողորմութեան (Ջ 1բ)

Քանզի զաղտ իսկ մտանէ զազանն եւ զամենայն յանգալս առանց ոտնաձայն առնելոյ հանեալ հոսէ արտաքս: Եւ զի բազում ինչ ճառեաց զողորմածութենէն, եւ զԱստուած եւս ի մէջ ած, թէ՛ «Ծագէ զարեգակն իւր», եւ յամենայն տղմանց ի նոյն յորդորէ աճել հաւանեցուցանէ առատութեամբ պարգեւին, ապա եղծանէ զվնասակարն այսպիսի պտղալից ձիթենոյ: Վասն որոյ ասէ. «Ջգոյշ լերուք՝ մի առնել առաջի մարդկան», զի առաջի Աստուծոյ լիցի ողորմութիւնն ձեր: Եւ իբրեւ ասաց, թէ՛ «Մի՛ առա-

¹ Ձեռագրում մարմին:

Ղի մարդկան», զի առաջի Աստուծոյ լիցի ողորմութիւնն ձեր: Եւ իբրեւ ասաց, թէ՛ «Մի առաջի մարդկան», յարէ ի նոյն, թէ «Իբրեւ ցոյց ինչ նոցա», քանզի մարթի առաջի մարդկան առնել, եւ ոչ ի ցոյց ինչ նոցին, եւ դարձեալ չառնել առաջի մարդկան եւ առնել ի ցոյցս, զի թէ որոշումն ինչ ի միջի ոչ կայր զբազումս դանդաղկոտս առնէր առ ողորմութեանն տուրս, քանզի ոչ էր¹ մարթ ամենեւին գաղտ գործել, զի մի՛ ասիցես, թէ ինձ պատիժք են, թէ ոք տեսանիցէ: Ոչ ասէ զայն ինչ խնդրեմ, այլ զմիտսդ ամ[են]եւին յամենայն ախտէ առնել ազատ, եւ զառաջսն մարդկան տալ զտուրսն խափանէ եւ զվնասն, որ ի նմանէ ուսուցանէ, եթէ վայրապար է եւ ի գուր է, եթէ ոչ միայն վնասին այլ եւ յիշատակաւ իւրոյ ծնողին պատկառէ, հեռացուցանէ ի սնոտի պարծանացն: «Եթէ այնպէս ինչ առնիցէք, ասէ, ոչ ունիք վարձք ի Հաւրէն ձերմէ», եւ որպէս վերագոյնն մաքսաւորաւքն յամաւթ առնէ զնոցին նմանողսն: Նոյնպէս եւ աստ զկեղծաւորսն դնէ:

Յործամ,- ասէ,- ողորմութիւն առնիցես, մի՛ փող հարկաներ առաջի քո, որպէս կեղծաւորքն (Ձ 2).

(79բ) Ձի ոչ եթէ փող հարկանէին, այլ բազում սնոտի պարծանս նոցա յորջորջմամբ փողոյ հազնէ եւ ձաղէ, եւ բարեաւք իսկ կեղծաւորս կոչէ, զի զգէմս ողորմածութեանն ցուցանեն եւ զմիտսն անմարդիս, զի ոչ վասն ընկերին ողորմելոյ զայն առնեն, այլ զի ինքեան // ի սնոտի փառս վայելեսցեն, որ վերջին անմտութեան է, զի ոչ զողորմութիւն միայն խնդրէ, այլ ի դէպ եւ մարդասէր մտաւք: Իսկ իբրեւ հեզնեաց այսու ամենայնիւ այնուհետեւ սկսանի ածել յուղղութիւնն, եւ ցուցանէ, թէ զիարդ պարտիցէ առնել:

Մի՛,- ասէ,- գիտասցէ ձախդ, զինչ գործիցէ աջդ (Ձ 3).

Դարձեալ եւ աստ ոչ եթէ զձեռն ինչ ակնարկիցէ, այլ զյաճախութիւնն դնէ, զի թէ հնար ինչ իցէ ասէ եւ քեզ իսկ չիմանալ, սակայն եւ այնպէս փոյթ յանձին կալլիր, որում չեն մարթ լինել, զի եթէ եւ դու իսկ կասկած առնուցուս ի միտսդ, եթէ բարի ինչ գործեցեր, որպէս փարիսացին, զամենայն կորուսանես: Ապա եթէ առ անպիտան ծառայսդ քեզ համարիցիս յետ բարեգործութեանն

¹ Տողամիջում էր:

վարձուցն միտ դիր, որո չափ ինչ իցեն: Յորժամ ասաց, թէ զինչ անտի տանջանք լինելոց են, ապա ցուցանէ, թէ զինչ իցէ նոցա անտի պատիւ, յորժամ երկոքումք կատարեալ գտանիցի: Եւ դարձեալ ուսուցանէ, թէ ամենայ[ն] ուրէք մաւտ է Աստուած, եւ ոչ այսու կենաւք եւեթ վճարիցին մեր իրք, այլ եւ ահագին ատեանն ընդունելոց է զմեզ, եւ ընդ ամենայն գործոց հատուցումն ընդունելոց եմք, եւ ոչ ինչ է հնար թաքչել յերեսաց Աստուծոյ: Զի ասէ իսկ թէ՝

Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս (Ձ 4).

Եւ մեծ իմն հանդէս թատերց նստուցանէ, որպէս եւ դու իսկ ախորժես: Ահաւաղիկ ունիս հանդիսատեսս ոչ զհրեշտակս կամ զհրեշտակապետս, այլ զամենեցունցն Աստուած եւ եթէ զմարդիկ եւ կամիս հանդիսատեսս լինել՝ եւ ոչ յայնմանէ զրկիցէ քեզ ի դէպ ժամանակի, այլ բազում առաւելութեամբ եւ զայն եւս շնորհէ քեզ: Եւ այժմ թէեւ կամիցիս սակաւուց կարես յայտնել: Իսկ եթէ փութայցես այժմ ծածկել, յայնժամ ինքն իսկ Աստուած ամենայն տիեզերաց յայտնէ, զի բազում պատուով զայնժամ տեսանիցեն, յորժամ Աստուած յայտնիցէ եւ քարոզ ընդ // բնաւ տայցէ կարդալ, զի այժմ, որք տեսանիցեն ըստգտանիցեն զքեզ իբրեւ զկեղծաւոր, այլ յորժամ պսակեալ տեսանիցեն ամենեքեան զարմանայցեն: Եւ արդ, եթէ ցուցանել ինչ պարտ իցէ, Հաւրն ամենեցուն ցոյց, որ մանաւանդ պսակելոյն եւ պատժելոյն Տէր է: Եւ ո՞ որ իցէ այնպէս հեք, որ զթագաւորն թողեալ զաղքատս կամիցի ունել հանդիսատեսս:

Եւ յորժամ ասէ. «յաղաւթս կայցես, փակեայ գոուրս քո եւ կաց յաղաւթս ի ծածուկ առ Հայրն քո (Ձ 5).

Դարձեալ եւ զսոսա կեղծաւորս կոչէ: Եւ յիրաւի իսկ. զի Աստուծոյ պատճառին աղաւթել եւ մարդկան շուրջ ածեալ զաչս հային ոչ յաղաւթականց զգեցեալ կերպարանս, այլ զմարդոց ծանակ կացելոց, զոր աղաչիցեն զորք զամենեսեան թողեալ ի նա հայիցի, որ Տէրն իցէ տալ զհայցուածսն: Իսկ եթէ զնա թողեալ այսր անդր հայիցի բանդագուշեալ ունայն ձեռաւք գնասցէ անտի, զի ոչ եթէ Աստուած այնպէս կամէր, այլ զի նա յիւրմէ կողմանէ կամէր տալ զփառսն: Բայց նոքա, որ ի մարդկանէ խնդրեն, չեն արժանի ի նմանէ առնուլ: Բայց դու տես Աստուծոյ մարդասիրու-

թիւնն, զի յորժամ մեզ ինչ բարի խնդրեմք ի նմանէ, ընդ այնր վարձ եւս խոստանա տալ: Արդ, իբրեւ խոտեաց զայնոսիկ, որ ոչս դիպաւդ իրաւք [խնդրէին] եւ եցոյց, եթէ կարի ծաղու արժանի են: Աձ այնուհետեւ ի գեղեցիկ պայման աղաւթիցն եւ խոստացաւ վարձ, եւ ուսոյց զկերպարանս աղաւթից: «Մուտ, ասէ, ի սենյակ քո»: Եւ զիարդ, ասեն, յեկեղեցւոջ չէ՞ պարտ աղաւթել եւ կարի քա՛ջ, այլ ասեն [ամեն]այն ուրէք այնպիսի մտաւք, որպէս Աստուած խնդրէ ոք. թէեւ ի սենեակի մտանիցես, մարթի ի ցոյցս կալ աղաւթս եւ ոչ ինչ աւկտիլ: Տեսանես, զի եւ աստ խտրոց ի միջի դնէ. «Որպէսզի երեւեսցին, ասէ, մարդկան»: Ապա յառաջ քան զդուրս փակել զամենայն դուրսն պարտ է փակել. [ամենեւին] ամենայն իրաւք հեռանալ // յայնպիսի ախտէ, մանաւանդ յաղաւթսն, զի եւ առանց այնր իսկ վրիպիմք այսր անդր հարկանելովն: Եթէ այնպիսի ախտիւ յաղաւթս մատչիցիմք, զիարդ առնուցումք զհայցուածսն, զոր խնդրեմք: Բայց սակայն են բազումք, որ յետ այսչափ պատուիրանաց ծանակ կան յաղաւթս, զի թէպէտ եւ մարմինն ծածուկ ուրէք իցէ, բարբառովքն ամենեցուն աշխարհագոյժ առնեն եւ անհեղեղ իմն աղաղակեն: Ոչ տեսանես, զի եւ ի հրապարակս նշանաց յորժամ յանդուզն ոք մատչիցի եւ անհաճս բարբառիցի ի բարկութիւն անէ զայն, որում պաղատին: Արդ, մի՛ մեծածայն բարբառաւք, այլ բարեաւք յաւժարութեամբ կամաց յաղաւթսն մատուցիր, մի՛ յանդուզն եւ ի ցոյց, այլ հանդարտութեամբ եւ ստրջանաւք եւ մեղմ արտասուաւք զսիրտն ի ներքս զարթուսջիր, որպէս Մովսէս փղխժկեր սրտիւն եւ ի վեր ոչ հանէր, եւ այնպէս լսելի եղեն լռութեան աղաւթքն: Եւ Աննայի անբարբառ շրթանցն աղաւթքն զամենայն վճարեցին, քանզի սրտիւն աղաղակէր: Եւ Աբելի յետ վախճանին առաւել գոչեր առ Աստուած ի ձեռն արեանն: Հեծեայ եւ դու եւ հան յոգւոց իբրեւ զսուրբսն: Պատառեայ, որպէս մարգարէն հրամայէ, զսիրտս ըստ այնմ եթէ՝ «Ի խորոց կարդացի առ քեզ» (Սաղմ. ՃԻԹ 2): Խորհուրդ առնեսջիր զաղաւթսն, քանզի հրեշտակաց եղեր դասակից եւ ընդ սերովբէսն սրբասացս, զի ամենեքին, իսկ գունդք վերին բազում յաւրինուածս ցուցանեն յանձինս, բազում դողութեամբ զխորհրդականն նուագսն երգեն եւ զերանախառն աւ[ր]հնութիւնսն նուագեն ամենաթագաւորին Աստուծոյ: Ընդ Նոսա խառնեայ եւ դու զանձնդ յաղաւթս, եւ խորհրդական զար-

(81ա) դու նոցա լինիջիր նախանձաւոր: Եւ Աստուծոյ կացջիր յաղաւթս, որ յամենայն տեղիս մաւտ է, եւ յառաջ քան զբարբառելն լսէ եւ զամենայն ծածուկս // մտացն դիտէ, եւ թէ այսպէս կայցես յաղաւթս բազում վարձս առնուցուս: Որպէս ասացն, թէ «Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս»: Եւ ոչ ասաց, թէ՛ շնորհեսցէ, այլ թէ՛ հատուցէ, քանզի պարտական քեզ կացոյց զանձն եւ մեծամեծ պատուաւք աստեն իսկ պատուեաց զքեզ: Եւ զի ինքն աներեւոյթ եւ զաղաւթսն այնպիսի կամի: Արդ եւ զբանս աղաւթիցն ուսուցանէ, ասէ.

Մի՛ լինիցիք շատախաւս իբրեւ զհեթանոսս (Ձ 7).

Յորժամ վասն ողորմութեան ճառեաց զմարդահաճոյութիւնն միայն խոտեաց եւ այլ ինչ ոչ յաւել, թէ որ յափշտակութենէն է խոտանէ, զի այն ամենեցուն յայտնի է, սակայն յառաջինսն յայտնեաց, յորժամ քաղցելոց եւ ծարաւելոց արդարութեան ետ երանութիւն: Իսկ յաղաւթսն այլ իմն աւելի յաւելու չլինել շատ[ա]խաւս: Եւ որպէս անդ զկեղծաւորսն, նոյնպէս եւ աստ զհեթանոսս դրսովէ. ամենայն ուրէք յայլոց դէմս զայլոց նուազութիւնն աղարտէ, զի քան զամենայն ինչ այս առաւել մորմոքեցուցանէ զլսողսն, յորժամ վատթար մարդկան ոք նմանեցուցանէ, եւ զնոսա այսու զիջուցանէ: Իսկ շատ[ա]խաւսութիւն աստ զցոփութիւնն կոչէ, յորժամ ոչ զպատշաճսն խնդրիցեմք Աստուծոյ. այլ հարստութիւն, փառս, ընչից յղփութիւնս, որ չիցէ մեզ աւգուտ:

Զի գիտէ,- ասէ,- Հայրն ձեր, զինչ պիտոյ է ձեզ (Ձ 8).

Հանդերձ այսու թուի ինձ թէ երկայն աղաւթս չհրամաէ մատուցանել. երկայն ոչ զժամանակէ այն ասեմ, այլ բազմութիւն շատախաւսութեանն:

Բայց յամել եւ դեգերել յաղաւթսն պարտ է ըստ այնմ, թէ՛ «Աղաւթից պատկառեցէք» (Հմմտ. Մարկ. ԺԴ 38, Ղուկ. ԻԲ 46), եւ ինքն իսկ առակաւ դատաւորին զսոյն յայտ առնէ, եւ բարեկամաւն, որ ի տարաժամ գիշերին թախանձեաց, զի ոչ վասն բարեկամութեանն, այլ վասն ժտելոյն վճարեաց զպետսն: Վասն որո յաճախագոյն պաղատել առ նա աւրէնս դնէ, եւ ոչ բազում տունս աղաւթից առնուլ ի բերանս եւ երթալ տալ նմա համարս հրամաէ:

(81բ) Վասն// որոյ ասէ իսկ առակաւ, զի նոքա այսպէս համարին, թէ ի շատախաւսութենէ ինչ լսելի լինիցին, «Զի գիտէ ասէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ». եւ եթէ գիտէ ամեն զինչ բնաւ պէտք են յաղաւթս կալ ոչ զի ուսուցանիցես, այլ զի խոնարհեցուցանիցես զնա ի քեզ եւ ընտանի լինիցիս նմա յաճախութեամբ աղաւթիցն, զի խոնարհեցիս եւ յիշեսցես զմեզս քո:

Եւ արդ, ասէ, այսպէս կացէք դուք յաղաւթս. Հայր մեր, որ յերկինսդ ես (Զ 9).

Եւ տես, զիարդ վաղվաղակի զարթուցանէ զլսողսն եւ բնաւ իսկ գերախտիսն յուշ առնէ ի սկզբան աղաւթիցն, զի որ «Հայր» կոչիցէ ե՛լ զմեղացն թողութիւն, ե՛լ զտանջանացն դիւրութիւն, ե՛լ զարդարութիւն, ե՛լ զսրբութիւն, ե՛լ զփրկութիւն, ե՛լ զորդեգրութիւն, եւ զժառանգութիւն, ե՛լ զեղբայրութիւն Միածնին, ե՛լ զՀոգւոյն պարգեւս: Միով բանիւս այսուիկ միանգամայն խոստովանի, քանզի չէ հնար «Հայր» կոչել զԱստուած, թէ ոչ այս ամենայն բարութեան հասեալ իցէ: Եւ արդ կրկին իսկ զարթուցանէ զմիտս լսողին պատուովն այնորիկ, զոր կոչեն եւ մեծութեամբ երախտեացն, յորս վայելեացն: Եւ յորժամ «յերկինս» ասէ ոչ եթէ զԱստուած անդ փակիցէ, այլ զի յերկրաւորացս վերացուցէ զայն, որ յաղաւթսն կայցեն, եւ ի բարձանց բնակութիւնսն հասանիցէ, եւ խրատէ եւս, զի հասարակ ի վերա այլոցն եւս եղբարցն առնիցէ աղաւթս, զի ոչ ասէ թէ՛ «Հայր իմ», այլ թէ՛ «Հայր մեր»: Փոխանակ ամենայն մարմնոյ մատուցանէ զաղաւթսն, եւ ոչ միայն զիւրն [ուրեք գիտէ], եւ զընկերին, նա եւ զթշնամութիւնն եւս իսկ բառնա այսուիկ, եւ զհպարտութիւնն ցածուցանէ, եւ զմայր ամենայն բարութեանց զսերն հաստատէ, եւ զանհարթ մարդկեղէն իրս արտաքոյ հանեալ անջրպետէ, եւ զթագաւորաց եւ զտնանկաց առ միմեանս հաւասարեցուցանէ զպատիւսն, զի եթէ ի մեծամեծսն հաւասար միմեանց եմք, զինչ աւելի յերկրաւոր ազնուականութենէն լինիցի, զի եթէ ի վերին է

(82ա) ընդ միմեանս հաղորդ// իցեմք եւ ոչ ոք ունիցի քան զընկերն աւելի, զի ամենեցուն, զի մի՛ ազնուականութիւն առ հասարակ շնորհեաց եւ զամենեսեան իսկ արժանիս արար զնա «Հայր» կոչել: Եւ արդ, յետ յիշեցուցանելոյ զազնուականութենէն եւ զվերին պարգեւացն եւ զայլ ամենայն բարութեանցն:

Տեսցուք՝ զինչ այլ եւս հրամեսցէ. զի որ «Հայր» կոչիցէ, ասէ, զԱստուած եւ Հայր հասարակաց պարտ է նմա այնուհետեւ ըստ ազնուականութեանն եւ Վարս ցուցանել, զի մի՛ անարժան այնմ ազնուականութեանն գտանիցի: Այլ ըստ պարզեւացն եւ զփոյթն յանձին ունել եւ չհամարի զայս միայն բաւական, այլ միւս եւս քան զսոյն մեծ յաւելու. «Սուրբ եղիցի, ասէ. անուն քո»: Արժանի զԱստուած «Հայր» կոչելոյն են աղաւթքն, զի ոչ նախ զհաւրն փառս այլ ինչ խնդրիցէ, այլ զամենայն ինչ նորա փառացն համարիցի, զի «սուրբն» ասել փառաւորել է, զի նա զիւր փառսն միշտ լիով ունի: Բայց աղաչել հրամայէ զայն, որ յաղաւթսն կայցէ, զի մերովք եւս կենաւք փառաւորեսցի: Եւ զոր յառաջագոյնն ասաց, թէ «լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան», զի փառաւորեսցեն զՀայրն ձեր, եւ սերովքէքն ի փառաւորութեան զսոյն ասէին, թէ՛ «Սուրբ, Սուրբ» զի յայտ լիցի, թէ սրբեսցին, փառաւորեսցի է: Արժանի արա, ասէ, զմեզ այսպէս սուրբ վարս յանձին բերել, զի մեւք ամենեքին զքեզ փառաւորեսցեն, այնպիսի անարատ վարս ունել, զի ամենեքին տեսողքն վասն բարի գործոցն մեր փառաւորեսցեն զքեզ:

Եկեսցէ արքայութիւն քո (Ձ 10):

Եւ այս դարձեալ մտերիմ բարի որդւոյ է չբեւեռել ընդ երկրաւորս եւ ոչ մեծ ինչ համարել զանցաւորն, այլ փութալ Հաւրն եւ հանդերձելոյն հասանել, որ բարւաւք կամաց եւ մտաց ազատեցելոց է յերկրաւոր զբաւսանաց հեռանալ: Որպէս Պաւղոս ասէր, թէ՛ «Մեք, որ զպտուղ Հոգւովն ունիմք, հեծեմք, զի որդեգրութեանն հասցուք» (Հռոմ. Ը 23), զի որ զայսպիսի անձուկ ի միտս ունիցի ոչ ի վայելչ/ութեան աշխարհիս հպարտանալ կարէ եւ ոչ ի տրտմականացն զղջանալ, այլ որպէս թէ անդ իսկ յերկինս բնակեալ իցէ, զի յերկոցունց անհարթ իրաց ազատ եւ անհոգ է:

Եղիցին կամք քո որպէս երկինս եւ երկրի (Ձ 10):

Տեսանես զգեղեցիկ կարգն, զի ցանկալ հրամանաց հանդերձելոցն, եւ յայն ճանապարհ փութալ, մինչ աստ իսկ իցէ, յայն բնակութիւն հասանել, եւ զնորին առաքինութիւնն ունել յանձին եւ երկնաւորացն ցանկալ: Բայց յառաջ քան զերկինս եւ զերկիրս հրամանաց երկինս առնել, եւ մինչ աստ շրջին անդ զինաւորել

այնպէս զամենայն ինչ ասել եւ առնել, որպէսզի վասն նոցին աղաչել զՏէրն, զի չիցէ ինչ, որ արգելով կարիցէ ի բարձանց զաւրինացն կարգաց վերջանալ վասն յերկրիս բնակելոյ, այլ մարթի մինչ աստ ոք իցէ անդ ի վերա գտանիլ զամենայն ինչ ըստ այնմ աւրինակի առնել, զոր աւրինակ անդ ամենայն ինչ անարգել եւ անխափան գործի, եւ ոչ եթէ զկեսն առնիցեն եւ կիսոյն ստուգանիցեն, այլ ամենայն հրամանացն հնազանդ եւ հաւանք են, զի հզաւրք եւ զաւրութեամբ առնել զբան նորա: Նոյնպէս եւ զմեզ ասէ մարդիկ արա արժանի. մի կեսն կամաց միայն առնել, այլ զամենայն ինչ որպէս կամիս կատարել: Տեսանես, զի ոչ եթէ ըստ մերոյ փութոյ միայն է առաքինութիւնն, այլ եւ՝ վերին շնորհացն: Դարձեալ եւ խնամ իւրաքանչիւր ի մէնջ ի վերայ ամենայն տիեզերաց հարամաէ ունել, զի ոչ ասէ մեզ, թէ՛ Եղիցին կամք քո յիս կամ ի մեզ, այլ՝ ամենայն երկրի՝ առ ի քակելոյ զմոլորութեանն եւ տնկելոյ ճշմարտութեանն, առ ի խլելոյ չարեացն եւ տնկելոյ բարեացն, եւ ոչ ինչ լաւ լինելոյ երկնի քան երկրի: Զի եթէ այսպէս լինիցի, ապա ոչ ինչ ընդհատ լինիցին ներքինիքս ի վերնոցն, զի թէպէտ բնութեամբ անջրպետութիւն է ընդ հրեշտակս եւ ընդ մարդիկ, սակայն առաքինութեամբ // ի մի միաբանութիւն եկեալ հասանիցեն:

Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ (Զ 11):

Զինչ իցէ «հանապազորդն». զաւր զազապեի պատրաստեն: Եւ զի ասէ «Եղիցին կամք քո». եւ քանզի զմարդկանէ խաւսի, որ մարմին զգեցեալ են եւ ընդ հարկս բնութեամբ հնազանդեալ: Եւ չէ մարթ մինչ ի մարմնի են զհրեշտակաց անչարչարութիւն ստանալ յանձինս եւ զհրաման զսոյն հրամաէ առ ի մէնջ կատարել, այլ այդաւքն զիջանէ ըստ մերում կարաւտութեանն. զի թէպէտ զհրամանսն, ասէ, հաւաստեալ պահանջեն, այլ ոչ նոյնպիսի ինչ եւ զանչարչարութիւնն, որ կարաւտէ կերակրոց պիտոյից: Եւ արդ, տես զիարդ եւ ի մարմնաւորսն բազում ինչ հոգեւոր գտանի, զի ոչ վասն ընչից կամ այլ ինչ փափկութեանց, այլ վասն հացի միայն հրամաէ աղաւթել: Եւ զնոյն աւր ըստ աւրէ ասելով թէ՛ «Տուր մեզ այսաւր» զի մի յառաջ հոգովքն աշխատ առնիցէ վասն վաղիւն, զի զոր ոչն գիտէ զերկայնութիւնն զիարդ արատիցի հոգեւովք նորա: Վասն որոյ ասէ. «Մի՛ հոգայք վասն վաղիւն» (Մատթ. Զ 34), եւ ամենայն ուստէք կամի զմեզ պնդա-

կազմ լինել, եւ յայն եւեթ կալ զպիտոյսն միայն հայցել: Եւ զի բազում անգամ դէպ լինի յետ ակազանին մեղանչել, կամի զիւր մարդասիրութիւնն յայտ առնել. հրամաէ վասն մեղացն թողութեան պաղատել առ մարդասերն Աստուած եւ ասել այսպէս. Թո՛ղ մեզ գյանցանս մեր:

(83բ) Տեսանես զմարդասիրութեանն առակելութիւն. յետ այնչափ զչարիսն ջնջելոյ եւ այսպիսի մեծագոյն պարգեւս շնորհելոյն դարձեալ զ[յ]անցուցեալսն թողութեան արժանի առնէ: Եւ զի մկրրտելոցն են այսպիսի աղաւթք եւ ոչ երախտիցն, զի երախտիցն չէ հնար «Հայր» կոչել զԱստուած: Եւ եթէ հաւատացելոցն պատշաճ են այսպիսի աղաւթք, յայտ եթէ եւ ոչ յետ ակազանին խափանեալ ինչ են ապաշխարութեանն շահք, զի թէ զայս ոչ կամէր, նա եւ դնէր իսկ ոչ ակրէնս //այսպիսի աղաւթս մատուցանել: Արդ, յայտ է, թէ գիտէր եւ եցոյց, եթէ եւ յետ ակազանին հնարէ լուանալ յանցանաց աղտոյն: Եւ վասն այնորիկ ըստ նմին եւ զաղաւթից ակրէնս կարգեաց, զի, յիշեցուցանելով զմեղան, խոնարհել հաւանեցուցանէ եւ այլոց թողութիւն առնել հրամաէ: Եւ յամեն այս ոխակալութենէ կամի զմեզ ազատս լինել:

Եւ զի «Սուրբն եղիցի անուն քո» բնաւին իսկ առաքինութեան է հաստատութիւն, եւ «եղիցին կամք քո» զնոյն նշանակէ, եւ «Հայր» հասարակաց կոչել զԱստուած անարատ առաքինութեանց է հանդէս: Եւ զի հարտ է թողուլ յանցաւորաց. վասն որոյ յետ աղաւթիցն ոչ զայլ ինչ ի պատուիրանացն յիշէ: Այլ թէ՛ Թողուցուք, ասէ, մարդկան գյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն երկնաւոր: Որպէս զմմէնջ է սկիզբն եւ մեք եմք տեարք դատաստանի մերում, զի մի՛ ոք յանմտացն, յորժամ տանջիցի, մեղադիր լինիցի Աստուծոյ, զի քեզ իսկ, ասէ, զպատժապարտս արարի Տէր եւ դատաւոր՝ տալ վճիռ, որպէսզի դու իսկ կշռիցես քեզէն անձին դատաստան: Նոյնպէս եւ ես քեզ դատեցայց, եթէ թողուցուս ծառակցին եւ յինէն այնպիսի շնորհաց լինիցիս արժանի. թէպէտ եւ այս այնմ չէ զուգական, զի դու իբրեւ զկարաւտ թողուս, եւ Աստուած ոչ իմիք կարաւտ: Դու՛ քոում ծառակցին եւ Աստուած՝ իւրում ծառայի, դու բիւր չարեաց պարտապան եւ Աստուած՝ անարատ ի մեղաց: Եւ արդ, պարտ էր քեզ եւ առանց այսր թողուլ գյանցանսն, այլ կամի եւ այսմ եւս երախտիսս գտանել յիւրմէ քեզ, զի յամենայն կողմանց հեզութեան եւ մարդասիրութեան տացէ քեզ պատճառս եւ տարեալ յարիցէ ի քո անդամն: Եւ արդ,

(84ա) մի՛ ասիցես, թէ յեղբաւրէն վնաս կրեցի, զի եւ դու այնպիսի ինչ ես, որ մատուցեալ թողութիւն խնդրես եւ բազում յանցանաց՝ պարտապան: Եւ ընդ այսր ամենայնի վարձս ընդունիս, յորժամ ոչ պահանջիցես// յայլոց համարս, որ քեզ յանցանիցենն: Եւ արդ, որպիսի տանջանաց չիցեմք արժանի յորժամ զայսպիսի իշխանութիւն առաք, եւ անձանց լինիցիմք մատնիչ: Եւ արդ, յայլ իրս զիարդ աղաչիցեմք լսելի լինել, եթէ որոց իշխեմք, այնու ոչ խնահիցեմք յանձինս:

Եւ մի՛ տուր զմեզ ի փորձութիւն (Ձ 13):

(84բ) Եւ ասաց մերոց նուազութեանցս. զհպարտութիւն խրատէ ցածուցանել, հրաժարել ուսուցանէ ի պատերազմաց, մի՛ մեզէն յանդուգն ի վերա երթալ, զի այնպէս մեր յաղթութիւնն լուսաւորագոյն լիցի, եւ թշնամոյն պարտութիւն ծաղր կացցէ: Իսկ «չար» աստ զսատանայ կոչէ եւ անհաշտ պատերազմ հրամաէ ունել ընդ նմա, եւ ցուցանէ, թէ ոչ ի բնէ այնպիսի ինչ էր, զի ոչ այնմ, որ ի բնէ, այլ այնմ, որ ի կամաց եկամուտ լինի համարեալ, լինի չարութիւնն: Եւ զյաճախութեան չարեացն կոչի նմա անուն չարութեան: Եւ քանզի ոչ իւրք ի մէնջ վնասեալ եւ անհաշտ ունի ընդ մեզ պատերազմ: Վասն այնորիկ ոչ ասէ թէ՛ Փրկեայ զմեզ ի չարեաց այլ թէ՛ «ի չարէն», եւ այսու խրատէ զմեզ, թէ ոչ առ ընկերն պարտիմք զայրանալ, այլ յորժամ ի նոցանէ չարչարիցիմք, այլ զամենայն չարն ի նա ընկենումք, զի ամենայն չարեաց նա է պատճառք: Եւ յորժամ կասկածագոյնս արար զմեզ ի թշնամոյն, ապա խրախոյս տա եւ զարթուցանէ մեզ թագաւորին յիշատակաւ, որոյ հրամանաւն ի մարտ պատերազմի ճակատիցիմք, եւ եցոյց զնա կարող եւ զաւրաւոր յամենայնի՝ ասելովն թէ՛ «Քո է արքայութիւն եւ զաւրութիւն»: Եւ թէ նորա է արքայութիւն, ապա չէ յումէքէ պարտ երկնչել. զի յորժամ ասիցէ, թէ՛ «Քո է արքայութիւն» յայտ առնէ, թէ ոչ ինչ է զաւրութիւն, որ կարիցէ ճակատել ընդդէմ մեր: Եւ թէպէտ եւ թուի, թէ հակառակ ինչ կայցէ, իմաստը, թէ Աստուծոյ թոյլ տալով է առ ժամանակ, եւ այն ընդ ծառայան ինչ հակառակ կայցէ կամ անարգած,// որ ընդդէմ դարձեալ իցեն Աստուծոյ: Քանզի ոչ ի վերա իմիք իշխէ դիմել, եթէ ոչ ի վերուստ առցէ հրաման, ուր եւ ոչ խոզից եւ արջառոց եւ ոչխարաց իշխեաց վնաս առնել, եթէ ոչ ի վերուստ առ հրաման:

Եւ զի այսպիսի ունիս թագաւոր. թէպէտ եւ տկարանայցես, պարտ է խիզախել:

Եւ փառք,- ասէ,- յաւիտեանս. ամէն:

Ոչ միայն ի շուրջանակի չարեաց ազատէ, այլ եւ փառաւոր. եւս կարէ առնել, զի որպէս զաւրութիւն նորա բազում է. նոյնպէս եւ փառքն՝ անճառք եւ անչափ: Տես, զիարդ յամենայն կողմանց կրթեաց զնահատակն՝ լինել պատրաստագոյն, եւ քան յամենայն ումէքէ յոխակալութենէ եւ յատելութենէ կամի ցածուցանել եւ ընդդէմ ամենայն չարեաց զայս առաքինութիւն իմն աւելի հաստատէ, զի յետ աղաւթիցն եւ այլոց ուղղութեանց յիշեցուցանելոյ եւ զդատաստանացն եւ զպարգեւացն ճառելոյ ստիպէ զլսողն ածել յայսր պատուիրան ի հնազանդութիւն: Եթէ թողուցուք, ասէ, մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր: Վասն այսորիկ գերկնից միանգամ եւ զչաւրէ ճառէ, զի այսու պատկառեցուցէ զլսողն, յորժամ այնպիսի Հայր ունիցի եւ գազանաբարոյ լինիցի յերկինս կոչեալ երկրաւորն եւ գաշխարհիս հոգայցէ որպիսի պատժոց չիցէ արժանի, զի ոչ միայն շնորհ[ճ]աւք պարտ է լինել որդի այլ եւ՝ գործաւք, զի ոչ այնչափ ինչ նմանս զառնէ զմեզ Աստուծոյ, որչափ յորժամ առ չարսն եւ առ մեղանչական երախտաւոր ոք գտանիցի, որպէս յառաջն ասաց, թէ՝

Նա զարեգակն իւր ծագէ չարեաց եւ բարեաց (Ե 45):

Վասն որոյ առաջագոյն յիւրաքանչիւր բանս աղաւթիցն: «Հայր մեր, ասէ, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի, եւ տուր մեզ զհաց եւ թող մեզ զյանցանս, եւ մի՛ տար զմեզ ի փորձութիւն, // եւ փրկեայ զմեզ ի չարէ»: Եւ ամենայն ուրեք բազմադիմի բանիւս այսուիկ հրամայէ վարիլ, զի ոչ հետք իսկ ցասմանն մի գտցի մեր առ եղբայրն: Եւ արդ, որպիսի տանջանաց չիցեմք արժանի յետ այսր ամենայնի պատուիրանաց, յորժամ ոչ միայն մեք չթողուցումք, այլ եւ զԱստուած եւս ի վրէժխնդրութիւն թշնամեացն կոչեմք: Եւ մեք այնչափ ինչ կամիմք անցանել զայսպիսի աւրինաւք, զի նա ամենայն իրիք հնարեցաւ առ ի չգրգռել մեզ ընդ միմեանս: Քանզի արմատ ամենայն բարութեանց սեր է: Վասն այնորիկ զապականիչն նորին եղծանէ, զի ամենայն հնարիւք զմեզ ի միմեանս յարիցէ, զի չիք ոք, որ զմեզ

այնպէս սիրիցէ իբրեւ զԱստուած, որ արարն զմեզ, եւ այս յերախտեացն, զոր հանապազ առնէ եւ ի պատուիրանացն, զոր տայ, յայտ է:

Յորժամ պահիցէք, - ասէ, - մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք» (Ձ 16):

Բարեաւք է աստ հեծել եւ հոգոց հանել դառնապէս, զի ոչ միայն կեղծաւորաց նմանեմք. այլ եւս քան զնոսա անցանեմք, քանզի գիտեմ զբազումս ոչ յորժամ պահիցենն միայն, այլ եւ յորժամ ոչ պահիցեն կեղծիս ցուցանեն, որ եւս չար քան մեղսն իցէ, զի մի ասէ զբազումս գայթակղեցուցանիցեմք: Զի՞նչ խաւսիս, Աստուած է, որ զայնպիսի կեղծաւորութիւն արգելու, եւ դու պահել զաւրէնսն, որ գայթակղութիւն համարիցիս, զի ոչ վայրապար ասաց, թէ կաղծաւորին, այլ առաւել կամեցաւ կսկծիցուցանել, թէ՛ «Ապականեն գերեսս իւրեանց», այն իսկ է, զի ապականեն խանգարեալ, զի թէ կեղծաւորութեան դեղնութիւն զգոյն երեսացն եղծանեն, զի ո՞չ պատասխանի տայցեն կանայքն, որք սնգուրաւ եւ ծարուրաւ գոյն երեսաց ապականեն ի կորուստ երիտասարդաց նոքա անձանց եւեթ մեղանչեն եւ կանայք՝ անձանց եւ տեսողաց:

(85բ) Վասն որոյ պարտ է յերկոցունց //փախչել, զի ոչ միայն ցուցանել, այլ թաքուցանել հրամայէ զպահսն որպէս ի տրոցն պատուիրանի: Մի, ասէ, ի ցոյցս առնել, իսկ ի պահսն եւ յաղաւթսն, ոչ այնպիսի կետ եդ ի միջի. ընդէ՞ր, զի զողորմութիւնն չէ հնար գաղտ գործել, իսկ զաղաւթս եւ զպահս հնար է: Եւ զոր աւրինակ, ասէ «Մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո», այսինքն՝ ամենեւին մի՛ ումեք յայտնել, եւ ի սենեկն մտանել զնոյն ակնարկէ: Նոյնպէս եւ աստ զգլուխն աւծանել. քանզի առաջնոցն ստեպ աւծանելն մեծի աւրախութեան պատճառք էին: Եւ զայս ի Դաւթա եւ ի Դանիէլէ թէ կամի ոք ուսանել յայտ, է, ոչ զի արդարեւ զգլուխ աւծանիցեմք, այլ զի ամենեւին փոյթ յանձին ունիցիմք թաքուցանել, զոր եւ ինքն իսկ կատարեաց պահաւք ի լերինն, զի ոչ աւծաւ եւ ոչ լուացաւ, զնոյն եւ մեզ հրամայէ, եւ կեղծաւորնն ի մէջ բերէ, զի կրկին պատկառեցուցէ զլսողսն: Եւ արդ, հրամայէ հեռանալ յայնպիսի չար ցանկութեանց, քանզի եւ աստ իսկ երեւին բազմաց եթէ ոչ առաքինութեան, այլ կեղծաւորութեան են կերպարանք: Եւս առաւել յայնժամ խայտառակին յորժամ

մերկապարանոց յայտնին: Եւ ցուցանէ, եթէ մերս, թեթեւագոյն են քան զկեղծաւորացն, զի եւ նոքա պահեն, եւ անյոյս են ի վարձուց: Իսկ զճշմարիտ պահողացն աշխատութիւնն թեթեւացուցանէ, եւ եթէ կամեսցիս մարդկան յայտնել եւ զայն եւս շնորհեցից քեզ ի դէպ ժամանակի, զի եթէ [...] ¹ փութայցես թաքուցանել, եւ հրապարակեցից ի հանդերձ [...] ² ամենայն տիեզերաց: Վասն որոյ ասէ. «Հայրն քո, որ տեսանէ ծածուկ հատուցէ քեզ յայտնապէս»: այլ դու առ այժմ մի՛ տրտմել կեղծաւորիցիս, այլ լուս գերեսս քո եւ աւծ զգլուխ քո, նա եւ, զի մի՛ իցես դու հաճոյ մարդկան՝ իբրու թէ վասն մարդկան եղեն փառաց իցեն պահքն քո: Եւ երկու. զի ծածուկ պահաւքս հատուցչին ծածկելոյ հաճոյ լինիցիս, եւ մի երեւեսցիս դու մարդ// կան իբր պահող, գուցէ փառք գիտող յայպագայն թափուր արասցեն զքեզ ի վարձուցն պահոցն:

Արդ, լուս՝ գերեսս քո, ա՛՛ծ զգլուխ քո:

Բանն Աստուծոյ ի խորհուրդ կոչէ զքեզ զի այն, որ աւծանէ զգլուխ իւր, պարարեալ լինի նա գիտութեամբ նորա, եւ այն, որ լուանա գերեսս իւր, լուացեալ լինին երեսք ոգւոցն յաղտէ: Արդ, ի ներքոյ անդամոյ քո առ դու զպատուիրանն եւ լուս դու գտեսիլ ոգւոյ քո յաղտոյ անաւրէնութեանց, եւ աւծ զգլուխ քո սրբութեամբ, զի եղիցիս դու հաղորդ եւ կցորդ Քրիստոսի:

Մի գանձէք ձեզ զգանձ յերկրի (Զ 19):

Քանզի զանձնագոփութեան ախտն հան մերժեաց, ապա ի դէպ ժամանակի դնէ ի տեղւոջն զինչսն չըստանալ, զի ոչ այնպէս ինչ գործէ ցանկութիւն ընչասիրութեան որպէս փառացն ցանկութիւն: Վասն որոյ եւ զգերդաստանաց բազմութիւնս եւ զներքինեաց դասակս եւ զսեղանս արծաթիս եւ զայլս ամենայն ծաղրալիցս յաճախեն մարդիկ, ոչ զի զպէտան լնուցուն, այլ զի յայլոց բազմաց ցոյցս առնիցեն վերագոյնն, զի ողորմել միայն պարտ է: Ասաց, եւ աստ, թէ որչափ ինչ արժան իցէ ողորմել, ցուցցէ. «Մի՛, ասէ, դնէք գանձ յերկրի», քանզի չէր իսկ դէպ անդէն յիսկզբանն իսկ եւ իսկ վասն զտնտեսութենէ յնչիցն ճառել, զի սաստկացեալ

¹ 1 բառ:

² 1 բառ:

ի վերա կայր բռնութիւնն ախտին, այլ առ սակաւ սակաւ կարճէ, եւ ազատեալ արկանէ ի միտս լսողացն, զի զիւրընկալ զբանն առնիցէ: Վասն այնորիկ նախ երանի տա ողորմածաց, եւ յետ այնր, թէ՛ «Առաջագոյն հաշտեսջիր ընդ ոսոխին», եւ ապա թէ՛ «Առնուցու զշապիկն թող ի նա զբաճկոն քո»: Իսկ աստ մեծ քան այն դնէ. թէ՛ դատաստան ինչ հասանիցէ, առնիցես զայն, զի քան զկոռուելն ի հանդերձիցն մերկանալն լաւ համարի: Իսկ աստ ոչ գոսոխ ինչ կամ զդատախազ յիշէ, այլ առանձինն զընչիցն տնտեսութիւնն ուսուցանէ, զի ցուցցէ, թէ՛ ոչ վասն նոցա որոց ողորմիցինն, այլ վասն// նոցա որսայցեն, դնէ աւրէնս, թէ՛ պէտ եւ չիցէ ոք, որ դատ դնիցէ եւ յատեան ձգիցէ, սակայն եւ այնպէս արհամարհեաց ինչսն, եւ տուր աղքատացն, եւ ոչ զամենայն աստ եղ, այլ եւս մեղմով անդր, թէ՛ պէտ եւ զճգունս, որ վասն սոցին էին մեծաւ առաւելութեամբ յայտ արար յանապատին, յորժամ ասաց սատանայ, թէ՛ «Ձայս ամենայն քեզ տայց», որ վերջին եւ ծայրագոյն մեքենա չարին, սակայն չեւ եւս ի մէջ բերեալ յայտնէ զագահութեանն ախտս, զի չեւ էր ժամանակ յայտնելոյ. զխրատտուի կարգ եւ ոչ զաւրինադրին ցուցանէ այսոքիւք: «Մի ասէ դնէք ձեզ զգանձ յերկրի», եւ յարէ ի նոյն, թէ՛

Որ ցեց եւ ուտիճ ապականեն եւ գողք ական հատանեն եւ գողանան (Ձ 19-20):

Դեռեւս զերկրիս գանձուց զվնաս յայտ առնէ, եւ զերկնից գանձուց՝ զաւգուտս, ի տեղոջէն եւ ի վնասակարացն: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ յորոց երկընչէինն, տայ խրախոյս, զի՞ երկնչիցիս, ասէ, ընդ ծախս ընչիցն, եթէ երկընչիցիս, բաշխեսցի ի տուրս, եւ յայժամ ոչ ծախիցին, եւ ոչ միայն ծախիցին, այլ եւ մեծ եւս յաւելուած առնուն, քանզի յերկինս յաւելուն: Բայց յայնժամ չասէ, այլ յետոյ դնէ: Բայց որ առաւելն յորդորէր զնոսա զայն բերէ ի մէջ, թէ՛ անծախ լինելոց են գանձք նոցա: Եւ յերկոցունց ձգէ զնոսա յուղղութիւն, զի ոչ ասաց թէ՛ տուրս տայցես պահիցն միայն, այլ նմին հակառակ ասէ. «Եթէ ոչ տայցես, կորընչելոց ե[ս]»: Եւ տես զի ոչ ասաց, թէ՛ այլոց թողլոց ես, որ ախորժելին էր մարդկան, այլ թէ՛ այնմ եւս ոչ հասանես, զի թէ՛ պէտ եւ մարդիկ ոչ վնասիցեն, բայց ցեց եւ ուտիճ ապականեն, եւ, թէ՛ պէտ զինչ եւ հնարս հնարիցիս, չկարես արգելուլ զվնասն: Նա եւ այլ իմն [միտս] յարէ ի նոյն, թէ՛

Ուր գանձք մարդուն իցեն, անդ եւ՝ սիրտ մարդուն (Ձ 21):

(87ա) Ձի թէպէտ եւ ոչ ինչ վնասակարացն վնասուց է, այն իսկ մեծ վնաս է, զի ընդ երկրաւորս միշտ բեւեռեալ//կայ եւ ազատն ծառա լիեալ եւ յերկնից բարութեանցն անկեալ: Եւ ոչ ինչ ի բարձանց երանութեանցն զմտաւ ածիցէ, այլ միշտ յիրս եւ ի տոկոսիս, անազա[տիկս] ծնկեալ կայցէ: Եւ ընչիցն կապանք գրգռիցեն հաջել ամենայն մերձաւորաց: Ընդ սմին եւ զմիւսն եւս, որ չարքան զայս է, յայտնէ. Ուր գանձք մարդոյն են, ասէ անդ եւ սիրտ նորս է, եւ յայտնապէս յերեւելի ինչ աւրինակ ձգէ զբանն.

Ճրագ մարմնոյ,- ասէ,- ակն է (Ձ 21):

(87բ) Եւ զոր ասեն այսպիսին չէ, մի թաղիցես, ասէ, ոսկի յերկրի եւ մի այլ ինչ, զի ցեցոյ եւ ուտծի եւ գողոց ժողովես, եւ թէպէտ յայնպիսի վնասակարաց ապրիցիս, այլ ի ծառայութենէն յերկրաւորս բեւեռելոյ չկարիցես ապրել, զի «ուր գանձք իցեն, ասէ, անդ սիրտ իցէ»: Յերկինս գանձեսձիր, ուր ոչ ընդ գանձելոյն միայն հատուցումն առնուցուս, այլ զի եւ անդ իսկ ելեալ գտանիցիս, անդ հորդեայ, անդ հոգու. զի ուր զգանձսն եղիր, յայտ է, թէ զմիտսդ անդր ժողովեցեր, եւ եթէ յերկրի, աստեն յերկրիս պատաղիցիս, եւ եթէ ոչ ինչ յայտնի զբանդ համարիցիս, լուր յաջորդացն. «Ձճրագ մարմնոյ ակն է»: Դարձեալ եւս յայտնիս ածէ զբանն քան զմտաց ծառայելոց եւ զգերելոց յիշեաց. եւ այն չէր ինչ բազմաց յայտնի: Յարտաքին աչսն փոխէ զվարդապետութիւնն, զի այսու գայն եւս ի միտ առնուցու, եթէ զմտացն վնասակարս չդիտիցես ի մարմնաւորացն ուսանիցիս: Ձի որպէս ակն մարմնոյ լուսաւորիչ է, նոյնպէս եւ միտք՝ Հոգւոյն: Ձոր աւրինակ ոչ ցանկա իր ոսկի զարդ յանձին ունել եւ հանդերձս պատուականս ականել. եթէ այնպիսի զարդ զաչս քո կուրացուցանէր, այլ առաւել զառողջութիւն խնդրէիր, զի յորժամ աչքն կուրանա եւ այլ եւս մարմինն խաւարազգած լինի, նոյնպէս յապականել մտացն՝ բիւրապատիկ կարեալք կեանք մարդկան լնուն: Նոյնպէս մարդոյն լուսաւորութիւն աչա//ց առողջութիւն մտացն լինի: Սոյնպէս եւ ոգոյցն պայծառութիւն մտացն զուարթութիւն է: Եթէ զնա խափուցանեմք ի՞նչ լուսաւորիմք: Ձոր աւրինակ, թէ ոք զակն աղբեր խնուցու զգետս ցամաքեցուցանէ, նոյնպէս եւ որ զմիտսն ապականիցէ զամենայն զկենաց իւրոց զգործ պղտորէ: Վասն որոյ եւ ասէ իսկ.

Եթէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար իցէ, խաւարն քանի՞աւն իցէ (Ձ 23):

Այսինքն թէ՛ յորժամ նաւապետն ընկղմիցի, եւ ճրագն շիջանիցի, եւ զաւրավարն գերի գայցէ որպիսի ինչ կենաց յոյս ուսուկին մնայցէ: Վասն այսորիկ եթող¹ ճառել զնենգութեանցն, որ յագահութենէն լինիցի եւ կռուոց եւ դատաստանաց, զոր վերագոյնն ասաց ընդ աղաւտ, թէ «Գուցէ մատնիցիս դատաւորի եւ դահճի»: Եւ որ քան զամենայն դժընդակ էր եւ միշտ լինելոց գայն դնէ, զի գոնեայ այսու մերժեսցէ ի չար ցանկութեանց, զի քան ի բանդի բնակել եւս չար այն է յորժամ միտքն այնպիսի ախտի ծառաիցեն: Այս դիպիցի իսկ, եւ այլքն մի ըստ միոջէ, որ ընչիցն ցանկութեան վիճակեալ են: Վասն որոյ եւ զսայ յետոյ դնէ, քանզի դժընդակագոյն է եւ անվրեպ դիպիցի. Աստուած, ասէ, ետ քեզ միտս զուղիւղն իմանալ եւ ի տրտմական վնասակրացն մերժել, զի իբրեւ զինու վառեալ եւ լուսով լուսաւորեալ այնպէս լինիցիմք ի զգուշութեան: Իսկ մեք թշնամեացն մատնեմք զպարգեւքն վասն անաւգուտ եւ անչահ իրաց: Եւ արդ, զինչ աւգուտ իցէ մարմնոյն առողջութիւն, թէ աչքն խաւարեսցի, զոր աւրինակ, թէ ի բժշկէ առողջութեան ակն ունիցիմք եւ նա եւս յաւելուածի ցաւն առնիցէ, թէպէտ եւ միշտ յոսկի համակ իցէ, ոչ ինչ աւգուտ հիւանդին գործիցէ: Նոյնպէս. եթէ զմիտսդ ապականիցես, թէպէտ ի մէջ գանձուցն [ն]ստիցիս, առաւել վնաս ոգոյդ գործիցիս: Տե՛ս, զի որոց ցանկան մարդիկ, անտի ցուցանէ զանգիւտ կորուստ ոգոյ: Եւ արդ, ընդէ՞ր ցանկ//աս ընչից. ոչ ապաքէն, զի ի փափկութեան վայելիցես: Նա աւանիկ հակառակ նմին իրքն դիպիցին: Եթէ աչքն խափնուցու չվայելիցեմք ինչ ինչ ի բարիսն, եւ եթէ միտքն ապականիցին զնոյն կրիցեմք: Եւ արդ, ընդէ՞ր թաղիցես զոսկին յերկրի. ոչ ապաքեն, զի պահիցի նա աւանիկ ի գողոց կասկածէ եւ յայլոց վնասակարաց: Եւ զոր աւրինակ զպահողն եւ զողորմանն եւ զաղաւթականն վասն սնապարծու եւ առ մարդկան ական տեսութիւն, որոց ցանկային այնու առաւել հաւանեցոյց ոչ սնապարծել: Ընդէ՞ր, ասէ, այդպէս աղաւթես եւ ողորմիս. ոչ ապաքեն զի մարդկան փառաց ցանկացեալ իցես: Թէ այդպէս իցէ, կաց յաղաւթս ի ծածուկ եւ հասանիցես ի հանդերձելում: Նոյնպէս եւ զարծաթասէրն, յորս փու-

¹ Ձեռագրում եթէ թող (եթ-ը՝ կէտագծերում):

Թայրն, գրաւեաց: Զի՞նչ կամիս, ասէ, զի ինչքն պահիցին եւ ի ցանկութեանն վայելիցես զերկոսեան, իսկ բազում առաւելութեամբ շնորհեցից քեզ: Եւ անդ դնիցես զոսկին ուր եսն հրամարիցեմ եւ յայտնագոյն զնոցին վնաս ի փշոցն առակի եցոյց: Բայց սակայն եւ աստ ընդ աղաւտ արկնարկեաց յասելն. «Եթէ լոյսն որ ի քեզ է, այն խաւար է», այսինքն՝ եթէ տրաւքն մեղանչես դու, զի լուսատու է նա, այսինքն՝ զի արդարացուցիչ է, որչափ եւս մեղաւքն, զի խաւարեցուցիչք են շնութեան եւ հայհոյութեան մի՛ կոչէ նոցա, զի յանցուցիչք են, այլ տրոց երկու կողմանք են: Եթէ տուեալ լինին մարդկեղէն պարծանաւք, յանցուցանեն նոքա, ապա թէ ձեռն տուիչին առ մարդ կատարեալ ձգեալ լինի եւ խորհուրդք նորա առ Աստուած հատուցիչն ձգեալ լինի, այս է, զոր ասէ. «Ուր գանձք ձեր են, անդ են եւ սիրտք ձեր»:

Ոչ ոք կարէ,- ասէ,- երկուս տերաց ծառաել (Զ 24):

(88բ) Տեսանես զիարդ առ սակաւ սակաւ յամենայն իմէքէ մերժէ եւ բազում բանիւք յնչից մերկ եւ լոկ խրատէ լինել եւ զարծաթասիրտ//ութեան եւ լոկ խրատէ¹ բռնութիւնն զիջուցանէ եւ ոչ բաւական համարի գառաջինն թէպէտ եւ մեծամեծք եւ բազումք էին, այլ եւս ահագինս յաւելու, եւ զինչ եւս քան զարդիս ասացեալս կայցէ ահագին, եթէ վասն ընչից ի Քրիստոսի ծառայութենէ ելանել հասանիցէ: Եւ զինչ քան զայն ցանկալի կայցէ, եթէ զինչսն արհամարհելով զնորա սերտ խնաման ստանայցեմք: Եւ զոր միշտն ասէի եւ այժմ ասեմ. երկոքումք ստեպ գալ ի հնազանդութիւն բանիցն, զոր աւրինակ բժիշկ մի ճարտար, զախտն, որ յանսաստութենէն իցէ եւ զազոզութիւնն, որ ի հնազանդութենէն լինիցի, յայտ առնէ: Տե՛ս, զիարդ կրկին շահս ցուցանէ կամ որպէս հնարի զաւգաւտն ի հասարակ վնասարակացն զերծուցանել, զի ոչ այնու միայն ասէ վնաս առնէ ձեզ մեծութիւնն, թէ զգոզս եւ զաւազակս վառեալ ի վերա յարուցանիցէ եւ ոչ զի զմիտսն եւեթ խաւարեցուցանիցէ, այլ զի եւ ի ծառայութենէ Աստուծոյ մերժէ: Եւ գերիս անշունչ ընչիցն առնէ եւ երկոքումք վնաս գործէ, զի եւ ծառայս ընչիցն առնէ, որոց տիրելն պարտ էր եւ ի ծառայութենէ Աստուծոյ հանէ, որում արժան էր ծառայել, զոր աւրինակ եւ անդ կրկին եցոյց զվնասն եւ աստէն գանձելով, ուր ցեցս հարկա-

¹ Ձեռագրում խրատել լիցել (լիցել-ը կէտագծերում):

նէ եւ անդն չգանձելով, ուր պահպանութիւնն է: Նոյնպէս եւ աստ երկուս վնասս դնէ, զի եւ Աստուծոյ հեռացուցանէ եւ մամոնաի հնազանդէ: Եւ զայս ոչ վաղվաղակի դնէ, այլ նախ ի հասարակաց մտաց յաւրինէ եւ ապա ասէ. «Եթէ ոչ կարէք դուք երկուց տերանց ծառայել», որ հակառակ միմեանց տայցեն զհրամանս, զի թէ այսպէս չիցէ եւ ոչ երկու իսկ անուանէին, այլ այսպիսի իմն խնդրէ, որպէս ասէն, եթէ էր բազմութիւն հաւատացելոցն մի սիրտ եւ մի ոգի, զի թէպէտ եւ բազում մարմինք միմեանց ուրոյն էին, այլ միաբանութիւնն զբազումսն մի արար: Դարձեալ եւ ձգէ (89ա) եւս բանն. ոչ միայն ասէ զծառ//այիցէ, այլ եւ ատիցէ եւս եւ զերեսս դարձուցանիցէ, զի թէ զմիմն ատիցէ եւ զմիւսն սիրիցէ կամ զմիմն մեծարիցէ եւ զմիւսն արհամարհիցէ: Եւ թուի, թէ երկուք ինչ իցեն, զոր ասեն, այլ նոյն է: Եւ ոչ վայրապար մի ըստ միոջէ կարգեաց, այլ՝ զի ցուցցէ, եթէ դիւրին է դառնալ ի լաւ անդր. զի մի՛ ոք ասիցէ, եթէ մի անգամ ծառայեցա եւ ընդ բռնութեամբ մտի ընչիցն, չկարեմ գերծանել: Յուցանէ, թէ հնար է փոփոխել որպէս անտի այսր, նոյնպէս աստի անդր խառնիխուռն իմն ի մէջ ընկեալս զբանն. եւ զի զլսողն հաւանեցուցանէ լինել անաչառ դատաւոր բանիցն եւ անդրստին յիրացն տայցէ վճիռ նոցին, իսկ յորժամ յաւժարեցոյց եւ միաբանեաց, ապա եւ զիւր անձն յայտնէ ասելովս զնորին հետ, թէ՛ «Ոչ կարէք դուք Աստուծոյ ծառայել եւ մամոնաի»: Եւ արդ, իմացեալ զայս, սարսեցուք՝ յորպիսի իրս իջուցաք զՔրիստոս ասել զայսպիսի բանս եւ դնել հաւասար Աստուծոյ զոսկի, զի թէ եւ լսելն իսկ դողումն իցէ, որք արդեամբ սոսկ զոսկին պատուիցեն քան զերկիւղն Աստուծոյ, որչափ եւս առաւել ահագին է: Եւ առաջնովքն ասեն. չէր այսպիսի ինչ եւ զհարդ ասեն Աբրահամ կամ Յովբ արդարացան, եւ դու մի զմեծատունսն ինչ աղարտիցես, այլ զծառայեցեալսն ընչից, ապա թէ ոչ եւ Յովբ մեծատուն էր եւ չծառայեաց մամոնաի, այլ ունէր բազում ինչս եւ տիրէր եւ տէր ընչիցն էր ծառայն Աստուծոյ, եւ իբրեւ զայլոյ մատակարար կայր ի վերա ընչիցն եւ ոչ միայն զայլոց չ[հ]ապշտակէր, այլ եւ զիւրն եւս այլոց կարաւտելոց բաշխէր: Եւ եւս մեծ այն էր, զի չէր ինչ ուրախ ընդ անցաւորսն, քանզի եւ ասէ. իսկ. «Եթէ ուրախ ինչ եղեա երբեք ընդ մեծութիւնն, որ եկն ինձ» (Յոր ԼԱ 25): Նա եւ յայնժամ չտրտմեցաւ, յորժամ բարձաւ ի նմանէ մեծութիւնն, այլ ոչ այնպիսի ոք իցեն: Եւ արդ, ի մեծատունքս, այլ քան զամենայն ստրուկս եւս անազատք իբրեւ

(89բ) դժընդակ բռնաւորի// ումեք կան ի հարկի: Արդ, մի՛ աւելի ինչ ճարտարեր, քանզի մի անգամ վճիռ ետ Աստուած, թէ չէ հնար այսմ եւ այնմ յառա[տ]ութեամբ միաբան հարկս հարկանել, զի մին յապշտակել հրամատ է եւ միւսն՝ մերկ մերկանալ յնչիցն, մինն՝ զգաստանալ եւ միւսն՝ պոռնկել, մինն՝ արբենալ եւ մինն՝ պարկեշտանալ, մինն՝ չհայել ի մաւտաւորս եւ միւսն՝ ընդ ոսկին բեւեռել, մինն՝ զարմանալ ընդ կճեաս եւ միւսն՝ արհամարհել զայն եւ պատուել զցածութիւն: Եւ արդ, զիարդ մարթիցի նոցա միաբան լինել, կոչէ զմամոփնայն տէր ոչ վասն նորին ինչ բռնութեան, այլ վասն այնոցիկ, որ ընդ նովաւ են կատարեալ: Սովին աւրինակաւ եւ զորովայնն Աստուած կոչէ ոչ ըստ նորին ինչ պատուոյ, այլ ըստ ծառակեցոցն թշուառութեանն, որ քան զամենայն տանջանս եւս դաժանագոյն է: Եւ արդ, քան զորպիսի դատապարտեալս չիցեն եղելիս, որք զԱստուած Տէր ունիցին, եւ ի զգաւն թագաւորութենէն ի խիստ ծառաութիւն անձամբ զանձինս առնիցին վտարանդիս եւ եւս չար քան զամենայն, զի ի բարձանց բարութեանցն անկանել եւ յԱստուծոյ ծառաութենէն վրիպել հասանիցէ: Իսկ յորժամ եցոյց ամենայնիւ զաւգուտն, որ յնչիցն տնտեսութենէ իցէ, եւ թէ ուր պահիցին ինչքն եւ զոգուոյն ցանկութիւն եւ զցածութեանն ստացուածս եւ զաստուածապատուութեանն զգաստութիւն, յարդարէ այնուհետեւ ցուցանել, թէ եւ զաւրաւոր իսկ է, խրատն, քանզի այն իմն ա[ռա]ւելագոյն է գեղեցիկ աւրէնսդրութեանն ոչ միայն զաւգտակարսն հրամանել, այլ եւ զաւրաւորս եւս զնոյն առնել: Վասն որոյ ամէ եւս զնովիմբ, թէ՛

Մի՛ հոգայցէք վասն ոգոց ձերոց, եթէ զինչ կերիցէք (Ձ 25):

(90ա) Զի մի ասիցեն, թէ յորժամ զամենայն ինչս բաց պարտիցէ ընկենուլ եւ զիարդ կարիցեմք կեալ. առ այսպիսի միտս ընդդէմ ասէ ի պատշաճ ժամանակի, զի թէ յառաջնումն էր, ասաց եթէ՛ «Մի ինչ հոգայք» ծանր թուէր, իսկ յորժամ եցոյց զապականութիւնն, որ յարձաթասիրութենէն// լինի, ապա այնու իմն դիւրընկալ առնէ զխրատն: Վասն որոյ են այժմ չասէ վայրապար, եթէ՛ «Մի հոգայք», այլ զպատճառսն ի միջի եղեալ զայն հրամատ յետ ասելոյն, թէ՛ «Ոչ կարէք դուք Աստուծոյ ծառակել եւ մամոնաի», յարէ ի նոյն, թէ զայս ասեմ ձեզ, զոր անբաւ վնասն զի ոչ եթէ յնչիցն միայն վնասիցիմք, այլ եւ ի կարեւորսն առնուք վերա ի

կործանումն փրկութեան ձերոյ, զի դոյն իսկ յարարչէն եւ ի խնամածուէն ձերոյ յԱստուծոյ հանէ զձեզ: «Եւ վասն այսորիկ ասեմ ձեզ, թէ մի հոգայցեք»: Եւ քանզի եցոյց զվնասն, թէ մեծ է, ապա յոլովէ եւս զհրամանն ոչ միայն, զոր ունիցի ոք ինչ հրամայէ ընկենուլ, այլ եւ վասն կարեւոր պիտոյից կերակրոցն չհոգալ: «Մի՛, ասէ, հոգայցէք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք: Ոչ եթէ հոգին կերակրոյ ինչ կարաւտիցէ, քանզի անմարմին է, այլ ըստ հասարակաց սովորութեան դնէ, զի թէպէտ եւ չիցէ կարաւտ կերակրոց, այլ ոչ կարէ մնալ ի մարմնի առանց մարմնոյ կերակրոց եւ զայս ոչ վայրապար ինչ դնէ, այլ յուզէ իմն եւ աստ խորհուրդս զկեսն յիրաց ինչ գործելոց եւ զկեսն յայլոց աւրինակաց յիրաց ինչ գործելոց ասելովն, թէ՛

Ո՞չ ապաքէն ոգին առաւել է, քան զկերակուրն, եւ մարմինն՝ քան զհանդերձ (Զ 26):

Զի որ զմեծն ինչ ետ փոքրն զիա՞րդ ոչ տայցէ, որ զկերակրելի մարմինն ստեղծ, զիարդ իցէ, զի զկերակուրսն ոչ շնորհիցէ զի եւ ոչ իսկ վայրապար ասաց, թէ «Մի՛ հոգայցէք՝ զինչ ուտիցէք կամ զզենուցուք», այլ թէ՛ վասն մարմնոյդ եւ ոգւոյ: Եւ քանզի ի նոցանէ ցուցանելոց էր աւրինակս, ըստ նմին համեմատութեան եւ զբանն ձգէ յառաջ, այլ զոգին մի անգամ եդ, եւ նոյնպիսի ինչ կայ եւ մնա եւ զմարմինն աւր ըստ աւրէ զարգացուցանէ: Վասն որոյ եւ զերկոցունցն եւս յայտ առնէ. զմիոյն իբրեւ զանմահ է, եւ միւսոյն իբրեւ զմահկանացու է: Քանզի եւ յարէ ի սկիզբն, ե-թէ՛

Ով իցէ ի ձեզ, որ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի (Զ 27):

Եւ զոգւոյ եւս լռեաց, քանզի չառնու աճումն ինչ եւ զմարմնոյն միայն ճառեաց: Եւ այնու յայտ է, թէ ոչ ի կերակրոց ինչ աճ է հոգին այլ յԱստուծոյ դարմանոց, զոր եւ այլովք յայտ արարեալ Պաւղոսի, ասէր, եթէ՛ «Ոչ այն ինչ է, որ տնկեն եւ ոչ այն ինչ, որ ջուրն տայ, այլ՝ որ աճեցուցանեն Աստուած» (Ա Կորնթ. Գ 7) զիրացն իրն չգործելոց: Այնպէս յորդորեաց, իսկ յայլոց աւրինակաց, եթէ՛ «Հայեցարուք ի թռչունս երկնից» (Մատթ. Զ 26), զի մի ոք ասիցէ, թէ աւգտիմք ի հոգալոյն եւ ի մեծէն եւ ի փոքուէ: Կասեցուցանէ զնոսա ի մեծէ, զի վասն ոգւոյն չտայ հոգալ

եւ ի փոքրուէ, զի վասն մարմնոյն չհրամաէ տրտմել: Եւ ի փոքրունս զթռչունս ածէ աւրինակ, զի թէ կարի յետնոցն այնչափ դարման տանիցի որչափ առաւել ձեզ լինիցի խնամակալ: Եւ առ նոսա այսչափ ինչ, զի ուամիկ ժողովք ժողովեալ էին ի մի վայր, իսկ սատանաի ոչ այսպիսի ինչ, այլ թէ՛ «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանո Աստուծոյ» (Դ 4):

Իսկ աստ զհաւուց յիշեցուցանէ եւ առաւել իմն կամի պատկառեցուցանել, որ կարի զխրատու բանից ունի զաւրութիւն: Եւ քանզի ոչ ասաց, թէ թռչին թռչունք, որ չէ մարթ մարդկան, այլ թէ կերակրին առանց հոգւոց, զոր թէ եւ մեք կամիցիմք դիւրին է ուղղել, եւ զայս այնոքիկ ցուցին, որ արդեամբք զսոյն վճարեցին: Վասն որոյ արժան է զարմանալ ընդ իմաստութիւն աւրէնսդրին, որ ի մարդկանէ կարէր տալ աւրինակ յեղիաէ, Մովսիսէ եւ Յովհաննէ եւ յայլոց նոյնպիսեաց անհոգաց, այլ զի նոսա զկծեցուցանիցէ¹ զթռ[չ]նոցն յիշեցուցանէ: Զի թէ զարդարոցն ճառեալ էր. ունէին ասել, թէ չեւ եւս ի նոցա չափն հասաք: Նա աւանիկ զնոցանէ լռեաց եւ զթռչունս [էաձ] ի մէջ, զի² զամենայն պատճառս հատցէ ի նոցանէն, եւ յայսմ վայրի կարի նմանող եղեւ աւրինացն, զի եւ Հին կտակարանքն մերթ առ մեղու եւ մերթ առ մրջիւն առաքէն զվատն եւ երբեմն առ տատրակ եւ առ ծիծառն, եւ այլ ոչ սակաւ// ինչ պատուոյ նշանակէ. եթէ զոր նոքա բնութեամբ ունին մեք զնոյն կամաւք ուղղիցեմք, զի թէ որ վասն մեր են այնչափ խնամ տանիցի, որչափ եւս՝ առաւել մեզ: Վասն այնորիկ ասաց թէ՛ «Նայեցարուք ի թռչունս», եւ ոչ ասաց թէ՛ ոչ վաճառեն եւ շահին, զի այն կարի խոտելոց էր, այլ թէ՛ «ոչ սերմանեն»: Եւ զիարդ ասեն չիցէ պարտ սերմանել. ոչ ասաց զայն այլ թէ՛ չէ արժան հոգալ եւ ոչ եթէ գործել չէ պարտ, այլ կարճ ամիտ լինել եւ զանձն ի հոգս մաշել չէ աւրէն, բայց գործել եւ զիւր հաց ուտել հրամաեաց, այլ ոչ եթէ հոգալ եւ յանձնապաստան լինել: Զայն եւ Դաւիթ արկնարկեաց, թէ՛ «Բանաս զձեռն քո եւ լցուցանես զամենեսեան» (Սաղմ. ՃԽԴ 16): Զտեսանես զՅակովբ. զիա՞րդ կայր յաղաւթս, եւ լինէր ուխտադիր, թէ՛ «Տացէ ինձ, ասէ, Տէր հաց ուտելոյ եւ հանդերձ զգենլոյ» (Ծննդ.

¹ Ոսկեբերանի մտո՛ կասեցուցանիցէ:

² Տողամիջում զի:

ԻԸ 20). որ ոչ հոգալով ինչ ասէր, այլ ամենայն յԱստուծոյ խնդրէր: Զսոյն եւ առաքեալքն ուղղեցին եւ հինգ հարիւրքն եւ երեք հարիւրքն: Ապա թէ յետ այսչափ բանից ոչ կամիս լուծանել զանձն յայնպիսի անհնարին կապանաց, զանշահուծիւն իրացն զմտաւ ած, քակեայ, մերժեայ զհոգսն ի քէն բանիւն, որ ասէ, թէ՝ «Ով ի ձէնջ, որ կարիցէ առ հոգալ յաւելուլ ի հասակի իւր կանգ մի»: Տեսանես, զիարդ ի յայտնոցն զանյայտն արար, զի որպէս ի մարմինն հոգալովն չկարես յաւելուլ, նոյնպէս եւ ոչ ի կերակուրսն ժողովելոյ. եւ յայսմանէ յայտ է, թէ ոչ ի մերմէ փութոյ, այլ յԱստուծոյ խնամոցն լինի, եւ զոր համարիք, թէ՝ մեր ինչ գործ իցէ. զամենայն նա վճարէ, զի եթէ նա զմեզ թողուցու ոչ փոյթ եւ ոչ վաստակ եւ ոչ այլ ինչ աւգուտ են դեղ, այլ ամենայն ի դդերեւ ելեալ գնայցէ:

Նայեցարուք ընդ շուշանն վայրենի՝ զիարդ անէ (Զ 28):

(91բ) Զորժամ ասաց վասն կարեւոր կերակրոցն եւ եցոյց, եթէ եւ ոչ վասն այնր պարտ է հոգալ, ապա ի թեթեւագոյն փոխի, զի ոչ այնպէս կարեւոր է հանդերձ իբրեւ զկերակուրն: Եւ ընդէր ոչ աստ զնոյն հաւուցն աւրինակ բերիցէ ի մէջ, եւ յի//չեսցէ զսիրամարդ կամ զփոր կամ զոչխար: Այլ զի երկոցունց կամի ցուցանել զառաւելութիւն ի նուազիցն, որ այնչափ փառաւորեն վայելչութեամբ, զոր տուեալ է շուշանացն վայրենեաց, ապա եւ ոչ շուշան իսկ կոչէ, այլ «խոտ վայրենի»: Եւ այլ եւս նուազութիւն յաւելու. «Որ այսաւր է, ասէ, եւ վաղիւն չէ», եւ այլ եւս կարի նուազագոյն, եթէ՝ «ի հնոց անկանի»: Եւ ոչ ասէ, թէ զգեցուցանէ, այլ թէ՝ «այնպէս» (Մատթ. Զ 30): Տեսանես զբազ[ուժ] առաւել[ու]ութիւնն այսու զնոսա մորմոքեցուցէ. վասն որոյ յարէ ի նոյն, թէ ոչ ապաքէն առաւել զձեզ, զի եւ այսու զբազուժ ինչ յայտ առնէ զձեզն» ասելով զառաւել պատիւն եւ զփոյթն, զոր ունի ընդ ազգիս մերում, ակնարկէ, որպէսզի ասիցէ, թէ զձեզ, որոց զոգիսզ շնորհեաց եւ զմարմինսդ ստեղծ: Վասն որոյ զամենայն երեւելիս արար եւ զմարգարէսն առաքեաց եւ զաւրէնսն ետ, վասն որոյ եւ զՄիածինն ետ: Եւ քանզի զամենայն յայտնի եցոյց: Ապա եւ մորմոքեցուցանէ եւս Աստուծոյ, ասէ՝ «Թերահաւատք», զի այնպիսի իսկ միտք վայելեն խրատտուաց ոչ միայն ողորքել, այլ եւ կսկծեցուցանել, զի հաւանեցուցէ ի լուր բանիցն ասացելոց, որ ոչ միայն չսգալ ուսուցանէ, այլ եւ մի քրքել կարի ընդ պէս-պէս

Հանդերձս, զի խոստոյ նմանէ վայելչութիւն նոցա, զի եւ պատուականագոյն իսկ է խոտ քան զայնպիսի պաճուճանս: Տե՛ս, զիւրդ ի սկզբանն թեթեւն իմն ցուցանէ զհրամանն եւ ի հակառակացն եւ յորոց կասկածէինն, մերժէ զնոսա: «Նայեցարուք, աւսէ, ընդ շուշանն վայրենի», եւ յարէ ի նոյն, թէ «ոչ վաստակին», զի յաշխատութենէ ազատութիւն եւ ոչ եթէ չհոգալն աշխատութիւն ինչ իցէ, այլ հոգալ եւ զոր աւրինակ ասելովն, եթէ ոչ սերմանելն ինչ խափանիցէ, այլ զհոսն, եւ ասելովն, թէ՛ «ոչ վաստակէ եւ ոչ նիւթէ», ոչ եթէ զգործն ինչ խոտիցէ, այլ զտատամսելն, զի եթէ Սողոմովն պարտեցաւ ի գեղեցկութենէն նոցա եւ ոչ մի անգամ //միայն կամ երկիցս, այլ յամենայն իսկ ի թագաւորութեան իւրում: Եւ ոչ կարէ ոք ասել, եթէ երբեմն այնպիսի ինչ զգենուր եւ երբեմն ոչ նոյնպիսի, այլ թէեւ ոչ մի աւր այնպիսի զարդու զարդարեցաւ, քանզի ասելովն, եթէ՛ «յամենայն ի փառս իւր» յայտ առնէ, եթէ յամենայն իսկ ի թագաւորութեանն իւրում այնպէս ինչ ոչ զգեցաւ, եւ ոչ եթէ ի միոյ ծաղկէ պարտեցաւ, եւ ի միւսումն նմանել կարաց, այլ յամենեցունց միանգամայն յաղթեցաւ: Վասն որոյ եւ ասէ իսկ, եթէ՛ «Ոչ իբրեւ զմի ի նոցանէ», զի որպէս ինչ ի մէջ ճշմարտութեանն եւ ստութեանն իցէ, նոյնպէս ի մէջ Հանդերձիցն եւ ծաղկաց, զի թէ նա, որ փառաւորէր ի¹ թագաւորս, երբեմն պարտեցաւ. իսկ դու յաղթե՞լ կարիցես պայծառութեանն: Նա եւ խրատէ զմեզ չցանկալ զարդուց պայծառութեան. եւ տես զվախաճանն, զի ի հնոց արկանելոց է, եթէ նուազիցն, որ յոչինչ պետս համարեալ են, այնպիսի դարմանս ցուցանէ Աստուած, որչափ եւս առաւել քեզ պարգեւեսցէ, որ քան զամենայն երեւելիս լաւագոյն եւ պիտանացու ես Աստուծոյ: Եւ վաս[ն] է՞ր արդեւք այնպէս գեղեցիկ արար զնա Աստուած. զի զիւր զիմաստութիւնն ցուցանիցէ եւ՝ զառաւելութիւն զաւրութեանն, որպէս զի ամենայն ուստէք զնորա փառսն ուսանիցիմք, քանզի ոչ եթէ «երկինք միայն պատմեն զփառս Աստուծոյ» (Հմմտ. Սաղմ. ԺԸ 2) այլ եւ՝ երկիր: Եւ զսոյն Դաւիթ յայտ արարեալ ասէր, թէ՛ «Աւ[ր]հնեցէք զՏէր, ծառք պտղաբերք եւ ամենայն մայրք» (Սաղմ. ՃԽԸ 9). կէսքն պտղովք եւ կէսքն մեծութեամբքն եւ կէսքն գեղեցկութեամբքն փառաւորեն զԱրարիչն, զի բազում իսկ եւ առաւելութեան իմաստութեան է նշանակ յորժամ եւ կարի

¹ Տողամիջում ի:

նուագագոյնսն նորա խնամքն երեւեսցին: Զի թէ խոտոյն, որ ոչ ի պէտս, այլ հրոյ ճարակ է, այնպիսի գգեղեցկութիւն շնորհեաց, զիա՞րդ ոչ քեզ, որ ի պէտս հաստատեցար, շնորհեացէ՛ գամենայն ինչ: Եւ իբրեւ եցոյց զԱստուծոյ բազում
(92բ) խնամսն, ապա սուղ ինչ ընդոստուցանէ. զի ոչ գանհաւատ//ութիւն, այլ զթերահաւատութիւնն բամբասէ:

Զի եթէ զխոտն վայրենի, ասէ Աստուած այնպէս զգեցուցանէ, որ-ջա՞փ եւս առաւել զձեզ, ա՛յ թերահաւատք (Զ 30):

Թէպէտ եւ ինքն է, որ գամենայն առնէ ըստ այնմ, եթէ՛ «Ամենայն ինչ Նովաւ եղեւ» (Յովհ. Ա 3), սակայն չեւ եւս գանձնէ ճառէ, զի գայն եւեթ բաւական համարի առ ժամանակն, որ իւրաքանչիւր պատուիրանս զիշխանութիւն իւր եցոյց ասելովն, թէ՛ «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն, այլ ես ասեմ ձեզ»: Եւ արդ, ընդ այն մի՛ զարմացիս, թէ՛ յետ այնորիկ թաքուցանէ գանձն եւ խոնարհագոյնս խաւսի, զի դեռ ի նոյն փութա, զի զիւրընկալ զբանն խառնիցէ եւ ամենայն իւրք ցուցցէ, թէ՛ ոչ Աստուած ոք հակառակ Աստուծոյ է, այլ յոյժ միաբան, զոր եւ յայսմ վայրի առնէ, զի յայսչափ բանս ճառեալ զինքն ի միջի ոչ դնէ: Եւ արդ, ընդ իմաստութիւն նորա է զարմանալ եւ ընդ խնամսն: Եւ յորժամ գերուսաղեմէ խաւսէր քաղաք մեծի արքաի կոչեաց, եւ յորժամ՝ զերկնից՝ աթոռ Աստուծոյ անուանեաց, եւ յորժամ գամենայն աշխարհաց տեսչութենէ ճառէ, անդ ի վեր առ Հայր հանեալ ասէ թէ՛ «Զարեգակն իւր ծագէ ի վերա չարաց եւ բարեաց»: Եւ յաղաւթսն ուսուցանէ. թէ՛ «Նորա է արքաութիւն եւ փառք», եւ աստ, յորժամ վասն խնամոցն ճառեալ, յայտ առնէ թէ՛ եւ ի փոքունսն ամենահնար ճարտարապետէ, զի եթէ զխոտն վայրենի այնպէս զգեցուցանէ Աստուած: Եւ ոչ ումէք իւր Հայր կոչէ, այլ՝ նոցա, եւ պատուոյն անուամբ փոքր մի ընդոստուցանէ զնոսա, զի եւ յորժամ իւր եւս Հայր կոչիցէ, մի՛ ինչ ցասնուցուն:

Եւ արդ, մի՛ հոգայցէք եւ ասիցէք, թէ զինչ կերիցուք կամ զինչ արբուք, զի գայս ամենայն հեթանոսք խնդրեն (Զ 31-32):

Տեսանե՞ս դարձեալ, զի մեծապէս պատկառեցուցանէ զնոսա եւ յայտ առնէ թէ՛ չեն ինչ խիստ եւ ծանրատաղտուկ հրամանք որպէս յորժամ ասաց. «Թէ սիրէք զայնոսիկ, որ սիրեն զձեզ. զինչ աւելի գործէք, զի եւ հեթանոսք զնոյն գործեն» (Մատթ. Ե 46).

(93ա) *զի թէ հեթանոսացն յիշատակաւ ածցէ// զնոսա ի մեծ աշտիճան: Նոյնպէս աստ զնոսին ի մէջ դնելով կսկծեցուցանէ եւ ցուցանէ, թէ կարեւոր իմն պարտս պահանջէ ի մէնջ, զի թէ քան զդրացն եւ փարիսեցւոցն պարտ իցէ առաւել արդարութիւն ցուցանել իմ իմիք արժանի իցեմք յորժամ քան զհեթանոսաց նուազութիւնն զանցանիցեմք: Բայց ոչ միայն կսկծեցուցանէ այլ եւ միսթարէ եւս, թէ՛ «Գիտէ Հայրն ձեր երկնաւոր, որ ինչ ձեզ պիտոյ իցէ»: Եւ չասաց, թէ գիտէ Աստուած, այլ թէ՛ «Հայրն ձեր»: զի նոսա ի մեծ յոյս հանիցէ, զի թէ Հայր իցէ, ապա ոչ ժուժա անտես առնել զորդիս, յորժամ անհնարին չարիս իցեն: Եւ ընդ սմին եւ զայլ միտս իմն յայտնէ ասելովն, թէ «Նա գիտէ զամենայն պետս»: Նա աւանիկ կարեւոր իսկ են պէտք, զի զոր կարծիցի, եթէ պատճառք հոգոց իցեն քեզ, զնոյն բաւական ցուցանեմ քեզ ազատիլ ի հոգւոց, ապա թէ ասիցես. վասն այսորիկ պարտ իցէ հոգալ, զի կարեւոր պէտք են: Եւ ես զնորին հակառակն ասեմ, թէ վասն այնորիկ իսկ մի՛ հոգայցես, զի կարեւոր պէտք են: Եւ արդ, ո՞ր հայր իցէ, որ ժուժալ կարիցէ զկարեւոր պէտս որդոցն չկատարել: Եւ վասն այնորիկ շնորհէ Աստուած, զի արարիչ է բնութեան, եւ հաւաստեալ գիտէ զպէտսն, զի արարիչ նորին է, եւ այնպիսի ստեղծ զնա: Անտի յայտ է թէ եւ զպէտս նորա ճարտար գիտէ, զի ոչ եթէ իւրում արարածին հակառակ ինչ կայցէ, թէ այնպիսի ինչ արար եւ ի պիտոյիցն զրկիցէ: Եւ արդ, մի՛ ինչ հոգասցուք, զի ոչ ինչ աւելի անտի գտանեմք, բայց միայն անձանց եւեթ հաւանս, նա եւ այլ իմն միտս ի նոյն յաւելեալ տայ [խրախոյս]*

«Խնդրեցէք, ասէ նախ¹ արքաութիւնն եւ այն ամենայն յաւելցի ձեզ (Ձ 33): Իբրեւ զհոգսն փարատեաց յոգւոցն, ապա եւ զերկնից յիշեցուցանէ, զի զհինսն քակել եկն եւ ի վերին աշխարհն կոչել: Վասն այնորիկ զամենայն հնարս հնարի, զի յաւել[որդացն] զերծուցանէ զմեզ: Վասն այսորիկ [եւ զհեթանոսս իսկ ի մէջ ածէ] թէ՛ «զայդ ամենայն հեթանոսք// խնդրեն», որոց յոյսն այս եւեթ են, եւ զհանդերձելոցն փոյթ ոչ ունին, այլ ձեզ, ասէ, չէ պարտ զայս լաւ համարիլ, այլ զայն: Քանզի ոչ եթէ վասն այնորիկ եղաք զի կերիցուք եւ արբցուք, զի այլ Աստուծոյ հաճոյ լիցուք եւ հանդերձեալ բարեացն հասցուք: Վասն որոյ եւ ասէ իսկ, թէ՛

¹ Չեռ. նախքան («քան»-ը կետագծերում):

«Դուք խնդրեցէք զարքաութիւնն երկնից», եւ չասաց. միայն, թէ՛ «տացի ձեզ», այլ թէ՛ «եւ յաւելցի», զի ուսցիս, թէ չեն ինչ երկրաւորքս համեմատ հանդերձելոցն: Վասն այսորիկ ոչ հրամայէ զայս խնդրել այն զայն եւ վստահ լինել, թէ այս եւս ընդ այնմ յաւելու: Եւ արդ, խնդրեայ զհանդերձեալսն, զի առնուցուս եւ զմաւտաւորս: Մի՛ խնդրէր զերեւելիսս եւ չերթան ուտեքն քէն, զի եւ անարժան իսկ է վասն այնպիսեացն աղաչել զՏէր, այլ զամենայն փոյթ վասն անճառիցն պարտ է ունել յանձին: Եւ զիարդ, ասեն, չհրամանաց հաց խնդրել, այլ՝ զաւր ըստ աւրէն: Որպէս աստ ոչ ասաց. թէ՛ մի հոգայք, այլ թէ՛ «վասն վաղիւն» (Մատթ. 9 34), զի յազատութիւն հանիցէ զոգիսն եւ ընդ կարեւորսն բեւեռիցէ, ոչ զի կարաւտ յիշեցուցանելոյ իցէ Աստուած հրամայէ խնդրել, այլ զի ուսցուք, թէ նորա աւգնականութեամբն առնումք զամենայն ուղղութիւնս, զի եւ ընդանենայցեմք նմա խնդրուածովքն: Տեսանե՞ս զի որ մեծամեծսն խնդրէ եւ զմահունսն եւս առնու, ոչ վասն այնորիկ ասէ չհրամանեց ի[ն]չ հոգայ եւ խնդրել, զի տառապիցիք եւ չառնուցուք, այլ զի յառաւել մեծութիւն վայելիցէք, զի եւ ասէ իսկ, թէ՛ «Հայրն որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս»: Եւ աստ չհրամայէ խնդրել զերկրաւորս, զի չխնդրելովն եւս աւելի տայցէ յաճախագոյնս: Վասն այնորիկ ասէ. Չհրամանեմ խնդրել, ոչ զի չառնուցուս, այլ զի եւս սաստկագոյնս, որպէս եւ քեզ պատշաճ իցէ առնուցուս, զի մի հոգւոցն զբաւսանաւք եւ յայն[մանէ] եւս վրիպից//իս եւ հոգեւորացն չլինիցիս արժանի: Վասն այնորիկ ասէ. «Մի՛ հոգայք ընդ վաղուի, զի շատ են աւուրն իւր չարիք»: զտառապանսն եւ զվարանսն եւ զվիշտսն: Ասէ չարիս աւուրն, որպէս այլուր ասէ, թէ՛ «Չիցեն չարիք ի քաղաքիս, զոր Տէր չիցէ արարեալ: Ոչ եթէ զ[յ]ափշտակութիւն եւ զազահութիւնս ասէ, այլ զառ ի վերուստ եկեալ զհարուածսն որպէս այլուր, թէ՛ «Ես եմ, որ առնեմ զխաղաղութիւն եւ հաստատեմ զչար» (Ես. ԽԵ 7): Ոչ եթէ զչարութիւն ասիցէ, այլ՝ սովա եւ սուրս, որ բազմաց չարութիւն թուէր. Այն իսկ չէ իցէ ասէ, քեզ շատ, զի ի քիրտն երեսաց հրամանեցար ուտել հաց: Վասն որոյ ասէ թէ՛ «շատ են աւուրն չարիք իւր», զի ոչ այնպէս վնասէ զոգին որպէս զհոգս, որպէս եւ Պաւղոս յորժամ ի կուսութիւն յորդորէր. ասէ. «Կամիմ զձեզ զի անհոգս իցէք» (Ա. Կորնթ. Է 32): Եւ յորժամ ասէ թէ՛ «վաղիւն վասն իւր հոգայցէ» ոչ եթէ վաղիւն հոգայցէ վասն իւր, այլ զի

(94ա)

ընդ ռամիկ մարդկան խաւսէր, ի բազմաց սովորութեան դեմս դնէ զբանն եւ աստ խրատ միայն տա, բայց յառաջ մատուցեալ աւրէնս իսկ դնէ զնոյն «Մի՛ ստանայք, ասէ, ոսկի եւ մի՛ արծաթ» (Մատթ. Ժ 9), եւ զի արդեամբ եցոյց եւ ապա բանիւք ընծայեցուցանէ սաստիկ աւրէնսդրութիւն, յորժամ դիւրընկալ զբանն արար եւ արդեամբ[բ]ք ինքն կատարեաց: «Որդոյ մարդոյ ոչ գոյ ասէ ուր դիցէ զգլուխ իւր» (Ղուկ. Թ 58), այլ եւ աշակերտովքն եցոյց զսորին հանդէս: Ոչ վասն այլ իրիք հրամանեմ զայս ասէ, այլ մի գձեզ ազատ արարից յաւելորդ բեռանց: Զի՞ ածե[ս] աւելի կարծիս ի վերա առաջի քան զիւրո իւրոյն հասեալ նմա զկարիսն ընդ իւրում ցաւսն եւ զվաղուի եւս զցաւսն յաւելուլ: Եւ զի յաճախագոյն եւս կսկծեցուցէ զնոսա. գրեթէ զժամանակի իբրեւ զշնչաւոր ինչ վնասեալ ցուցանէ, թէ բողոք ինչ բարձեալ ունիցի զնոցա խոշտանգանացն: Առեր զաւրն զի ի նմին եւեթ հոգայցես:

(94բ) Եւ արդ, ընդէ՞ր գմիւսոյ աւուրն զվիշտսն//նախ յաւելուցուս: Իսկ յորժամ աւրէնսդիրն, որ զմեզ դատելոց է, այսպիսի բանս խաւսի եւ առաւել եւս յոյս խոստանայ: Եւ ինքն իսկ վկայէ, թէ՛ տառապանք եւ ցաւք են կեանք աշխարհիս, եւ միոյ աւուր հոգք կարեն վշտացուցանել, եւ մեք միշտ զայսպիսի բանս լսեմք, սակայն զաստեացս հոգամք զերկնից¹: Ոչ երբէք, այլ եղծաք կարգն եւ երկոքումք ընդդէմ բանիցն կռուիմք: Զերկնիցն խնդրիցէք, ասէ. եւ մեք ոչ մի ժամ ծախեմք յայն, այլ որչափ ի մարմնաւորս ցուցանեմք փոյթ, այնչափ ի հոգեւորսն՝ ծուլութիւն:

¹ Չեռ. գերկնիցն խնդրիցէք ասէ («ցն...ասէ » կետագծերում):

Է

Մի՛ դատիք, ասէ՛, զի մի՛ դատիցիք (է 1):

Եւ արդ, չիցէ պարտ դատիլ զանցաւորս: Այո, այլ վայրապար չէ պարտ է: Զի եւ Պաւղոս զդոյն ասէ. թէ՛ «Դու ո՞վ էս որ դատիս զայլոյ ծառա» (Հռոմ. ԺԴ 4): Եւ դարձեալ. «Մի յառաջ քան զժամանակն դատիք» (Ա Կորնթ. Դ 5): Եւ զիարդ այլուր ասէ. «Յանդիմանեայ, սաստեայ» (Բ Տիմ. Դ 2) եւ, որք յանցանենն, առաջի ամենեցուն յանդիմանեայ» (Ա Տիմ. Ե 20): Եւ Քրիստոս Պետրոս ասէր, թէ՛ «Երթ յանդիմանեայ առանձինն: Եւ թէ՛ անսաստ իցէ ինչ ինչ ասասլիւր յեկեղեցւոջն եւ եթէ ոչ լուիցէ քեզ. եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն» (Հմմտ. Մատթ. ԺԸ 15-18): Եւ զիարդ տայր զփականս աշակերտացն, թէ՛ չէին զոք դատելոց եւ ի զուր առին իշխանութիւնն կապել եւ արձակել, զի, եթէ այն բան տիրիցէ, ամենայն ինչ խախտի եւ քայքայի եկեղեցւոյ կարգք, քաղաքաց ակրէնք, զի ոչ Տէր զծառայն խրատիցէ եւ ոչ տիկինն՝ զաղախինն եւ ոչ հայր՝ զորդի: Զի թէ՛ ոչ դատիցիմք զթշնամին ոչ թշնամութիւնն ջրել կարիցեմք: Եւ արդ, զինչ իցէ բանն, միտ դիցուք հաւաստեալ, զոր յաջորդաւքն իսկ յայտ առնէ, թէ՛

Զի՞ հայիս տեսանել զշիղ յակամ եղբար քո, եւ ի քում ակամդ զգերանդ ոչ տեսանես (է 3):

Եւ աստ ինձ այսպէս թուի. թէ՛ ոչ վայրապար զամենայն մեղս հրամաէ չդատել եւ ոչ առ հասարակ զամենեցունց զյոյս հատանել, որք մեծագոյն յանցանս ունիցին եւ զայլոց սակաւ ինչ մեղս բամ//բասիցեն: Այնպիսեացն չհրամաէ դատել: Թուի թէ՛ եւ զհրէիցն արկնարկիցէ աստ, զի այլոց վասն սակաւ եւ [դոյզն մեղաց] դառն դահիճ լինէին եւ ինքեանք ի մեծամեծս մեղսն անկեալ չհնարէին ինչ, զոր եւ ի կատարած կոյս նախատէ, թէ՛ «Կապէք բեռինս ծանունս եւ դուք մատամք մի չկամիք շարժել զնոսս» (Հմմտ. Մատթ. ԻԳ 4), տասանորդէք զանանուխ եւ թողէք զծանունս ակրինացն զողորմութիւն եւ զհաւատս» (Հմմտ. Մատթ. ԻԳ 23, Ղուկ. ԺԱ 42): Զիջուցանէ զնոսս յառաջագոյն յանցանէ, որք զաշակերտացն կամէին ամբաստան լինել, զի թէ՛

պէտ ոչ այնպիսի յանցանս յանցանէին, սակայն նոցա յանցանս թուէին՝ զշաբաթն լուծանել, անլուա ձեռաւք հաց ուտել, ընդ մաքսաւորս բազմել: Վասն որոյ ասէ, թէ՝ «Զմծղուկս քամէք եւ զուղտս կլանէք» (Մատթ. ԻԳ 24): Բայց սակայն հասարակաց հին աւրէնս դնէ զայս, որպէս եւ Կորնթացւոցն՝ Պաւղոս ոչ վայրապար ինչ հրամատէ չդատել, այլ զայնոսիկ, որքան զնոսա ի վեր իցեն մի՛ դատիլ, եւ վասն յայտնի ինչ իրաց: Եւ ոչ եթէ զամենայն յանցաւորս չհրամարիցէ ածել յուղղութիւն: Եւ ոչ խառնի-խուռն ինչ ամենեցունց սաստէր յայնժամ, այլ՝ աշակերտացն, որ զվարդապետս դատէին, որ ինքեանք բիւր չարեաց պատժապարտք էին եւ զայլս զանմէղս բամբասէին, յորոց վերա եւ Քրիստոս բազում պատուհասս դնէ եւ տանջանս անվախճանս:

Որով դատաստանաւ, ասէ դատիք, դատելոց էք (է 2):

Ոչ զնա իսկ ասէ դատապարտես, այլ քում անձին պատրաստես զահագին դատաստանն եւ զանվրէպ պատիժս: Եւ զոր աւրինակ մեղացն թողութիւն ի մէնջ է սկիզբն, նոյնպէս եւ դատաստանին ի մէնջ է չափ դատապարտութեան, չէ պարտ նախատել, այլ գթովք ածել յուղղութիւն, ապա թէ ոչ, ոչ զնա ինչ, այլ զքեզ մատնեցէր յանհնարին տանջանս: Տե՛ս, զի երկոքեան պատուիրանքն թեթեւք են եւ մեծաց բարութեանց պատճառք, յորժամ թողուցուս ընկերին զքեզ առ//աջ քան զնա ազատեցեր ի պատժոց առանց աշխատութեան: Յորժամ զընդալով եւ արգահատելով զայլոց զյանցանս քննիցես եւ յառաջագոյն անձին զարգահատանացն կոյտս այսպիսի վճիռ տալոյ համբարիցես: Վասն այնորիկ ասէ. «Մի դատիք», այսինքն՝ անիրաւութեամբ, «զի մի դատապարտես շիք» վասն անիրաւութեան, եւ թողէք եւ թողցի ձեզ. զի յորժամ դատն ստուգութեամբ թողցէ շնորհաւք, զի յորժամ դատեալ լինի ինքն ստուգութեամբ արժանի լինիցիս շնորհաւք թողութեան: Կամ վասն դատաւորացն, որ զանձանց իւրեանց վրէժ խնդրէին ասաց. «Մի, ասէ, պատժէք», այսինքն՝ մի՛ խնդրէք զվրէժ անձանց ձերոց, կամ մի՛ դատիք նմանութեամբ եւ կարծեաւք եւ պատժէք, այլ յանդիմանեցէք եւ խրատեցէք ողորմութեամբ, բայց մի՛ իբրեւ զթշնամի վրէժս պահանջիցես, այլ՝ իբրեւ զբժիշկ, որ հնարիցի դեղս կազմել: Քանզի ոչ ասաց եթէ՝ Մի ցածուցանիցես զ[յ]անցաւորն, այլ թէ՝ «Մի՛ դատիցիս», զի մի դառն դահիճ, ասէ, լինիցիս նմա: Եւ այլազգ եւս, թէ ոչ վասն

մեծամեծ եւ անհնարին մեղացն իցէ ասացեալ, այլ վասն այնպիսեաց ինչ, որ եւ ի մեղս իսկ չիցեն համարեալ, քանզի եւ ասէ իսկ, թէ՝ «Զի՞ հայի տեսանել զչիւղ յականէ եղբաւր քո», զոր եւ բազումք իսկ այժ[մ] առնեն, յորժամ տեսանիցեն զվանական ոք, թէ աւելի ինչ հանդերձ ունիցի, զաւրէնս տէրունականս առաջի դնէն եւ ինքեանք հանապազ ի բիւր չարիս եւ յապշտակութիւնս յանդ գտանիցին, եւ կերակրաւք յղփայցեն եւ դառն դահիճ լինին այլոց, եւ զայն ոչ գիտեն, եթէ յիւրեանց մեղեն եւս աւելի հուր յաւելուն եւ զրկեալ գտանիցին ամենեւին ի պատասխանոյ: Վասն որոյ եւ ասէ իսկ, թէ՝

Կեղծաւոր հան նախ զգերանդ յականէ քումմէ (է 5):

(96ա) Եւ աստ մեծ ցասումն իմն յայտ առնէ եւ անհնարին տանջանս այնոցիկ, որ այնպիսի ինչ միտս ունիցին, որպէս եւ այժմ եւ այնմ, որ զհարիւր դահեկանն պ//ահանջէր ի պարտապանէն, սաստեաց. «Ճառա չար եւ վատ զամենայն պարտսն թողի քեզ» (Մատթ. ԻԵ 26): Նոյնպէս եւ աստ «կեղծաւոր ասէ»: Քանզի ոչ եթէ խնամակալութեան ինչ [միտք իցեն] այնպիսոյն, այլ մարդատեցիկ բարոյք, զի գերեսս բարեկամի ցուցանէ եւ զգործ թշնամոյ գործէ, զվարդապետի թեկն ածէ եւ ոչ յաշակերտաց կարգի գտանի: Վասն որոյ «կեղծաւոր» կոչէ զայնպիսին: Եւ արդ, որ առ այլսն դժկամակ իցես այնպէս, զի եւ մանուսն տեսանիցես եւ ի քոյնսն զիս՞րդ ծուլանայցես, զի եւ մեծամեծսն չկամիցիս տեսանել: Եւ բարւոք ասէ, թէ՝ «Հան նախ զգերանդ յականէ քումմէ»: Տեսանես, զի ոչ արգելու դատել. այլ նախ հրամայէ զգերանն հանել յականէն եւ ապա զայլս ածել յուղղութիւն նախ զիւրն քան զընկերին եւ մանաւանդ զմեծեմեծսն քան զփոքունսն, զի եւ զանձն ոք քաջ գիտէ քան զընկերին, զի թէ զանձինն չհոգայցես, յայտ է թէեւ ոչ ընկերին խնամ ունելով դատիս, այլ առ ատելութեան ձաղել կամիս, զի եթէ դատել եւս պատշաճ իցէ յանարատէ ումէքէ եւ ոչ ի քէնէ: Եւ զի մեծամեծս եւ բարձրագոյնս զառաքինութեան կարգեաց հրամանս: Եւ զի մի ոք ասիցէ, թէ բանիւք դիւրաւ է առաքինանալ, ցուցանել կամի զհամարձակութիւն, թէեւ ոչ միոյ իմիք յասացելոցն պատժապարտ է, այլ զամենայն իսկ հրամանացն ուղղութիւն յանձին եցոյց, վասն այնորիկ ասաց զառակս զայս: Եւ քանզի ինքն իսկ յետոյ դատելոց էր ասելովն թէ՝ «Վա՞յ ձեզ դպիրք եւ փարիսեցիք» (Մատթ. ԻԳ 13) եւ չէր ի-

(96բ) միք պարտապան յասացելոցն. զի ոչ շիւղ ուրուք հանէր եւ ինքն դերանուն էր, այլ սուրբ էր ամենեւին: Եւ զամենեցուն յանցանս ածէր յուղղութիւն: Չէ, ասէ, պարտ զայլս դատապարտել, յորժամ սորին մեղացն պատժապարտ իցէ: Եւ զի՞ զարմանաս, թէ նա այսպիսի աւրէնս եդ, ուր եւ աւագակն ի խաչին ասէր այսպիսի ինչ ցընկերն, թէ՛ «Ձերկնչի՞ս յԱստուծոյ// [զի] միում դատաստանի եմք» (Ղուկ. ԻԳ 40): Եւ այսու զՔրիստոսի միտան ցուցանիցէ, դու ոչ միայն զգերանն յականէ չհանես, այլ եւ տեսանես [իսկ ոչ], եւ գընկերին շիւղ ոչ միայն տեսանես, այլ եւ դատիս եւ հանել ժպրհիցիս, զոր աւրինակ, որ ինքն ջրդողեալ եւ ծնկեալ իցէ, եւ զիւրն թողեալ եւ այլում, որ սակաւ ինչ այտումն [ունիցի, մեղադիր լինիցի: Եւ արդ, զոր հրամանաց ասէ. յորժամ բիւր չարեաց պատժապարտ իցէ, այլոց փոքր մեղաց դառն դատաւոր մի՛ լիցի. ոչ զ[հ]անդիմանելն եւ զուղղելն խափանէ, այլ զայն միայն, որ յիւրումն ցոյլ իցէ եւ յայլոցն պահանջիցէ հաւատիս, զի եւս յաճախիցէն այնպիսոյն չարիք եւ կրկին լինի անաւրէնութիւնքն: Եւ անտի թշնամութիւն եւ չարիք ծնանին: Եւ արդ, իբրեւ եբարձ ի միջոյ զայսպիսի վնաս բարւոք աւրէնսդրութեամբն, յարէ ի նոյն միւս եւս պատուիրան.

Մի՛ տայք, ասէ, զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտ առաջի խոզից (է 6):

Ձի թէպէտ եւ առաջն կոյս ասաց, թէ՛ «Ձոր ինչ լսիցէք յունկանէ, քարոզեսջիք ի վերա տանեաց» (Ղուկ. ԺԲ 3): Այլ եւ ոչ այս ընդդէմ ինչ է առաջնոյն զի եւ անդ ոչ վայրապար ամենեցուն հրամանաց ասել, այլ որոց պարտ էր ասել, ամենայն համարձակութեամբ ասել: Բայց «չուն» աստ, որ յանհնարին ամբարշտութեանն են կոչէ, եւ դառնալ ի լաւութիւնս ոչ ունին ակն, եւ «խոզս»՝ զայնոսիկ, որք յանառակութեան միշտ մաշիցեն զանձինս, զորս քան զամենեսեան անարժանս համարի: Այսպիսի աւրէնսդրութեամբ զսոյն եւ Պաւղոս ասէ, թէ՛ «Շնչաւոր մարդ ոչ ընդունի զչոգւոյն Աստուծոյ, քանզի յիմարութիւն է նմա» (Ա Կորնթ. Բ 14): Եւ ամենայնիւ յայտ առնէ, թէ չեն ընդունելոց զկատարեալ վարդապետութիւնն եւ վասն այնորիկ չհրամաէ նոցա բանալ դուռն, զի եւս մեղանչականք լինելոց են, յորժամ զխորհուրդն ուսանիցին. զի ողջամտաց եւ հնազանդից յորժամ յայտնի, յայնժամ պարկեշտագոյն երեւի: Իսկ անհանձարիցն,

(97ա) յորժամ ի//ծածուկ իցէ, յայնժամ աւգուտ է, զի որք ի բնու[թեն]էն [տեղ]եակ լինել չկարիցեն սրբութեանց, գեթ յանդիմանութենէն պատկառեսցեն, քանզի եւ խոզն ոչ ինչ գիտէ զինչ մարգարիտն իցէ, եւ զի ոչ գիտէ եւ մի տեսցէ, զոր ոչն գիտէ, զի մի՛ կոխեսցէ, զի ոչ ինչ լաւութիւն գործի, բայց միայն՝ վնաս մեծ, զի եւ լսեն եւ թշնամանի ի նոցանէ սրբութիւնն, քանզի չգիտենալ ինչ իցէ սրբութիւն¹: Եւ նոքա առաւել յառնեն եւ վառին ընդդէմ մեր, այն իսկ է, որ ասեն, թէ՛

Գուցէ կոխիցեն եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ (է 6):

Նա եւ այսպէս իսկ առաւել գրգռին տալ զմէնջ պատճառս վնասու ոչ եթէ սրբութիւնն ինչ զայն առնիցէ, այլ նոցա խոզութիւնն. զոր աւրինակ յորժամ զմարգարիտ ոք կոխիցէ, ոչ եթէ վասն զի արհամարհանաց եւ մարգարիտն կոխիցի, այլ զի ընդ խոզիցն ոտս անկաւ: Եւ բարւոք ասաց, եթէ՛ «դարձեալ երգիծուցանիցեն զձեզ», քանզի կեղծաւորին մինչդեռ ուսանիցին: Եւ յորժամ ի վերա հասանիցեն, այլ ընդ այլոց իմն երեւեալք յերգարկանեն այպանեն, ծաղր առնեն իբրու թէ գեղծեալ ինչ իցեն: Վասն այնորիկ եւ Պաւղոս ասեր ցՏիմոթէոս, թէ՛ «Յորոց եւ դու զգոյշ լինիջիր, զի յոյժ հակառակ կացին նոքա բանից մերոց» (Բ Տիմ. Գ 15), եւ դարձեալ թէ՛ «Յայնպիսեաց անտի տեղի տուր, եւ յառնէ հրեսիտտէ յետ մի անգամ եւ երկից խրատու հրաժարեսջիր» (Տիտ. Գ 10): Եւ արդ, ոչ եթէ ի նոցանէ վառին, այլ ինքեանք անմտագոյն այնու լինին՝ լցեալ բազում ամբարհաւաճութեամբ: Վասն այնորիկ իսկ ոչ սակաւ շահ է կալ մնալ անծանալթութեան ի նոցանէ, քանզի ոչ եթէ այնչափ արհամարհեցին, ապա եթէ տեղեկանայցեն խորհրդոցն կրկին վնաս է, զի նոքա անտի ինչ ոչ աւգտին, այլ եւ վնասին եւս, եւ քեզ բազում իրաւք աշխատ առնիցեն: Լուիցեն, որ ամենեցուն, ընդ ծոց եւ ընդ գիրկս մտեալ անխտիր քրծինս տայցեն, զպարկեշտսն արհամարհելիս առնիցեն: Քանզի// [յորժամ] զխորհուրդն կարիցեմք կատարել զդուրս [փա[կեմք] եւ գերեխայս արտաքոյ պահեմք, եւ եթէ գտկարութ[իւն] ինչ] խորհրդոյն արգելուցումք, այլ զի բազումք չեւ եւս են հասեալ ի կատարեալն, քանզի եւ Տէրն բազում ինչ ճառեաց առ հրեայսն. եթէ՛ «քանզի տեսանեն

¹ Չեռ. «քանզի...սրբութիւն» հատկածը՝ լուսանցքում:

եւ ոչ տեսանեն» (Մատթ. ԺԳ 13): Նմ[ին իրս Պաւղոս հրա[մա]եաց իմանալ, որպէսզի արժան իցէ իւրաքանչիւր ումէք տալ պատասխանի:

Խնդրիցէք, եւ տացի ձեզ, հայեցէք եւ գտանէք, բախեցէք եւ բացցի ձեզ (է 7):

Եւ քանզի մեծամեծս եւ զարմանալիս եւ ի վեր քան զմարդկան կարիս հրամաեաց առնել եւ անդ ի յերկինս ելանել իսկ¹: Ոչ հրեշտակաց եւ ոչ հրեշտակապետաց, այլ նմին իսկ ամենեցունց Աստուծոյ, որպէս եւ մարթ իցէ մարդոյ, հրամաէ նմանել աշակերտացն: Եւ ոչ միայն նոցա, այլ եւ ամենեցուն հրամայէ քննել ի մէջ չարաց եւ ի մէջ այնոցիկ, որ չիցեն այնպիսիք եւ ի մէջ շանց եւ ի մէջ այնոցիկ, որ չիցեն շունք: Քանզի բազում ինչ է ծածուկ ի մարդիկ, զի մի՛ ասիցեն, թէ անհնարին եւ դժուարին է այդ, որպէս յետոյ եւ Պետրոս ասաց. թէ՛ «Ո՞ կարիցէ ապրել» (Հմմտ. Մարկ. Ժ 27, Ղուկ. ԺԸ 26): Եւ դարձեալ. «Թէ այնպիսի պատճառք, ի մէջ առն եւ ի կնոջ կայցեն լաւ է չամուսնանալ» (Մատթ. ԺԹ. 10): Վասն այսորիկ բազում խորհուրդս, որ կարող իցեն հաւանեցուցանել, ի միջի դնէ: Եւ արդ, զգլխաւորն իսկ ամենայն դիւրութեանց ի մէջ բերեալ մխիթարութիւն վաստակելոց զաւգնականութիւն հանապազորդ աղաւթից, զի ոչ զանձինս եւեթ փութացուցանել, այլ ի վերուստ առնուլ աւգնականութիւն ճգանց, որ եկեալ հասեալ դիւրաւ առնիցէ զվաստակս: Վասն այնորիկ եւ խնդրել հրամաէ եւ առնույ երեշխաւոր լինի: Եւ ոչ վայրապար խնդրել, այլ յամել ի խնդրուծքն, զի որ խնդրիցէ ինչ ոք զամենայն ինչ հանէր մտացն եւ զոր խնդրիցեն այնմ եւեթ ուշ ունի: Իսկ ի խնդրելոյն զայս յայտ առնէ, բայց [ի] բախելոյն, զի (98ա) ստեպ եւ ջերմ մտաւք խնդրիցէ: Եւ//մի՛ ինչ վհատիցի սակաւ փոյթ ունել վասն առաքինութեան եւ վասն ընչիցն ցանկութեան յոյժ փոյթ ունել [...] ²: Եւ ոչ գտանես. իսկ զայս խոստանա, թէ առն[լոց ես: Բայց թէ] ոչ վաղվաղակի առնուցուս մի՛ ծուլասցես, զի վասն այնորիկ ասէ, թէ «բախեցէք», զի ցուցցէ թէպէտ եւ ոչ վաղվաղակի բանայցէ զդուռն, այլ յամել պարտ է, ապա թէ իմոյ վճիռ տալոյ չհաւատայցես, ասէ գէթ աւրինակին հաւատայցես:

¹ Չեռագրում իս իսկ փիս. իսկ:

² 3-4 տառ:

Ո՞վ, ասէ, ի ձեռք, որոյ որդի խնդրիցէ հաց, միթէ՞ քար տայցէ (է 9):

Ջմարդիկ յորժամ թախանճիցես եւ ճանճրացուցանիցես, յայնժամ ծանր թուիս նոցա, իսկ առ Աստուած թէ ոչ ստեպ կարդայցես յայնժամ բարկացուցանես: Եթէ յամիցես ի խնդրուածս, թէպէտ եւ վաղվաղակի ոչ առնուցուս, սակայն երբ եւ է առնելոց ես: Վասն այնորիկ փակի դուռն. զի զքեզ ի բախելն յորդորիցէ, յայն սակս ոչ վաղվաղակի լսէ, զի եւս քան զեւս ի խնդրուածսն յամիցես եւ առնուցուս: Եւ զի մի՛ ասիցես, թէ զի՞նչ աւգուտ իցէ թէ խնդրիցեմ եւ չառնուցում. ի մարդկեղէն մտաց ածէ առակ աւրինակի եւ ցուցանէ, թէ եւ ոչ զինչ եւ կամիցիս, այլ յորժամ զաւգուտն խնդրիցես: Վասն որոյ յարէ ի սոյն թէ՛ Ո՞րք ի ձէնջ հայր, յորժամ խնդրիցէ որդին հաց, միթէ՞ քար տայցէ նմա: Եւ եթէ չառնուցուս, վասն զի քար խնդրես յայն սակս չառնուս, զի թէ որդի իցես, ապա ոչ զանաւգուտն ինչ խնդրիցես. մի՛ զաշխարհիս ինչ, այլ զամենայն զհոգեւորսն զի եւ առնուցուս եւս: Նա եւ Սողոմոն յորժամ զպատշաճսն խնդրեաց, տես, զի վաղվաղակի [երկուս էառ] ընդ միոյն: Եւ արդ, խնդրել ստէպ պարտ է, որ յաղթաւան կայցէ, եւ զպատշաճսն խնդրել: Եւ դուք, ասէ, արգելուք զխնդրածսն, եւ յորժամ զգէպսն ինչ խնդրիցեն, հաւանիք եւ տայք: Եւ քո այսուհետեւ զայս իմացեալ մի՛ հեռանայցես մինչեւ առնուցուս, զի թէ այսպիսի մտ//աւք մատչիցիս, եւ ասիցես, թէ ոչ առնում ոչ գնամ աստի, [առնուս] հաւաստեալ, զի թէ այսպիսի ինչ խնդրիցես, որ ինչ [եւ տալեաց] վաել իցէ եւ քեզ, որ խնդրեսդ, աւգուտ իցէ, ոչ ա[րգելուցուն] խնդրուածքն, յորժամ զհոգեւորսն ինչ խնդրիցես եւ յանցաւորաց թողուցուս եւ առանց բարկութեան եւ երկմտութեան սուրբ ձեռն ի վեր ամբառնայցես: Եթէ այնպէս խնդրիցեմք, առնուցումք ճշգրիտ եւ ոչ որպէս այժմ ծաղր իմն առնեն զխնդրուածսն, եւ մարդիկ արբեալ մատուցեալ բազում ինչ շատխաւսութիւնս յաճախեն: Եւ զիարդ, ասէ, թէ եւ յորժամ հոգեւոր ինչ խնդրիցեմ եւ ոչ առնուցում, զի՞նչ աւգուտ իցէ կամ ստէպ չբախեցեր եւ կամ չարաբեր զանձն արժանի առնլոյ եւ կամ վաղվաղակի թողեր եւ գնացեր: Եւ ընդէ՞ր, ասեն, չասաց զինչ պարտ իցէ խնդրել եւ զինչ չիցէ պարտ: Այլ եւ ասաց իսկ զամենայն վերագոյնն եւ եցոյց, եթէ վասն է՞ր պարտ է աղաչել: Եւ արդ, մի՛ ասիցես, եթէ աղաչեցի եւ ոչ առի, քանզի չէր ուրէք չառնուլ յԱստուծոյ, որ այնպէս սիրէն, զի եւ զհարց եւս զթովք անցանէ եւ յաղթէ որպէս չարութեան բարութիւն:

(98բ)

Ձի եթէ դուք չարք, ասէ, գիտէք պարզեւս բարիս տալ որդոց ձերոց, որչափ եւս առաւել Հայրն ձեր երկնաւոր (է 11):

(99ա) Ձայս ասելով ոչ եթէ զմարդկեղէն բնութիւնս ինչ խոտէ եւ կամ թէ չար ինչ զմարդկան ազգս ցուցանիցէ, այլ առ ի զատանել իւրոյ բարերութեանն. զաստի հայրենի գութն չարութիւն կոչէ, զի այնպիսի է նորա մարդասիրութեանն առաւելութիւն: Տեսանե՞ս զանճառ խորհուրդն, որ բաւական է եւ զկարիսն յոյսն յորդորել ի յոյս բարութեանց: Եւ աստի հարցն ցուցանէ զիւր բարութիւնն: Իսկ ի վերագոյնն ի մեծամեծացն ետ ծանաւթս ի հոգւոյ եւ ի մարմնոյ եւ չեւ եւս զգլխաւորէն բարութեանց ճառէ եւ ոչ ի մէջ ինչ բերէ զիւր գալուստն որպէս փութացաւ տալ զՈրդին ի սպասումն, զիա՞րդ ոչ զամենայն ինչ//չնորհեսցէ մեզ: Բայց նա դեռ ի մարդկեղէն իրաց խաւսէր ընդ նոսա, զի ցուցցէ եթէ ոչ յաղաւթն միայն պարտ է [ապաս]տան լինել եւ յայլ ինչ իրս հեղբայլ եւ ոչ յանձանց [ինչ] փոյթն եւեթ վստահ լինել, այլ եւ զվերին աւգնականութիւն խնդրել եւ զիւրեանց ի նոյնն պատրաստս լինել: Վասն այնորիկ ստէպ գերկոսեանն դնէ, քանզի եւ բազում ինչ խրատ տայ եւ յաղաւթս կալ ուսուցանէ: Եւ յորժամ զաղաւթն ուսոյց, ապա եւ խրատ այնպիսի ինչ իրաց, զոր պարտ իցէ գործել եկն: Եւ անտի դարձեալ զի ստէպ պարտ կալ յաղաւթս ասելովն՝ եթէ խնդրեցէք եւ հայցէք եւ բախեցէք, եւ անտի դարձեալ, զի յանձինս եւս զփոյթն ցուցանիցեն:

Ձոր ինչ կամիջիք դուք, ասէ. թէ արասց[եմ] ձեզ մարդիկ, արասջիք եւ դուք նոցա (է 12):

Ձի սակաւ բանիւք զամենայն եհան ի գլուխ, եւ եցոյց եթէ համառաւտ է առաքինութիւնն եւ զիւրին եւ ամենեցուն ծանաւթ: Եւ ոչ վայրապար ասաց, թէ՝ «զամեն զինչ եւ կամիցիք», զի «զայսուհետեւսն» ոչ վայրապար ինչ յաւել, այլ զայն արկնարկեաց, եթէ կամիջիք, ասէ, լսել հանդերձ այլովք պատուիրանաւքն եւ զայս եւս առնիջիք զոր որչափ ինչ կամիջիք եւ դուք նոցա, [ա]սէ: Տեսանե՞ս, զիարդ եցոյց եւ այս եւս, եթէ հանդերձ աղաւթիւքն եւ վարք եւս պիտանիք պիտոյ են մեզ: Եւ ոչ ասաց, թէ որչափ կամիցիս լինել քեզ յԱստուծոյ, այնպէս առնիջիր եւ դու ընկերին, զի մի՛ ասիցես, եթէ զիարդ մարթ իցէ այսմ լինել, զի նա Աստուած է եւ ես՝ մարդ: Այլ ասէ. որչափ կամիցիս եթէ լինիցի քեզ ի ծառակցէն քումմէ, նոյնչափ առնիջիր դու քում

(99բ) ընկերին: Եւ զինչ թեթեւագոյն կամ արդարագոյն քան զայն կայցէ, ապա եւ զգովութիւնն իսկ մեծ քան զհատուցումն ցուցանէ ասելովն, թէ այսպէս են ակրէնքն եւ մարգարէքն: Ուստի յայտ իսկ է եթէ բնութեամբ իմն են ի մեզ առաքին// [թիւն]ն եւ զի ընտանի են պատշաճքն ամենեքին, զիտէք [եւ չ]է հնար, եթէ ոչ իմանայցէք:

Մտէք ընդ նեղ դուռն, զի լայն է դուռն եւ ընդարձակ ճանապարհն, որ տանի ի կորուստ, եւ բազումք են, որ մտանեն ընդ նա: Եւ նեղ դուռն եւ անձուկ ճանապարհն, որ տանի ի կեանսն, եւ սակաւք են որ գտանեն զնա (է 13-14):

Նա եւս յառաջ կոյս ասէ, եթէ՝ «Լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ փոքրոգի» (ԺԱ 30): Եւ յարգի ասացեալս զնոյն արկնարկէ. զիարդ իցէ, զի աստ «նեղ դուռն եւ անձուկ ճանապարհն» ասիցէ, եւ մանաւանդ եթէ միտ դնիցես եւ աստ եւս կարի թեթեւ եւ դիւրին ցուցանէ: Եւ զիա՞րդ ասեն նեղն եւ անձուկ դիւրին իցեն: Որպէս եւ միւսն. թէպէտ եւ լայն եւ ընդարձակ իցէ, զի չէ ինչ անտի կալոց մնալոց, այլ ամենայն ինչ անցանելոց է. ե՛ւ վիշտք ե՛ւ բարիք աշխարհիս: Իսկ առաքինութեանցն ոչ միայն դիւրին են, այլ եւ ի վախճանի եւս դիւրագոյն լինելոց, զի ոչ միայն զվաստական եւ զքրտունս չտանիցիս անդր, այլ եւ բարի վախճանի դիպեցուցանէ, յաճախագոյնս մխիթարեաց զճգնեալսն, թէեւ վաստակքն առ ժամանակ մի են, եւ պսակքն՝ միշտնջենականք: Որպէս եւ Պաւղոս թեթեւս կոչէ զնեղութիւնսն ոչ յիրացն, որ լինիցին, այլ ի կամաց ճգնելոցն եւ յուսով հանդերձելոցն է (հմմտ. Հռոմ. ԺԲ 12, Բ Թեա. Ա 4-6, Եբր. Զ 18): «Այս, ասէ, որ առ սակաւ մի թեթեւ նեղութիւնս է, զծանրութիւն յաւիտենից փառացն գործէ ի մեզ» (Բ Կորնթ. Դ 17): Նա եւ նաւորդք եւ զինաւորք բազում ճգանց հանդիպին եւ առ յուսոյ շահիցն թեթեւ համարին եւ այն, զի անցաւորք են, եւ այս մշտնջենականք: Նա եւ այլուստ ցուցանէ զսոյն դիւրին հրամայելովն չխառնակել ընդ շունս, եւ մի՛ տալ զմարգարիտն իւրեանց խոզից, եւ զգոյշ լինել ի սուտ մարգարէիցն, զի ամենայն ուստէք կասկածագոյնս յարդարեսցէ զնոսա: Նա եւ նեղն իսկ կոչելով զդիւրութիւնն յայտ առնէ,

(100ա) զի արթունս եւ զուարթունս պատրաստեսցէ զնոսա: //

Վասն այնորիկ խիստ կոչէ զճանապարհն: Եւ ոչ այն[ու միայն] կազմեաց, այլ եւ, յաւելուածովն. Բազումք են, ասէ, որ

[անդ] դանդաղեւ շրջին: Եւ եւս չար այն է, զի ոչ յայտեն զթոյնսն, այլ թաքուցանեն զանձինս, քանզի այն իսկ արուեստ է ստոց մարգարէիցն: Եւ արդ, մի՛ ասէ ընդ այն նախցես, զի նեղ եւ անձուկ, այլ թէ յո՞ տանիցի, եւ մի՛ ընդ այն, զի արձակ է, այլ թէ յորպիսի կորուստ տանիցի: Եւ արդ, մի՛ վհատեսցուք յորժամ նեղութեան հանդիպիցիք, զի թէպէտ եւ նեղ է դուռն, այլ ոչ եթէ քաղաքն, ապա ոչ է պարտ աստ հանգստեան ակն ունել եւ ոչ անդ նեղութեան, եւ ասելովն, թէ «սակաւք են, որ գտանեն զնա» զբազմացն ծուլութիւն յայտ արար. զի դժուարին ոչ գնալն է, այլ գտանելն: Որպէս ի ձմերայնի եւ [...]՝¹ գտանել դժուարին է, այլ գնալ դիւրին է, թէպէտ եւ նուրբ իցէ: Այլ արտաքոյ ճանապարհին յոյժ դիւրին է, թէպէտ եւ ընդարձակ իցէ: Արդ, մի՛ ի բազմաց ընդարձակ ճանապարհն երթալոյ նախցիս, այլ ի սակաւուցն վաստակս, զի բազումք ասէ ոչ գնան ընդ նա այլ եւ կամի[ն իսկ] ոչ, որ վերջին անմտութիւնն է: Արդ, մի ընդ բազումս նախ եւ խռովիլ, այլ ընդ սակաւսն եւ նոցին նախանձաւոր լինել եւ ամենայն ուստէք ամփոփել զանձինս, եւ ապա գնալ ընդ այնպիսի ճանապարհ: Եւ քանզի անձուկն է, բազումք մոլորին յայնպիսի ճանապարհէ, եւ կարծեցուցանեն, թէ ի ճանապարհին կայցեն: Վասն որոյ եւ յարէ իսկ ի նոյն եթէ՝

Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գաւն առ ձեզ հանդերձիւք ոչ-խարաց եւ ի ներքոյ եւն գայլք յապշտակողք (է 15):

Ահաւասիկ եւ զշուսս եւ խոզս կոչելով եւ այլ իմն նշանակ դարանակալութեան չար քան զայն նշանակէ, զի նոքա յայտնի իսկ են եւ սոքա ի ծածուկ եւ լի կեղծիւք: Վասն որոյ ի նոցանէ (100բ) հեռանալ հրամայէ: Եւ վասն զ//սոսա քննել զգաւշութեամբ մի յառաջին կերպարան [եւեթ] հայել, Զի ասէ իսկ թէ՝ հայեցարուք յամառութիւնն նոց[ա], [զի] ճիշտ քննաւզս արասցէ զնոսա: Ապա զի մի յորժամ զանձուկն լսիցեն եւ զնորին հակառակ զընդարձակն եւ ընդ այն լաւ համարիցին գնալ: Հրամայէ ի շանց եւ ի խոզից զգուշանալ, եւ ի միւսոյ եւս քանասարիկ ազգեն գայլոց: Եւ զի մի՛ ի դժընդակացն զայն գիտիցեն, եւ ասիցեն, թէ՝ ընդ այնքան դժընդակաց զիա՞րդ ոք կարիցէ գնալ: Յուցանէ թէ եւ յաւուրս հարցն նոցա սուտ մարգարէք էին: Եւ արդ, մի՛ համա-

¹ 1 բառ:

րիք, եթէ նոր ինչ եւ ակտարոտի դիպիցի ձեզ, զի հանապազ ընդ-
դէմ ճշմարտութեանն կանգնէ ստուծիւն սատանայ: Իսկ «սուտ
մարգարէս» աստ թուի ինձ, եթէ ոչ զհերձուածողացն ասիցէ, այլ՝
զայնոսիկ որ ի գեղծ վարս իցեն եւ զկերպարանս առաքինութեան
ունիցին եւ չիցեն այնպիսիք, զոր եւ խաբեբայս սովոր են կոչել
բազումք: Վասն որոյ զսովիմբ առեալ ասէ, թէ՝

Ի գործոց նոցա ծանիշիք զնոսա (է 16):

Զի ի հերձուածողսն բազում անգամ գտանին վարք պար-
կեշտս, այլ առ այնպիսիսն՝ եւ ոչ երբէք: Եթէ այնով եւս կեղծա-
ւորեսցին զիս՞րդ ոք իմանայցէ, այլ վաղվաղակի խայտառակին,
զի այնպիսի իսկ է ճանապարհն: Ես, ասէ, ընդ աշխատութեան
ճանապարհ հրամայեցի գնալ, եւ կեղծաւորն ընդ այն չկամի
գնալ, այլ վասն այնորիկ վաղվաղակի յանդիմանի, եւ ասելովն
թէ՝ «սակաւք են, որ գտանեն գնա»: Սրբէ գնոսա յանցանէ, որ
չգտանիցեն եւ կեղծաւորիցին: Արդ, մի՛ ընդ կեղծաւորսն հայի-
ցիք, այլ՝ ընդ ճշմարիտսն: Եւ ընդէր ասեն զի արսն չյայտնեաց,
այլ զմեզ արկ ի քնին, զի արթունս եւ կասկածագոյն լիցուք ոչ
միայն յայտնի թշնամեաց, այլ եւ ի գաղտնեացն զգաւչանալ: Եւ
(101ա) արդ, մի՛ խռովեսցուք, թէ// այսպիսիս տեսանեմք զբազումս, զի
եւ զայս յառաջագոյն ասաց Քրիստոս: Եւ տես զքաղցրութիւնն
ասաց թէ՝ պատրեսջիք գնոսա, այլ թէ՝ մի՛ ինչ վնասիցիք ի նո-
ցանէ եւ յանպատրաստից ձեռս անկանիցիք: Եւ զի մի՛ ասիցես,
թէ անհնար է ճանաչել զայնպիսիսն: Դարձեալ ի մարդկան աւրի-
նակէ յայտ առնէ ասելովն.

Ոչ ոք քաղէ ի փշոց խաղող եւ ոչ ի տատասկէ՝ թուզ (է 16):

Այսինքն՝ թէ չիք ի նոսա զգաւնութիւն եւ քաղցրութիւն.
մինչ զհանդերձսն գառենիս ունիցին եւ զբարսն՝ զայլենիս: Ուս-
տի եւ դիւրին իսկ է ճանաչել գնոսա, եւ ոչ եթէ զկեսն թաքուցա-
նեն եւ զկեսն յայտնիցեն: Վասն այնորիկ ասէ զայս: Այլ որպէս
Պաւլոս ասէ. թէ՝ «Խորհուրդ մարմնոյ մահ է, զի աւրինաց Աս-
տուծոյ ոչ կարէ հնազանդիլ» (Հմմտ. Հռոմ. Ը 6-7): Վասն որոյ ոչ
ասաց թէ ծառ չար բերէ պտուղ բարի եւ չար: Եւ դժուարին առ-
նիցէ զճանալթսն երկդիմի պտղովն: Չէ, ասէ, հնար այդ լինել,
այլ չարն չար եւեթ բերէ, եւ բարի պտուղ՝ ոչ երբէք, որպէս եւ
նորին հակառակն: Եւ արդ, ասեն մարդ բարի չար երբէք ոչ լինի-

ցի. այո. քանզի լի իսկ են կեանք մարդկան այնպիսի փոփոխմամբ: Այլ Քրիստոս ոչ այսպիսի ինչ ասէ, թէ չար մարդոյ չիցէ հնար դառնալ ի չարէ եւ ոչ բարւոյն անկանել ի բարեաց, այլ թէ մինչդեռ ի չարութեան կայցէ պտուղ բարի բերել, բայց փոխել առաքինութիւն մարթ է: Եւ արդ, զիարդ ասեն Դաւիթ մինչ բարին էր չար ինչ պտուղ ոչ եցոյց ոչ մինչ ի բարութեանն կայր, այլ յորժամ անկաւ ի բարութենէ: Եւ զայս ոչ եթէ վայրապար ասէ, այլ զի բերանս բամբասողացն կարկիցէ, զի բազումք զբարին չար¹ կարծեն, զի յամենայն պատասխանոյ զրկեսցէ զնոսա, ասէ զայս, զի մի՛ ասիցեն, թէ խաւսեցաք զեղծաք: Նա աւանիկ ի գործոցն տայ զհաւաստի ծանալթսն չխառնակել ընդ այնպիսիսն (101բ) միանգամայն եւ զվնասեալսն ի նոցանէ մխիթար// [է եւ] երկիւղիւն դարձուցանել կամի: Յուցանէ, թէ ոչ [նա տ]անջէ զնոսա, այլ նոքա իսկ զանձինս:

Ամենայն ծառ, ասէ, որ ոչ առնիցէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի (է 19):

Եւ յորժամ անտաղտուկ արար զբանն, ապա յարէ ի նոյն, թէ՛ «ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»: Եւ զի մի՛ յառաջագոյն զսպառնալիսն համարեսցիս ընծայեցուցանել, խրատու եւ հաւանութեան կարգաւ յորդորէ զմիտս նոցա: Եւ թուի ինչ եթէ զհրեայսն նշանակիցէ, որ միշտ զայնպիսի չար պտուղս ցուցանէին, քանզի եւ զՅովհաննու զբանսն յիշէ եւ նովին անուամբ զպատիժսն բարբառի, զի եւ նա զտապարէ եւ զծառոյ կտրելոյ եւ զանջէջ հրոյ յիշեցոյց նոցա: Եւ թուի թէ մի ինչ պատիժ իցէ, բայց թէ հաւաստեալ ոք քննիցէ երկուս տանջանք գտանին մի՛ զի նախ յարքայութենէն վրիպիցի եւ ապա ի հուրն եւս տանջեսցի, եւ առաւել դառն տանջանք այն են, յորժամ յարքայութենէն ոք վրիպիցի: Վասն որոյ եւ ասէ իսկ.

Ոչ ամենայն, որ ասէ ցիս. Տէր Տէր, մտանիցէ յարքալ]ութիւնն երկնից, այլ որ առնիցէ զկամս Հար իմոյ, որ յերկինս է (է 21):

Եւ ընդէր արդեւք ոչ ասաց, թէ՛ որ առնիցէ զկամս իմ. այլ քանզի դեռեւս անպատշաճ էր եւ ընդելական, զի նախ զայն ընդունիցին, որ ինչ նոցա տկարութեանն կարի ի դէպ էր: Բայց այլ

¹ Ձեռագրում՝ չար չար. (երկրորդ չար-ը կէտագծերում):

ազգ եւս, զի զայս այնու արկնարկեաց եւ ընդ սմին զայս եւս է ասել, քան չիք այլ կամք Որդւոյ արտաքոյ, քան զՀաւրն, եւ թուի ինձ, թէ աստ առաւել զհրեայսն մորմոքեցուցանէ եւ ի կրաւնս դնել եւ զվարսն պարկեշտս խնդրել: Որպէս եւ Պաւղոս պատուհասէ զնոսա. «Զի թէ դու հրեայ անուանեալ ես, ասէ, եւ պատժիս յԱստուած», այս չէ ինչ յաւգուտ յայնմանէ, թէ ի չար կամս նորա արասցեն: Նա եւ այլ իմն ասէ, եթէ՝ «Բազումք ասասցեն, ցիս յաւուր յայնմիկ Տէր Տէր ո՞չ յանուն քո մարգարէացաք»: Զի ոչ միայն ասէ. թէ հաւատք ունիցիս եւ գործոց ան//փոյթ առնիցես, ոչ միայն յերկնից անկցիս: Այլ [թէպէտ եւ հաւատքովն իսկ բազում նշանս առնիցես, սակայն եւ այնպէս արտաքոյ] գտանիցիս ցանկալի եւ երանելի դրանցն: «Բազումք, ասէ, ասիցեն ցիս. Տէր ո՞չ յանուն քո մարգարէացաք»: Տեսանես, զիարդ մեղմով եւ զիւր անձն յայտնէ: [Իբրեւ] զամենայն հրամանսն առ ռամիկս կարգեաց, ապա ցուցանէ զանձն. թէեւ դատաւոր է, եւ զի խնդիր ամենայն գործոյ լինելոց է, զայն վերագոյն յայտ արար: Բայց թէ ով իցէ դատաւոր, յայսմհետէ յայտ առնէ, եւ ոչ ասաց յայտնի, թէ՝ ես եմ դատաւոր, այլ թէ՝ «Բազումք ասիցեն ցիս»: զնոյն յարգարէ եւ ոչ միայն ի դատաստանին ժամու, այլ մինչդեռ զնշանսն առնէր զնոյն ասէ ցաշակերտսն. Մի խնդայք, զի դեւք հնազանդին ձեզ, այլ զի անուանք ձեր գրեալ են յերկինս, եւ ամենայն ուրէք բազում փոյթ վասն վարուց յանձին հրամայէ ցուցանել: Եւ յայտ յայնմանէ է, զի որք հաւատովք նշանս արարին ոչ ինչ աւգտեցան, եւ յայտ յայնմանէ է, զի ասէին. Յանուն քո բազում նշանս արարաք: Զի թէ չէին արարեալ, ապա չիչխէին ասել, թէ՝ Արարաք մանաւանդ ի դատաստանին ժամու եւ զի հարցանելովն եւս ասէին՝ Յայնմանէ յայտ է, թէ արարեալ նոցա նշանս: Եւ այս զարմանք էին, զի աստ առ ամենեւին զքանչելիս գործէին եւ անդ տեսանէին զանձինս ի տանջանս, հիացեալք հացանէին ցՏէրն, թէ՝ «Ոչ ի քո անուն մարգարէացաք», արդ, ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո ի մէնջ: Եւ դու մի՛ ինչ զարմանայցես, զի շնորհքն այնորիկ էին, որ զպարգեւան շնորհեաց, եւ ոչ եթէ նոքա անձամբ ինչ առնէին: Վասն որոյ եւ արժանի են տանջանաց, զի առ նա, որ անարժանիցն ետ զշնորհսն, գտան ապերախտ: Բայց զոր ցուցանելն կամի այս է, թէ ոչ հաւատք եւ ոչ նշանք կարեն աւգնել, եթէ վարք պար-

(102բ) կեշտք ոչ իցեն, զոր եւ Պաւղոս ասէր. «Թէ ունիցիմ հաւատս մինչեւ զլերինս փոփոխել, եւ սեր ոչ ունիմ, ոչ ինչ եմ» (Ա. Կորնթ. ԺԳ. 2): Բայց ոմանք ասեն թէ// [բազումք] ի հաւատացելոց անտի շնորհք առին. որպէս որ [զդեւն] հանէր եւ ընդ նմա ոչ շրջէր կամ որպէս Յուդաս. [զի չար էր,] եւ շնորհք ունէր: Նա եւ ի հնումն ի բազում յանարժանս բազում շնորհքն Աստուծոյ գործ ցուցին վասն այլոց աւգտի, զի ոչ ամենեքեան յամենայն իրս պիտանիք են, զի կէսքն վարք պարկեշտ ունէին եւ հաւատս՝ ոչ ինչ, եւ կէսքն զնորին հակառակն: Վասն որոյ զնոսա սոքաք յորդորէ, զի առաւելուցուն ի հաւատս եւ զայլս հաւատովք կոչէ գալ յազատութիւն: Վասն որոյ բազում առատութեամբ պարգեւէր զշնորհսն, զի եւ ասէին իսկ, թէ՛ Բազում զաւրութիւնն արարաք, այլ սաստեցից նոցա, թէ՛ «Ոչ գիտեմ զձեզ»: Այժմ կարծեն թէ սիրելիք իցեն իմ, բայց ապա գիտասցեն, թէ ոչ իբրեւ սիրելեաց ետու զշնորհսն: Նա եւ այնմիկ, որ երկոցունց թափուր էր ի հաւատոց եւ ի գործոց բազում, սակայն ցուցին ի նա զաւրութիւն շնորհքն վասն այլոց տեսչութեան. եւ փարաւովն այնպիսի էր, եւ նմա եցոյց զհանդերձեալսն ինչ, եւ Նաբուգոդոնոսոր անաւրէն էր, եւ նմա որ յետոյ լինելոց էր, այլազգս յայտնեցաւ, եւ որդոյն, որ գլէր զհայրն անաւրէնութեամբքն, ցուցան հանդերձեալ սքանչելիքն: Նոյնպէս եւ յայնժամ, զի դեռ սկիզբն էր քարոզութեանն, բազում հանդիսիւ պարտ էր երեւել զաւրութեան նորա: Վասն այնորիկ բազումք յանարժանիցն շնորհսն ընդունէին, բայց ոչ ինչ աւգտէին ի նշանացն, այլ առաւել ի տանջ[ե]անս մատնէին: Վասն որոյ ահագինս բարբառի առ նոսա, թէ՛

Ոչ երբէք գիտեմ զձեզ (Է. 23):

(103ա) Եւ արդ, իբրեւ կատարեաց զամենայն ճառս առաքիւնութեանն հաւաստեալ, եւ զկեղծաւորսն յանդիմանեաց. թէ որպիսիսք են, որ առ մարդկան ականէ պահիցեն եւ աղաւթս կայցեն, որք ի գաւառացն հանդերձս//գայցեն, եւ վնասակարք լինիցին, զորս խոզս եւ շունս անուանեաց: Ապա յայտ առնէ, թէ որչափ ինչ առաքիւնութենէն շահք իցեն, եւ որչափ ի չարեացն՝ վնաս:

Ամենայն, ասէ, որ լսէ բանից իմոյ եւ առնիցէ, նմանեցուցից զնա առն իմաստնոյ (Է. 24):

Եւ որք անսայցեն եւ լսիցեն բանիցն, յամենայն բարութիւնս վայելեսցն ոչ միայն ի հան[դ]երձելումն, այլ եւ աստ եւս: Տեսանե՞ս, զիարդ ի գունովս գունակս յեղեղու զբանն, երեսն ասէ. «Ոչ ամենայն որ ասէ ցիս Տէր Տէր» եւ սակս մի զանձն յայտնէ, երբեմն ասէ. թէ՛ «Որ առնէ զկամս Հաւր իմոյ»: Դարձեալ եւ դատաւոր ցուցանէ զանձն ասելովն, թէ՛ «Բազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ»: Եւ աստ դարձեալ ցուցանէ զանձն, թէ՛ իշխանութիւն ունի ամենայնի: Վասն որոյ եւ ասէ, թէ՛ «Որ լսիցէ բանից իմոց»: Եւ զի զամենայն ինչ զհան[դ]երձելոցն ճառեաց. արքատութիւն խոստացաւ եւ վարձս բազումս: Կամի եւ աստ եւս տալ նոցա պտուղ եւ ցուցանել, թէ՛ որչափ ինչ աստեն աւգտագործէ առաքինութիւնն, այն իսկ է՝ զգուշութեամբ կալ, եւ չհնազանդել չարեաց իմիք, եւ զվերագոյն, քան զամենայն վնասակարս լինել, որոյ զինչ այլ ինչ կայցէ զուգական, զոր եւ ոչ թագաւոր իսկ կարէ միշտ անձին ստանալ, այլ որ զառաքինութիւնսն ունիցի, նա միայն կարէ ստանալ յանցաւորիս եւ ի բազում հանդարտութիւն վայելէ միշտ: Եւ զարմանք այն են, զի ոչ յանքոյթ ժամանակի, այլ մինչդեռ յալեկոծ ի մէջ փորձութեանցն իցէ եւ ոչ սակաւիկ մի ինչ չչարժիցի:

Իջիւն, ասէ, անձրեք, յարեան գետք, շնչեցիւն հողմք (է 25):

Անձրեւ եւ գետք եւ հողմք զմարմնական վիշտս եւ զտառապանս անուանէ առական. զրպարտութիւնս, զնենգութիւնս, զսուր, զմահ եւ զամենայն, որ միանգամ աշխարհիս նեղութիւնք իցեն: Այլ ոչ իմիք հնազանդին այնպիսի իրաց առաքինութեանցն ոգիք, զի «հիմունք նորա ի վերա վիմի հաս//տատեալ են»: Վեմ՝ զամրութիւն իւրոյ վարդապետութեան [կոչէ], զի քան զվեմ հաստատուն են հրամանք, որ բա[ր]ձրագոյն, քան զամենայն մարդկան ալիս առնէն: Եւ որ զայս զգուշութեամբ պահիցէ ոչ մարդկան միայն վնասակարութեանն յաղթէ, այլ եւ՝ դիւաց մեղանչականութեան: Եւ ոչ ընդ վայր պարծանք ինչ են բանքս: Վկասցցէ առաքինին Յովբ, որ զամենայն նետս առ զթշնաւոյն եկաց հաստատուն: Վկայեսցեն եւ առաքեալք, յորոց վերա ամենայն իսկ աշխարհաց ալիք հեղան ե՛լ դիւաց ե՛լ սատանաի, եւ աքն զվեմ, եւ հաստ[ա]տուն կային, եւ զամենայն շիջուցին: Եւ զի՞նչ ինչ երանելի, քան զայսպիսի վարս կայցէ. ոչ մեծութիւն եւ ոչ մարմնոյ զաւրութիւն եւ ոչ այլ ինչ փառք կարեն նմա հա-

մեմատ լինել, բայց միայն առաքինութեան ստացուած: Եւ չիք այլ կեանք յամենայն չարեաց ազատ գտանել, բայց միայն այնպիսի կենաց: Եւ այն են զարմանք, զի եկին ի վերա նոցա նենգութիւնք եւ շնչեցին ձմերունք եւ նոքա ինչ ոչ զանգիտեսցին, այլ մերկանդամ մարտնչէին, եւ յաղթեցին: Զի ոչ միայն ոչ վնասին նենգիչքն, այլ եւ ընտիրս եւս կատարեն զայնոսիկ, որոց վնասելն կամիցին, զի որպէս ինքն է, նոյնպէս եւ նոքա լինիցին: Եւ քանզի ասաց, թէ՛ «Նեղ է դուռն եւ անձուկ ճանապարհն»։ Թէպէտ եւ այսու միսիթարեսցէ զվաստակաւորսն, ցուցանէ եթէ բազում զգուշութիւն է նորին: Եւ զոր աւրինակ զառաքինութեանն եցոյց զհատուցումն, նոյնպէս եւ զչարեացն սովին՝ զպատիժս, զի երկոքումք ամենայն ուրէք յորդորէ զլսաւղացն փրկութիւն առաքինութեանն նախանձու եւ չարեացն ատելութեամբ: Եւ զի բազումք ընդ բանսն զարմանալոց էին եւ գործոց ինչ արդիւնս ոչ ցուցանէին, յառաջագոյն գրաւէ ընդ երկիւղիւ (104ա) զայնպիսիսն, զի թէեւ բարի իցեն բանքն/, /որ ասացան չեն բաւական ի զգուշութիւն, [ուսկնդրութիւն] այլ եւ արդեանցն հնազանդութեան պէտք են: Վասն [այսորիկ] ոչ միայն ի հանդերձելումն խոստանա զհատուցումն եւ ի մաւտաւորացս, զի հաստատունք լինելոց էին եւ [անշար]ժք իբրեւ զվէմ: Նոյնպէս եւ վասն չարեացն. ոչ այնոքումք այն, որոց ակն ունէին, երկեցոյց ծառոյն կտրելովն եւ անշէջ հրովն, այլ եւ՝ մոտաւորաւք՝ շինուածոյն կործանամբն: Վասն որոյ յայտնագոյն առնէ զբանն, թէպէտ եւ առական ինչ ասէ: Քանզի չէ ընդ մի համար չանկանել ի բուռն առաքինոյն, եւ ընդդէմ սմին վաղվաղակի ըմբռնիլ չարագործին: Յայն սակս զվէմն դնէ ե՛ւ տուն, ե՛ւ գետս, ե՛ւ անձրեւ, ե՛ւ հողմս:

Ամենայն, ասէ, որ լսէ զբանս իմ եւ ոչ առնէ, նմանեսցի առն մորոսի, որ շինեսց զտուն իւր ի վերս աւագոյ (է 20):

Եւ բարուք իսկ կոչէ զայնպիսին «մորոս», զի ով ոք քան զայնպիսին անմտագոյն կայցէ, որ ի վերս աւագոյ տուն շինիցէ, զի զվաստական ծախիցէ եւ ի հանգիստն ոչ վայելիցէ: Եւ դարձեալ պատիժս եւս ընդ այնս կրիցէ. զի որ տուն շինիցէ եւ աշխատ լինիցի ամենայն ումէք յայտ է, թէ վասն հանգստեան աշխատի: Նա եւ յափշտակողն եւ շնացողն բազում աշխատութիւնս եւ տառապանս կրեն, զի զչարիսն յանգհանիցեն, եւ ոչ միայն չաւգտին ինչ անտի, այլ եւ բազում վնաս կրեն: Որպէս Պաւղոս

ասէ, թէ՛ «Որ սերմանէ ի մարմին, ի մարմնոյ անտի հնծէ զապա-
կանութիւն» (Գաղատ. 2 8). այնպիսոյ նմանեն, որ ի վերայ
աւազոյ շինիցեն, որք պոռնկութեամբ եւ գիջութեամբ զգածեալ
են, եւ ցասամբ, եւ այլովք չարեաւք վառեալ իցեն. որպէս
Աքայաբն էր, այլ ոչ այնպիսի[ի] ոք Եղիա: Եւ եթէ համեմատես
առ միմեանս, իմանաս, զի մինն ի վերա վիմի շինէ եւ միւսն՝ ի
վերա աւազոյ, զի թէպէտ եւ թագաւորէր, դողայր եւ սարսէր
ի մարգարէն, որ զմշակեակն եւեթ սփածեալ ունէր: Այնպիսիք
(104բ) էին// [եւ հրեայ]քն, այլ ոչ նոյնպիսիք եւ առաքեալքն, թէպէտ եւ
սակաւք էին, եւ կապեալք, այլ զվիմի հաստատուն ցուցանէին:
Եւ նոքա թէպէտ եւ բազումք էին եւ վառեալք, զաւազոյ տկա-
րութիւն ցուցանէին, զի եւ ասէին իսկ. «Զի՞նչ արասցուք զարսս
զայսոսիկ» (Եսթ. 2 6): Տեսանե՞ս, զի ի վարանս մտեալ էին ոչ որ
ընդ ձեռամբ էին եւ կապեալք, այլ որ կալանն եւ կապեցին: Եւ
յիրաւի իսկ, զի ի վերա աւազոյ շինեցին զամենայն եւ տկարա-
գոյն քան զամե[նե]սեան էին: Զի եւ ասէ իսկ, թէ՛ Զի գործէք՝
զարիւն առն կամիք ածել ի վերա մեր, այլ ոչ այնպէս էին եւ ա-
ռաքեալքն: Իսկ որպիսի ինչ չկարեմք մեք, ասէ, զոր ինչ տեսաք
եւ լուաք չխաւսել: Տեսանես զվէմն հաստատուն եւ զշինուածն՝
անշարժ: Եւ այն իսկ զարմանք, զի ոչ միայն չերկնչէին ի չարչա-
րանացն, այլ եւս առաւել համարձակութիւն առնուին: Եւ զնոսա
ի բազում կասկածանս մաշէին, զի որ զանդամ անդ հարկանիցէ
ինքն վնասի եւ որ ընդդէմ խթանի աքացիցէ, ինքն խոցոտի
(Հմմտ. Գործ. ԻԶ 14): Նոյնպէս եւ որ զառաքիւնին նենգիցէ,
ինքն պատժի:

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ զարմանայիմ
ժողովորդքն ընդ վարդապետութիւնն նորա (է 28):

Թէպէտ եւ տաղտկալ պարտէր ընդ ծանրագոյն բանսն տաղ-
տապել ընդ բարձրութիւն հրամանացն: Նա աւանիկ այնպէս իմն
էր զաւրութիւն վարդապետին մինչ ախորժելիս զբանն առնել եւ
զբազումս ի նոցանէ գրաւել եւ ի մեծամեծ զարմանս ածել, զի ոչ
կամէին թէ բնաւ լուիցէ իսկ յուսուցանելոյն: Քանզի եւ յորժամ ի
լեառնէն էջ, ոչ մեկնեցան ի նմանէ լսաւղքն, այլ նոյնպէս
ամենայն իսկ տեսաւղքն զկնի գնացին նորա, զի այնպէս անկաւ
(105ա) գութ բանիցն ի սիրտս նոցա: Եւ առաւել ընդ իշխ//անութիւնն
զարմանային, զի ոչ եթէ յայլ ոք [հանէր զբա]նսն որպէս Մով-

սէսն եւ մարգարէքն, այլ ամեն[այն ուր]էք զիւր անձն ցուցանէր իշխանութիւն ունել [ամենայն]ի: Քանզի եւ ի ստէպ աւրէնս դներ զայն եւ յաւելոյր թէ. «Բայց ես ասեմ ձեզ»: Եւ յորժամ դատաստանին աւր յիշեցուցանէր զիւր անձն դատաւոր ցուցանէր եւ տանջանացն եւ պատժոցն՝ զինքն իշխան: Թէպէտ եւ ի դէպ իսկ էր ընդ այն խռովել նոցա, զի թէ մինչ գործովք ցուցանէր զիշխանութիւնն, քարկոծել կամէին զնա դպիրքն: Իսկ ուր բանիւքն զնոյն յայտ առնէր, զիա՞րդ ոչ էր դէպ նոցա գայթակղել եւ մանաւանդ զի ի սկզբանն այնպիսի բանս խաւսէր, մինչեւ զաւրութեանն ինչ փորձ ցուցեալ էր: Սակայն ոչ ինչ ախտիւք ախտացան յորժամ միտքն եւ ոգիք հաւանողք իցեն, վաղվաղակի անսան ճշմարտութեան բանիցն: Վասն այնորիկ նոքա մինչդեռ նշանքն քարոզէին եւ զաւրութիւն նորա գայթակղէին եւ սոքա բանս եւեթ լոկ լսէին եւ հաւանէին եւ զհետ երթային որպէս աւետարանիչն ակնարկեալ ասէ, եթէ.

Երթաին զհետ նորա ժողովորդ բազումք (Ը 1):

Ոչ իշխանաց ոք եւ ոչ ի դպրաց, այլ՝ որք ի չարեացն ազատ էին եւ միտս անխորամանկս ունէին: Եւ յամենայն ժամ գայնպիսիսն տեսանես յԱւետար[րա]նին երթեալ զհետ նորա: Եւ, մինչդեռ խաւսէր նա, անսալով ունկն դնէին եւ ոչ ինչ խափանէին եւ ոչ զկարգն ընդ մէջ խափանէին եւ ոչ ի հարց եւ փորձ արկանէին եւ ոչ պատճառս խնդրէին, որպէս դպիրքն եւ փարիսեցիքն, այլ եւ յետ հրապարակաւ վարդապետութեանն դարձեալ զհետ երթային եւ զարմանաին: Եւ դու միտ դիր իմաստութեանն Տեառն, զիարդ պէս պէս շահս հաճախէ մերձաւորաց, զի ի նշանացն բանս շրջի (105բ) եւ դարձեալ// [ի բանիցն] վարդապետութենէ ի նշանսն մինչեւ ել[եալ ի լեառն] զբազումս բժշկեաց, զի յառաջագոյն [ճանա]պարհ բանիցն հորդիցէ: Եւ, յետ կատարելոյ զայնչափ հրապարակախաւս վարդապետութիւն, դարձեալ ի նշանսն գայ, զի հաստատեսցէ արդեամբքն զբանսն: Եւ քանզի իշխանութեամբ ուսուցանէր, զի մի կարճիցի ինչ, թէ անձնյարգութեամբ եւ պարծանաց իցէ վարդապետութիւնն: Վասն այնորիկ եւ արդեամբք եւս ցուցանէր զիշխանութիւնն ի բժշկել հիւանդացն, զի մի՛ ինչ խռովիցին յորժամ տեսանիցեն զնա իշխանութեամբ ուսուցանել:

Եւ իբրեւ էջ, ասէ, ի լեառնէ անտի, զհետ չոգան նորա ժողովորդք բազումք: Եւ ահաւասիկ մերձեցաւ առ նա բորոտ մի, աղաչէր եւ ասէր. Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել (Ը 2):

Բազում իմաստութեան եւ մեծ հաւատք էին առնն, զի ոչ խափանեաց զվարդապետութիւնն, այլ մնաց ի դէպ ժամանակի: Եւ իբրեւ էջ ի լեռնէն, ապա մերձեցաւ ոչ վայրապար, այլ ՝բազում ջերմութեամբ եւ ի գուճ եւս անկանէր: Որպէս միւս աւետարանիչն յայտ առնէ սերտ հաւատովք եւ պատշաճ կարծեւք, զի ոչ ասաց¹: Թէ՛ Յաղալթս կայցէք եւ խնդրիցես յԱստուծոյ, այլ ՝ Թէ՛ կամիս, կարող ես սրբել: Եւ ոչ ասաց թէ՛ Տէր սրբեայ զիս, այլ ի նա ապաստան արար զիշխանութիւնն: Եւ եթէ յանդէպ ինչ էին կարծիք բորոտին, ապա խոտել ակրէն էր զսուտ կարծիսն եւ սաստիւ ածել յուղղութիւն: Նա աւանիկ հաստատէ զբանն, զի ոչ ասաց թէ՛ սրբեաց, այլ թէ՛ «Կամիմ, սրբեաց», զի ըստ նորա կարծեացն եւ զհրամանս ետ: Իսկ առաքելոցն ոչ այնպէս, այլ թէ՛ «Զի՞ պշուցեալ հայիք ընդ մեզ, իբր թէ անձանց իշխանութեամբ տուաք դմայ զգնալն» (Գործ. Գ 12): Իսկ Տէրն թէպէտ եւ բազում. անգամ խոնարհագոյնս խաւսեցաւ, որ չէր նմա արժան,

(106ա) մինչ զի զ//հրամանսն հաստատիցէ, այլ աստ մինչդեռ [զարմանայ]ին ընդ իշխանութիւն նորա: Եւ զայս եւս յակել, [թէ՛ «Կամիմ», սրբեաց]: Զի թէպէտ բազում նշանս արար ոչ [երեւ]ի թէ՛ այսպիսի ինչ բարբառեցաւ ուրէք, այլ աստ զի հաստատեսցէ զուամիկսն եւ զբորոտին կարծիս. «Կամիմ, ասէ, սրբեաց»: Եւ ոչ սոսկ, այլ եւ արդեամբք եցոյց, եւ հնազանդ եղեւ բնութիւնն հրամանին: Վասն որոյ եւ զվաղվաղակին, եւ ոչ լոկ ասաց, թէ՛ «Կամիմ», այլ եւ զձեռն եւս մերձեցոյց ի նա, ոչ վասն այլ իրիք, այլ զի ցուցցէ, թէ՛ ոչ հնազանդ, այլ Տէր է ակրինացն: Եւ թէ սրբոյ չէ ինչ, որ անսուրբ իցէ, իսկ Եղիշա եւ ոչ տեսանել կամեցաւ զՆեեման բորոտ, այլ եւ գայթակղեցոյց, զի ոչ ել եւ տես գնա: Այլ առաքէ Յորդանան լուանալ: Իսկ Տէրն ոչ իբրեւ զծառա, այլ իբրեւ զՏէր բժշկէր: Մերձենայր. ոչ զի բորոտէն պղծիր, այլ սրբեր զպղծութիւն բորոտին, զի ոչ եթէ զմարմինս եւեթ եկն բժշկել, այլ եւ զհոգիս ածել ի յաստուածութիւն: Եւ որպէս անլուա ձեռաւք ոչ արգել հաց ուտել, զի զխտրութիւն կերակրոցն նոր ակրինաւքս լուծցէ, նոյնպէս եւ աստ խրատէ, թէ՛ ոգւոցն

¹ Բառս տողամիջում:

պարտ է դարձան տանել եւ արտաքին սրբութեանցն ոչ այնպէս պատկառ կալ, այլ զներքինն սրբել եւ ի նորին բորոտութենէն կասկածել, որ են մեղք. զի բորոտութիւնն ոչ է խափան առաքինութեան, յայն սակա մերձենայր: Եւ ոչ ոք մեղադիր լինէր, զի չեւ էր ատեանն խանգարեալ եւ ոչ տեսողքն ի նախանձու են վնասեալք: Վասն որոյ ոչ միայն չաղարտէին, այլ եւ զարմանային եւս ընդ նշանսն եւ ընդ բանիցն եւ ընդ գործոցն տային նորա զաւրութեանն յաղթութիւնն եւ երկրպագէին նմա:

(106բ) Իբրեւ բժշկեաց զմարմին բորոտին, ապա հրաման տայ չասել ումեք, այլ ցուցանել զանձն քահանայապետին եւ մատուցանել// [պատարագս] որպէս հրամանեաց Մովսէս ի վկ[ա]ութիւնն [նոցա: Յայն] սակա հրամայէ, չասել ումեք, զի զան[մեծարգութիւն] ուսուցանէ մեզ: Եւ թէպէտ եւ պիտէր, եթէ ոչ թաք[ուցանիցէ] գերախտիսն, սակայն նա զիւրն արար: Եւ [զիարդ այլուր] հրամայէ պատմել ոչ զանձին պատիւ, այլ [Աստուծոյ Հաւր] տալ զփառս, իսկ բորոտաւս անհպարտս լինել մեզ, եւ շնո[ր]հակալս լինել երախտաւորին եւ ընդ ամենայն գործոցն տալ զովութիւնս եւ ի հիւանդութեան եւ յառողջութեան ընդ Տեառն հայել եւ զնա փառաւորել: Եւ ընդէ՞ր հրամայէ ցուցանել քահանային եւ մատուցանել պատարագ. զի եւ այսու եւս կատարեսցէ զաւրէնսն եւ ոչ ամենայն ուրէք պահէր զաւրէնս եւ ոչ ամենայն ուրէք լուծանէր եւ այնու զանամաւթ լեզուս հրէիցն կարճէր, եւ ըստ նոցա տկարութեանն զիջանէր: Եւ մի՛ զարմանար, թէ ի սկզբանն այսպէս առնէր, ուր եւ առաքեալքն յետ հրամայելոյն ի հեթանոսս երթալ, եւ զհինսն ամենայն լուծանել եւ զնորն հաստատել: Երեւի, զի մերթ լուծանէին եւ մերթ պահէին: Եւ ընդէ՞ր հրամայէր զանձն քահանային ցուցանել, այլ զի հրաման էր աւրինացն ոչ անձամբ քննութիւն առնել սրբութեանն, այլ քահանային ցուցանել եւ նա ընդ[ր]էր եւ եթէ ասէր, եթէ սրբեալ է, խառնէին, եւ եթէ երկմտութիւն ինչ լինէր, այլ եւս արտաքոյ բանակին նստէր: Վասն այնորիկ ասէ.

Երթ ցոյց քահանային եւ մատոյ պատարագ որպէս հրամանեաց Մովսէս (Ը 4):

Եւ ոչ ասէ, թէ՛ Ես հրամանեցից, այլ առ աւրէնսն առաքէ. Ոչ զի քննեցից, որ ի սուրբ ձեռանէն մաքրեցաւ: Այլ զի այնու եւս

կարկեսցէ զբերան նոցա, զի մի՛ ասիցեն, թէ զաշտիճան քահանայիցն յափշտակեաց եւ զգործս նոցա նա կատարէ. զնոսա առնէ (107ա) քննիչ իւրոյ սքանչելեացն: Այնչափ հեռի եմ//հակառակութենէ, զի որք յինէն բժշկեն, [ի նոցա հն]ազանդութիւն առաքեմ: Եւ զի՞նչ իցէ թէ՛ «ի վկայութիւն» նոցա»: Այն իսկ է, զի ի կշտամբութիւն, եւ յամբա[ստանու]թիւն նոցին լինիցին իրքն, թէ[ե]ւ ի նմին ապախտաւորութեան կայցեն, զի ասէին, թէ զմոլորեցուցիչ եւ զ[խաբեբայ] հալածեմք եւ զհակառակ Աստուծոյ եւ զաւրինացն [դու], ասէ, լինիցիս ինձ վկա ի ժամանակին յայնմիկ, զի չեմ աւրէնս զանց, քանզի առաքեմ զքեզ առ աւրէնսն, զոր եսդ բժշկեցի եւ ի քահանայիցն քննութիւն: Եւ այս պատուելոյ եւ ոչ հակառակելոյ կրաւնիցն իցէ: Թէպէտ եւ նոքա ոչ ինչ աւգտէին, այլ նա պատուէր զաւրէնսն, թէպէտ եւ գիտէր, թէ չեն ինչ աւգտելոց: Վասն որոյ յառաջագոյն գաւշակեաց, զի ոչ ասաց, թէ՛ Յուդղութիւն ինչ, այլ թէ՛ «ի վկաութիւն նոցա», այսինքն՝ յամբաստանութիւն եւ ի կշ[տ]ամբութիւն նոցա լինիցին, այլ եւ ի վկաութիւն իսկ թէ՛ Յինէն ամենայն ինչ եղեւ եւ կատարեցաւ: Թէպէտ եւ յառաջագոյն գիտէի, թէ չեք ինչ ուղղելոց, այլ ոչ իւրիք պակասեցուցի, զոր պարտ էր ինձ առնել ձեզ: Այլ նոքա եւս առաւել պահէին ոխս ի մտի, բայց զայս եւ այլուր իսկ ասէ, թէ՛ «Քարոզեսցի Աւետարանս ընդ բնաւ աշխարհս ի վկաութիւն ամենայն հեթանոսաց» (Մատթ. ԻԴ 14), որք ոչն կամին հնազանդել, զի մի՛ ոք ասիցէ, թէ ընդէր քարոզիցես, թէ չիցեն ամենեքեան հաւատացելոց, այլ ես զիմն ասէ, արարից, զի մի՛ ոք մեղադիր լիցի, թէ չեմ լուեալ: Վկանցէ եւ ըմբերանեսցէ զնոսա քարոզութիւնն, զի մի՛ յետոյ պատճառիցեն, թէ՛ ոչ լուաք, քանզի ընդ ամենայն ծագս տիեզերաց տարածեցաւ բան աստուածպատուութեանն, եւ որք ընկալան զնա կամաւորութեամբ յաւել ի նոսա եւ շնորհս իւր: «Որ ունիցի, ասէ, տացի նմա եւ յաւելցի, եւ որ ոչ ունիցի եւ որ ակն ունիցի թէ գուցէ նորա, եւ զայն եւս (107բ) հանցեն ի// [նմանէ]» (Մատթ. ԺԳ 12, Մարկ Դ 25): Իբրեւ զայն, զի ասէ. «Որ ունիցի ակա[ն]ջս լսելոյ լուիցէ (Մարկ. Դ 23). [այսին]քն՝ որոց էին ականջք հոգւոյ ի մէջ մարմն[աւոր ական]ջաց՝ լսել զհոգեւոր բանս նորա, յաւելոյր եւ [տայց նոցա] զուսումն վարդապետութեան աւելի քան զոր [ունէին]: Եւ այն ոք, որ կարծէին, թէ ունիցին եւ զայն ինչ[որ ունէին, հանէ ի նոցանէ յայնմիկ, զի ասէ.

Տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն (ԺԳ 14):

Իսկ այն, որ ոչն է արժանի այնմիկ, զոր ինքն ունի, զիարդ ունի նա ահն առնուլ զայն ինչ, զոր ոչն ունիցի: Իսկ որ մարդ արժանի լինի այնմիկ, զոր ինքն ունի, յաւելցի նմա, եւ այն ինչ, զոր ոչն ունի, ապա թէ չիցէ արժանի եւ զայն, զոր ունիցին, հանցեն ի նմանէ: Որչափ եւ կարէ մարդ ընդունել, տուեալ լինի նմա շնորհքն, որպեսզի հանգիցեն ընդունիչք խոստացելովն, որ նման է նմա: «Որ ունի, յաւելու նմա», որպեսզի ինքնին գլխովին անձամբ իւրով մեծասցի նովաւ: Արդ, առայժմ ինչ որ նմանէ մեզ, յաւելեալ լինի մեզ, ապա թէ ոչ, եթէ յաւելլով յաւելու: Սոյնպէս եւ հոգին իմաստութեան ոչ տուեալ լինի մարդոյ, որ յիմար խորհրդով, զի մի՛ նուազեսցէ նա այնու լուսաւորաւն, այլ տուեալ լինի Հոգին Սուրբ՝ յայտնիչն խորհրդոց, որ խորհրդոց հասու է, զի ծաղկեսցէ ի նմա իմաստութիւնն զուարճացուցիչ եւ գեղիցի նմա բանն աւրախարար: Եղեաք փոխառուք, լիցուք հատուցիչք: Եւ եթէ խոստովան լինիմք այնմիկ, որ փոխն ետ մեզ, յաւելցի մեզ ի վերա այնր, զոր առաքն, եթէ զլացողք լինիմք: Մի՛ երկմտեսցուք, թէ չիցեն առ նմա, զոր առաքն ինչ, զոր առաք, թէ զլանամք թէպէտ եւ առ մեզէ առ նմանէ եթէ գոհանամք եւ հաւատամք այն ինչ որ առ նմա եւ առ մեզ է: «Որ ունիցի, աւսէ, տացի նմա»: Պաւղոս, որ ունէր զարդարութիւն աւրինացն, յաւելան նմա հաւատքն կենարարին: Իսկ այն, որ ոչն ունի եւ ոչ (108ա) զարդարութիւն, զի՞ գործ//իցէ նա աւրինացն, եւ զայն, զոր ունիցի [հանցեն ի նմանէ], քանզի մինչ ի Յովհաննէս Մկրտիչ կան գն[ացք աւրինացն]: Եւ դարձեալ, որ ունիցի զկարծիս թուլութեան [մեղաց]:

«Մի՛ տայք զսրբութիւն շանց»: Զոր աւրինակ որ ոչն [աւետարանէն] զԱւետարանն Նորա, մեղանչէ, զի ոչ [պահէ] զպատուիրանն: Այսպէս է այն, որ տայ զսրբութիւն շա[նց: Թէ]պէտ եւ շունք զսրբութիւնն ոչ ուտեն եւ խոզից մարգարիտն չէին պիտոյ: Սակայն հազորդ եւ կցորդ է նա այնմիկ, որ թաքոյց զարծաթ Տեառն իւրոյ: Մինն ոչ աճեցոյց եւ միւսն ոչ պահեաց:

Եւ իբրեւ եմուտ ևա ի Կափառնաւումն (Ը 5):

Բորոտն, յորժամ էջ ի լեռնէն Յիսուս, յայնժամ մատեաւ, իսկ հարիւրապետն՝ յորժամ եմուտ ի Կապեռնաուումն: Եւ վաս[ն] է՞ր

արդեւք ոչ սա եւ ոչ նա ելին ի լեառն ոչ առ ծուղութեան ինչ, քանզի երկոցունց ջերմ էին հաւատքն, այլ զի մի՛ խափան լիցին վարդապետութեանն:

Մատուցեալ հարիւրապետն ասէ. Մանուկ իմ անկեալ դնի չարաչար տանջեալ (Ը 5-6):

Ոմանք ասեն, թէ աղերսիւ զպատճառն իսկ ասաց: Վասն որոյ ոչ ած զնա առ նա, զի չէր մարթ զլուծեալն բառնալ բերել առ նա, զի մերձ էր զոգիսն հանել: Ղուկաս յայտ առնէ, թէ՛ մերձ էր ի մեռանել: Բայց զի մեծ հաւատս ունէր առաւել քան զայնոցիկ, որք ի ձեռուանէն կախեցին զանդամալոյծն (տե՛ս Ղուկ. Ե 18-21), զի գիտէր ստոյգ, թէ հրամանաւ միայն բաւական է յարուցանել զանկեալն, աւելորդ համարէր զածելն առ նա: Եւ արդ, ընդէ՞ր Յիսուս, զոր ոչ երբէք արար, նախ աստ առնէ. զի ամենայն ուրէք կամաց աղաչաւղացն ուշ դնէր: Իսկ աստ ընդ առաջ եւս երթա, եւ ոչ միայն ողջացուցանել խոստանա եւ ի տունն երթա, զի ուսցուք զառաքինութիւն հարիւրապետին, թէ այդպէս չէր խոստացեալ, այլ ասացեալ էր, թէ՛ երթ եւ բժշկեցի մանուկ քո: Ոչ ինչ յայտնի լինէր հաւատք նորա փիւնիկ ասորոյն հակառակ (108բ) սմին արար իսկ աստ ինքնակամ յաւ// [ժարէր երթալ ի] տուն, զի ուսցիս զհարիւրապետէն հաւատս, եւ] բազում խոնարհութիւն փիւնիկեցոյն: [Եւ չառնոյր իսկ յանձն] տալ զբժշկութիւն, զի թէպէտ եւ գժտ[էր՝ չանսայր: Քանզի] հնարագետ եւ իմաստուն է բժիշկն՝ Հա[կառակորդով]քն զնորին հակառակն կազմել գիտէ. աստ վասն ինքնակամ երթին, եւ անդ վասն յաճախութեան [յապաղելոյ]ն յայտնէ զհաւատս կնոջն: Սոյնպէս եւ Աբրահամու ասէր. Միթէ՞ թաքուստ ինչ իցէ յԱբրահամու ծառայ իմմէ» (Ծննդ. ԺԸ 17). զի ուսանիցեն զնորա գութն եւ զխնամսն առ սողոմանցիսն եւ ի տունն Ղովթա: Չանսային մտանել առ նա առաքեալքն, զի ուսանիցիս զարդարւոյն զաւտարսիրութեանն զառաւելութիւն:

Եւ արդ, զի՞նչ ասիցէ հարիւրապետն.

Ձեմ, ասէ, բաւական եթէ ընդ [յ]արկաւ իմով տան իցես (Մատթ. Ը 8):

Լուիցեն եւ որ այժմ զՔրիստոս ընդունելոց ե[ն] եւ նախանձաւոր նորին փութոյն լինիցին, զի որք զքաղցեալն եւ զաղքատն

ընդունիցին, զնա ընդունին եւ կերակրեն: Ասայ, ասէ, բանիւ եւ բժշկեցի մանուկ իմ»: Տես եւ զսա ըստ բորոտին բանի, զոր զպատշաճ կարծիսն ուներ զնմանէ, քանզի ոչ ասաց թէ՛ աղա-
 չեայ զԱստուած, այլ թէ՛ միայն հրամայեայ: Կասկածէր, թէ՛ գու-
 ցէ փոքունս ինչ իմանայցէ զնմանէ: Վասն այնորիկ ասէր, թէ՛
 «Ասա միայն բանիւ»: Եւ զի բարւոք կասկած առին զնմանէ
 ժողովուրդն ի լերինն, եւ զարմանա[յ]ին ընդ վարդապետու-
 թիւնն, զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր, կամեցաւ հաստա-
 տել զկարծիս նոցա գործով ի ձեռն բորոտին: Եւ հարիւրապետ
 [...] ¹ թէ՛ ուսարուք ի բորոտէն, զի ոչ միայն իշխանութեամբ
 [առ]նեմ, այլ եւ իշխանութեամբ զբորոտութիւնն սրբեմ, որպէս
 եւ ասաց բորոտն. «Թէ՛ կամիս կարող ես զիս սրբել»: Եւ կա[մէր].
 (109ա) իշխանութեամբ սրբեաց զնա: Եւ դարձեալ ի ձեռն//հարիւրապե-
 տին այլազգւոյ [.....] ² այս զբորոտութիւն սրբէ իշխանութեամբ
 [.....] ³ իշխ[անութեամբ հալածէ: Որպէս ասաց [.....] ⁴ «[Աս]ա բա-
 նիւ, եւ բժշկեցի մանուկն իմ» [..... կար]գեալ ⁵ ընդ իշխանու-
 թեամբ ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ աս]եմ սմա երթ, եւ երթա»: Եւ զոր աւրինակ բորոտի [ասէ՞ր]. «Կամիմ, սրբեաց», զի հաստա-
 տեսցէ զկարծիս նորա: Սոյ[նպէս եւ աստ] արար, զի ասել հարիւ-
 րապետին, թէ՛ այսչափ ինչ իշխանութիւն ունիմ՝ ոչ միայն չխո-
 տեաց, այլ եւ յանձ[ն առ]աւ եւ արդեամբք կատարեաց, զի ոչ ա-
 սաց աւետարանիչն, թէ՛ գովեաց միայն, այլ թէ՛ եւ զարմացաւ եւս
 ոչ վայրապար, այլ մինչդեռ ամենայն ժողովուրդն մաւտ կային,
 ետ աւրինակ, զի նմանող նորին լինիցին: Տեսանե՞ս որպէս իւրա-
 քանչիւր ոք ի վկա[յ]ից նորա զարմանա[յ]ին ընդ իշխանութիւն
 նորա, զարմանաին ասէ ժողովուրդն ընդ վարդապետութիւնն նո-
 րա: Եւ ոչ միայն չեղեւ մեղադիր, այլ եւ առա[ւել եւս զնոսա] ի-
 ջուցանէր ընդ իւր: Եւ, սրբելով զբորոտն, հաստատէր զմիտս նո-
 ցա յասելն. «Թէ՛ կամիս, կարող ես սրբել»: Եւ ոչ միայն չսաս-
 տեաց նմա, այլ եւ սրբեաց եւս որպէս խնդրեացն: Սոյնպէս եւ
 հարիւրապետն ասէր, թէ՛ «Ասա բանիւ եւ բժշկեցի մանուկն իմ»: Եւ նա զարմացեալ ասէր թէ՛

¹ 1 բառ:

² 2-3 բառ::

³ 2-3 բառ:

⁴ 2 բառ:

⁵ 2 բառ:

Եւ ոչ յԻսրաէլի այսչափ հաւատս գտի (Ը 10):

Այլ եւ ի հակառակորդացն եւս ուսանիցիս զսոյն, քանզի Մարթայ այսպիսի ինչ չասաց, այլ՝ զսորին հակառակն՝ թէ՛ «Զինչ եւս խնդրեսցես յԱստուծոյ, տացէ քեզ» (Յովհ. ԺԱ 22): Եւ ոչ միայն գրվեցաւ, այլ եւ սաստեցաւ եւ ուղղեցաւ ի նմանէ: Եւ զի ոչ բարիոք ասաց յանդիմանեցաւ ի նմանէ ասելովն «[Ո՞չ, ա- սէ, ասացի քեզ, թէ հաւատասցես՝ տես]ցես եւ զփառսն Աստու- ծոյ» (Յովհ. ԺԱ 40): Եւ իբրեւ չէր երբէք [հաւատացեալ, այն- պէ]ս իմն մեղադիր լինէր: [Եւ դարձեալ յայնպիսի եւս կարծիքն] մերժէ եւ ուսուցանէ, եթէ ոչ յայլ ումէքէ կարաւտէ առնուլ, այլ ինքն է աղբիւր բարեաց:

ՑԱՆԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ

- Աբել - 119, 154
Աբրահամ նահապետ - 16, 29, 35,
37, 39, 43, 44, 46, 70, 72, 73, 74,
96, 102, 118, 119, 121, 125, 168,
200,
Աբիաթար քհն.- 63
Աբիուդ - 43
Ադամ - 17, 21, 22, 25, 34, 36, 43, 44,
45, 49, 50, 52, 54, 59, 60, 61, 64,
67, 90, 91, 92, 96, 101, 104, 118
Ազովր - 43
Ահարոն - 81
Ամինադար - 41
Անան - 48
Անանիա Սանահնեցի - 9, 10, 11, 12,
13, 14, 20, 21, 23, 24, 25, 26
Անայան Յ. Ա. - 26
Անդրեաս առաքյալ - 99
Ասթա - 44
Աստարտե - 28
Ասկղեպիաս - 11, 30
Արամ - 41
Աքայար - 194
Աքար - 42
Աքին - 43

Բահադ - 47
Բաղասամ - 58
Բարսեղ Կեսարացի - 53
Բեդ - 60
Բերսաբե - 42
Բոյոս - 41, 42

Գաբրիել - 50
Գադիրոն - 37
Գադիանոս - 10, 30
Գրիգոր Աստվածաբան - 24
Գրիգոր Նարեկացի - 25
Գողիադ - 87, 93

Դանիել մարգարտ - 47, 56, 57, 61,
162
Դաւիթ մարգարտ - 37, 39, 42, 43, 44,
46, 47, 61, 62, 63, 71, 81, 87, 93,
102, 103, 108, 162, 171, 173, 189
Դիոսկորոս Սանահնեցի - 9, 10, 13,
27

Եզեկիա - 57, 58
Եզեկիել - 37, 70, 76, 91
Եզրովմ - 41
Եղիա - 16, 21, 67, 68, 69, 71, 85, 92,
99, 112, 171, 194
Եղիակիմ - 43
Եղիազար - 70
Եղիուդ - 43
Եղիշա (Եղիսէ) - 16, 68, 99, 196
Եղիշե վրդ - 12, 33
Եղիսաբեթ - 53, 57, 89
Եսայի մարգարտ - 47, 50, 54, 58, 60,
61, 63, 65, 69, 70, 71, 103, 134
Եսավ - 40
Եւայ - 49, 50, 51, 52, 59
Եփրեմ Ասորի - 11, 12, 14, 15, 16, 17,
18, 19, 20, 26, 33

Զարա - 41
Զաքարիա մարգարտ - 22
Զաքարիա (հայր Յովհաննէս
Մկրտչի) - 15, 53, 57, 64, 98
Զաւրաբաբել - 42

Էմանուէլ - 55

Թամար - 40, 41, 42
Թամրազյան Զրաչ - 25

Իսահակ նահապետ - 39, 70, 72
Իրինեոս - 24

Կայէն - 118, 129
Կիւրոս - 47

Ջեդի - 44
Ջերովդէս - 45, 56, 57, 58, 61, 63, 68,
138
Ջերովդիադա - 138
Ջոաբեթա - 41
Ջոաբել - 62, 70
Ջոսթ - 42

Ղազար(ոս)(եղբայր Մարթայի) - 120
Ղազար(ոս) (աղքատ) - 96, 125
Ղաֆադարյան Կ.- 11
Ղեվի - 40, 81
Ղովտ - 200
Ղուկաս աւետարանիչ - 36, 37, 43,
44, 45, 66, 95, 96, 200

- Մանաստ - 47
 Մատթան - 44
 Մատթենու անտարանիչ - 9, 11, 12, 21, 24, 26, 36, 38, 45, 98
 Մարիամ Աստուածածին - 43, 44, 49, 50, 53, 60, 68, 89
 Մարկոս անտարանիչ - 36, 45
 Միքիա մարգարտ - 61
 Մովսէս նախամարգարտ - 35, 36, 38, 42, 43, 46, 51, 54, 61, 62, 70, 76, 85, 87, 92, 108, 112, 118, 140, 141, 154, 171, 195, 197
- Յակոբ նահապետ - 38, 40, 58, 59, 61, 62, 63, 70, 72, 119, 171
 Յակոբ (հայր Յովսէփայ Աստուածահօրն) - 43, 49
 Յեսստ (հայր Դաւթի) - 42
 Յեսու - 41, 54, 119
 Յիսուս Քրիստոս (Նազովրեցի) - 13, 14, 15, 16, 17, 20, 22, 23, 30, 38, 39, 42, 43, 44, 45, 49, 54, 56, 62, 63, 65, 68, 69, 71, 75, 80, 81, 82, 89, 90, 92, 93, 94, 95, 98, 99, 101, 107, 110, 112, 113, 119, 120, 122, 128, 130, 132, 134, 144, 163, 168, 179, 188, 189, 194, 199, 200
 Յովբ - 46, 50, 90, 95, 113, 125, 168, 192
 Յովիաննէս Սարկաւազ - 9, 27
 Յովիաննէս առաքեալ և անտարանիչ - 9, 21, 36, 38, 63, 70, 102, 109
 Յովիաննէս Սկրտիչ - 9, 15, 16, 22, 23, 24, 45, 46, 53, 57, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 76, 77, 79, 80, 81, 82, 83, 92, 98, 99, 122, 138, 171, 189, 199
 Յովիան Ոսկերերան - 11, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 26, 27
 Յովնան (հայր Սիմոն - Պետրոսի) - 99
 Յովսէփ (որդի Յակոբ նահապետի) - 40
 Յովսէփ (Աստվածահայր) - 43, 44, 49, 50, 52, 53, 54, 55, 59
 Յուդա (որդի Յակոբ նահապետի) - 40, 41, 47
 Յուդա թգր.- 61
 Յուդա (Իսկարիովտացի) - 113, 191
- Նարուզողոնոսոր - 47, 191
 Նաթան - 44
 Նաասոն - 41
 Նեեմիա - 196
 Նոյ - 102, 118, 119
- Շմավոն (որդի Յակոբ նահապետի) - 40
- Ովսէ - 54, 61
 Որոզիմես - 24
- Պետրոս (Սիմոն, Շմաւոն) առաքյալ - 9, 45, 81, 99, 100, 138, 178, 183
 Պաղոս առաքեալ - 9, 45, 74, 89, 93, 104, 105, 107, 112, 113, 122, 125, 127, 130, 131, 132, 134, 148, 157, 170, 176, 178, 179, 181, 182, 183, 186, 188, 190, 191, 194, 199
- Ռահաբ - 41
 Ռեբեկա - 39, 70
 Ռուբեն (որդի Յակոբի) - 40
- Սաղովկ - 43
 Սաղմովն - 41
 Սառա - 39
 Սաւուղ - 61
 Սեթ - 118
 Սեփովր - 70
 Սողոմոն - 33, 42, 44, 119, 173, 184
 Ստեփանոս Սյունեցի - 13
- Տրայանոս կայսր - 45
 Տեր-Սիմասյան Երվ.- 10
 Տեր-Պողոսյան Պ. - 53
 Տիմոթէոս (հասցեատեր Պողոս առաքյալի) - 182
 Ուրիաս (ամուսին Բերսաբէի) - 42
- Փարէս - 41
 Փիլոն (Ալեքսանդրացի) - 12
 Քյոսեյան Յակոբ - 9, 26
 Аверинцев С.С. - 25
 Живов В. - 25
 Попов И. В - 26
 Старокадомский М - 25

ՑԱՆԿ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Ալեքսանդրիա - 36, 37	Կիլիկիա - 9
Ամուրիացուց լեռ - 119	Կորդուաց լեռ - 119
Ասիա - 37	
	Զերակլեանց արձանք - 37
Բաբելոն - 47, 59, 60, 70	Հռամ - 62
Բեդլահեն (Բեթղէմ) - 49, 56, 57, 65, 71	Հրէաստան - 56
Բեթել - 47, 119	Յորդանան գետ - 37, 44, 45, 54, 65, 70, 83, 97, 119, 196
Գալիլիա - 45, 97	Յուդա (ազգ) - 42
Գեհոն գետ - 36	
Գողգոթա - 56	Նազարեթ - 14
	Նեփթաղեն - 97
Դան - 47	Պաղեստին - 115
Դամասկոս - 60	Պատմոս կղզի - 45
Եգիպտոս - 42, 47, 49, 59, 60, 61, 63, 101	Սամարիա - 61
Երուսաղէմ - 36, 42, 57, 58, 62, 119, 143, 174	Սանահին - 7, 9, 27
Եփրատ - 37, 56	Սաղիմ - 46
	Սեղովան - 119
Զաբոդոն - 92	Սինա լեռ - 76
	Սողոմոն - 45
Էջմիածին - 9	Տիգրիս գետ - 37
Իսրաէլ - 42, 57, 64, 101, 119, 202	Փիսոն գետ - 36
Կանա - 16, 97	Քանան - 61
Կափառնաւում - 97, 199	

ՑԱՆԿ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ Ս. ԳՐՈՑ

Ծննդոց	<i>էջ</i>	Ղեւտական	<i>էջ</i>	Գ թագ.	<i>էջ</i>
Ա 27	34	Է 26	118	Բ 4.....	39
Բ 4	38	ԺԹ 10.....	136		
Գ 5	94	ԻԴ 20.....	139	Նէմի	
Գ 18	118			Թ 2.....	71
Գ 22	104	Թիք		Եսթեր	
Ե 2	121	ԺԲ 3	108	Զ 6	194
ԺԲ 4	39	ԻԴ 17.....	58		
ԺԵ 7	132	Բ Օրինաց		Սաղմոս	
ԻԸ 20.....	172	Զ 4	132	Դ 5	127
		Զ 13	144	ԺԸ 2	173
Ելք		ԻԲ 21.....	53	ԼԶ 11.....	108
ԺԱ 8	133	ԻԴ 20.....	136	ԽԴ 11	40
Ի 2,5	132	ԼԲ 41	140	ԽԸ 13	109
Ի 12	105			ԽԸ 21	35
ԼԲ 4	42	Բ թագ.		ԽԹ 14.....	130
		ԺԶ 11-12	113		

ԽԹ 23.....	130	ԻԹ 3.....	60	Գ 5.....	66
Ծ 12.....	109			Գ 6.....	66
Ծ 19.....	103	Մառոքոս		Գ 6.....	67
Ղ 4.....	86	Գ 7.....	63	Գ 9.....	98
Ղ 13.....	96	Գ 8.....	66	Գ 20.....	45
ՃԼԱ 1.....	108	Գ 10.....	98	Գ 38.....	45
ՃԹ 1.....	55	Գ 11.....	80	Ղ 23.....	125
ՃԻԹ 2.....	154	Գ 17.....	44	Ղ 13.....	95
ՃԼԱ 6.....	56	Ժ 9.....	177	Ե 18-21.....	200
ՃԼԱ 11.....	39	Ժ 7.....	67	Չ 29.....	124
ՃԼԸ 16-17.....	32	Ժ 12.....	110	Թ 58.....	177
ՃԽԴ 16.....	171	Ժ 18.....	98	Ժ 5.....	110
ՃԽԸ 9.....	173	ԺԱ 29.....	108	ԺԱ 42.....	178
		ԺԱ 30.....	183	ԺԶ 13.....	123
Առակ.		ԺԲ 11.....	120	ԺԶ 23.....	125
Լ 19.....	50	ԺԲ 29.....	85	ԺԸ 11.....	151
		ԺԲ 34.....	63	ԺԸ 26.....	183
Սիրաք		ԺԳ 12.....	198	ԺԸ 31.....	135
ԻԵ 28.....	134	ԺԳ 13.....	183	ԻԲ 46.....	155
ԽԱ 26.....	134	ԺԳ 30.....	79	ԻԳ 34.....	148
		ԺԷ 5.....	44	ԻԳ 41.....	81
Յովբ		ԺԸ 15-18.....	178	ԻԳ 43.....	105
Գ 9.....	50	ԺԹ 8.....	141		
ԼԱ 25.....	168	ԺԹ 10.....	183	Յովհաննես	
		ԺԹ 27.....	138	Ա 1.....	46
Եսայի		ԻԱ 23.....	68	Ա 1.....	121
Ա 10.....	71	ԻԱ 25.....	71	Ա 3.....	174
Ա 12.....	63	ԻԱ 31.....	67	Ա 3.....	121
Գ 16.....	13	ԻԲ 42.....	39	Ա 25.....	69
Է 14.....	50	ԻԳ 4.....	178	Ա 25.....	71
Է 14.....	61	ԻԳ 12.....	80	Ա 27.....	81
Ը 4.....	60	ԻԳ 13.....	180	Ա 29.....	70
Ը 4.....	60-61	ԻԳ 23.....	178	Ա 29.....	76
Թ 2.....	97	ԻԳ 24.....	179	Ա 33.....	64
Թ 6.....	58	ԻԴ 2.....	85	Ա 33.....	77
Ժ 22.....	74	ԻԴ 12.....	129	Ա 51.....	38
ԺԱ 10.....	67	ԻԴ 14.....	198	Ա 34.....	77
ԺԹ 1.....	60	ԻԵ 26.....	180	Ա 42.....	99
ԻԷ 10.....	69	ԻԸ 20.....	55	Գ 24.....	99
Խ 3.....	66			Գ 30.....	58
ԽԵ 7.....	176	Մարկոս		Ղ 46.....	46
ԾԱ 1.....	73	Ա 4.....	65	Ե 27.....	86
ԽԹ 18.....	70	Ա 7.....	81	Չ 14.....	102
ԿԱ 5.....	47	Ա 13.....	91	Ը 13.....	98
ԿԶ 2.....	103	Ղ 23.....	198	Ե 17.....	120
ԿԶ 2.....	108	Ղ 25.....	198	Ը 46.....	122
		Է 21.....	109	Ը 58.....	121
Ովստ		Թ 6.....	44	Թ 1-8.....	121
ԺԱ 1.....	61	Ժ 27.....	183	Ժ 34.....	48
		ԺԴ 38.....	155	ԺԱ 22.....	202
		Ժ 33.....	135	ԺԱ 23.....	27
Երեմիա				ԺԱ 40.....	202
ԺԶ 16.....	100	Ղուկաս		ԺԱ 42.....	120
ԽԹ 19.....	37	Ա 1.....	45	ԺԲ 7.....	70
		Ա 28.....	89	ԺԴ 30.....	122
Ղանիել		Ա 35.....	52	ԺԵ 1.....	77
Գ 20-51.....	108	Ա 38.....	52		
Գ 39.....	104	Ա 76.....	98	Գործք	
		Բ 14.....	110	Գ 12.....	196
Եզեկիել		Բ 23.....	56	Ղ 24.....	121
ԺԶ 49.....	91				

ԻՉ 14..... 194	Գ 7..... 170	Դ 18 59
Ա. Յովի.	Դ 5..... 178	Կողոս.
Բ 8 97	Ջ 9-10..... 128	Գ 5 96
Դռովմ.	Ջ 11..... 64	Գ 5 138
Ա 20..... 34	Է 32..... 177	Ա Թեսաղ
Գ 31..... 122	ԺԳ 2..... 191	Բ 14-15 112
Ջ 16..... 86	ԺԵ 45-49 34	Բ Թեսաղ
Ը 3..... 48	Բ Կորնթ.	Ա 4-6 186
Ը 3-4..... 122	Դ 17..... 186	Եբր.
Ը 6..... 107	Է 10..... 105	Ջ 18 186
Ը 6-7..... 107	Ը 5..... 107	Ժ 1 35
Ը 14..... 110	ԺԲ 9..... 28	Ժ 32 113
Ը 17..... 108	Գաղատ.	ԺԲ 14 107
Ը 23..... 157	Գ 10..... 48	Ա Տիմոթ.
Ը 34..... 148	Ե 17..... 190	Գ 6 104
Ժ 18..... 117	Ջ 8..... 194	Բ Տիմոթ.
ԺԲ 12..... 186	Եփես.	Դ 15 182
ԺԲ 19..... 127	Ա 4..... 32	Տիտոս.
ԺԳ 10..... 82	Էջ	Գ 10 182
ԺԴ 4..... 178	Դ 26..... 130	
Ա Կորնթ.	Ե 2..... 59	
Բ 7 34	Փիլիպ	
Բ 9..... 79	Գ 8..... 35	
Բ 14 181		


Ց Ա Ն Կ

**«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»
բառարանում բացակայող բառերի**

աղետակցութիւն - 30	մեծատես - 28
աչ(ջ)ամետ - 29	յազնահոծեալ - 28
անսկզբնաբաւ - 28	շաղապատու[ու]թիւն (բայց շաղապատ, ՆԲՅ, Բ, 461) - 29
աստուածաբուռն - 29	պարտաշնորհ - 28
բժշկակերտ - 30	սուտասահ - 28
գերակիր - 30	վայրացասումն - 128
ետազատակ - 28	վերնակերպեալ - 29
խորիտուգութիւն - 28	տառադրոշմ - 29
կարկառակն - 28	քառասեր - 28
կորագործ - 30	
հողազանք - 28	

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ

Ներածություն	9
Բնագիրը	27
ՑԱՆԿԵՐ	
Անձնանունների ցանկ	203
Տեղանունների ցանկ	205
Ս. Գրոց վկայությունների ցանկ	205
ՆԲԳ-ում բացակայող բառերի ցանկ	207



Էջադրումը և համակարգչային աշխատանքները՝
Հրատարակչական բաժնի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ